

«Զգեցէք որ մանուկները ինձի գան, արգելք մի՛ զլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօրեայ Դպրոցի ամսաթերթ



Բովանդակութիւն

- «Մաշտոցի Արձագանգ»-ը իբրեւ դրդիչ տարր Շաղիկ Պոյաճեան
- Շնորհաւորագիր Տ.Խաժակ Ս. Արք. Յակոբեան
- Խօսք Հովհիկ Եւ հոգաբարձութեան Տէր Գառնիկ քհնչ. Գոյունեան
- Խօսք Հայաստանեաց Եկեղեցւոյ Թորդոմ Արդ. Տօնոյեան
Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Տնօրինին
- Մեր խօսքը Տնօրէն Եւ ուսուցչական կազմ
- Հանդիպում Եկեղեցիի Եւ Թատրոնի միջեւ
- www.sourphagop.org ը թիւերով
- Հակիրճ տեղեկութիւններ 2006-2007 Տարեշրջանի մասին
- Զեռնարկներ Եւ արտադասարանային աշխատանքներ Ժամանակագրական
շարքով

«Մաշտոցի Արձագանգ»-ը իբրև դրդիչ տարր

2006-2007 տարեշրջանի այս ժողովածուով, «Մաշտոցի Արձագանգ»-ի հրատարակական աշխատանքներու տասնըշորրորդ տարին կը յանգի իր աւարտին:

Տարի մը ե՛ս կանոնաւոր հերթականութեամբ եւ ամսական դրութեամբ լոյս տեսաւ մեր ամսաթերթը ու տարածուեցաւ տպուած օրինակներու միջոցաւ, ինչպէս նաև համացանցի եւ ե-նամակներու շնորհիւ, հազարաւոր ընթերցողներու մօտ: Մենք հաւատարիմ մնացինք մեր աշխատանքին, իսկ դուք, սիրելի ընթերցողների ձեր կանոնաւոր ընթերցանութեան: Զեր քաջալերական խօսքերն ու գրութիւնները մեզ մղիչ ոյժ եղան ու մեր աշխատանքը արդարացնող հիմները հանդիսացան:

Ամբողջ տարուան ընթացքին, «Մաշտոցի արձագանգ»-ը շարունակեց ծաղկիլ իբրև ժողովրդային գրականութիւն, քրիստոնէական կրօնի, հաւատքի եւ հայ ինքնութեան վերաբերող նիւթերու պարունակութեամբ: Ինչպէս անցեալին, ան մնաց դիւրին ընթեռնելի յօդուածներու հաւաքածոյ մը, նաև ոչ վերլուծական, դիւրամատչելի նիւթերու բեմ: Հիմնուելով Հայաստանեաց եկեղեցւոյ հաստատած տօնացոյցին վրայ, ամիսներու ընթացքին, ան բոլորին ծանօթացուց մեր եկեղեցւոյ զանազան ծէսերուն, տօներուն, խորհուրդներուն եւ այլ յարակից նիւթերու:

Այս առնչութեամբ, «Մաշտոցի արձագանգ»-ը հանդիսացաւ յատկապէս իբրև տեղեկատուական կամ ընդհանուր զարգացման ամսաթերթ: Ան իր հաւատարիմ ընթերցողներուն փոխանցեց տեղեկութիւն, գիտելիք, առիթ ընծանելով որ անոնք, օրէ օր աւելի մօտէն ծանօթանան իրենց եկեղեցւոյ արարողութիւններուն, ծէսերուն, աւետարանի բովանդակութեան, եւայլն: Ու թէեւ մեր առաջնահերթ նպատակն էր այդ, սակայն մենք կը յուսանք յաջողիլ աւելիով:

Արդ, մենք համեստութեամբ կը յուսանք յաջողիլ մեր ընթերցողներուն մօտ արթնցնել, նոյնիսկ թերեւս սկսնական մակարդակի վրայ միայն, կապուածութիւն՝ մեր եկեղեցւոյ հետ, հարցադրում՝ հաւատքի շուրջ, Աստուծոյ հետ փոխ-յարաբերութեան մասին ու Անոր ներկայութիւնը մեր կեանքերէն ներս արտայալուող երեւյթներուն մասին: Տեղեկատուականէն անդին, յոշով ենք որ մեր ամսաթերթը կը յաջողի աստիճանաբար մօտիկութիւն ստեղծել հայ ընթերցողին եւ մեր ժողովուրդի ինքնութիւնն իսկ կազմող Քրիստոնէական հաւատքին միշեւ:

Ամսաթերթ մը կը տեղեկացնէ, կ'ամփոփէ, կը ներկայացնէ, կը պարզացնէ, կը փոխանցէ, կը գիտցնէ: Սակայն միայն մա'րդ արարածը, հաւատացեալ ընթերցողը կը գիտակցի, կը զգայ, կը հարցադրէ, կը փնտոէ, կը վերլուծէ ու կը գտնէ: Մեր աշխատանքը սկիզբ մըն է, դրդիչ առիթ որ բոլորս մեր նայուածքները դարձնենք դէպի ներս, իւրաքնաչիւրս դէպի ի՞ր ներսը, հոն գտնելու համար զԱստուած ու Անոր մեզի պարգեւած տեսակ տեսակ շնորհներն ու բարիքները:

Կը մնանք ծեզ մեր հաւատարիմ ընթերցողներու կարգին հաշուելու յոյսով ու կը մաղթենք բարի եւ կազդուրիչ արձակուրդ:

Շատիկ Թորիկեան-Պոյաճեան

Մայիս 30, 2007

Յարգարժան

Պրև. Թորոս Պապիկեան

Տնօրին

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ

Կիրակոսիայ Դպրոցին

Մոնթիալ

Յարգելի Պրև. Տնօրին,

Ինչպէս ամեն տարի, այս տարեշրջանին եւս Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակոսիայ Դպրոցն ու անոր «Մաշտոցի Վրձագանգ» ամսաթերթը բոլորեցին բարւօք տարի մը:

Այս առիթով, յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարանի Ազգային Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներուն եւ անձնապէս՝ ձեզի եւ ձեր ուսուցչական կազմին կը մաղթենք բարօր, քաջառողջ եւ արեւշատ օրեր, նորանոր յաջողութիւններով եւ բարքաւաճումներով:

Մեր աղօթքն է որ բարձրեալն Աստուած Մշտական խաղաղութիւն եւ պայծառութիւն պարգևէ Հայոց Ազգին եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Աղօթարար՝

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ

Առաջնորդ
Գանատայի Հայոց Թեմի

ԽՕՍՔ ՀՈՎԻԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Երկուշաբթի, 14 Մայիս 2007

Մոնթեալ

Սիրելի տնօրէնութիւն, ուսուցչական կազմ,
ծնողներ եւ թանկագին աշակերտներ Ս. Յակոբ Կիրակորեայի,
աստ,

Գալ տարին 50-ամեակն է մեր համայնքի հիմնադրութեան: 50 տարիներ առաջ
կարեւոր որոշումը առնուեցաւ Հայ կեդրոն, Եկեղեցի, եւ ապա կրթական կեանք ստեղծելու:
Սէն Զօրիքի մէջ ծիծեռնակը վերստին բոյն կը շինէր:

Կը յառաջացուի առաջին հոգաբարձութիւնը, որ այն օրերուն «Գործադիր Մարմին»
կը կոչուի, կը գնուի Եկեղեցւոյ շենքը, անդամներ հաւաքելու առաքելութիւնը կը ծաւալի,
եւ յետոյ Շաբաթօրեայ ու Կիրակորեայ հայեցի դաստիարակութեան ծրագիր մը կը սկսի
ի գործ դրուիլ: Ի՞նչ խանդավառ օրեր էին: Եւ ամբողջ աշխատանք մը ուրիշ բանի չէր ձգտեր
քան հայ ինքնութեան պահպանումին:

Ինքնութիւն պահպանելու երկու ձեւ կայ. մէկը կրաւորական ձեւն է, այսինքն՝ այն
մէկը, որ քեզի կտակուածը կ'առնես եւ կը պահես, վախնալով որ կը կորսուի. իսկ միւսն ալ
ներգործական ձեւն է, այսինքն՝ այն մէկը, որ քեզի կտակուածը կ'առնես եւ «կը շահարկես»:
Աւետարանը երկրորդ ձեւը կ'ուզէ: Յիշեցէք Մնասներուն առակը (Ղկ 19. 11-26):

Անցնող 50 տարիները Մնասներու առակին շահարկումը աշխատեցան ընել, եւ
արդարեւ յաջողութիւն էր անոր արդիւնքը. հայ հաւատքը ապրեցաւ ու հայ երազը վառ
մնաց:

Մեր Կիրակորեան կարեւոր ներդրում ունեցաւ իր առաւել քան քառորդ դարեայ
ծառայութեամբ համայնքի 50-ամեայ վերելքին մէջ. անիկա մեր մանուկներու հոգիներուն
վրայ հայերէն հոսեցուց հոգեւոր իմաստութիւնը: Մնասներու առակին շահարկողներէն
մէկն է մեր Կիրակորեան:

Նոր ժամանակ մը կը բացուի բոլորիս առջեւ: Թող այս համայնքին վերելքը ըլլայ
արժանի այն խօսքին, որ կ'ըսէ. «ունեցողին աւելիով պիտի տրուի»:

Հովիւ Եւ Հոգաբարձութիւն
Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ

ՇՆՈՐՅԱՒՈՐԱԳԻՐ

Սիրելի Թորոս Պապիկեան
Վարիչ Ս. Յակոբ Կիրակորեայ Դպրոցին
Մոնթրէալ-Գանատա

Քրիստոնէական անհուն սիրով ու անկեղծ զգացումներով կ'ողջունենք ձեզ, որպէս սպասաւոր Կիրակորեայ դպրոցի ճամբով, Յայ Եկեղեցւոյ:

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, որ ներկայ արհեստագիտութեան ճամբով, կը հետեւինք ձեր Կիրակորեայ դպրոցի կայքէջին եւ «Մաշտոցի արձագանգ» ինթերնեթային թերթի թիւերուն: Մեր մանուկներուն սրտին խօսող, եւ արդիական բոլոր ձեւերու օգտագործմամբ ճոխացած, անիկա կը հասնի բոլորիս, աշխարհի չորս տարածքին:

Արդարեւ ձեր նուիրուածութիւնը, զսպանակուած հաւատքով ու տեսլականով, Կիրակորեայ դպրոցին հանդէա, մեծապէս գնահատելի է, որուն փոխարէն Ամենազօրն Աստուած, առատօրէն պիտի վարձատրէ ձեզ վստահաբար:

Կիրակորեայ դպրոցները կը գործեն մեր ժողովուրդին զաւակներուն համար, անոնց ջամբելով՝ Յաւատք Աստուծոյ նկատմամբ, Յոյս ապագայի տեսլականով եւ Սէր Մեր Եկեղեցւոյ ու Յայրենիքին: Այս է ու այս եղած է Կիրակորեայ դպրոցներուն գոյատեւման գործընթացը, որովհետեւ Կիրակորեայ դպրոցները կու գան մեր մանուկներուն ու պատանիներուն կեանքին մէջ պակաս ձգուած բաժինը լեցնելու: Ահա թէ ինչու էական ու կենսական է, Ս. Եկեղեցւոյս հովանաւորութիւնը վայելող Կիրակորեայ դպրոցներուն ներկայութիւնը մեր կեանքէն ներս:

Սակայն ինչպէս որեւէ հաստատութիւն, նոյնպէս եւ Կիրակորեայ դպրոցները իրենց կարգին կոչուած են ընդմիշտ վերազարթօնքի ու վերաորակաւորման գործընթացի մէջ ըլլալու, ժողովուրդներու ու կառոյցներու զարգացման հետ քայլ պահելով, որպէսզի Կիրակորեայ դպրոցներուն կեդրոնական դերն ու տեղը եւս, շեշտակիօրէն ճառայգայթէ մեր ազգային ու կրօնական կեանքէն ներս:

Առ այդ Կիրակնօրեայ դպրոցները կարիքը ունին.

ա-Բարոյական օժանդակութեան.

Երիտասարդ, ուսեալ եւ գիտակից ուսուցիչ-ուսուցչուհիներու ներկայութիւնը, մեր կիրակնօրեայ դպրոցներէն ներս անհրաժեշտութիւն է, որովհետեւ անոնք գիտնալով ներկայ աշխարհին դժուարութիւնները ու մարտահրաւերները, ըստ այնմ պիտի պատրաստեն մեր մանուկներն ու պատանիները եւ աւելի դիւրութեամբ պիտի հասկնան անոնց: Ահա թէ ինչու նուիրական է Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչ դառնալը, ինչպէս իրեւ Աստուածահաճոյ առաքելութիւն:

բ-Նիւթական օժանդակութիւն

Ներկայ հեւքոտ աշխարհին մէջ, որեւէ կառոյցի մը գոյաւորման թէ գոյատեւման ազդակներէն կարեւորագոյններէն մին կը հանդիսանայ նիւթական օժանդակութիւնը: Եւ մենք որպէս հայ ժողովուրդ կոչուած ենք մեր նիւթական աջակցութիւնը բերելու Կիրակնօրեայ դպրոցներուն բարեզարդման համար: Որովհետեւ հոն է որ մեր զաւակները պիտի թրծուին մեր Եկեղեցական ու ազգային արժեքներով, եւ իսկական հայու նկարագիրը կերտուի անոնց մէջ:

Ահա կենսական երկու մարտահրաւերներ, ուղղուած մեզմէ իւրաքանչիւրին, որպէս Հայ Քրիստոնեայ եւ որպէս Առաքելական Եկեղեցւոյ զաւակներ:

Քրիստոնէական ջերմ սիրով՝
Թորգոմ Աբդ. Տօնոյեան
Վարիչ Տնօրին
Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ
Դպրոցներու
Անթիլիաս-Լիբանան

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ աւարտել մեր 27րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 14րդ տարեդարձն է մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ անցեալ Սուրբ Յակոբի տօնի օրը՝ Դեկտեմբեր 2006 ին տօնեցինք մեր Կայքէջին՝ www.sourphagop.org ին, ճրդ տարեդարձը:

«Զգեցէք որ մանուկները ինձի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքերը, որոնք Հյայատանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն են, կը մնան հիմը մեր Եկեղեցւոյ պայծառութեան: Այն Եկեղեցիները որոնց մանուկները արգելքներ ունին երթալու Յիսուսի, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հյայատանեաց Եկեղեցւոյ մտապատկերին (vision), նամանաւանդ Հիւսիսային Ամերիկայի մէջ:

www.sourphagop.org -ը 6 տարեկան: Մեր այս տարուան դպրոցական տարեշրջանի ընթացքին մեր կայքէջը, www.sourphagop.org ը տօնեց իր 5-ամեակը եւ ծաւալեցաւ աներեւակայելիօրէն: Հասաւ 105 երկիրներու 1,432 քաղաքները, եւ ամսական դրութեամբ ունեցաւ 5,500-է աւելի այցելութիւններ: Մեր կայքէջին ամենէն մեծ արժէքը անոր 99% տոկոսով Արեւմտահայերէնով ըլլալը եւ կամաւոր խմբակի մը անսակարկ աշխատանքին շնորհիւ գոյութիւն ունենալը է: Մարդութիւ եւ պիտմէի սահմանափակ մեր կարողութիւնները նկատի առնելով մեր կատարած գործը օրինակ պէտք է հանդիսանայ ուրիշ անհատներու եւ հաստատութիւններու որոնք հայապահպանուով, արեւմտահայերէնով եւ կամ Քրիստոնէական Դաստիարակութեամբ հետաքրքրուած են:

«Մաշտոցի Արձագանգ» ի 14-ամեակ: Մեր այս դպրոցական տարուան ընթացքին հրատարակեցինք նաեւ մեր ամսաթերթը 14րդ տարին ըլլալով եւ մեր կայքէջի ծաւալումով, ծաւալեցաւ նաեւ մեր ամսաթերթի կարդացողներուն թիւը: «Մաշտոցի Արձագանգ»-ի միջոցաւ, այս տարի եւս արեւմտահայերէնով 232 քրիստոնէական դաստիարակութիւն շամբող էցեր աւելցուցինք համացանցին վրայ:

Աշակերտութեան թիւի նուազում: Այս տարուան ընթացքին արձանագրուած մեր աշակերտներուն թիւը 85 էր, եւ իրաքանչիւր Կիրակի օրուան միջին Եերկայութիւնը 52: Այս երկու թիւերը յաջորդաբար 10% եւ 20% նուազում արձանագրած են քաղդատուած մեր անցեալ տարուան թիւին: Եկեղեցին ընդհանրապէս շատ աշխատանք պէտք է կատարէ բազմացնելու համար Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն թիւը որպէսզի մեր աշակերտները, իրենք ալ իրենց կարգին, ապագային աւելցնեն Եկեղեցի յաճախողներուն թիւը:

Ինքնանորոգում: Այն հաստատութիւնները որոնք ժամանակ չեն տրամադրեր իրենք զիրենք նորոգելու, կը լճանան: Նկատելով որ Կիրակնօրեայ Դպրոցը կը գոյատեւէ կամաւոր աշխատողներով, պայման է որ իրաքանչիւր տարի նոր արիւն եւ նոր կամաւորներ աւելնան այս գործին որպէսզի թերեւցնեն մեր բեռը:

Սակայն, «Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ. հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ պատրաստէ եւ դրկէ:»

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ

Հանդիպում Եկեղեցիի Եւ թատրոնի միջեւ *

«Թատրոնը մարդկային գործունեութեան այն ոլորտն է, ուր ամէն ինչ խաղ է, թէ պայմանական, թէ՝ իրական։ Թատրոնը կեանքին հայելին է եւ զուգահեռը, դատարկ տարած ութիւն մը որուն մէջ մարդը կը յօրինէ իր կեանքը, կ'որոշէ թէ ո՞վ է ինք, ուրկէ՝ կու գայ եւ ու՞ր կ'երթալ»։

Այս մեկնաբանութիւնը տուած է Ռոպերթ Առաքելեան, Բագին պարբերաթերթի մէջ լոյս ընծայած «Ծէսը, Եկեղեցին Եւ թատրոնը դարերու խաչմերուկներուն վրայ» շատ հետաքրքրական յօդուածին մէջ։

Թատրոն բառը առաջին անգամ արտասանած են յոյները, որոնք մարդկային քաղաքակրթութեան նախահայրերն են։ Երբ տակաւին չկար թատրոն, թատերական ներակայացումները այգեկութքին աւարտին կատարուող Տօնահանդէսներ էին, ուր կը կազմակերպուէին խաղեր, մրցոյթներ, հեթանոսական ծիսախաղեր, կ'երգուէին յատուկ յօրինումներ երգչախումբերու կողմէ։ Այս հանդիսութիւնները տեղի կ'ունենային լեռներուն ստորոտը, որպէսզի լեռներու լանջերուն տեղաւորուած հանդիսատէսները կարենային լաւապէս հետեւիլ բոլոր մանրամասնութիւններուն։ Լերան լանջին կը պատրաստէին փայտէ, աւելի ուշ, քարէ նատարաններ եւ այդ վայրը կը կոչէին Թէաթըր, որ կը նշանակէ հանդիսավայր։

Այս թատրոնը որ աւելի երաժշտական էր, գոյութիւն ունէր արդէն Ք.Ա. վեցերորդ եւ հինգերորդ դարերուն իսկ։ Ք.Ա. երրորդէն առաջին դարերուն, թատրոնին խմբերգային տարրը կը նուազի եւ գործողութիւնը կը ստանայ աւելի շարժուն նկարագիր։ Հելլենիզմի շնորհիւ, թատրոնը հետզհետէ կը տարածուի առաջաւոր Ասիոյ մէջ, մինչեւ Տարսոն, Եղեսիա, Արտաշատ, Տիգրանակերտ։

Թատրոնի շէնքերը բացօթեայ շինութիւններ էին բաղկացած երեք մասերէ՝ խաղի հրապարակը, հանդիսատեսին աստիճանաձեւ նստատեղերը եւ դերասաններուն հանդերձասենեակները։ Հայկական թատրոնի առաջին շէնքը, ըստ յունա-հռոմէական եւ հայ պատմագիրներուն կառուցուած է Ք.Ա. 69 թուին, Տիգրանակերտի մէջ եւ քիչ մը աւելի ուշ, մայրաքաղաք Արտաշատի մէջ։

Քրիստոնէութեան ծագումով հին աշխարհի բացօթեայ թատրոնները որոնք նուիրուած էին չաստուածներու, կը փոխարինուին քրիստոնէական տաճարներով որոնք կը պարտադրէին իրենց ստեղծածը։ Կրօնական ներկայացումները սկիզբը, միջնադարուն, կը կայանային տաճարին ներսը, հետագային փողոցներն ու հրապարակները, իսկ աւելի ուշ, Ժամանակաւոր փայտաշէն բեմերու վրայ։

Միջնադարեան Հայաստանի մէջ, թատրոնի նիւթ կը դառնան Ս. Ծննդեան եւ Ս. Զատկուան շարքերը, «Յիմար եւ իմաստուն կոյսեր», «Ոտնլուայ», «Վերշին դատաստան»,

Եւալն: Անոնք պարզ դրսեւորումներն էին հոգեւոր բովանդակութեամբ, եւ հոգեւորականներու հովանաւորութեամբ: Հայկական պատարագային տրաման երբէք ինքնուրոյն տեսակ չէ դարձած, ոչ ալ աշխարհիկ թատրոնին մէկ տարբերակը: Այս ներկայացումները մեծ տպաւորութիւն կը ձգէին հազարաւոր հանդիսատէսներուն վրայ, որոնք երգով, աղօթքով եւ խաչակնքումով մասնակից եւ գործող անձեր կը դառնային պատմութեան մէջ: Այս շրջանին առաջին անգամ ըլլալով կը գործածուէր վարագոյրը:

14-րդ եւ 15-րդ դարերուն կը ծնի թատրոնի նոր սեռ մը «հրաշք» անունով. ան Մարիամ Աստուածածնի կամ այլ սուրբերու մասին պատմող չափածոյ թատերախաղ էր, որ կը ծառայէր քարոզչութեան եւ քրիստոնէական բարոյախօսութեան տարածման:


17-րդ դարուն հայ իրականութեան մէջ դպրոցական տրաման երեւան եկած է, կրելով կրօնական, բարոյախօսական եւ պատմագրական բովանդակութիւն: Առաջին դպրոցական տրաման նուիրուած էր Սուրբ Հոհիսամէի նահատակութեան եւ խաղցուած է Ուքրանիոյ հայ կաթողիկէ դպրոցին մէջ, 1668-ին:

Դարերու ընթացքին եկեղեցին եւ թատրոնը կը հանդիպին իրար, երկուքն ալ կապ ունենալով մարդկային հոգիին եւ անոր չբացախալուած խորհուրդներուն հետ:

* Քաղուած Ռոպերթ Առաքելեանի, «ԾԷսը, եկեղեցին եւ թատրոնը դարերու խաչմերուկմերուն վրայ» յօդուածէն. Բագին, Մարտ 2006, ԽԴ տարի, թիւ 1.


www.sourphagop.org ը՝ թիւերով

Ամառայիկ www.sourphagop.org ի եզակի այցելութերու եւ այցելութիւններու աճը անցնող վեց տարիներուն լնթացքին:



2006 ի Հաշուեցուց

297,626	զարկեր
66,537	այցելութիւններ
9,600	Եզակի այցելութեր
105	Երկիրներ
1,432	Քաղաքներ
98,650	Բացուած էջեր
11,388	.pdf գրութիւններ
8,191	«Մաշտոցի Արձագանք»ի թիւեր



<u>Երկիր</u>	<u>Այցելութիւն</u>
ԱՄՆ	57,363
Գանատա	4,723
Թուրքիա	643
Ֆրանսա	532
Գերմանիա	247
Քուեյթ	221
Անգլիա	169
Արաբ. Էմիր.	160
Չուչտ	159
Հոլանտա	125
Հայաստան	112
Ռուսիա	108
Լիբանան	106
Աւստրալիա	99
Իրան	83
Մնացեալ 90 ը	1,687

ՀԱԿԻՐԾ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

2006-2007 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանեաց Առաքելական Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ Եկեղեցւոյ հոգաբարձութեան հովանաւորութիւնը: Հոգաբարձութեան ներկայացուցիչն է Պր. Լեւոն Պոյամեան:

27-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2006-2007 տարեշրջանը դպրոցին 27րդ տարեշրջանն է: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնները Խաչվերացի Կիրակին՝ Սեպտեմբեր 14, 1980 ին եւ յաջորդական 27րդ տարեշրջանը կը բոլորէ այս տարի: Խրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեսէ մինչեւ Յունիսի Երկրորդ Կիրակին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի Օրերը 10:30-1:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտէզի 3, Նախակրթարանի 6 եւ Երկրորդականի 3 դասարաններ:

14-ամեակ «Մաշտոցի Արձագանգ» ին

Մեր 2006-2007 տարեշրջանի ընթացքին նաեւ հրատարակեցինք, 14րդ տարին ըլլալով, մեր պարբերաթերթը «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»-ը կը տառի եւ կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ: «Մաշտոցի Արձագանգ»-ը PDF ձեռով կը գտնուի համացանցի հետեւեալ էջին վրայ www.sourphagop.org/mashdots :

6-ամեակ www.sourphagop.org ին

10 Դեկտեմբեր 2000 ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը www.sourphagop.org: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Ծաշու Աւետարան, Church Timeline, Daily Bible, Տօներ, Բառարան, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիք, Զարգացման Մրցում եւ Խաղեր: 2006 Յունուարէն – 2007 Մայիս մեր կայքէջը ունեցաւ 97,000 է աւելի այցելութիւն:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2006 – 2007 տարեշրջանի իրենց կամաւոր մասնակցութիւնը կը բերեն հետեւեալները .–

Վերժին Գէպթանեան
Վերա կարապետեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխամեան
Յասմիկ Նաճարեան
Գարոլ Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Աշխէն Իշխանեան
Շողիկ Նաճարեան
Յասմիկ Գանաճեան
Շաղիկ Պոյամեան
Նիկոլ Դանիէլեան
Մորոս Պապիկեան

Մանկապարտէզի Ա. կարգի դաստիարակ
Մանկապարտէզի Բ. կարգի դաստիարակ
Մանկապարտէզի Գ. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Ա. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Բ. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Գ. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Դ. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Ե. կարգի դաստիարակ
Նախակրթարանի Զ. կարգի դաստիարակ
Երկրորդականի Ա., Բ. եւ Գ. կարգերու դաստիարակ
Խմբագիր «Մաշտոցի Արձագանգ» ի
Լուսանկարիչ
Տնօրէն

Կազմը գումարեց ժողովներ որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներ եւ այլ նիւթեր:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2006-2007 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը **85** է, իսկ շաբաթական ներկայութեան միջինն է **52** աշակերտ՝ բաժնուած **10** կարգերու:

ԴՊՐՈՑԻ ԱՌՈՐԵԱՆ

2006-2007 տարեշրջանին կիրակնօրեայ դպրոցի առօրեայ յայտագիրը կ'ընթանայ Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, որը կը դասաւանդուին Ս. գրական, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքի եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն եսք, աշակերտները կը բաժնուին 4 խումբերու:

- Մանկապարտէզի Ա., Բ., Գ. եւ Նախակրթարանի Ա. դասարաններ
- Նախակրթարանի Բ. եւ Գ. դասարաններ
- Նախակրթարանի Դ. Ե. եւ Զ. դասարաններ
- Երկրորդականի Ա. Բ. եւ Գ. դասարաններ

Պահը կ'ընթանայ հետեւեալ ձեւով՝


- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսի ուսուցում:
- Բարոյալից պատմուածքներու պատմութիւն:
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում:
- Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն:

Դասարանային բաժին


Կը դասաւանդուի ըստ դասագիրքներու:

ԶԵՌԱՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՎ

- 10 Սեպտեմբեր 2006 Արձանագրութիւն
- 17 Սեպտեմբեր 2006 Տարեսկիզբ եւ վերամուտ
- 23 Սեպտեմբեր 2006 Ուսուցչական Սեմինար
- 24 Սեպտեմբեր 2006 Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդուեցաւ:
- 15 Հոկտեմբեր 2006 Թարգմանչաց տօնի յատուկ յայտագիր:
- 17 Դեկտեմբեր 2006 Դպրոցի աշակերտութիւնը գեղարուեստական յայտագրով իր մասնակցութիւնը բերաւ Ս. Յակոբի Տօնին առիթով կազմակերպուած հաւաքական ճաշի ընթացքին:
- 7 Յունուար 2007 Ամանորի եւ Ս. ԾԱՅԻԿԵԱՆ գոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նույնական բաշխումով:
- 18 Փետրուար 2007 Վարդանանց եւ Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն:
- Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունի իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը:
- | | |
|----------------------|---|
| Փետրուար 19- 25 | Ծամօն |
| Փետրուար 26 - Մարտ 4 | Հեռատեսիլ, Համակարգիչ, այլ պաստառով Խաղեր |
| Մարտ 5 -11 | Շաքար |
| Մարտ 12-18 | Կազախին խմիչքներ (pepsi, 7up, coke, crush եւայլն) |
| Մարտ 19 – 25 | տուրմ chocolate |
| Մարտ 26 - Ապրիլ 1 | chips |
| Ապրիլ 2 -7 | Հաւկիթ |
- 1 Ապրիլ 2007 Դպրոցը փակ էր Ծաղկազարդի առթիւ:
- 8 Ապրիլ 2007 Սբ. Զատկուայ յատուկ նշում:
- 10 Յունիս 2007 Ամավերջի հանդէս



2006 - 2007 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն



2006 - 2007 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայութիւն

ՄԱԾՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ԺԴ. Տարի

ԽՄԲԱԳԻՐ՝ Շաղիկ Պոյաճեան

«ՄԱԾՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

Աերկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ:

www.sourphagop.org/mashdots հասցեով

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակոսորեայ
Դպրոցի կամաւոր խմբակը.-

Ուսուցիչներ՝

Թամար Գիգիրեան
Վերժին Գէպթանճեան
Վերա Կարապետեան
Երան Լոշխանեան
Յասմիկ Նաճարեան
Գարոլ Մանուկեան
Փոլ Գիգիրեան
Աշխէն Իշխանեան
Շողիկ Նաճարեան
Յասմիկ Գանաճեան
Նիկոլ Դանիէլեան
Շաղիկ Պոյաճեան
Թորոս Պապիկեան

Լուսանկարիչ՝

Պարբերաթերթ՝

Տնօրէն՝

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ


Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ



Հաւատամք ի մի Աստուած,
ի Հայրն ամենակալ,
յարարիչն երկնի եւ երկրի...
Հայաստանեաց Եկեղեցին կը
փշատակէ Նիկող ժողովի 318
հայրապետները Սեպտեմբեր 9-ին:

Մարդոց սրտերէն Աերս շնորհի
տենչանք արթնցնող շարականները:
Շարականներու մասին կարդալ էջ 10-11

Մարդը ստեղծագործ Արարծին
պատկերն ըլլալով՝ չի կրնար
քանդել քանդելու համար: Միայն
կրնայ ստեղծել եւ եթէ հարկ ըլլայ
քանդել՝ կրնայ միայն քանդել,
վերստեղծելու համար: Աճեծքին
օրինութիւնը կարդալ էջ 8:



Սուրբ Գևորգ Վիշապաքաղ:
Սուրբին մասին կարդալ էջ 4

Եղէք ողորմած, քաղցր,
խոնարհ, հեզ եւ
համբերատար: Իրարու
հանդէա հանդուրժող
եղէք եւ Աերեցէք իրարու՝
երբ մէկդ միւսին դէմ
տրտունջ մը ունենաք:
Կողոսացիներուն 3.12-14



Աշխատանքը՝ շինող,
կառուցող, զարգացնող եւ
աճեցնող աշխատանքը,
աղօթք է նոյնիսկ: Խմբագրականէ
կարդալ էջ 3

«Մաշտոցի Արձագանգ»

**Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակորեայ Դարոցի
ամսաթերթ**

Խմբագիր՝

Շաղիկ Պոյաճեան

**ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ.ի ներկայ եւ
նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ։ Այցելեցէ՞ք
www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը**

**Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակորեայ Դարոցի
կամաւոր խմբակը**

Ուսուցիչներ՝

Սալբի Բագլաեան
Վերժին Գէպթանճեան
Յասմիկ Նամարեան
Երան Լոշխանեան
Գարոլ Մանուկեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Շողիկ Նամարեան
Աշխեն Իշխանեան
Յասմիկ Գանաճեան

Օգնականներ՝

Փոլ Գիզիրեան
Կարօ Կարապետեան
Քրիստինա Լոշխանեան

Լուսանկարիչ՝

Նիկոլ Դանիելեան

Տնօրէն՝

Թորոս Պապիկեան

Այս թիւով . . .

Աշխատանքի հանդէա սէր Էջ 3

Ամսական տօնացոյց Էջ 4

**Ամսուան աշխատակից յօդուածագիրը
Գրիգոր Դերձակեան Էջ 5**

**Եկեղեցական խորհուրդներու միջոցաւ
Քրիստոսի իրագործած մեծ ծրագիրը կը հասնի
մեզի, կը դառնայ մերը եւ մեզ հաղորդ կը
դարձնէ երկնայինին հետ
Էջ 6-7**

Ասէ Աստուած Էջ 7

ԱՅԷծքին օրինութիւնը Էջ 8

Բարեխօս եղիր իմ եւ իմ միջեւ Էջ 9

Շարականներու մասին Էջ 10-11

**Աստուածաշունչը մանուկներու համար
. Էջ 12-15**

**2005-2006 տարեշրջանի ամավերջի
հանդէսը Էջ 16-19**

Որն է ճիշդ պատասխանը Էջ 20-23

Կարճ լուրեր կիրակնօրեայէն Էջ 24

Խմբագրական

Աշխատանքի հանդէա սէր

Վերամուտ է արդէն: Սեպտեմբեր ամսուան գալուատով կը վերսկսինք «Մաշտոցի Ա թ ձ ա գ ա ն գ » - ի հ ր ա տ ա ր ա կ չ ա կ ա ն աշխատանքներու 14-րդ տարին: Ամառնային արձակուրդը առիթ ընծայեց մեզի որ արժեւորենք մեր աշխատանքը, լսենք մեր մօտիկ աշխատակիցներու քննարկումները ու նկատի առնելով մեզի ուղղուած զանազան առաջարկներն ու թելադրանքները ծրագրենք մեր լաշորդ տարին: Եւ այսպէս, ահա լոյս կը տեսնէ մեր այս տարուան առաջին թիւը ու անհուն գոհունակութիւն կը զգանք որովհետեւ տարի մը եւս կապի մէջ պիտի ըլլանք մեր ընթերցողներուն հետ, գիրի ու գրականութեան միջոցաւ:

Մեր ամսաթերթի աշխատանքի վերսկսման առթիւ մտածումներս կ'ուղեմ դէպի աշխատանքի գաղափարը ու կ'անդրադառնամ թէ որքա՞ն արդիւնաւետ, շինիչ ու կազդուրիչ է ան: Աշխատանքը ուղղակի կեանք է կարծես ու շնորհ, նուիրուած մեզի՝ մարդոցս, Աստուծոյ կողմէ: Մեզմէ ոմանք կ'անդրադառնան այս շնորհին բարձր արժեքին խսկ ուրիշներ՝ ոչ: Կեանք կ'ըսենք որովհետեւ գործի շնորհի է որ տեսականը կը վերածուի գործէականի, գաղափարը՝ գործադրելի ծրագրի, հաւատքը՝ քարոզչութեան, ներշնչումը՝ այս կամ այն ձեւի շօշափելի եւ յաղորդելի արտայալութեան: Եթէ ընդունած ենք որ ծովութիւնը մոլութիւն մըն է ու վանելի մէկ սովորութիւն, ուրեմն ընդունած կ'ըլլանք միատեղ թէ աշխատանքը մեզի կը պարգեւէ կեանք, բարիք, խանդավառութիւն ու ընդհանրապէս դրական մղիչ ոյժ: Նոյն այս պատճառաւ է որ անգործութեան յառաջացուցած թախիծին ու

ունայնութեան դէմ միայն աշխատանքի դիմելով է որ կարելի է պայքարիլ ու արգելք հանդիսանալ որ այդ ժխտական իրականութիւնները պատեն մեր կեանքերն ու փնացնեն զանոնք:

Աշխատանքը՝ շինոյ, կառուցոյ, զարգացնոյ եւ աճեցնոյ աշխատանքը, աղօթք է նոյնիսկ: Ան շօշափելի արտայալութիւնն է Աստուծոյ մեր տրամադրութեան տակ դրած զանազան կարողութիւններուն ու մեր սիրոյ խօսքն է առ Աստուած: Որովհետեւ այնպէս ինչպէս հաւատքը առանց գործի մեռած է, նոյնն է եւս պարագան մարդ արարածին ընդհանրապէս: Առանց աշխատանքի մարդս կ'անշարժանայ, մտքով, հոգուով ու մարմնով ու կը մատնուի իր կեանքն անդամալուծող ու փնացնոյ վիճակի մը:

Այս բոլորին գիտակցելով, մեր հրատարակչական աշխատանքը մեզի կը թուի ըլլալ Աստուծոյ մեծագոյն պարգեւներէն: Առ ի երախտագիտութիւն, մենք ալ մեր կարգին մեր աշխատանքի միջոցաւ կը տարածենք Իր խօսքը, ու կը գրենք մեր հաւատքի, կրօնի եւ եկեղեցւյ մասին: Այս ընելով, կը յուսանք միատեղ արժանի ըլլալ ձեր եւս գնահատանքին ու շարունակել ծառայել իբր կամուրջ, համեստ կամուրջ, ձեր ու ձեր կրօնին միշեւ:



Սեպտեմբեր ամսուան տօնացոյց

Դ. Կիրակի Ս. Աստուածածնի վերափոխումԷՇ Ետք- Սեպտեմբեր 3

Տօն ծննդեան Ս. Կուսին Մարիամու- Սեպտեմբեր 8

Նիկիոյ ժողովի 318 հայրապետները- Սեպտեմբեր 9



Բարեկենդան Խաչվերացի պահոց- Սեպտեմբեր 10

Վերացումն Սուրբ Խաչի- Սեպտեմբեր 17

**Հայաստանի հանրապետութեան անկախութեան տօն-
Սեպտեմբեր 21**

Սուրբ Գէորգ Զօրավար Սեպտեմբեր 30



Հայաստանեաց եկեղեցին Սեպտեմբեր 30-ին կը յիշատակէ Սուրբ Գէորգի տօնը:

Կապադովկիացի ազնուական, հոչակաւոր զօրավար Գէորգ անցած է Հայաստանեաց եկեղեցոյ սիրելի եւ տօնելի սուրբերու կարգին որովհետեւ մահուան սպառնալիքն արհամարհելով վկայ եղած է Քրիստոսի ու Դիոկղետիանոս մոլեգին հակաքրիստոնեաց կայսրին առջեւ խոստովանած իր հաւատքը:

Սուրբ Գէորգ «վիշապաքաղ» կոչուած է նաև որովհետեւ, ըստ աւանդութեան, ան վիշապ մը սպաննած է փրկելու համար հրէշին իբր ճաշ նուիրուած երիտասարդունի մը: Այս աւանդութիւնը յատկապէս հետաքրքրական է որովհետեւ խորհրդանիշ մըն է ան եւ ոչ միայն պարզ պատմութիւն:

Այսպէս իր պատմած իրադարձութեան անդին, ան կը խորհրդանշէ Քրիստոնէական հաւատքի յաղթանակը չարին դէմ, յաղթանակ մը որ կը տարուի ոչ միայն մարտիրոսութեամբ, այսինքն հաւատքին համար մեռնելով, այլ նաև առաքինութեամբ եւ սրբութեամբ:

Ամսուան աշխատակից յօդուածաագիրը . . .

Պապա, նորէ՞ն լալ սկսար

**Գրիգոր Դերձակեան
Օգոստոս 2006**

Ամէն Կիրակի օր անպայմանօրէն Եկեղեցի գացողը չեմ ու չեմ եղած:

Չեմ տիրապետեր մեր հազարամեայ Եկեղեցւոյ մերթ ոսկեայ եւ յաճախ ողբերգական պատմութիւնը:

Գրիգոր Լուսաւորիչէն Մովսէս Խորենացի, անցնելով Գրիգոր Նարեկացիէն մինչեւ մեր դարաւոր զոյգ կաթողիկոսութեանց բոլոր մանրամասնութիւնները տիրապետելէ շատ հեռու եմ:

Չեմ կարդացած Նարեկը: Կը խոստովանիմ նաեւ որ կողքէ կողք չեմ լրացուցած Սուրբ Աւետարանի ընթերցումը:

Մեր սքանչելի Սուրբ Պատարագին ծանօթ եմ իր ընդհանրութեան մէջ միայն:

Սակայն . . .

Ամէն անգամ որ կը մտնեմ հայկական Եկեղեցի, մարմինս կը վերածուի Եկեկուրականացած մէկ մասսայի, գլուխս արագօրէն տեղի կու տայ սրտիս եւ սիրտս իր կարգին տեղի կու տայ հոգւոյս:

Եկեղեցւոյ մուտքին պլազող կիսահալ մոմե՞րն են միթէ:

Մեր Եկեղեցիներուն խորա՞նն է իրենց խիստ նշանակալի «Է» տարով: Հայ կղերականին հաւատքն ու նուիրո՞ւմը, դպրաց դասին երգեցողութի՞նը, առաջնորդին գա՞՞րի: Արդեօք Հայոց Պատմութիւնն է խտացուած քանի մը շարականի ընդմէջէն թէ Յիսուսի խաչելութիւնը գծուած միջակօրէն տաղանդաւոր արուեստագէտի մը կողմէ:

Այս բոլորին պատասխանը կարեւոր ալ չէ: Գիտեմ թէ հայ Եկեղեցին իմ վրաս կը բանեցնէ կախարդական եւ անբացատարելի մէկ ազդեցութիւն, խոհուն, խորհրդաւոր իր հազարամեամբ:

Դպրաց դասը կ'երգէ Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ:

Ակնթարթի մը մէջ արդէն հոգիս սաւառնած է, աշքերս լեցուած են ու Եերաշխարհս աւելի իրար է անցած քան Նոր պատրաստուող Սուրբ Միտոնի կաթոսան:

- «Պապա, նորէ՞ն սկսար լալ» ականջիս կը փսփսայ մանչս:

- «ԶԷ, տղաս, չեմ լար, թիշ մը յուզուած եմ միայն:»

- «Նորէն մի՛ սկսիր. ի՞նչ է, ի՞նչ եղաւ», կ'ըսէ միւս կողմէն երկրորդ մանչս:

- «Ոչինչ», կը պատասխանեմ, «Ոչինչ»:

Ի՞նչ եղաւ: Չեմ գիտեր ինչ եղաւ: Այդ կախարդական «ի՞նչ եղաւ»-ին պատասխանը ոչ գիտեմ ոչ ալ կրնամ բացատրել:

«Հայատք» եւ «Եկեղեցւոյ հանդէպ անհուն յարգանք» դիրապէս բացատրելի բառեր եւ թեմաներ չեն: Բացէք որեւէ բառարան եւ կարդացէք «Հայատք» բառին բացատրութիւնը: Կը վստահեցնեմ որ բոլոր բացատրութիւններն ու պատասխանները թերի են ու անգորհացուցիչ:

Զգացումները միշտ ալ եղած են աւելի զօրաւոր քան լոկ բառերու շարանները: Այս «հայատք»ը անբացատրելի է:

Իսկ «Հայ Եկեղեցւոյ հայատքը» կը դառնայ շատ աւելի բարդ, ճնշիչ եւ միաժամանակ բուժիչ եւ գոհացուցիչ:

Վստահ եմ որ օր մը երկու մանշերս պիտի հասկնան եւ զգան այս բոլորը:

Եկեղեցւոյ խորհուրդները

Այս տարեշրջանի «Մաշտոցի Արձագանգ»-ի յաջորդական թիւերով պիտի ներկայացնենք մեր Եկեղեցւոյ խորհուրդներէն իւրաքանչիւրը ու անոնցմէ իւրաքանչիւրին իւրայատուկ նշանակութիւնը, բովանդակութիւնը եւ ծիսակատարութիւնները:

Այսպէս, Սեպտեմբեր ամսուան թիւով, նախ եւ առաջ կը ներկայացնենք մի քանի հետաքրքրական լնդիանութիւններ մեր Եկեղեցական խորհուրդներու մասին, սահմանելու համար զանոնք ու հասկնալու համար նախքան մանրամասնութեանց անցնիլը թէ ի՞նչ կը նշանակէ «Եկեղեցական խորհուրդ» արտապատութիւնը:



Յիսոս Քրիստոսի մարդկութեան համար իրականացուցած ծրագիրը աշխարհի ամենէն մեծ եւ անճառելի խորհուրդներէն՝ անտեսանելի իրականութիւններէն մէկը եղաւ։ Հայատանեաց Եկեղեցին, միջոցի մը կը դիմէ Քրիստոսի տնօրինութիւնները, այսինքն մարդոց համար աշխարհի երեսին Անոր իրագործած զանազան նպատակները հաւատացեալներուն մտքին ու տրամաբանութեան հասանելի կերպով ներկայացնելու համար։

Այսպէս է որ Հայատանեաց Եկեղեցին ունի իր Եկեղեցական խորհուրդները, այլ խօսքով ծէսերը եւ աստուածապաշտական արարողութիւնները, որոնց միջոցաւ կը խորհրդանշուին ու շօշափելի ձեւով կը ներկայացնին Քրիստոսի կեանքին ու գործունէութեան առընչուող գաղտնիքներն ու անտեսանելի երեւոյթները։

Ի՞նչ կը նշանակէ Եկեղեցական խորհուրդ

Խորհուրդ կը կոչուին Եկեղեցիէն ներս կատարուող արարողութիւնները որոնց միջոցաւ ի յայտ կու գայ Քրիստոսի փրկարար զօրութիւնը եւ որոնց միջոցաւ, անտեսանելի ու խորհրդանշական ձեւով հաւատացեալներուն կը բաշխուին երկնային շնորհները։ Եկեղեցական խորհուրդներու միջոցաւ Քրիստոսի իրագործած մեծ ծրագիրը կը հասնի մեզի, կը դառնայ մերը եւ մեզ հաղորդ կը դարձնէ երկնայինին հետ։

Ասէ Աստուած . . .

**Քանի՞ խորհուրդներ ունի մեր
եկեղեցին . . .**



Մեր եկեղեցին հաստատած է եօթ
խորհուրդներ:

Անոնք են հետեւեալները . -

**Մկրտութիւն
Դրոշմ
Ապաշխարութիւն
Հաղորդութիւն
Պատկ կամ ամուսնութիւն
Զեռնադրութիւն
Կարգ հիւանդներու եւ վերջին
օծում**

Ուսուցում աղօթքի մասին Մատթէոս 6.5-15

Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւրներուն մի՛ նմանիր որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնները կեցած աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միան ասիկա է անոնց վարձատրութիւնը: Դուն երբ կ'աղօթես՝ մտի՛ր սենեակդ- գոցէ՛ դուռը եւ ծածուկ կերպով աղօթէ քու երկնաւոր Հօրդ: Եւ Հայրդ որ անտեսանելի է ու կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս:

Տակաւին, երբ կ'աղօթէք, մի՛ շատախօսէք հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ շատ խնդրեն, լսելի պիտի դառնան: Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք: Ուրեմն այսպէս աղօթեցէք . -

Հայր մեր երկնաւոր,
սրբաբանուի անունդ.
Թող գայ արքայութիւնդ,
թող կատարուի քու կամքդ,
ինչպէս որ երկինքի մէջ՝
այնպէս ալ երկրի վրայ:
Ամենօրեայ մեր հացը
այսօր եւս մեզի տուր:
Ներէ՛ մեր յանցանքները,
ինչպէս որ մենք կը ներենք
անոնց որոնք մեզի դէմ
նոյնապէս յանցանք գործած են:
Եւ թոյլ մի տար
որ փորձութեան մէջ իյնանք.
այլ մեզ չարէն ազատէ՛:
Որովհետեւ քուկդ են միշտ
արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը.
ամէն:

Ուկեղէն հատուածներ . . .

ԱՅԷՃՔԻՆ օրինութիւնը

*Գարեգին Բ. Կաթողիկոս
«Ծանի՛ր զքեզ» (Առթիվաս 1983) . . .*

Աստուած ստեղծեց մարդը.

Աստուած օժտեց մարդը.

Աստուած սիրեց մարդը, եւ՝

Աստուած «անիծեց» մարդը . . . :

Եւ երբ այս վերջինը կ'ապրէր «դրախտի փափկութեան» մէջ եւ երբ փափկութիւնը դրախտին՝ մոռցնել տուաւ իրեն աստուածադիր կանոնը- «գործել զնա եւ պահել»- Աստուած վոնտեց մարդը դրախտային փափկութենէն եւ ըսաւ իրեն.-

-Երեսներուդ քրտինքովը պիտի ուտես քու հացը:

ԱՅԷՃՔԻ զօրութեամբ ծանր, կշտամբալից այս դատավճիռը մարդը նետեց փափկութեան դրախտէն դէպի գործի՛ դաշտը: Ալ դալարիքն ու պտղառատ ծառերը չկային իր շուրջ: Չոր հողն էր իր առջեւ, «փուշ ու տատասկ» իր ոտքերուն տակ: Աշխատանքը այլեւս դարձաւ հոմանիշ կեանքի. քրտինքը միակ ուղիղ ճամբան՝ դէպի արդար երշանկութիւն: Եւ այսպէս աշխատանքը դարձաւ տիեզերքի ամենէն հզօր ոյժը, ամենէն մեծ բարիքը: Մարդը այլեւս իր մարդ-ութիւնը չէր կրնար իրագործել առանց այս օրէնքին, անէճք-օրինենքին: Աշխարհը այլեւս չէր կրնար ըլլալ ու մնալ աստուածաստեղծ տիեզերք, առանց մարդու գործին ու գործակցութեան: Տիեզերքն ու կեանքը քառս էին «եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ», երբ «մարդ չէր որ գործէր զերկիր»:

Ասոնք են Աստուածաշունչի առաջին իսկ էջերու վրայ սփոռուած ճշմարտութիւնը մարդու եւ աշխատանքի մասին:

Աշխատանքը մարդուն բնական ինքնարտայապտութիւնն է

Մարդը մարդ չի կրնար ըլլալ ձեռքերը ծալած, աչքերը շլմորուն, ոտքերը թափառաշրջիկ եւ . . . միայն բերանը բաց՝ դատարկ խօսքի որպէս հրաբուխ . . . : Մարդը մարդ է, երբ իր ձեռքերուն կու տայ շարժում, երբ իր աչքերը կը յառէ նպատակակէտի մը, երբ իր ոտքերը կը քալեն նպատակալաց գնացքով, երբ իր շրթները կը շարժին իմաստաւոր եւ շինիշ խօսքերով:

Գործօնութիւնը մարդուն ճշմարիտ ինքնարտայապտութիւնն է: Անգործութիւնը, ծովութիւնը, դատարկապորտութիւնը ժխտումն են մարդուն խսկութեան եւ կոչումին: Կամաւոր անգործութիւնը անաստուածութեան ամենէն ակներեւ փաստն է: Որովհետեւ, ինչ որ ունին՝ կու գայ Աստուծմէ: Միտք ու մարմին՝ շնո՞րհիքն են Անոր, որ «արար զերկին եւ զերկիր» եւ «ստեղծ զմարդն ի պատկեր իւր»: Աստուած ստեղծագործեց: Մարդը այդ ստեղծագործ Արարշին պատկերն ըլլալով՝ չի կրնար քանդել քանդելու համար: Միայն կրնայ ստեղծել եւ եթէ հարկ ըլլայ քանդել՝ կրնայ միայն քանդել վերստեղծելու համար: Այս է մարդուն մարդութեան անխախտելի նկարագիրը եւ իրայատուկ դրոշմը: Ով վաերական մարդ է՝ աշխատանքի նուիրեալ առաքեալ մըն է:

Բարեխօս եղիր իմ եւ իմ միջեւ

*Պարոյր Սեւակ
Հատրնտիր
Պէյրութ 1972*

Օգնի՞ր ինձ, Մարիամ,
Անաղարտ մնամ
Այն ճահճահման աղտ-աղարտի մէջ,
Որ դժգոհութիւն բառով է կոչւում:

Դժգոհութիւնից ես շատ եմ դժգոհ:
Օգնի՞ր ինձ, Մարիամ,
Ես ասեմ՝ ինչով:
Բարեխօս եղիր ի՞մ եւ ի՞մ միջեւ,
Որ բանն աւարտի ինքնահաշտութեամբ:

Ես խոռվել եմ նաեւ աշխարհից.
Ե'կ ու վերատին հաշտեցրո՞ւ դու մեզ.
Թէ չէ ես ալսպէս ապրել չե՞մ կարող:

Ուզում եմ նայել ինձ ու աշխարհին
Լիացա՞ծ, ժառուն ու գո՞հ աշքերով՝
Յաղթելով ե՛ւ քաղցր, ե՛ւ պապակ փափաք:


Ուզում եմ ապրել անշար եւ բարի՝
Գմբէթի ճեղքում քուսած տուղտի պէս...

Մի բու թառել է իմ զոյգ աշքերին.
Թողորո՞ւ նրան:
Մի ձու սպիտակ ինձ բիբ է դարձել.
Կորցըրո՞ւ այդ ձուն:

Ծանծեր են նստած ինձ վրայ
Այնպէս,
Ինչպէս քունջութը՝ կաթնահունց հացին:
Ծանճը քունջո՞ւթ չէ.
Հացըս չի ուտում:

Ծանճով է լցուած իմ նե՞րսը նաեւ,
Ինչպէս վարսանդը՝ խաշխաշի սերմով:
Խաշխաշ չեմ ուզու.
Կակա՞՛ դարձըրու:

Ասում եմ, իբր, կապոյտի վրայ
Չեն նստում ճանճեր:
Լսո՞ւմ ես Մարի՞ամ,
Ինձ ներս ու դրսից կապոյտ հագցըրու...



Դուն, Քրիստոս, կենդանի կրա՞կ,
բորբոքէ՛ իմ սրտիս մէջ՝ քու սիրոյդ
կրակը, որ աշխարհի մէջ ձգեցիր,
որպէսզի այրէ հոգիիս աղտերը,
սրբէ խղճմտանքս, մաքրէ մարմնիս
մե՞ղքերը եւ քու գիտութեանդ լոյսը
վառէ՛ իմ սրտիս մէջ: Եւ ողորմէ՛
քու արարածներուդ եւ ինձի՝
մեղքերու մէջ կորսուածիս:

Սուրբ Ներսէս Շնորհալի

Շարականներու մասին . . .

Շարականը հոգեւոր երգ մըն է, օրիներգութիւն որ կ'երգուի ծէսի ժամանակ: Իլրաքանչիւր տօնի առթիւ ստեղծուած է հոգեւոր երգերու յատուկ շարք ու այդ շարքն ծայր առած «Շարական» անունը:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
արարողութիւններն ու ծիսակատարութիւնները յատուկ գեղեցկութիւն ունին եւ հոգեպարար կը նկատուին շնորհիւ անոնց ընթացքին երգուող շարականներուն: Շարականները միշտ ալ յատուկ գրաւչութիւն մը ունեցած են հայ հաւատացեալին մօտ եւ պատահականութիւն մը չէ եթէ մեր Եկեղեցւոյ հայրերը առաջին ի՞սկ դարերէն մեծ նշանակութիւն եւ արժէք տուած են հոգեւոր երգեցողութեան՝ շարականներուն, ընդունելով անոնց ազնուացնող ազդեցութիւնը մարդուն ներաշխարհին վրայ:

Ըստ Մալխասեանցի հայերէն բացատրական բառարանին, «Շարական» կը նշանակէ շարք Եկեղեցական երգերու որոնք կ'երգուին Եկեղեցիէն ներս ըստ օրուան յարմարութեան: Ան կը կոչուի նաև «Կանոն»: Արդէն իսկ Շարական բառը ինքնին յառաջացած է, ինչպէս յստակ է, շարք հայերէն արմատէն որուն աւելցուած է «ական» մասնիկը:

Գիտէի՞ր թէ . . .

Ընդունելով շարականներուն հմայքն ու գրաւչութիւնը եւ ճանշնալով անոնց ազդեցութիւնը հաւատացեալին ներաշխարհին ու հոգիին վրայ, Ս. Ներսէս Լամբրոնացի, նկարագրելու համար թէ որքա՞ն ազնուացնող են շարականները, գրած է թէ անոնք մարդոց սրտերէն ներս կ'արթնցնեն շնորհի տենչանքը:

Հետաքրքրական նմանողութիւն

Շարական բառը կը ստուգաբանուի նաեւ որպէս Եկեղեցական ծէսերէն շատ հեռու եւ անկախ մէկ առարկայ՝ թանկագին քարերու ուրկից կը ստացուի շար-ական բառը (կամ ակերու շարք):

Բառային այս բացատրութենէն անդին սակայն, շարականին ամենէն լաւ սահմանումը պիտի ըլլայ անոր բովանդակութեան վերաբերող բացատրական մը ըստ որուն կարելի է ըսել թէ « Շարականները արձակ կամ շափածոյ քերթուածներ են, գրուած գործնական մտահոգութեամբ- ծիսական կիրառութեան համար- առաւել կամ նուազ շափով օժտուած արուեստի յատուկ յատկանիշներով, զուտ կրօնական բովանդակութեամբ եւ հոգեւոր կեանքի մշակման, զարգացման դաստիարակչական նպատակով :» (Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու, Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց:)

Այսօր ցնծան երկնայինքն Շարական նուիրուած Սուրբ Աստուածածնի ծննդեան

Հինգ տուներէ բաղկացած այս գեղեցիկ շարականը Յակոբ Կլայեցի (ԺԳ. դար) շարականագիր-վարդապետի յօրինած «Երգեցէք, որդիք Սիովնի» կանոնին (շարականներու շարքին) «Տէր յերկնից»-ն է (այսինքն անոր բաղկացուցիչ բաժիններէն մէկը): Ոմանք զայն կը վերագրեն Ս. Ներսէս Շնորհալիին:

Այսօր կը ցնծան հրեշտակները եւ երկինքի մէջ պար բռնելով
հոգեւոր երգեր կ'երգեն
Սուրբ Կոյսի ծննդեան օրը:

Այսօր վերին Սիոնը Սերովբէներու երգը կը թնդացնէ՝
եղանակելով երեխալրբեան օրհնութիւնը,
Սուրբ Կոյսին ծննդեան օրը:

Այսօր աստղերը եւ լուսինը արեւին հետ ուրախանալով՝
Կը գովեն Հօրմէն ծագած լոյսը,
Լոյսերու Մօրը ծննդեան օրը:

Այսօր օրէնսգէտ ծերերը, նոր Սիոնի մանուկներով,
Երիտասարդները եւ կոյսերը կ'ուրախանան
Տիրուհիոյն ծննդեան համար:

Այսօր առաքեալներու գունդերը եւ մարգարէներու խումբերը
Քրիստոսի Մօր ծննդեան օրը կ'երգեն
փառք ի բարձունս:

«Շարականների ընտրանի» Երեւան 2004



**Սուրբ Աստուածածնի
ծնունդը**

(Musée de l'Ermitage, St-Petersbourg, Le Tintoret,
1518-1594)

Աստուածաշունչը մանուկներու համար

**Երանութիւններ
Մատթէոս 5.1-12**



Յիսուս Գալիլեայի բոլոր կողմերը շրջելով կը քարոզէր Եւ ժողովուրդը կը բժշկէր բոլոր ցաւերէն ու հիւանդութիւններէն։ Մեծ բազմութիւններ հետեւեցան իրեն։ Յիսուս բազմութիւնը տեսնելով լեռ ելաւ Եւ հոն նստաւ։ Իր աշակերտները հաւաքուեցան իր շուրջ Եւ ինք սկսաւ անոնց սորվեցնել, ըսելով .-



- Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:
- Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ մխիթարութիւն պիտի գտնեն:
- Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը:
- Երանի՛ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնեն:



- Երանի՝ անոնց որոնք խաղաղութեան հաստատումին համար կ'աշխատին, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:
- Երանի՝ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:

Որքա՞ն տարօրինակ
ձեւ է երանի տալու
մարդոց... վստահ
չեմ որ լաւ կը
հասկնամ թէ Յիսուս
ի՞նչ ըսել ուզեց :



Յիսուս ի՞նչ ըսել
կ'ուզէ երբ
հալածուողներուն
երանի կու տայ: Ո՞վ
կ'ուզէ հալածուիլ
ու չսիրուիլ իր
շոփշիններուն
կողմէ:



Յիսուս մեզմէ չի
պահանջեր որ
տխրութիւնն ու
թշուառութիւնը
սիրենք: Ան ըսել
կ'ուզէ որ եթէ
պարզութեամբ
ապրինք, եթէ մեր
շուրջիններուն
ցաւերուն ուշադիր
ըլլանք, եթէ
խաղաղասէր ըլլանք
եւ վստահինք
Աստուծոյ, այն
ատեն երջանիկ
պիտի զգանք:

Ոչ մէկը կը փափաքի
հալածուիլ ու ատելի
ըլլալ: Ծիշդ է որ
աշխարհի երեսին ամէն
մարդ բարի եւ արդար
չէ, բայց բարիք
գործելով եւ մեր
շուրջինները սիրելով
մենք երջանիկ
կ'ըլլանք: Այս է որ
Յիսուս կ'ըսէ մեզի:

26-րդ Տարեշրջանի ամավերջի հանդէս



Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօրեայ Դպրոցի 2005-2006 (26րդ) տարեշրջանի ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 11 Յունիս 2006 ի կեսօրէ ետքը, ժամը 1:30 ին, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Բաստրմանեան սրահին մէջ, շուրջ հարիւր-յիսուն ծնողներու եւ լնտանիքներու անդամներու ներկայութեան:

Հանդէսը իր ներկայութեամբ պատուեց Տէր Գառնիկ Քահանայ Գոյունեան, հոգեւոր Հովհաննես Մոնթրէալի Հայաստանեաց Առաքելական Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ:

Հանդէսը սկսաւ Ծաղիկ դասարանի աշակերտ՝ Նշան Կիրակոսեանի «Բարի եկաք» ով, եւ աշակերտներուն կողմէ ներկայացուած Տէրունական աղօթքի, մաղթանքի եւ Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակօրեայ Դպրոցներու Մաղթերգի յոտնկայս ունկնդրութեամբ:

Ապա Երկր. Ե. կարգի ուսանողներ Փոլ Գիզիրեան եւ Քրիստինա Լոշխանեան իրենց բացման խօսքին մէջ ըստն : «Արամ Վեհափառը 2006 տարին հոչակած է «Հայ դպրոցի տարի»: Մեզի համար Հայ Դպրոցը հոն է ուր աշակերտներ, ուսուցիչներ եւ Տնօրէն

- Հայերէն կը խօսի՞՝ իրարու հետ,
- Հայերէն կը կարդա՞՝ բայց մանաւանդ կը կարդան մեր Հայագրեալ Աստուածաշունչը
- Հայերէն երգեր մտիկ կ'ընեն եւ կ'երգեն՝ բայց մանաւանդ մտիկ կ'ընեն եւ կ'երգեն մեր հայանուագ շարականները



սորվեցնել ըլլալ հայասէր:

Մենք անցնող տարեշրջանին այս բոլորը ըրինք մեր Կիրակնօրեայ դպրոցին մէջ: Կիրակնօրեայ Դպրոց յաճախելով իրարու հետ Հայերէն խօսեցանք, Հայերէն կարդացինք, Հայերէն գրեցինք եւ Հայերէն Երգեցինք ամբողջ տարուան ընթացքին: Եւ աւելին, Կիրակնօրեայ դպրոց յաճախելով

- Սորվեցանք, հայավայել բարի' բարքերն ու սովորութիւնները:
- Մտիկ ընելով ու սորվելով վառ պահեցինք Հայաստանեայց Եկեղեցւոյ տօներն ու ազգային աւանդութիւնները
- Կարդացինք ու փորձեցինք կեանքի վերածել մեր Հայագրեալ Աստուածաշունչը
- Սորվեցանք թէ ըլլալու համար հայասէր, նախ պէտք է ըլլալ Աստուածասէր ու Եկեղեցասէր եւ սորվեցանք սիրել մեր ընկերը

Եւ այս բոլորով նաև մենք Աշխարհին ներկայացանք մեր «Մաշտոցի Արձագանգ» ամսաթերթով եւ մեր Հայերէն կայքէջ՝ www.sourphagop.org ով որուն 5-ամեակը տօնեցինք անցնող Սուրբ Յակոբի տօնին: Որմէ ետք վարեցին օրուան յայտագիրը:

Անցնելով յայտագրի գործադրութեան, մանկապարտէզի Բողբոչ, Կոկոն, Ծաղիկ եւ Նախակրթարանի Ա.

Դասարաններու աշակերտները

Գրաբարով արտասանեցին

«Հաւատով Խոստովանիմ»ի

նրի, 11րդ, 13րդ եւ 15րդ

գլուխները. որմէ ետք ժագա

Յակոբեանի «Յիսուսաբոյր» եւ

Երգեցին «Առաւոտ Լուսոյ»ի

առաջին երկու տունները:

Շարունակելով յայտագիրը,

Նախակրթարանի Բ. եւ

Գ. դասարանները միասնաբար

արտասանեցին Սաղմոս 67 (ԿԶ),





«Հաւատամք»ը, եւ երգեցին «Եկեք Միանանք» երգեհոնի ընկերակցութեամբ Նախակրթարանի Զ. դասարանի աշակերտ Սեդրակ Մամիրոյեանի:

Ներկայացնելու համար յայտագրի յաջորդ բաժինը, Փոլ Գիգիրեան յայտարարեց:

«Քրիստոնէական դաստիարակութեան առաջին եւ մեծագոյն միջոցը ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆՉՆ է, եւ թէ բաց Աստուածաշունչը մեր հայապահպանման ամենակարեւոր զէնքն է **405** Թուականնէն ի վեր: Այսօր այս հեռաւոր ափերուն մէջ

տակաւին կը մնայ ամենակարեւորը: Այսօր, **21**րդ դարուն պայման է որ Սուրբ Գիրքը, հայերէնով, բաց մնայ ոչ միայն թուղթի վրայ, այլ նաև մեր համակարգիչներու պաստառներուն եւ Համացանցին վրայ»: Ապա Նախակրթարանի Դ., Ե., Զ. եւ Երկրորդականի Ա. դասարաններու աշակերտները արտասանեցին Ժագ Յակոբեանի «Սուրբ Գիրքը թող բաց մնայ» քերթուածը, որմէ ետք Նախակրթարանի Զ. դասարանի աշակերտ Սեդրակ Մամիրոյեան երգեհոնի վրայ

նուագեց «Տէր Ողորմեա» ։ ։ ։

Ներկայացնելու համար յայտագրի յաջորդ բաժինը, Քրիստինա Լոշիսանեան յայտարարեց:

«Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհը որ մինչեւ իսկ իր միածին որդին տուաւ որպէսզի անոր հաւատացողը չկորսուի այլ յախտենական կեանք ունենայ» Կը կարդանք Յովհաննէսի աւետարանին Յրդ գլխուն **16** րդ համարին մէջ: Յիսուս ըսաւ «Սիրէ՝ քու ընկերդ քու անձիդ պէս»: Մեր մանկապարտէզի

փոքրիկները շատ լաւ կը հասկնան այս անձնազոհութեան եւ ընկերասիրութեան արարքները եւ մեզի պիտի ներկայացնեն այս երկուքը միախառնուած Մէկ կենդանի պատկերի մէջ: Որմէ ետք մանկապարտէզի աշակերտները ներկայացուցին «Մեղուն ու Աղաւնին»:



Ապա խօսք առաւ Կիրակնօրեայ դպրոցի Տնօրէն պրճ. Թորոս Պապիկեան որ հակիրծ կերպով անդրադառնալէ ետք Դպրոցի ընդհանուր կեանքին մասին, յատուկ կերպով անդրադարձաւ Դպրոցի կայքէջին www.sourphagop.org ին 5 ամեակին եւ անոր ամսական 6,000 այցելութիւններուն որոնք եկան աշխարհի 87 երկիրներու 518 քաղաքներէն եւ **«Մաշտոցի Արձագանգ»** ի ԺԳ տարուան տասը թիւերուն եւ բացառիկին, որուն 232 էջնոց պատկերազարդ հաւաքածոն դրան մուտքին գրուեցաւ ներկաներուն: Պարոն Տնօրէնը իր խօսքին մէջ Կիրակնօրեայ Դպրոցը նմանցուց երկու օր առաջ սկսած Ոտնագնդակի Մոնտիալ 2006 ին մասնակցող խումբի մը, որ ունի Տնօրէնը որպէս «Բերդապահ» եւ 10 ուսուցիչները որպէս «Խաղաղողներ» որոնք ամէն Կիրակի որպէս անդամներ Զինուորեալ Եկեղեցւոյ «պատերազմի

դաշտ» կը ներկայանան պաշտպանելու համար «Բերդ»ը հակառակորդին յարձակումներուն դէմ: Սակայն, յիշեցուց Տնօրէնը, երբ Մոնտիալի ոտնագնդակի խումբը ունի պահեստի 12 խաղացողներ որոնք կրնան փոխարինել վիրաւոր կամ յոգնած խաղացողները, Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակին կը պակսին փոխարինող ուսուցիչներ եւ կոչ ուղեց ներկաներուն միանալու Կիրակնօրեայ Դպրոցին կամաւոր խմբակին:

Ապա տեղի ունեցաւ Վկայագրերու եւ Վկայականի տուչութիւն: Վկայագիր ստացան Նախակրթարանի Զ. դասարանի աւարտականներ՝ Ռաֆֆի Դաւիթեան, Գրիգոր Մաթոսեան, Սեդրակ Մամիրոյեան եւ Արման Հրակ Նարեկեան: Վկայական ստացան Երկրորդականի Ե. դասարանի աւարտականներ՝ Փոլ Գիգիրեան, Քրիստինա Լոշխաճեան եւ Կարօ Կարապետեան:

Աւարտականներու անունով խօսք առաւ Կարօ Կարապետեան եւ շնորհակալութիւն յայտնեց տնօրէնին եւ ուսուցիչներուն «որոնք ճիգ չխնայեցին մեզ դաստիարակելու որպէս Քրիստոնեայ Հայեր, Աստուածաշունչի ոգիով, գաղափարներով, բարոյական սկզբունքներով եւ ճշմարտութիւններով եւ Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ հարազատ շունչով, աղօթքներով եւ շարականներով. Սուրբերով եւ աւանդութիւններով:»

Եւ աւելցուց, «Յաջորդող Տարիներուն մեր ամենօրեայ վարժարանները պիտի փոխարինուին Գոլէժով, Համալսարանով եւ կեանքի ասպարէզով, սակայն մեր Կիրակի առաւօտները միշտ տրամադրուած պիտի ըլլան Եկեղեցւոյ, որովհետեւ Կիրակնօրեայ Դպրոցը մեզի սորվեցուց թէ Կիրակի Օրը Աստուծոյ օրն է»: Ապա շարունակեց ըսելով՝ «Այսօր, մենք հրաժեշտ կ'առնենք մեր Կիրակնօրեայ Դպրոցէն որպէս աշակերտ: Սակայն մեր կապը պիտի շարունակուի www.sourphagop.org ի եւ «Մաշտոցի Արձագանգ» ի միջոցաւ եւ թերեւս գալ Սեպտեմբերին վերադառնանք դպրոց որպէս ուսուցիչ, քարտուղար, մարզանքի պատասխանատու կամ www.sourphagop.org ի Webmaster եւ կամ ուրիշ ուելէ այլ ծառայութիւն որ մենք կրնանք վերադարձնել մեր Սիրելի Դպրոցին: Պարոն տնօրէն, մենք պատրաստ ենք»:

Նույնին տրուեցան այն աշակերտներուն որոնք տարեշրջանի 36 կիրակիներէն առնուազն 34-ին մասնակցած էին դպրոցի գործունէութեան:

Ապա բեմ հրավիրուեցաւ Տէր Գառնիկը որ իր փակման խօսքին մէջ բարձր գնահատեց ուսուցչական կազմին տարած գործը որ մեծ զոհողութիւն կ'ենթադրէ, եւ իր ներկայութեան գեղեցիկ ծաղկեփունչ մը յանձնուեցաւ իւրաքանչիւրին: Տէր Գառնիկը նաեւ Հրաւիրեց Տնօրէնը որ իր փոխարինող ուսուցիչներու պէտքին աղերսը ընէ Եկեղեցւոյ բեմէն յաջորդող Կիրակի օր մը:

Հանդէսը փակուեցաւ Տէր հօր Պահպանիշով եւ ընդհանուրին կողմէ երգուած Կիլիկիա մաղթերգով:



Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն



Ամբողջացո՞ւր Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ
Դպրոցներու նշանաբանը: Մարկոս 10.14

Յիսուս, մանուկները, արգելք, այդպիսիներուն,
արքայութիւնը

----- ըսաւ.

«Զգեցէք որ ----- ինձի գան,
----- մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ
----- է Աստուծոյ
----- :»

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

- | | |
|---|---|
| <p>1.- Ո՞ր տարին հիմնուեցաւ «Հայաստանեաց Կիրակնօրեայ Դպրոցներ»ը:</p> <p>ա.- 1900
բ.- 1929
գ.- 1979
դ.- 1980</p> | <p>դ.- Խաչվերաց Եկեղեցւոյ Դպրոցներ:</p> <p>ա.- 1900
բ.- 1929
գ.- 1979
դ.- 1980</p> |
| <p>2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ Մոնթելէալի Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը:</p> <p>ա.- 1900
բ.- 1929
գ.- 1979
դ.- 1980</p> | |
| <p>3.- Քրիստոսի Սուրբ Եկեղեցին քանի խորհուրդներ ունի:</p> <p>ա.- 5
բ.- 9
գ.- 7
դ.- 3</p> | |
| <p>4.- Ո՞վ հաստատած է Եկեղեցւոյ եօթը խորհուրդները:</p> <p>ա.- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ
բ.- Կաթողիկոսը
գ.- Տէր Գառնիկը
դ.- Մեր Տէրը Յանուար Քրիստոս</p> | |
| <p>5.- Ի՞նչ կը կոչուի տաղաւարը որ կը տօնենք Սեպտեմբեր ամսուան ընթացքին:</p> <p>ա.- Սուրբ Ծնունդ
բ.- Սուրբ Զատիկ
գ.- Սուրբ Աստուածածնի Վերափոխում</p> | |
| <p>դ.- Խաչվերաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգին առաջին 4 տողերը:</p> <p>Կիրակնօրեայ Սուրբ յարկին մենք ----- ենք լուսաբաղձ,
Կայծերու պէս -----
Ցայտած՝ սրտէն պերճ -----:</p> | |
| <p>6.- Հետեւեալներ սուրբերէն որո՞ւն տօնը կը տօնենք Սեպտեմբերին:</p> <p>ա.- Սուրբ Սարգիս
բ.- Սուրբ Գէորգ
գ.- Սուրբ Թադէոս
դ.- Սուրբ Պետրոս</p> | |
| <p>7.- Մէկ բառով ըսէ «Եկեղեցական երգերու շարք»:</p> | |
| <p>8.- Յիսուս օր մը քարոզեց 9 Երանիներու մասին: Ի՞նչ կը կոչուի այդ քարոզը:</p> <p>ա.- Դաշտին քարոզը
բ.- Լիճին քարոզը
գ.- Լեռան քարոզը
դ.- Գիւղին քարոզը</p> | |
| <p>9.- Ամբողջացո՞ւր Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգին առաջին 4 տողերը:</p> <p>Կիրակնօրեայ Սուրբ յարկին մենք ----- ենք լուսաբաղձ,
Կայծերու պէս -----
Ցայտած՝ սրտէն պերճ -----:</p> | |
| <p>10.- Ամբողջացո՞ւր Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգին երկրորդ 4 տողերը:</p> <p>Ուստի քալենք -----,
Ո՞վ հարազատ զարմ -----,
----- գընացքով
Լոյս-աղբիւրին -----:</p> | |

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն

- 1.- Ո՞վ էր Կիլիկիոյ Կաթողիկոսը Երբ կոչուին:
 Իիմնուեցաւ «Հայաստանեաց
 Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներ»ը
 1929 թուին:
- ա.- Սահմակ Բ. Կաթողիկոս
 Խապայեան
 բ.- Արամ Ա. Կաթողիկոս
 գ.- Գարեգին Ա. Կաթողիկոս
 դ.- Գարեգին Բ. Կաթողիկոս
- 2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ
 Մոնթրէալի Սուրբ Յակոբ
 Կիրակնօրեայ Դպրոցը:
 ա.- 1900
 բ.- 1929
 գ.- 1979
 դ.- 1980
- 3.- Ցիսուս լերան քարոզին մէջ
 «Մատթէոս 5, 6, 7» քանի՝
 Երանութիւններու մասին խօսեցաւ:
 ա.- 5
 բ.- 9
 գ.- 7
 դ.- 3
- Ամբողջացո՞ւր ըստ
 Երանութիւններուն:
 4.- Երանի՝ ողորմածներուն,
 որովհետեւ անոնք Աստուծմէ
 ----- պիտի գտնեն:
 ----- պիտի
- 5.- Երանի՝ անոնց որոնք
 խաղաղութեան հաստատումին համար
 կ'աշխատին, որովհետեւ անոնք
 ----- պիտի
- 6.- Երանի՝ անոնց, որոնք
 ----- են, որովհետեւ
 անոնք զԱստուծ պիտի տեսնեն:

- 7.- Եկեղեցական Երգերու շարքը կը
 կոչուի Շարական: Ի՞նչ կը կոչուի
 Շարականներու շարքը:

- 8.- Յակոր Կլայեցի Շարականագիր
 Վարդապետը ո՞ր դարուն ապրեցաւ:
 ա.- ԺԱ.
 բ.- ԺԲ.
 գ.- ԺԳ.
 դ.- ԺԴ.
- 9.- Ամբողջացո՞ւր Հայաստանեաց
 Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու
 Մաղթերգին Բ. տունին առաջին 4
 տողերը:
 Եկեղեցին -----՝
 Ժառանգ անգին, -----
 Մեր ----- վերասլաց
 Թափին է խիզախ -----
- 10.- Ամբողջացո՞ւր Հայաստանեաց
 Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու
 Մաղթերգին Բ. տունին Երկրորդ 4
 տողերը:
 Հայ մշկահոտ -----
 Բոյրովն օծած մեր -----,
 Մեր ----- մէջ յաղթական՝
 ----- ամէն պիտ՝ փշրին:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1.- Այս տարի, 2006 ը ինչի՞ տարի հոչակուած է ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին կողմէ:

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ Մոնթրէալի Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցը:
 ա.- 1900
 բ.- 1929
 գ.- 1979
 դ.- 1980

3.- Ըստ Յիսուսի լերան քարոզին «Մատթէոս 5, 6, 7» որո՞նք Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնեն:

4.-Ըստ Յիսուսի լերան քարոզին «Մատթէոս 5, 6, 7» որո՞նց է երկինքի արքայութիւնը:

5.- Ըստ Յիսուսի լերան քարոզին «Մատթէոս 5, 6, 7» որո՞նք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:

6.- Ի՞նչ է Մկրտութեան Խորհուրդին զգալի նշանը:

7.- Ի՞նչ է Դրոշմ Խորհուրդին զգալի նշանը:

8.- Որո՞նք են Հաղորդութեան Խորհուրդին զգալի նշանները:
 Անխմոր -----
 Եւ անապակ -----:

9.- Ամբողջացո՞ւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակօնօրեայ Դպրոցներու Մաղթերգին Գ. տունին առաջին 4 տողերը:

Կեցեն՝ յաւերժ, -----,
 Հիմնադիր եւ -----,
 Կիրակօնօրեայ ----- տան
 Զահակիրներ -----:

10.- Ամբողջացո՞ւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակօնօրեայ Դպրոցներու Մաղթերգին Գ. տունին երկրորդ 4 տողերը:

Հնչեցէ՛ք յար, -----
 Մեր սրտերուն -----,
 Որ վառ մընայ ----- դեռ՝
 ----- Հայ հոգին:

**Կարճ լուրեր Կիրակնօրեայէն
Կիրակնօրեայ Դպրոցի 2006-2007 տարեշրջանի
Սեպտեմբեր ամսուայ ժամանակացոյցը**

Սեպտեմբեր 10	ժամը 10:30 – 1:00	Արձանագրութիւն
Սեպտեմբեր 17	ժամը 10:30 ին	Վերամուտ
Սեպտեմբեր 23		Ուսուցչական Սեմինար
Սեպտեմբեր 24		Սբ. Հաղորդութիւն

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել Թորոս Պապիկեանին՝ (514) 956-1277

**«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի
ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաև
համացանցի վրայ:**

**Այցելեցէ՞ք www.sourphagop.org հասցէն
եւ ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը:**

**Սուրբ Յակոբ Կրտսերներու Երգչախումբ
(8-15 տարեկաններու համար)**

**Փորձ՝ Ամէն Ուրբաթ 8 Սեպտեմբեր 2006 էն սկսեալ
կ. ե. ժամը 4:30-6:00
Հայ Կեդրոնի թիւ 3 սենեակին մէջ**

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ (514) 331-5445 Ext. 203

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ



Խաչին տեսակները իբր կեանքի դժուարութիւններ որքա՞ն տեսակաւոր են ու անթիւ, նոյնքան եզակի է անոր փրկարար յատկութիւնը։ Խմբագրականը կարդալ էշ 3

Եկեղեցին Երախայ կը կոչէ բոլոր անոնք որոնք կը պատրաստուին մկրտուելու անկախ անոնց տարիքէն։ Մկրտութեան եկեղեցական խորհուրդին մասին կարդալ էշ 7-8։



Հայաստանեաց առաքելական Եկեղեցւոյ կանոնները կը բաղկանան ընդհանրապէս ութ տեսակի շարականներէ։ Շարականներու մասին կարդալ էշ 12



Չորս բաներ՝ սիրտ, հոգի, միտք եւ ամբողջ զօրութիւն եւ կարողութիւն։ Կը տեսնէք, որ սիրտը եւ հոգին յիշեց, բայց սրտին եւ հոգիին կողքին Աստուածաշունչը մեզի կ'ըսէ նաեւ թէ միտքը կարեւոր է։

Հատուած Զարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեաննէն, էշ 10

Բայց ապա Աստուած, մեր փրկիչը, իր քաղցրութիւնն ու մարդասիրութիւնը յայտնեց եւ մեզ փրկեց, ո՞չ թէ մեր կատարած արդար գործերուն համար՝ այլ պարզապէս ողորմած ըլլալուն համար։ Ասէ՛ Աստուած, էշ 11

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի
ամսաթերթ

Խմբագիր՝

Շաղիկ Պոյաճեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ-ի ներկայ եւ
նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ։ Այցելեցէ՛ք
www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՛ք Պարբերաթերթ բաժանումը

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի
կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝

Վերժին Գէպթանճեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխանճեան
Յասմիկ Նաճարեան
Գարոլ Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխէն Իշխանճեան
Յասմիկ Գանճեան

Լուսանկարիչ՝

Նիկոլ Դանիելեան

Տնօրէն՝

Թորոս Պապիկեան

Այս թիւով . . .

Հոգիով տարուած յաղթանակ.	Էջ 3
Հոկտեմբեր ամսուան տօնացոյց.	Էջ 4
Վարագայ Սուրբ Խաչ	Էջ 5
Խօսք Յիսուսի 72 աշակերտներուն.	Էջ 6
Մկրտութիւն	Էջ 7-8
Փութանակի թարգմանութիւն.	Էջ 9
Եզակի Գիրեր	Էջ 9
Կրօնքի եւ հաւատքի վերաբերող հարցեր	Էջ 10
Փրկչական շնորհին յայտնութիւնը.	Էջ 11
Շարականներու մասին՝ Կանոն.	Էջ 12
Տընօրինաբար զարդարեցին.	Էջ 13
Խօսք իմ որդուն	Էջ 14
«Զգեցէք որ մանուկները ինձի գան» Աստուածաշունչը մանուկներու համար.	Էջ 15
Ո՞րն է ճիշդ պատասխանը.	Էջ 19
Կարճ լուրեր.	Էջ 24

Խմբագրական

Հայաստանեայց եկեղեցին իր տօնացոյցին մէջ յատուկ տեղ յատկացուցած է Քրիստոնէական հաւատքի բարձրագոյն խորհրդանիշ նկատուող առարկայի մը՝ խաչին։ Խակապէս ալ, մեր եկեղեցին ունի խաչի նուիրուած բազմաթիւ տօներ որոնցմէ երկուքը, «Վարագայ Սուրբ Խաչ»ը եւ «Գիւտ խաչին» այս տարի կը յիշատակուին Հոկտեմբեր ամսուան ընթացքին։ Առաջինը կը յիշատակէ Սուրբ Հոփիսիմէի ժառանգ թողած խաչին երեւումը Վարագայ վաճքի սեղանին վրայ, իսկ երկրորդը՝ Քրիստոսի խաչին գտնուիլը Կոստիանդիանոս կայսրի մօր՝ Սրբունի Հեղինէի ձեռքով։

Խաչը քրիստոնեային հաւատքը ամբողջութեամբ իր մէջ ամփոփող խորհրդանիշ մըն է։ Իսկ Հայ՝ քրիստոնեան յատկապէս շերմ կապ ունի իր խաչին հետ որովհետեւ մեր ժողովուրդը ոչ թէ միայն «խաչը» որդեգրած է, ընդունած է, յարգած է, կրած ու սիրած, այլ աւելին՝ զայն պաշտած։ Հայը եղած է խաչապաշտ։

Հակասականօրէն սակայն, խաչը զոյգ խմաստեր կը կրէ, առաջին ակնարկով մէկը միւսը հակասող, բայց խորքին մէջ՝ զիրար ամբողջացնող։ Այսպէս, Խաչը թէ՝ տառապանքի ժխտական խորհրդանիշ մըն է եւ թէ՛ նոյն ատեն փրկութեան ու հոգեւոր յաղթանակի նշան։ Իրաքանչիւրս, Քրիստոսի նմանողութեամբ կը կրենք մեր անհատական խաչերը, մեր կեանքերուն բերած դժուարութեանց ծանրութեան համեմատ, եւ իրաքանչիւրս, նորէն Քրիստոսի նմանողութեամբ, խաչով կը յաղթահարենք կեանքի մեզի բաժին հանած խոշընդուներուն։ Նոյնպէս, անհատականէն անդին, իբր հաւաքականութիւն եւ ժողովուրդ ալ կրած ենք խաչ եւ յաղթանակած խաչով։

Խաչը իբր դժուարութեանց եւ տառապանքի խորհրդանիշ, թիւով անհամար ձեւեր կրնայ ստանալ։ Օրինակ, ան կրնայ ըլլալ առօրեայ անցողակի դժուարութիւն մը ծագած գործի, ընտանիքի, առողջութեան,

փոխ-յարաբերութեան մը վերագրուող կացութեան մը պատճառաւ։ Ան կրնայ ըլլալ թիւ շատ ծանր, առաւել կամ նուազ տառապալից, դիւրութեամբ կամ դժուարութեամբ լուծուող։

Խաչին տեսակները իբր կեանքի դժուարութիւններ որքա՞ն տեսակաւոր են ու անթիւ, նոյնքան եզակի է սակայն անոր փրկարար յատկութիւնը։ Եթէ խաչ կրելու ձեւերը իրաքանչիւր հաւատացեալի կեանքէն ներս տարբեր է, խաչով յաղթահարելու ձեւը՝ ի՞նք, բոլորիս համար միւնենոյնն է։ Այդ եզակի ձեւը մեզի կը հասնի Քրիստոսի օրինակին ընդմէշէն եւ Անոր քարոզած ճշմարտութեան ճամբով՝ նիւթեղէնին վրայ տարուած հոգեւոր կեանքի յաղթանակով։ Ամէն տեսակի խաչի դէմ դնելու ձեւը մէկ է։ հոգիով յաղթել նիւթեղէնին։

Հոգիով տարուած յաղթանակը մէկ եւ եզակի ճշմարտութիւն է բայց կը ստանայ, իր կարգին, բազմատեսակ ձեւեր։ Ան կ'իրականանայ առաքինութեան ճամբով, իմաստութեամբ, արդարութեամբ, ժոմկալութեամբ, արիութեամբ, հաւատքով, յոյսով եւ սէրով։ Այս քրիստոնէական առաքինութիւններն են փրկարար խաչի ճամբան, ու այն ճամբան են որ Քրիստոս ի՞նք բունեց ու անոր վրայով քալեց։ Այս առաքինութիւններն են որ Ան քարոզեց ու իր կեանքը վերածեց անոնց կիրարկման բարձրագոյն օրինակի մը։

Այս է ուրեմն խաչի ճամբով յաղթանակելու միջոցը եւ մեր կեանքի ամէն տեսակի մանր դժուարութեան կամ ծանր տառապանքներուն դէմ դնելու ու անոնց բերած դառնութեան փոխարէն քաղցրահամ խաղաղութեան հասնելու ճշմարիտ ձեւը։



Հոկտեմբեր ամսուան տօնացոյց


Հոկտեմբեր 1 Վարագայ Սուրբ Խաչ

Հոկտեմբեր 7 Եօթանասուներկու աշակերտներ Քրիստոսի

Հոկտեմբեր 14 Սուրբ Թարգմանիչներ

Հոկտեմբեր 29 Գիւտ Սուրբ Խաչի

Սուրբ աւետարանիչներ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս



Pieter Aertsen (1508-1575)

Les Quatres Évangélistes (Չորս Աւետարանիչներ)

Musée Suermondt-Ludwig, Aix-la-Chapelle

Այս տարի Հոկտեմբեր ամսուան 21-ին, Հայաստանեաց Եկեղեցին կը յիշատակէ տօնը Քրիստոսի կենաքը ու քարոզչութիւնը պատմող աւետարաններու հեղինակներուն՝ Սուրբ աւետարանիչներ՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի, Յովհաննէսի:

Մատթէոս պաշտօնով մաքսաւոր էր, այսինքն հարկահաւաք, երբ Յիսուս զինք իր 12 Առաքեալներէն մէկը ըլլալու կանչեց:

Մարկոսի Աւետարանը չորս աւետարաններէն ամենէն կարճ է եւ գրուած է բոլորէն առաջ:

Ղուկաս Յոյն բժիշկ մըն էր, որ աշակերտած էր Պողոս առաքեալի եւ դարձած անոր հաւատարիմ գործակիցը եւ բազմաթիւ անգամներ անոր հետ ճամբորդած:

Յովհաննէս Յիսուսի 12 Առաքեալներէն կրտսերագոյցն է: Յովհաննէսի Աւետարանը յատկանշական կերպով տարբեր է միւս աւետարաններէն: Անիկա Յիսուսը կը ներկայացնէ որպէս Աստուծոյ Խօսքը որ մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ:

Վարագայ Սուրբ Խաչի պատմութիւնը

Հստ եկեղեցւոյ աւանդութեան, Սուրբ Հոփիսիմեանց կոյսերը Դիոկղետիանոս կայսրին կողմէ հալածուելով, կու գան ապաստանելու Վարագայ Լեռան լանջին։ Սուրբ Հոփիսիմէն իր վզին կը կրէր Քրիստոսի խաչափայտէն մասունք մը զորս հալածանքէ ազատելու համար կը պահէ Վարագայ Լեռան մէկ քարայրին մէջ։ Այդ մասունքը երկար ատեն կը մնայ անգտանելի։

653 թուին, այդ լեռան վրայ

ուղեւորութեան կը մեկնին երկու ճգնաւորներ, Թոդիկ եւ Հովել։ Անոնք անդադար կ'աղօթէին խնդրելով Աստուծմէ որ ի յայտ բերէ Քրիստոսի խաչափայտի մասունքին թաքնուած տեղը։ Առ ի պատասխան հաւատացեալ ովատաւորներուն, Աստուած լոյսի տեսիլքով 12 սիւներ կը յայտնաբերէ, որոնց մէշտեղ վեր կը բարձրանայ սուրբ խաչափայտի մասունքը՝ Սուրբ Նշանը։ Նոյն ատեն կը լսուի ձայն մը որ կ'իսէ.- «Քրիստոս հաճեցաւ բնակիլ Սուրբ Խաչին մէջ, ի պահպանութիւն եւ փրկութիւն հայոց աշխարհին։»

Վարագավանք



Վարագայ վանքի ներկայ աւերակ վիճակը

Վարագայ վանքը կը գտնուի Վան քաղաքի հարաւ արեւելքը, Վարագ լեռան լանջին։ Ան կը նկատուի նշանաւոր կրօնական, կրթական եւ մշակութային կենտրոն։

Վարագայ վանքը կառուցուած է 653 թուին, երբ, ըստ աւանդութեան, Վարագ լեռան վրայ ի յայտ եկած է Սուրբ Հոփիսիմէի թաղած ու գաղտնի պահած Քրիստոսի խաչափայտէն մասունք մը։

Վարագայ վանքի վանահայր կարգուած է Խրիմեան Հայրիկը (1857-ին)։ Այդ օրերուն, Խրիմեան Հայրիկ վանքէն ներս բացած է տպարան եւ հոն հաստատած այդ օրերուն յառաջադէմ նկատուող մամկավարժական աշխատաձեւեր կիրարկող ժառանգաւորաց դպրոց։ Այդ դպրոցի ուսուցիչներու կարգին է Ռաֆֆի, իսկ շրջանաւարտներուն՝ Գարեգին Եպսկ. Սրուանձտեանց։

1915-ին Վարագայ Վանքը լքուած է ու այսօր ամբողջութեամբ աւերակ է։

Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ Խօսք Յիսուսի 72 աշակերտներուն

Այս խօսքերով է որ Յիսուս դիմեց իր եօթանասուներկու աշակերտներուն որոնք զոյց զոյց իրմէ առաջ դրկեց իր երթալիք բոլոր քաղաքներն ու շրջանները:

«Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ. հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ պատրաստէ եւ դրկէ:»

Աւետարաններուն մէջ, աշակերտ անունը կը տրուի յատկապէս Յիսուսի 12 առաքեալներուն կամ Անոր 72 աշակերտներուն: Աշակերտ կը կոչուին նաև, շատ աւելի ընդհանուր հասկացողութեամբ բոլոր անոնք որոնք Իր վարդապետութեան կը հաւատան, կ'ապահնին Անոր զոհին, Անոր



ոգին կը կրեն, կը հետեւին Անոր օրինակին: Իսկ «Գործք առաքելոց»ին մէջ, աշակերտ կոչումը կը տրուի բոլոր քրիստոնեաններուն, զայն հաւասար դասելով հաւատացեալ, եղբայր եւ քրիստոնեայ կոչումներուն հետ:

Աղօթք ցալի ու նեղութեան մէջ

Երկնաւո՞ր Հայր, քու անունդ օրհնեա՞լ ըլլայ: Հոգեղէն ու հողեղէն բոլոր արարածները անդադար կ'օրինաբանեն քեզ: Եւ ես, քու խոնարի եւ թշուառ ծառադ, ինչքա՞ն կ'ուզեմ ինքզինքս միախառնել անոնց եւ իմ կարկամեալ հոգիիս ու մարմնիս ամեն մէկ բջիջով նոյն օրհնութիւնը վերառաքել քեզի:

Բայց անձկութեան մէջ է հոգիս. վախ ու տագնաապ բռներ են զիս, եւ չեմ հասկնար, ո՞վ Տէր, թէ ինչո՞ւ այսքան ցալ ու տառապանք, այսքան վիշտ ու նեղութիւն ինծի բաժին դարձուցիր: Արդեօք անո՞ր համար, որ չուզեցի քեզմէ ուրիշ ուրախութիւն ունենալ, արդեօք անո՞ր համար որ ուխտեցի հարազատ ու հնազանդ որդի մը ըլլալ քեզի. արդեօք անո՞ր համար որ ուզեցի քու Միածին Որդիիդ հետքերով ընթանալ:

Ներէ՛ ինծի, ո՞վ գթած Հայր, որ կը փորձեմ բայց չեմ հասկնար քու կամքդ ինծի համար: Մեղքով մթագնած մահկանացուներուս միտքը քու լոյսէդ եւ անմիջական հաղորդութենէդ կտրուած, չի կրնար հասկնալ ինչ որ դուն կը կամենաս եւ ինծի համար պատրաստեր ես: Բայց հոգիիս ամբողջ օգրութեամբ յօժար եմ ես քու կամքիդ. յօժարութիւնս ընդունէ՛, Տէ՛ր, անուշաբոյր զոհի պէս: Կեանքս քո՛ւկդ է, քեզի՛ կու տամ. չունի՛մ քեզի արժանի ընծավելիք ունէ բան, եթէ ոչ միայն՝ սէրս, սիրոյդ դիմաց. Ընդունէ՛ զայն քու ընծայած փրկութեանդ բուրվառին մէջ՝ սիրոյ հո՛ւր Միածին Որդիիդ միացած՝ անուշահոտ խունկի պէս:

Եկեղեցւոյ խորհուրդները ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Սեպտեմբեր ամսուան թիւվ, մենք տեսանք թէ Եկեղեցական խորհուրդները ծէսեր եւ աստուածապաշտական արարողութիւններ են, որոնց միջոցաւ կը խորհրդանշուին ու շօշափելի ձեւով կը Եերկայացուին Քրիստոսի կեանքին ու գործունէութեան առընչուող գալութիքներն ու անտեսանելի երեւյթները։ Հոկտեմբեր ամսուան այս թիւվ պիտի Եերկայացնենք Եկեղեցական եօթ խորհուրդներէն առաջինը՝ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ։

Հայաստանեաց Եկեղեցւոյ եօթ խորհուրդներէն առաջինն է Մկրտութիւնը։ Մկրտութիւն կը նշանակէ լուացում, մաքրութիւն։ Մկրտութեան ճամբով է որ մարդը կը մտնէ Եկեղեցի եւ անդամ կը դառնայ անոր, այսինքն իր մէջ կ'ընդունի Սուրբ Հոգին։ Մկրտուելով, մարդը կը մաքրուի իր բոլոր մեղքերէն եւ կը վերածնի խորհրդաւոր ձեւով։ Մկրտութիւնը նախապայման է միւս բոլոր խորհուրդներուն, այսինքն ամենէն առաջ պէտք է ա՛ն կատարուի։ Ան կեանքի ընթացքին մէկ անգամ միայն կը կատարուի։ Մկրտութիւնը կը կատարուի քահանային ձեռքով, երեխան երեք անգամ ջուրին մէջ սուզելով (կամ չափահաս մկրտուողի պարագային ջուրով սրսկելով), ու ըսելով «Յանուն Հօր եւ Որդույ եւ Հոգւյն Սրբոյ»։ Եւ որովհետեւ մկրտութիւնը կը կատարուի կանուխ, մանուկ տարիքի, այս խորհուրդը կը կատարուի վստահելով մկրտուող երեխային կնքահօր հաւատքին ու մաքրու սրտին։ Այսպէս է որ քահանան երեք առիթներով կնքահօր կը հարցնէ.- «Կնքահայր, երեխան ի՞նչ կ'ուզէ», եւ ան կը պատասխանէ.- «Հաւատք, յոյս, սէր եւ մկրտութիւն»։

Գիտէի՞ր թէ... .

Նախքան մկրտուիլը մարդ չկրնար մասնակից ըլլալ Եկեղեցւոյ այլ խորհուրդներուն, օրինակ հաղորդութեան։ Այս իսկ պատճառաւ պատարագի ընթացքին, այն պահուն երբ նշխարն ու գինին կը բերուին սեղան, սարկաւագը կը յայտարարէ հետեւեալը.-


«Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեզցի յաստուածային խորհուրդս։» (Ո՛՛ ոք չմկրտուածներէն կամ թ ե ր ա հ ա ւ ա տ ն ե ր է ն , ապաշխարողներէն եւ անմաքրուրներէն թող մօտենայ աստուածային այս խորհուրդին)։



Կնքահօր պարտականութիւնը

Մկրտութեան ընթացքին, կնքահայրն է որ մանուկը կը ներկայացնէ քահանային։ Ան է որ կը խնդրէ քահանայէն որ երեխան մկրտէ։

Մկրտութեան վերջ, կնքահայրը Աստուծոյ առջեւ պարտական է իր սանը/սանութին քրիստոնէական հաւատքով դաստիարակելու որպէսզի ան դառնայ առաքինի հաւատացեալ քրիստոնեայ մը։ Կնքահայրը պէտք է մօտէն հետեւի իր սանին/սանութին հոգեւոր եւ կրօնական դաստիարակութեան որպէսզի ան չշեղի ուղիղ ճամբէն ու հաւատարիմ մնայ Աստուծոյ։



Մկրտութեան խորհուրդը հաստատուած է Հայաստանեայց Եկեղեցիէն ներս հետեւողութեամբ Քրիստոսի օրինակին, որովհետեւ առաջին անգամ Յիսուս ինքն էր որ մկրտուեցաւ Յովհաննէս Մկրտիչի ձեռքով, Յորդանան գետին մէջ։ Ահա Յիսուսի մկրտութիւնը, ըստ Մատթէոսի աւետարանին.-

« Այդ օրերուն Յիսուս Գալիլեայէն Յորդանան գետ եկաւ Յովհաննէսի մօտ՝ անկէ մկրտուելու համար։ Բայց Յովհաննէս ընդդիմացաւ անոր, ըսելով։

- Ե՞ս պէտք ունիմ քեզմէ մկրտուելու, եւ դո՞ւն ինձի կու գաս։

Յիսուս պատասխանեց։

- Հիմա թո՛յլ տուր որ այդպէս ըլլայ, որովհետեւ այսպիսով կատարած պիտի ըլլանք Աստուծոյ արդար կամքը։

Եւ Յովհաննէս թոյլ տուաւ։ Յիսուս մկրտուելէ ետք անմիջապէս ջուրէն դուրս ելաւ։ Եւ ահա երկինքը բացուեցաւ, եւ տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղաւնիի նման կ'իջնէր եւ կու գար իր վրայ։ Եւ ահա երկինքէն լսուեցաւ ձայն մը, որ կ'ըսէր։

- Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ։»

Երախայ թէ՞ Երեխայ

Եկեղեցին Երախայ կը կոչէ բոլոր անոնք որոնք կը պատրաստուին մկրտուելու անկախ անոնց տարիքէն։ Այսպէս, որքան որ ալ հակասական թուի այս, կարելի է հանդիպիլ չափահաս Երախաներու, այսինքն չափահաս տարիքի մարդոց որոնք տակալին մկրտուած չեն։

Ի՞նչ է... Փութանակի թարգմանութիւն

Բոլորիս ծանօթ են անպայման Կորիւն Սքանչելի,
Եզնիկ Կողբացի եւ Մովսէս Խորենացի անունները։ Անոնք
Մեսրոպ Մաշտոցի աշակերտներն են որոնք կը դասուին
մեր առաջին թարգմանիչներու կարգին։ Հայաստանեաց
եկեղեցին մեր թարգմանիչները սրբացնելով անոնց
յատկացուցած է իրայատուկ յիշատակութիւն, զորս կը
տօնենք Հոկտեմբեր ամսուան ընթացքին։

Բոլորիս ծանօթ է նաև այն իրողութիւնը թէ
առաջին գիրքը որ հայերէն լեզուի կը թարգմանուի 408-
415 թուականներուն միջեւ Սուրբ գիրքի Հին Ուխտն էր,
կատարուած հիմնուելով Եօթանանիցին Վրայ։ Նոյնքան
հետաքրքրական է նաև գիտնալ թէ Նոր Ուխտի հայերէն
լեզուով թարգմանութիւնը եղած է ասորերէն հին
թարգմանութեան մը հետեւողութեամբ։ Այս
թարգմանութիւնն է որ կոչուած է «փութանակի
թարգմանութիւն», որ կը նշանակէ հապճեպով,
աճապարանքով կատարուած թարգմանութիւն։



Եզակի Գիրեր

«Հայերէն տառերով սուդոկո»

Ամբողջացո՞ւր քովի
քառակուսիները
գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ
գիրերը պայմանաւ որ միայն մէկ
անգամ գործածես իրաքանչիւր գիր
իրաքանչիւր՝
• հորիզոնական գիծի վրայ
• ուղղահայեաց գիծի վրայ
• իրաքանչիւր Զակ քառակուսիի մէջ

է	զ			թ			ե		ը
	գ	թ		բ	ը		զ		
ե		բ	է		զ	թ	գ		
բ		ե				թ		դ	գ
	ա			ը			բ		
զ		ը			է		ե	թ	
	թ	ա	գ		ե	զ			բ
գ					ը		է		ե
	ե	է	թ			բ		ա	

Ուկեղէն հատուածներ . . .

Կրօնքի եւ հաւատքի վերաբերող հարցեր Զարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեան

Կան սխալ երկու մտացնութիւններ ընդհանրապէս բոլոր մարդոց քով: Առաջինը այն սխալ հասկացողութիւնն է կամ կարծիքը, թէ աշխարհը, որ գիտութեամբ լեցուն է, կարելի է ճանչնալ, տիեզերքի մասին ամէն բան կարելի է հարցնել եւ հետեւաբար այդ հարցումներուն նաև պատասխանը փնտոել, արպտում կատարելով, հետազօտութիւն, գիտական փորձ կատարելով եւալն, բայց երբ որ հարցը կու գայ կրօնքին եւ հաւատքին, այդ մասին պէտք չէ բան մը հարցնել. պէտք է հաւատալ եւ վերջ: Ոմանք այսպէս կ'ըսեն: Անիկա սակայն չկարծէք որ Եկեղեցականներուն կարծիքն է, չկարծէք որ Եկեղեցւոյ կարծիք է եւ կամ Աստուածաշունչն է եկող հաստատում մըն է: Բացարձակ կերպով կապ չունի Աստուածաշունչին հետ: Ընդհակառակը, եթէ երբեք ունէ Եկեղեցականի հարցնեք, ինքը ձեզի պիտի ըսէ, որ ընդհակառակը ամէն բան կարելի է հարցնել եւ պէտք է հարցնել:

Օրինակ մը տամ: Առիթով մը երբ երիտասարդ մը եկաւ եւ Յիսուսին հարցուց «Վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ, որպէսզի փրկուիմ», Յիսուս Աստուածաշունչի Հին Կտակարանէն, Երկրորդումն Օրինաց Գիրքէն մէջբերում մը ըրաւ իրեն ըսելով, «Գրուած է. Սիրէ՛ Տէր Աստուածդ քու ամբողջ սրտովդ, քու ամբողջ հոգիովդ, քու ամբողջ մտքովդ ու ամբողջ զօրութեամբդ»: Չորս բաներ՝ սիրտ, հոգի, միտք եւ ամբողջ զօրութիւն եւ կարողութիւն: Կը տեսնէք, որ սիրտը եւ հոգին յիշեց, բայց սրտին եւ հոգիին կողքին Աստուածաշունչը մեզի կ'ըսէ նաև թէ միտքը կարեւոր է: ԶԱստուած եթէ պիտի սիրենք կարելի չէ միայն սրտով բաւարարուիլ: Սիրտը կը սկսի այնպէս ինչպէս մեր մարդկային կեանքին մէջ երբ առաջին անգամ մեր աչքերը կը բանանք եւ մեր ծնողքը կը տեսնենք, մեր ծնողքին դէմքը, դիմագիծը կը տեսնենք: Յատակ է, որ ամէն բանէ առաջ մեր միտքը չէ որ կը խօսի. հոն մեր սիրտն է որ կը խօսի: Առաջին ծանօթութիւնը մեր ծնողներուն եւ մեր բոլոր հարազատներուն եւ յետոյ կեանքի մէջ մեր սիրած անձերուն հետ սրտէն կը սկսի: Բայց սիրտը տակալին գիտակցութիւն չէ, գիտակցական մակարդակը չէ: Անոր վրայ յետոյ կ'աւելնայ հոգիին զօրութիւնը, հոգիով կը կապուինք անոր: Յետոյ, այդ մեր կապը, որ ուրեմն զգացական է կամ հոգեւոր, կը փորձենք գիտակցութեան ենթարկել, միտքով գտնել, թէ ինչո՞ւ կը սիրենք կամ ինչպէս կը սիրենք, եւ կամ ի՞նչ բանը կը սիրենք այդ անձին մէջ: Ասիկա ուրեմն մտածողութեան երեսն է եւ երբ Քրիստոս իր պատասխանին մէջ Հին Կտակարանէն կը յիշէ նաև միտքը, այն կը նշանակէ թէ մեզի կը յիշեցնէ, որ երբ կը խօսինք Աստուծոյ մասին, նյնապէս սիրտը կը կապէ մեզ Աստուծոյ այնպէս ինչպէս Յիսուս իր շուրջը ահագին մարդիկ ունեցաւ, խօսեցաւ անոնց, ցոյց տուաւ իր գործերը եւ առաջին բանը, որմով կապուեցան մարդիկ սիրտն էր: Սրտով կապուեցան, սիրեցին Զինք, անկախ որեւէ բացատրութենէ, տակալին չէին գիտեր թէ ինչո՞ւ, ի՞նչ բանի համար էր, թէ ի՞նչ բաներ պատճառ եղան, որ իրենք կապուին այս անձնաւորութեան, որ անձնաօթ մըն էր երէկ, բայց յանկարծ եկաւ եւ իրենց կեանքին մէջ մտաւ եւ որ այնուինեւեւ կարծէք իրենց այն հոգեկան եւ մտաւոր աշխարհէն պիտի մնար անբաժան:

**Հայ Եկեղեցին 20-րդ դարուն եւ 21-րդ դարու շէմին
Նիկոսիա 2005**

Ասէ Աստուած...

Փրկչական շնորհքին յայտնութիւնը Տիտոսին 2.11-15, 3.1-7

Որովհետեւ Աստուած իր շնորհքը յայտնեց որպէսզի բոլոր մարդիկ փրկուին։ Այս շնորհքը մեզ կը մղէ որ անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ, եւ յոյսով սպասենք այն երջանիկ օրուան, երբ մեր մեծ Աստուածն ու փրկիչը՝ Յիսոս Քրիստոս իր փառքով պիտի յայտնուի։ Որովհետեւ Քրիստոս իր անձը տուալ մեզի համար, որպէսզի մեզ ազատէ մեր բոլոր անօրէնութիւններէն, եւ մեզ մաքրելով՝ իր սեփական ժողովուրդը դարձնէ, բարի գործերու նախանձախնդիր։

Այս բաները սորվեցուր հաւատացեալներուտ։ Քաջալերէ՝ զանոնք եւ ի հարկին յանդիմանէ հեղինակութիւնդ գործածելով, այնպէս որ ոեւէ մէկը քեզ շարհամարհէ։

Քրիստոնէական վարքի թելադրութիւններ

Յիշեցո՞ւր բոլորին, որ հնազանդին ու հապատակին պետական իշխանութիւններուն, եւ պատրաստ ըլլան ամէն տեսակի բարի ծառայութիւն մատուցանելու։ Թելադրէ ոեւէ մէկը չանարգել, մարդու հետ չկոռիլ, այլ՝ փափկանկատ ըլլալ եւ կատարեալ ազնուութիւն ցուցաբերել բոլոր մարդոց հանդէպ։ Որովհետեւ ժամանակին մենք ալ անմիտ էինք, Աստուծոյ անհնազանդ եւ մոլորած։ Պէս-պէս ցանկութեանց եւ անառակ հաճոյքներու գերին դարձած՝ կ'ապրէինք չարութեամբ ու նախանձով, ատելի էինք ուրիշներուն եւ կ'ատէինք իրար։

Բայց ապա Աստուած, մեր փրկիչը, իր քաղցրութիւնն ու մարդասիրութիւնը յայտնեց եւ մեզ փրկեց, ո՞չ թէ մեր կատարած արդար գործերուն համար՝ այլ պարզապէս ողորմած ըլլալուն համար։ Մեզի նոր ծնունդ տուալ մկրտութեամբ եւ Սուրբ Հոգին միջոցաւ մեզ վերանորոգեց։ Աստուած Սուրբ Հոգին առատօրէն մեր վրայ թափեց՝ մեր փրկչին Յիսոս Քրիստոսի միջոցաւ, որպէսզի Քրիստոսի շնորհքով արդարացած՝ ժառանգենք յափառնական կեանքը, որուն կը յուանք։



Հայերէն Աստուածաշունչի Էջ, 1435 թ.

Շարականներու մասին . . .

«Մաշտոցի Արձագանգ»-ի նախորդ թիւով մենք տեսանք թէ մեր եկեղեցւոյ ծիսակատարութիւնները հարստացնող շարականները զուտ կրօնական բովանդակութեամբ հոգեւոր երգեր են: Հաստատեցինք նաև թէ իրաքանչիւր տօն ունի իր շարականներու հաւաքածոն կամ շարքը:

Մեր եկեղեցւոյ տօններէն իրաքանչիւրին նուիրուած շարականներու շարք մը կը կոչենք «Կանոն»: Այսպէս օրինակ, մենք ունինք «Կանոն Սուրբ Աստուածածնի Ծննդեան», այսինքն Սուրբ Աստուածածնի Ծննդեան տօնին նուիրուած եօթ շարականներէ բաղկացած հաւաքածոյ մը (Կանոն մը): Այլ օրինակներ են նաև «Կանոն Հոփիսիմեանց կոյսերու»ն, «Կանոն Վարագայ Խաչի»ն, «Կանոն Սուրբ Թարգմանիչներու»ն, որուն առաջին շարականը կը կարդանք յաջորդ էջին վրայ:

Հայաստանեաց առաքելական եկեղեցւոյ կանոնները կը բաղկանան ընդհանրապէս ութ տեսակի շարականներէ: Կանոնի մը իրաքանչիւր շարական ունի իրեն յատուկ անուն մը.-

- 1- Օրինութիւն
- 2- Հարց
- 3- Մեծացուցէ
- 4- Ողորմեա
- 5- Տէրկնից
- 6- Մանկունք
- 7- Ծաշու
- 8- Համբարձի

Այսպէս՝ Օրինակ . . .

Եթէ ըսենք թէ այս ամսուան ընթացքին յիշատակուող Վարագայ Սուրբ Խաչի Կանոնի Մեծացուցէն կը սկսի

«Լոյսի մայր Մարիամ, սուրբ կոյս, որ Հօրմէ ծագած լոյսը մարմնով ծնար»

բառերով, կը հասկնանք թէ Վարագայ Խաչի տօնին նուիրուած Կանոնի երրորդ շարականը կը սկսի այս վերոյիշեալ բառերով:

Նաև, եթէ ըսենք թէ «Կանոն Գիւտ Խաչի»ն Տէր Յերկնիցի բառերն են

«Քու խաչիդ ապաւինեցանք յաւիտենական Արարիչ»,

ըսել կ'ուզենք թէ Գիւտ Խաչի կանոնի բաղկացուցիչ շարականներէն հինգերորդը կը սկսի այս բառերով:

**Շարական Սուրբ Թարգմանիչներու
Վարդան վարդապետ Արեւելցի
ԺԳ. դար**

Տընօրինաբար զարդարեցին իմաստն Անեղին,
Հաստատելով երկրի վրայ կենդանի գիրն՝
Հօտն հովուելու նոր Խորայէլին.
Քաղցրահունց երգի ձայնով այդ օրինենք
զԱստուած:

Ու մեծութիւնն երկրաւոր փառքին՝ խաւար
կոչեցին,
Ապահնելով անմահ փեսայի յոյսին՝
Անձառ Բանին եղան արժանի.
Քաղցրահունց երգի ձայնով այդ օրինենք
զԱստուած:

Զօրութեամբը իմաստութեան Հօր,
ինքնագոյ Էին,
Հաստատեցին աթոռը Սուրբ Գրիգորին
Թարգմանութեամբ Աստուածաշունչին.
Քաղցրահունց երգի ձայնով այդ օրինենք
զԱստուած:

...

Ու ծածկուած խորհուրդն
աստուածագիտութեան՝
Տընօրինաբար յայտնաբերեցին,
Ինչպէս ըրած էր Սուրբ եւ Մեծ Մովսէսն
Արդ երկրպագենք անմատոյց Լոյսին:

Ինչպէս ճշմարիտ սէրը սրբազան
առաքեալներուն՝
Աղբերացումով ձեր մէջ էացաւ
Անըսպառ շնորհներ բըխող Սուրբ Հոգին.
Արդ երկրպագենք անմատոյց Լոյսին:

Թորգոմեան տանըս լուսաւորիչ երկու սուրբերով
Հաստատեցիր Եկեղեցին Հայաստանեայց՝
Ծագելով մեզի լոյսն իմաստութեան.
Ասոնց մաղթանքով, Քրիստո՞ս, խընայէ՛ մեզի:



**Խօսք իմ որդուն
Սիլվա Կապուտիկեան
20 Յունուար 1919 - 25 Օգոստոս 2006**

Այս գարնան հետ, այս ծաղկունքի
Այս թոշնակի, այս առուակի,
Հետն այս երգի ու զարթօնքի
Բացուեց լեզո՞ւն իմ մանկիկի:
Ու թոթովեց բառ մի անգին
Հայկեան լեզուից մեր սրբազան,
Ասես մասունք հաղորդութեան
Դիպաւ մանկանքս շրթունքին...
- Լսի՞ր, որդիս, պատգամ որպէս
Սիրող քո մօր խօսքը սրտանց,
Այսօրուանից յանձնում եմ քեզ
Հայոց լեզո՞ւն հազարագանձ:
Կտրել է նա, հանց աստղալոյս,
Երկինքները ժամանակի,
Շառաչել է խոռվայոյզ
Սլացքի հետ Հայկեան նետի,
Եւ Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է յո՞յս, դարձել դրօ՞շ,
Պահել երթը մեր անաղարտ...
Նրանո՞վ է մրմնջացել
Հայ պանդուխտը վերքն իր սրտի,
Նրանո՞վ է որոտացել
Կոռի երգն իմ ժողովրդի,
Նրանո՞վ է մայրս շահել
Ինձ օրօրոց դրել մի օր,
Հիմա եկել, քե՞զ է հասել
Նրա կարկաչը դարաւոր...
Բա՛ց շուրթերը, խօսի՞ր, անգի՞ն,
Ժիր դայլայլի՞ր, ի՞մ սիրասուն,
Թող մանկանա՞յ քո շուրթերին
Մեր ալեհե՞ր հայոց լեզուն...
Պահի՞ր նրան բարձր ու վճիտ,
Արարատի սուրբ ծիւնի պէս,
Պահի՞ր նրան սրտիդ մօտիկ,
Քո պապերի աճիւնի պէս,



Ու ոսիսի զարկիցը սեւ
Դու պաշտպանի՞ր կրծքով նրան,
Ինչպէս մօ՛րըդ կը պաշտպանես,
թէ սո՛ւր քաշեն մօրըդ վրան.
Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,
Թէ մօ՛րդ անգամ մտքից հանես,
Քո մայր լեզուն շմոռանաս:

Աստուածաշունչը մանուկներու համար Զգեցէք որ մանուկները ինծի գան Մարկոս 10. 13-16



Օր մը մեծ բազմութիւն մը հաւաքուեցաւ Յիսուսի շուրջ, իր խօսքերը մտիկ ընելու համար:

Ժողովուրդն ոմանք մանուկներ բերին Յիսուսի, որպէսզի
ձեռքը դնէ անոնց վրայ, բայց աշակերտները սաստեցին
բերողները եւ ետ դարձուցին զանոնք:



Եթե Յիսուս այս տեսաւ, շատ բարկացաւ եւ ըսաւ.-



«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի ըլլաք
անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը:»



Յիսուս գրկեց մանուկները եւ ձեռքը դնելով անոնց վրայ՝ օրինեց զանոնք:



Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ թէ Աստուած միշտ փոքրերուն եւ տկարներուն հետ է: Ամէն մարդ Աստուծոյ համար կարեւոր է:

Ինչու՝
աշակերտները ետ
դարձուցին
մանուկները. Անոնք
չե՞ն սիրեր
փոքրերը:



Այո, բայց անոնք
մտածեցին որ
մանուկները կրնան
խաճարել Յիսուսին
մտիկ ընողները:

Ու՞ր կը գտնուի
Աստուծոյ
Արքայութիւնը:



Աստուծոյ
Արքայութիւնը հո՞ն է՝
ուր Աստուծոյ հետ
կ'ըլլանք: Այդ տեղը
մեր սրտերուն մէջ
կրնայ ըլլալ կամ
ճաեւ եկեղեցիէն
Շերս:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Սեպտեմբեր ամսուան պատասխանները եւ մասնակցողները

**Մանկապարտէզի անկիւն
Յիսուս, մանուկները, արգելք,
այդպիսիներուն, արքայութիւնը**

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. բ. 1929
2. դ. 1980
3. գ. 7
4. դ. Մեր Տէրը Յիսուս քրիստոս
5. դ. Խաչվերաց
6. բ. Սուրբ Գէորգ
7. Շարական
8. գ. Լեռան քարոզը
9. սաներն, լուսածին, նախնեաց:
10. անխոռվ, արի, հաւատար, ցանկալի:

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. Սահակ Բ. կաթողիկոս Խապավեան
2. դ. 1980
3. բ. 9
4. ողորմութիւն
5. Աստուծոյ որդիներ
6. սիրով մաքուր
7. Կանոն
8. գ. ԺԳ դար
9. սրբազնեաց, հրաշափառ, խոյեանքին, բոցալառ:
10. սրբութեան, հոգին, երթին, թումբերն

Երկրորդականի անկիւն

1. Հայ Դպրոցի Տարի
2. դ. 1980
3. ողորմածները
4. հոգիով աղքատներուն
5. անոնք որոնք խաղաղութեան հաստատումին համար կ'աշխատին
6. Զուրբ
7. Սուրբ Միտոնը
8. Հացը, Գինին
9. անսասան, բարերար, լուսոյ, վեհափառ
10. ծնծղաներ, ցնծագին, դարե՛ր, Սրբաճանչ

Մասնակցողներ

Մանկապարտէզ

Հրակ Պանքեան, Տանիէլ Տօնապետեան,
Լորա Տօնապետեան, Լիլի Չինչինեան,
Ալիս Մելեքեան, Սահակ Մելեքեան,
Քրիստինա Ակրեան, Յակոբ Քեպթաննեան,
Անդրանիկ Նասոյեան, Աննա Թիւթիւննեան
Անսխալ պատասխանողներ

**Ցոլեր Անթեպեան, Սելենա Կարապետեան,
Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն**

Փաթիլ Կարապետեան, Քրիստոֆըր
Արմութլու, Նշան Կիրակոսեան, Սեւակ
Դափթեան, Շօնաթան Զարֆաննեան, Ալիք
Գապաքեան, Դանիէլ Ակրեան, Մինը^ր
Պանքեան, Կլօրիա Կարապետեան,
Թաթիանա Քերեալեան, Խշխշեան Արշակ,
Խշխշեան Ռիթա, Քարինա Քիւփելեան,
Շենիքա Մաթոսեան, Կրէս Նարեկեան,
Հրակ Քիւփելեան, Կարինէ Կարապետեան,
Արազ Քէպթաննեան, Ռիթա Մամիրոյեան,
Սերժ Դափթեան, Նանար Եագուպեան:
Անսխալ պատասխանողներ
Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան:

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

Կափա Արմութլու, Գէորգ
Պուիքեան, Զոհրապ Կարապետեան, Ալեք
Կարապետեան, Մինը Մաթոսեան, Սեւան
Մելեքեան, Քրիստոֆըր Նազարեան,
Թամար Թիւթիւննեան, Նանոր Քիւփելեան,
Դանիա Ապրալեան, Ռոզալին Չինչինեան,
Հրայր Մաթոսեան, Ներսէս նասոյեան,
Մարիա Դանիէլեան, Ծէք Զարֆաննեան
Անսխալ պատասխանողներ
Առէն Պապիկեան, Դալար Գեպթաննեան

Երկրորդականի անկիւն

Յովիկ Կարապետեան, Թամար Պուիքեան,
Քրիստին Կարապետեան, Գօգօ
Մաթոսեան, Անի Մելեքեան, Արի
Միրզայեան, Լորա Սարիմանուկեան,
Սեղրակ Մամիրոյեան, Արման Նարեկեան,
Պետրոս Նազարեան, Րաֆֆի Դափթեան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն**



Ամբողջացո՞ւր ըստ Ղուկաս 9.10-11-ի

**ըրած, Բեթսայիդա, քարոզել, արքայութեան, բժշկեց,
Առաքեալները, հետեւեցաւ**

----- վերադարձան եւ ի'նչ որ ----- էին՝
պատմեցին Յիսուսի: Յիսուս զանոնք առաւ եւ քաշուեցաւ
----- քաղաքին մօտիկ ամայի վայր մը: Ժողովուրդը
երբ գիտցաւ՝ ----- իրեն: Յիսուս ընդունեց զանոնք
եւ սկսաւ անոնց ----- Աստուծոյ ----- մասին:
Իսկ անոնք որոնք բժշկութեան պէտք ունէին՝ -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Սուլք Մեսրոպ Մաշտոց ո՞ր տարին գտաւ Հայ գիրերը:

- ա.- 301
- բ.- 405
- գ.- 451
- դ.- 1929

2.- 405 ին մեր այբուբենը քանի՞ տառերէ կը բաղկանար:

- ա.- 26
- բ.- 28
- գ.- 36
- դ.- 38

3.- Այս Հոկտեմբերին մենք մեր Եկեղեցւոյ, Սուլք Խաչին նուիրուած, 4 տօներէն ո՞ր երկուքը կը տօնենք:

- ա.- Խաչվերաց
- բ.- Սուլք Խաչին Երեւումը
- գ.- Վարագայ Սուլք Խաչ
- դ.- Գիւտ Խաչի

4.- Հետեւեալ 4 Սուլք աւետարանիշներէն ո՞վ Յոյն բժիշկ մըն էր:

- ա.- Մատթէոս
- բ.- Մարկոս
- գ.- Ղուկաս
- դ.- Յովհաննէս

5.- Մեր Եկեղեցւոյ 7 Խորհուրդներէն առաջինը ի՞նչ կը կոչուի:

- ա.- Մկրտութիւն
- բ.- Դրոշմ
- գ.- Ապաշխարութիւն
- դ.- Հաղորդութիւն

6.- Վարագայ վանքը ո՞ր քաղաքի հարաւ արեւելեան կողմը կը գտնուի:
 ա.- Մուշ
 բ.- Վան
 գ.- Երեւան
 դ.- Ատանա

7.- Ո՞ր հայ սրբութիւն հետ կը կապուի Վարագայ Սուլք Խաչին յիշատակումը:

- ա.- Սուլք Սանդուխտ
- բ.- Սուլք Հռիփսիմէ
- գ.- Սուլք Գայիանէ
- դ.- Սուլք Շուշան

8.- Ամբողջացո՞ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանը:

«Զգեցէք որ ----- ինձի գան ----- մի ----- անոնց ----- այդպիսիներուն է Աստուծոյ ----- :

9.- Ամբողջացո՞ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգին առաջին 4 տողերը:

----- Սուլք յարկին մենք սաներն ենք -----, ----- այս լուսածին -----՝ սրտէն պերճ նախնեաց:

10.- Ամբողջացո՞ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգին երկրորդ 4 տողերը:

Ուստի ----- անխռով, Ո՞վ ----- զարմ արի, Հաւատաւոր ----- ցանկալի:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն

1.- Այս տարի, 2006 ը ինչի՞ տարի հոչակուած է ՆՍՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին կողմէ:

2.- 405 ին մեր այբուբենը քանի՞ տառերէ կը բաղկանար:

- ա.- 26
- բ.- 28
- գ.- 36
- դ.- 38

3.- Հետեւեալ 4 աւետարաններէն ո՞ր մէկը ամենէն կարճն է:

- ա.- Մատթէոս
- բ.- Մարկոս
- գ.- Ղուկաս
- դ.- Յովհաննէս

4.- Հետեւեալ 4 աւետարաններէն ո՞ր մէկը ամենէն առաջ գրուած է:

- ա.- Մատթէոս
- բ.- Մարկոս
- գ.- Ղուկաս
- դ.- Յովհաննէս

5.- Երեխայ կը նշանակէ պզտիկ, մանուկ: Ի՞նչ կը նշանակէ Երախայ:

6.- Մկրտութեան ընթացքին քահանան կը հարցնէ Կնքահօր թէ Երեխան ի՞նչ կը խնդրէ: Ի՞նչ կըլլայ կնքահօր պատասխանը:

Հ-----, Յ---, Ա--- եւ

Մ-----:

7.- Ի՞նչ կը նշանակէ «Փութանակի թարգմանութիւն»:

- ա.- Ուշադիր թարգմանութիւն
- բ.- Կարճ թարգմանութիւն
- գ.- Աճապարանքով եղած թարգմանութիւն
- դ.- Ասորերէնէ թարգմանութիւն

8.- Կանոն կը նշանակէ շարականներու շարք որ կրնայ բաղկանալ 8 շարականներէ: Ի՞նչ կը կոչուի Կանոնի մը երկրորդ շարականը:

- ա.- Օրինութիւն
- բ.- Հարց
- գ.- Մեծացուացէ
- դ.- Ողորմեա

9.- Ամբողջացո՞ւր Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգին Բ. տունին առաջին 4 տողերը:

----- սրբազգեաց՝
----- անգին, հրաշափառ
Մեր Խոյանքին -----
Թափին է ----- բոցավառ:

10.- Ամբողջացո՞ւր Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգին Բ. տունին երկրորդ 4 տողերը:

Հայ ----- սրբութեան
----- օծած մեր Հոգին,
Մեր երթին մէջ -----՝
Թումբերն ամէն պիտ' -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

- 1.- Ամբողջացո՞ւր. Սրբոց
թարգմանչաց վարդապետացն մերոյ՝
ա.- Մեսրոպ -----
բ.- Եղիշէ -----
գ.- Մովսէս -----
դ.- Դաւիթ ----- փիլիսոփայ
ե.- Գրիգոր -----
դ.- Ներսէս -----

2.- Որո՞նք են Վարագայ լերան
ճգնաւրները:

----- եւ -----

3.- Որո՞ւ պարտականութիւնն է
մկրտուած պօտիկը քրիստոնէական
հաւաքով դաստիարակել:

4.- Ի՞նչ կը կոչուի Նոր կտակարանի
Ասորերէնէ հայերէն աճապարանքով
եղած թարգմանութիւնը:

5.- Ո՞վ գրած է Նոր Կտակարանին
մէջ գտնուող Տիտոսի ուղղուած
նամակը:

6.- Երբ ըսենք
«Տէր Յերկնից, Մանկունք, Շաշու,
Համբարձի» Ինչի՞ մասին խօսած
կ'ըլլանք:
-----:

6.- Ո՞ր հայ բանաստեղծութին գրեր
է:
«...Թէ մօ՛րդ անգամ մտքից հանես,
Քո մա՞յր լեզուն չմոռանաս:»

7.- Աստուածաշունչի ո՞ր համարն է
Հայաստանեաց Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
նշանաբանը:

Մարկոս -----

8.- Ո՞վ գրած է «Որք Զարդարեցին»
Շարականը նուիրուած Սուրբ
թարգմանիչներուն:

----- Վարդապետ
-----:

9.- Ամբողջացո՞ւր Հայաստանեաց
Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին Գ. տունին առաջին 4
տողերը:

----- յաւերժ անսասան,
----- եւ բարերար,
----- լուսոյ տան
----- վեհափառ:

10.- Ամբողջացո՞ւր Հայաստանեաց
Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին Գ. տունին երկրորդ 4
տողերը:

----- յար, ծնծղաներ
Մեր ----- ցնծագին,
Որ ----- մընայ դարեր դեռ՝
Սրբաճանանչ ----- :

Կարճ լուրեր Կիրակնօրեայէն

Կիրակնօրեայ Դպրոցի 2006-2007 տարեշրջան
Արձանագրութիւնները կը շարունակուին ամէն Կիրակի
ժամը **10:30 - 11:00**
Ներկայութիւն Սեպտեմբեր ամսուայ ընթացքին

Սեպտեմբեր 17 58 աշակերտներ
Սեպտեմբեր 24 65 աշակերտներ

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել Թորոս Պապիկեանին՝ (514) 956-1277

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

Աերկայ եւ նախկին թիւները կը գտնուին նաև
համացանցի վրայ:

Այցելեցէ՞ք www.sourphagop.org հասցեն
եւ ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը:

Հայ Եկեղեցւոյ Դերը Հայապահպանման մէջ

Պատանեկան (12-17 տարեկան) եւ Երիտասարդական (18-35 տարեկան)

Դաստիարակչական Համագումար
Կազմակերպութեամբ՝

Գանատայի Ազգային Առաջնորդարանի Քրիստոնէական

Դաստիարակութեան Խորհուրդին

HOLLIDAY INN Kingston, Ontario

Մեկնում փոխադրակառքերով առաւտեան ժամը **8:00** ին

14 Հոկտեմբեր 2006

Յաւելեալ տեղեկութիւններու համար

հեռաձայն՝ (514) 856-1200
ելմակ՝ director@sourphagop.org

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ

Նոյեմբեր 2006
ԺԴ տարի- թիւ 3



Իր բոլոր բարի յատկանիշներով հանդերձ,
Սուրբ Յովհան Ուկեբերան ուներ իր թշնամիները: Սուրբին մասին կարդալ էջ 4



«ԶԵ՞՞ որ հրեշտակները Աստուծոյ ծառալող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն: »Հոգեւոր այս Էակներուն մասին կարդալ էջ 5



Ես եմ որթատունկը եւ դուք՝ ճիւղերը: Ով որ ինձի միացած է եւ ես անոր՝ անիկա առատ պտուղ պիտի տայ: Ասէ Աստուծ էջ 11

Դրոշմի խորհուրդին իւրայատուկ նշանն է անոր ընթացքին գործածուող Միւռոնը, որ կը խորհրդանշէ Սուրբ Հոգին: Խորհուրդին մասին կարդալ էջ 6-7-8

Հաւատքն է մարդուս կեանքին լծակը: Ինչ բանի որ կը հայատա՞կեանքդ դէպի հոն կը սլաքես, կ'ուղղես եւ ըստ այնմ կը լիցքաւորուիս: Էջ 10

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակորեայ Դպրոցի
ամսաթերթ

Խմբագիր՝

Շաղիկ Պոյաճեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳԻ ԱԵՐԿԱՅ ԵՒ
ԾԱԽԿԻԾ ԹԻՒԵՐԸ ԿԸ ԳԹԱՌՈՒԻԾ ԾԱԵՒ
ԲԱՄԱՑՎԱՆԳԻ ՎՐԱՅ: Այցելեցէ՛ք
www.sourphagop.org ԲԱՍԳԵՆ ԵՒ
ԸՆՏՐԵՑԷ՛Ք Պարբերաթերթ բաժանումը

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակորեայ Դպրոցի
կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝

Վերժին Գեպթանճեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխաճեան
Յասմիկ Նաճարեան
Գարող Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխեն Իշխաճեան
Յասմիկ Գանաճեան

Հուսանկարիչ՝

Նիկոլ Դանիէլեան

Տնօրէն՝

Թորոս Պապիկեան

Այս թիւով . . .



Խմբագրական	Էջ 3
Յովհաննես Ուկերերան	Էջ 4
Աստուածաշունչն ու հրեշտակները ...	Էջ 5
Դրոշմի խորհուրդը	Էջ 6-7-8
Յարանուանութիւն, ուղղափառ Եւ այլ բառեր	Էջ 9
Զոհողութիւնը՝ լծակը մեր կեանքին..	Էջ 10
Ասէ Աստուած	Էջ 11
Աստուծոյ	Էջ 12
Խնդրանք	Էջ 12
Խաչքառ	Էջ 13
Առեղծուած	Էջ 14
Սուրբ Գիրքը մանուկներու համար .	Էջ 15-18
Ո՞րն է ճիշդ պատասխանը	Էջ 19-23
Կարճ լուրեր կիրակնօրեայէն	Էջ 24

Խմբագրական

Արդեօք կրօնը կարելի՞ է դասաւանդել

Կրօնը մարդկային կեանքի բաղկացուցիչ եւ խրթին տարրերէն մէկն է: Ան չի նմանիր այլ գիտութիւններու կամ իրականութիւններու որոնք կարելի է կանոնաւոր կերպով քննել ու գիտական ճշգրտութեամբ ասհմանել ու Շկարագրել: Այս բոլորը՝ որովհետեւ կրօնը կը վերաբերի մարդուս մէջ ինքնին անշօշափելի եւ անշափելի մէկ իրականութեամ՝ անոր հոգեւոր կեանքին:

Սակայն կրօնը, խօսելով մեր պարագային քրիստոնէական կրօնքի մասին, ինչպէս այլ նիւթեր, որոնք կը դասաւանդուին մեր մանուկներուն ու պատանիներուն, կրնայ ստանալ երկու բնոյթ: Առաջինը տեսական, իսկ երկրորդը՝ գործնական: Այսպէս, կրօնի տեսական կողմը քրիստոնէութեան վերաբերող գիտելիքներու ամբողջութիւնն է, ինչպէս քրիստոնեայ եւ հայ եկեղեցւոյ պատմութիւն, կրօնապատմական դէմքերու կեանքեր, սուրբ գիրքի սերտողութիւն, աղօթքներու եւ սաղմոններու ընկալում. իսկ կրօնի գործնական կողմը, մանուկներուն մօտ հաւատքի զգացումի ներմուծումն է:

Եթէ կրօնը նմանցուցինք այլ դասաւանդուող նիւթերու իբր տեսական եւ գործնական ծիրեր ունեցող նիւթ, անոր դասաւանդութիւնը ե'ւ պէտք է կարենանք բաղդատել այլ նիւթերու դասաւանդութեանց, իրենց տեսական եւ գործնական ձեւերուն տակ: Այսպէս՝ ինչպէս թուաբանական խնդիրներ լուծելէ առաջ (գործնական երեւոյթ), մանուկը պէտք է սորվի գումարում ու հանում (տեսական երեւոյթ), այնպէս ալ կրօնի պարագային, նախքան հաւատացեալ քրիստոնեայ դառնալը (գործնական երեւոյթ), պէտք է ան սորվի ճանչնալ իր եկեղեցին, իր ծէսերը, իր աւետարանը (տեսական երեւոյթ):

Այս անկիւնէն դիտուած, կրօնը անպատճառ կարելի է դասաւանդել: Հետեւելով նախապէս յղացուած ու աստիճանաբար

զարգացող ծրագրի մը, կարելի է փոքր դասարաններէն մինչեւ բարձրագոյն կարգերը փոխանցել գիտելիքներ Սուրբ Գիրքի, եկեղեցւոյ ծիսակատարութեան եւ պատմութեան, ինչպէս նաև եկեղեցական նշանակալից դէմքերու մասին: Սակայն այս տեսական դասաւանդութեան կողքին, հրամայական է, որ նոյնքան կանոնաւորութեամբ ու կազմակերպուածութեամբ հաւատք ներշնչուի մանուկներուն, իբր կրօնի գործնական արտապայտութիւն:

Բայց եթէ կրօնի վերաբերող գիտելիք փոխանցելը համեմատաբար դիւրին է ու կը կարօտի դասաւանդողին կողմէ որոշ պրատումի ու գիտութեանց ամբարման, հաւատք ներշնչելը ի՞նքնին, շատ աւելի բարդ ու իրայատուկ կարողութիւն է: Ցիշենք նախ եւ առաջ որ հաւատքը զգացուած ապրումի մը կը վերաբերի եւ իբրեւ այդպիսին՝ դասախոսելով կամ պատմելով չի փոխանցուիր: Ուրեմն ինչպէս իրականացնել այս մէկը:

Հաւատքի ներշնչումը մանուկներու մօտ հաւատացեալի մը կողմէ միայն կրնայ կատարուիլ. հաւատացեալ մը, որ իր էութեամբ ու ըլլալու կերպով ի՞սկ կը հանդիսանայ իբր հաւատքի ողջ օրինակ: Ան գիտէ, որ Աստուած գոյութիւն ունի, ան զԱստուած ընդունած է իր մէջ ու կը վստահի Անոր: Կը պատմէ մանուկներուն իր Աստուծոյ հետ ունեցած փորձառութեանց մասին, ու առանց կեղծիքի, կատարեալ համեստութեամբ կը խօսի Աստուծոյ հետ իր մտերմութեան մասին:

Ահա այսպէս միայն մանուկները կ'ըմբռնեն հաւատքին ինչ ըլլալը ու օրին, ժամանակը երբ գայ, իրենց կարգին կը հանդիպին Աստուծոյ:



Նոյեմբեր ամսուան տօնացոյց

Նոյեմբեր 2 Սուրբ Յովհաննէս Ուկեբերան Հայրապետ

Նոյեմբեր 4 Տօն Ամենայն Սրբոց

Նոյեմբեր 11 Սուրբ Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի

Նոյեմբեր 21 Ընծալումն Սուրբ Աստուածածնի

Սուրբ Յովհաննէս Ուկեբերան հայրապետ

Կոստանդնուպոլսոյ Եկեղեցոյ պատրիարք, հոչականուն քարոզիչ, ծնած է 347 թուին եւ վախճանած 407 թուին:

Ազգութեամբ Ասորի, ազնուական ընտանիքի այս զաւակը ծնած է Անտիոք: Ուսումը ստացած է նշանաւոր հոետորներու եւ իմաստասէրներու հսկողութեան տակ, ու կանուխէն ցուցաբերած յատուկ բնատուր ձիրք:

Յովհան կամ Յովհաննէս Ուկեբերան երիտասարդ տարիքէն փափաքած է նուիրուիլ Աստուծոյ ծառայութեան եւ այդ փափաքին համաձայն իր կեանքի ընթացքին ապրած է Աստուածահանոյ կերպով: Օրինակ, իր առաքինի վարքի կողքին, ծանօթ են նաեւ անոր ճգնաւորութեան խիստ պայմանները, որոնց պատճառաւ ան նոյնիսկ հիւանդացած է:

Իր բոլոր բարի յատկանիշներով հանդերձ, Սուրբ Յովհան Ուկեբերան ունէր իր թշնամիները որովհետեւ ան, իբր արդար եւ աստուածավախ կղերական, անարժան հոգեւորականները կը փոխարինէր արժանաւորներով: Այդ իսկ պատճառաւ, դաւադրութեամբ, ան արտորի մատնուած է, բայց ժողովուրդի փափաքին ընդառաջելով շուտով վերադարձուած է Կոստանդնուպոլիս:

Սուրբ Յովհաննէս իրեն յաջորդող սերունդներու ժառանգ ձգած է անհամար քարոզներ, սաղմուներ, ներբողներ եւ սուրբ գիրքի մեկնութիւններ, որոնց լեզուական գեղեցկութեան շնորհիւ, ան արդարօրէն արժանացած է «Ուկի Բերան» անունին:



Աստուածաշունչն ու Հրեշտակները

Նոյեմբեր ամսուան 11-ին, հայատանեաց եկեղեցին կը յիշատակէ տօնը հրեշտակապետներ Գարրիկի եւ Միքայէլի: Այս յիշատակման առթիւ, հետաքրքրական տեղեկութիւններ եւ ընդհանրութիւններ կարեկի է քաղել Սուրբ Գիրքն հրեշտակներու մասին, որոնք մեր եկեղեցին ներս ծանօթ են նաև «Քերովբէներ» եւ «Սերովբէներ» անուններուն տակ:

Թէ՛ երբայերէն եւ թէ՛ յունարէն լեզուով, հրեշտակ բառը կը նշանակէ «դեսպան» կամ «պատգամաւոր» եւ այս իմաստով ալ ան գործածուած է երեմն Սուրբ Գիրքին մէջ: Օրինակ երբ կը կարդանք.

«Որովհետեւ Յովհաննէսի մասին է որ մարգարէութեան մէջ Տէրը կ'ըսէ. «Ահա պատգամաբերս քու առջեւէդ պիտի դրկեմ, որ քեզի համար ճամբայ պատրաստէ»:

Հրեշտակ, պատգամաւոր կամ դեսպան անունը կը տրուի նաև հասարակ պատգամաւորներու ինչպէս հետեւեալ հատուածին մէջ.-

Եւ երբ աշխարհէն վերանալու ժամանակը հասաւ, Յիսուս որոշեց Երուսաղէմ երթալ: Իրմէ առաջ պատգամաւորներ դրկեց, որոնք գացին եւ մտան Սամարիայի գիւղերէն մէկը, պատրաստութիւն տեսնելու համար:

Հրեշտակ բառը կը պատշաճի նաև Քրիստոսի, իբրեւ Մեծ հրեշտակ կամ Նոր Ուխտի դեսպան:

Սուրբ գիրքի լաւագոյն մեկնիշները, զայն վերլուծողներն ու բացատրողները, հրեշտակ բառով կը հասկնան տեսակ մը բանաւոր էակ, մարդը գերազանցող եւ անկէ առաւել ազնիւ: Այս էակները կը գտնուին Աստուածու բոլորտիքը, եւ Աստուած զանոնք կը գործածէ իբրեւ իր պատգամաւորները կամ աշխարհի վրայ իր գործակալները, որպէս մարդոց օգտակար ծառայութիւններ կատարող էակներ:

Հրեշտակները, մարդ արարածին պէս, չունին նիւթական մարմին, այլ կը նկատուին ըլլալ հոգեղէն էակներ: Նորէն ըստ Սուրբ



Գիրքին, անոնք թիւով մեծ խումբ մը կը կազմնեն. «Կը կարծես թէ չե՞ն կրնար Հօրս աղաչել, որ հիմա աւելի քան տասներկու գունդ հրեշտակ դրկէ ինձի:»

Եւ նշանաւոր են իրենց զօրութեամբ.

«Մինչդեռ հրեշտակները զօրութեամբ եւ կարողութեամբ իրենցմէ շատ աւելի մեծ ըլլալով հանդերձ, անոնց մասին ունէ անարգալից ամբաստանութիւն չեն ըներ Տիրոջ ներկայութեան:»

Հրեշտակ անունը արդէն իսկ ցոյց կու տայ թէ այս ոգիները գործակալներ են նախախնամութեան հրամաններուն, եւ այդ պաշտօնին մէջ, անոնք Աստուածոյ կամքը կատարողներ են միայն: Այդ իսկ պատճառով անոնք երկրագութեան առարկայ պէտք չէ ըլլան, ոչ ալ՝ յատուկ աղօթքի.

«Զէ՞ որ հրեշտակները Աստուածոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեմ:»

Վերջապէս, Յիսուս ըստ Մատթ 18.10 ին մէջ:

Զգո՞յշ, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն մէկը. գիտցէք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս:

Եկեղեցւոյ խորհուրդները ԴՐՈՇՄ

Մաշտոցի Արձագանգի անցեալ թիւով մենք տեսանք թէ Եկեղեցական եօթ խորհուրդներէն առաջինն է Մկրտութիւնը: Մկրտութեան ճամբով մարդը կը մաքրուի իր բոլոր մեղքերէն, կը մտնէ Եկեղեցի եւ անդամ կը դառնայ անոր: Մկրտութեան հետ մէկտեղ Կը կատարուի Եկեղեցական երկրորդ խորհուրդը՝ Դրոշմը:

Բառացիօրէն, «Դրոշմ» կը նշանակէ Կնիք: Կրօնական առումով սակայն, դրոշմի արարողութեամբ երախսան կը կնքուի Սուրբ Հոգիով: Մկրտութեան խորհունդին նման, դրոշմը եւս անկրկնելի է կեանքի ընթացքին:

Դրոշմով է որ կնքուող ենթական կը ստանայ Աստուծոյ կողմէ իրեն պարգևելուած Սուրբ Հոգիի շնորհքը: Իսկ «Սուրբ Հոգիի շնորհք» ըսելով, կը հասկնանք զօրութիւն եւ իմաստութիւն եւ այլ կարգի առաքինութիւններ, որոնց շնորհիւ անհատը պիտի ապրի Քրիստոնէական հաւատրով ամրացած կեանք մը: Դրոշմի խորհուրդը ստացած մկրտեալը կը կոչուի «Աստուծոյ կնքեալ» կամ «Աստուծոյ օծեալ»:

Գիտէի՞ր թէ . . .


Մեզմէ շատեր ծանօթ չեն Դրոշմին իբրեւ Եկեղեցական առանձին եւ իւրայսատուկ խորհուրդ:

Իրականութեան մէջ, Դրոշմը կը կատարուի մկրտութեան անմիջապէս վերջ, իբրեւ նոյն արարողութեան շարունակութիւնը:

Այս երկու խորհուրդներու միատեղ կատարումը պատճառ դարձած է որ մեր ժողովուրդը Մկրտութիւնն ու Դրոշմը միասնաբար կոչէ «Կնունք»:



**Ինչպէ՞ս կը կատարուի
Դրոշմի խորհուրդը**



Դրոշմի խորհուրդին խրավատուկ նշանն է անոր ընթացքին գործածուող Միտոնը, որ կը խորհրդանշէ Սուրբ Հոգին եւ զորս քահանան կը պամի «Աղաւնի»*ի մը մէջ։ Քահանան Յիսոս Քրիստոսի անունով միւռոնով կ'օծէ ու կը կնքէ մկրտեալ երախային մարմնին ինը տարբեր մասերը.-

Ճակատը
Աչքերը
Ականջները
Քիթը
Բերանը
Զեռքերը
Սիրտը «կուրծքը»
Կոճակը
Ոտքերը

Ապա, դրոշմի խորհուրդը կատարելէ վերօ, ան կ'ըսէ.-
«Խաղաղութիւն քեզի, ո՞վ Աստուծոյ փրկեալ,
Խաղաղութիւն քեզի, ո՞վ Աստուծոյ օժեալ»:

*** ԱՂԱՒՆԻ**

Կը կոչուի նաեւ Աղաւնաձեւ տուփ,
ուր հանդիսաւոր արարողութեամբ
միւռոնը կը դրուի: Ան կը
խորհրդանշէ Սուրբ Հոգին «Ս.Հոգին
Յիսոսի մկրտութեան ատեն
յայտնուեցաւ աղաւնիի
կերպարանքով»: Միտոնը կը դրուի
Աղաւնիին փորը՝ որ պայման է որ
զլլայ արծաթեալ: Աղաւնին ծուլով
միւռոնը կը ծորի անոր բերնէն:

Աղաւնին ընդհանրապէս արծաթէ
շինուած կ'զլլայ իսկ վրայի
զարդարանքները ձգուած են
արուեստագէտի ճարտարութեան եւ
ճաշակին:



Դրոշմի ընթացքին օծեալին մարմնի ինը տարբեր մասերուն միւռոն քսելու բացատրականը

Մկրտութեան ընթացքին, քահանան միւռոնին թաթխուած իր մատով կը կնքէ մեր ճակատը եւ կ'ըսէ «անուշ իւղը Յիսուս Քրիստոսի անունով թափուելով քու վրադ, թող երկնաւոր անապական պարգեւներուն կնիքը ըլլայ»:

Յետոյ ձեռքը սահեցնելով մեր աչքերուն վրայ, կ'ըսէ « Յիսուս Քրիստոսի անունով դրոշմուող այս կնիքը թող լուսաւորէ քու աչքերդ, որ երբեք յափտենական մահով չի ննջես»:

Յետոյ կը դրոշմէ մկրտուողի ականջները ըսելով «այս սրբութեամբ օծումը թող աստուածային պատուիրանները լսելու համար ըլլայ»:

Օժման շարքին յաջորդը քիթն է ուր կ'ըսէ «Յիսուս Քրիստոսի անունով դրոշմուող այս կնիքը թող քեզի անուշութեան հոտ ըլլայ, որ քեզ առաջնորդէ կեանքէ կեանք»:

Ապա կու գան շրթունքները. քահանան կ'ըսէ «Թող Յիսուս Քրիստոսի անունով դրոշմուող այս կնիքը թող քեզի անուշութեան շրթունքներուդ ամուր փակման համար ըլլայ»:


Յետոյ կը դրոշմուին ձեռքերը, ըսելով « Յիսուս Քրիստոսի անունով դրոշմուող այս կնիքը բարիք գործելու եւ գործով ու վարքով, կարելիութեան չափով, առաքինութիւններ կատարելու պատճառ թող ըլլայ»:

Ասկէ ետք կը դրոշմուի կուրծքը, սրտին մօտ, եւ քահանան կ'ըսէ « աստուածային այս կնիքը թող սուրբ սիրտ հաստատէ եւ հոգիդ

ուղիղ պահէ ու նորոգէ »:

Թիկունքը օծելու ատեն կ'ըսէ « Յիսուս Քրիստոսի անունով դրոշմուող այս կնիքը քեզի համար ամրութեան վահան դառնայ որ կարողանաս մարել չարին արձակած բոլոր մխացող նետերը»:

Ամենէն վերջը կ'օծէ ոտքերը ըսելով «աստուածային այս կնիքը թող ուղիղ քու ընթացքդ դէպի յափտենական կեանք, որպէսզի երբեք չի սասանիս:»



Ի՞նչ կը նշանակէ... . . .

Հայաստանեայց առաքելական եկեղեցի

Հայերու կամ հայաստանցիներու Եկեղեցւոյ պաշտօնական անունն է այս, որ միաժամանակ կը յատկանշէ անոր առաքելական Եկարագիրը, որովհետեւ Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարթողիմէոս առաքեալները քրիստոնէութիւնը քարոզեցին Հայաստանի մէջ եւ նահատակուեցան հոն: Կրճատուած ձեւով կը գործածուի նաև «Հայ Եկեղեցի» ձեւը:

Հայ Եկեղեցին ուղղափառ է

Հայ Եկեղեցին ուղիղ հասատք ունի: Ուղղափառ (orthodox) կը կոչուին Հայ Եկեղեցւոյ դաւանակից այլ Եկեղեցիներ եւս որոնք են Ասորի, Հապէշ, Հնդիկ եւ Ղպտի Եկեղեցիները, նաև «քոյր» Եկատուող այլ Եկեղեցիներ ինչպէս Յոյն, Ռուս, Վրացի Եկեղեցիները:

Յարանուանութիւն

Ընդհանրական Եկեղեցւոյ տարբեր խումբերը. օրինակ, հայերը կը բաժնուին երեք յարանուանութիւններու.-. Առաքելական կամ լուսաւորչական, Կաթողիկէ կամ Կաթոլիկ եւ Աւետարանական կամ բողոքական:

**Ամբողջացուր քովի
քառակուսիները գործածելով
ա, թ, գ, դ, ե, զ, է, ը, թ
գիրերը պայմանաւ որ միայն մէկ
անգամ գործածես իրաքանչիւր
գիր իրաքանչիւր՝**

- հորիզոնական գիծի վրա
- ուղղահայեաց գիծի վրայ
- ինեակ քառակուսիի մէջ

է	զ	դ	ա	թ	գ	ե	թ	ը
ա	զ	թ	ե	թ	ը	դ	զ	է
ե	ը	թ	է	դ	զ	թ	գ	ա
թ	է	ե	զ	ա	թ	ը	դ	գ
թ	ա	զ	ը	ե	դ	թ	է	զ
զ	դ	ը	թ	զ	է	ա	ե	թ
դ	թ	ա	զ	է	ե	զ	ը	թ
գ	թ	զ	դ	ը	ա	է	թ	ե
ը	ե	է	թ	զ	թ	գ	ա	դ

Նախորդ «Եզակի գիրեր» ուն
լուծումը

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

է	թ		ա		զ	ը	ե	գ
		թ		է		ա		
	ա		դ		ը		թ	թ
	դ	զ	ը		թ		ե	զ
ա	զ						դ	ը
թ		զ	դ	է	ե	գ	ա	
զ	թ	դ	է	պ	թ	ե	թ	
դ	պ		է		ա		ը	
պ			է	պ	դ	թ	ե	

Ոսկեղէն հատուածներ . . .

Զոհողութիւնը՝ ալիշը մեր կեանքին

Հատուած «Կոնդակներ եւ Հայրապետական Պատգամներ» ժողովածուէն*
Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց

Հաւատքն է մարդու կեանքին լծակը: Ինչ բանի որ կը հաւատաս՝ կեանքդ դեպի հոն կը սլաքն, կ'ուղեն եւ ըստ այնմ կը լիցքաւրուիս, լիցքաւրելու համար այն, որու համար գոյութիւնդ կը զգաս իրաւ, ճշմարիտ եւ արժեւոր:

Ահաւասիկ ձեզի սքանչելի երեք տողեր մեր երեք մեծանուն եկեղեցական առաջնորդներու, մտաւրական լուսասփիտ դէմքերու կողմէ գրուած.

ա. Շնորհալին, իր խօսքը հիմնելով Յակոբոս Առաքեալի Թուղթին մէջէն արտապատուած ճշմարտութեան վրայ, կ'ըսէ.

**«Քանզի մեռեալ հաւատք ասին,
Որում եւ գործք ոչ հետեւին»:**

Հաւատքը մեռած բան մըն է, կը խօսիս, «Հաւատամք» կ'ըսես շրթներով, բայց եթէ այդ հաւատամքին չի հետեւիր գործը, կեանքդ չըլլար անոր թարգմանութիւնը, մեռա՞ծ հաւատք մըն է ան, «Հաւատք առանց գործոց մեռեալ են» կ'ըսէ առաքեալը:

բ. Տեսէք ինչ կ'ըսէ Տաթեւացին, 14-րդ դարու մեծ, լուսամիտ, «տիեզերալոյս» վարդապետը.

**«Որպէս վառեալ մոմն զանազանի ի շիշեալ մոմէն
Այսպէս կենդանի հաւատն ի մեռեալ հաւատոյն»:**

Ինչպէս վառուած մոմը տարբեր է մարած մոմէն, այնպէս ալ կենդանի հաւատքը տարբեր է մեռած հաւատքն: Վառուած մոմէն լոյս կու գայ, մարած մոմէն ծովս կու գայ, ծովսի՞ն արտադրողը պիտի ըլլանք թէ՝ լոյսին: Ո՞ւր ենք այս ճշմարտութեան հայելիին մէջ: Մտածեցէ՞ք:

գ. Կը ցատկեմ 14-րդ դարէն մինչեւ 18-րդ դար ու կու գամ մեր կողմէ դժբախտաբար տակալին լաւ չուսումնասիրուած, մեր ժողովուրդի կեանքին մէջ, նոյնիսկ մեր հոգեւրականութեան մէջ իր ներկացութիւնը տակալին չլուսաւրուած դէմքի մը, Նալեան Յակոբ Պատրիարքին. ան կ'ըսէ.

**«Զի բարին գործ թարց իմացման հաւատոյ
Է ծառ տնկեալ բայց գոսացեալ յարմատոյ.
Կամ է ճրագ յաշտանակի թարց իրոյ,
Որ հանէ միշտ անստերիւր սուրբ ուղոյ»:**

Բարի գործը առանց հաւատքի իմացումին, կը նմանի տնկուած ծառի մը որ գոսացած է իր արմատին մէջ, որովհետեւ առանց հաւատքի է, ցոցի համար է այդ գործը, դրամի համար է գործը, ապրուստի համար է գործը, զոր կը կատարես առանց անձնական հաւատքիդ մղումին. ան կը նմանի ճրագի մը՝ աշտանակին վրայ, որ իսլ չունի. ան չի կրնար լոյս տալով մեզ ուղիղ ճամբու մէջ առաջնորդել, այ մեզ կը շեղեցնէ ուղիղ ճամբէն:

* Կրօնական, Աստուածաբանական եւ Հայագիտական երկեր
 Հայերէն շարք, Դ. Հատոր, Գանատա 2006


Ասէ Աստուած . . .

Յիսուս՝ ճշմարիտ որթատունկը Յովհաննէս 15.1-17

- Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ Հայրս մշակն է: Անիկա կը կտրէ վրաս հաստատուած բոլոր այն ճիւղերը որոնք պտուղ չեն տար, իսկ բոլոր անոնք որոնք պտուղ կու տան՝ յօտելով կը մաքրէ, որպէսզի աւելի պտղաբեր ըլլան: Դուք արդէն իսկ մաքրուած էք այն խօսքին համար՝ որ ձեզի խօսեցայ: Ինձի միացած մնացէք եւ ես ձեզի միացած պիտի մնամ: Ինչպէս որ ճիւղը ինք առանձին պտուղ չի տար՝ եթէ որթատունկին միացած չըլլայ, նոյնպէս ալ դուք չէք կրնար պտուղ տալ՝ եթէ ինձի միացած չըլլաք:

Ես եմ որթատունկը եւ դուք՝ ճիւղերը: Ով որ ինձի միացած է եւ ես անոր՝ անիկա առատ պտուղ պիտի տայ, որովհետեւ առանց ինձի դուք ոչինչ կրնաք ընել: Ով որ ինձի միացած չի մնար՝ կտրուելով դուրս կը նետուի եւ կը չորնայ, նման այն ճիւղերուն՝ որ կը հաւաքեն եւ կրակը նետելով կ'այրեն: Եթէ ինձի միացած մնաք եւ խօսքերս ձեր մէջ մնան, խնդրեցէք Աստուծմէ ինչ որ ուզէք եւ պիտի տայ ձեզի: Իմ Հայրս կը փառատրուի՝ երբ դուք առատ պտուղ տաք եւ այսպիսով իմ աշակերտներս ըլլաք:

Ինչպէս որ Հայրս զիս սիրեց նոյն ձեւով ալ ես ձեզ սիրեցի: Մնացէք իմ սիրոյս մէջ: Եթէ գործադրէք իմ պատուիրաններս, իմ սիրոյս մէջ մնացած պիտի ըլլաք, ինչպէս որ ես Հօրս պատուիրանները գործադրելով անոր սիրոյն մէջ կը մնամ: Ասոնք ըսի ձեզի, որպէսզի իմ ուրախութիւնս ձեր մէջ ըլլայ: Իմ պատուէրս է՝ որ սիրէք իրար, ինչպէս ես ձեզ սիրեցի: Մեծագոյն սէրը այն սէրն է որով մարդ ինքզինք կը զոհէ իր բարեկամներուն համար:



Դուք իմ բարեկամներս էք, եթէ գործադրէք ինչ որ կը պատուիրեմ ձեզի: Այլեւս ձեզ ծառայ չեմ կոչեր, որովհետեւ ծառան չի գիտեր թէ ի՞նչ կ'ընէ իր տէրը. այլ՝ ձեզ բարեկամ կոչեցի, որովհետեւ ինչ որ Հօրմէս լսեցի՝ ձեզի յայտնեցի: Դուք չե՞ն որ զիս ընտրեցիք, այլ ե՞ն ձեզ ընտրեցի եւ նշանակեցի ձեզ՝ որ երթաք եւ պտղաբեր ըլլաք եւ ձեր պտուղը մնայուն ըլլայ, որպէսզի Հայրս տայ ձեզի ինչ որ իմ անունովս խնդրէք: Դարձեալ կը պատուիրեմ ձեզի, սիրեցէք իրար:

Աստուծոյ



Ինչ որ տըլիր կը դարձնեմ զայն Քեզի,
Ահա՛, Աստուած...։ Օրօրոցիս բարձին
տակ

Հունտեր դըրիր եւ ես զանոնք ցանեցի,
Եւ ահա՛ հունձքն՝ երկու ափիս մէջ
պարփակ...։

Ո՞րքան քիչ է, եւ եթէ ձեռքս բանամ՝
Գուցէ ոչ ոք ոչինչ տեսնէ, կամ գուցէ
Միայն փոշի եւ միայն բոյր մը տարտամ
Հովը գտնէ ու վայրկեանին թոցընէ...։

Շատերն երբեք չըծաղկեցան՝ բայց ոմանք
Այս հունտերէն գարնան առտու մը ծըլան,
Եղան ոստեր ու կապեցին դըրասանգ
Տունիս ճակտին, ու խամրեցա՞ն այս
աշնան...։

Յանցանքն իմս է, միմիայն ի՞մըս, գիտեմ,
Եթէ ես չեմ դըներ հիմա ուրիշ հունձք
Ամենաչափ քու նըժարիդ կշոհին դէմ՝
Բայց միայն ցաւ ու ափսոսանք ու
արցունք...։

Ամբողջ այս է, զայն քես սիրո՞վ
Կ'ընծայեմ...։

Վահան Թէքէեան
Յիսուն Քերթուած
Պէյրութ 1995

Խնդրանք




Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ
կ'աղաչենք քեզի եւ կը խնդրենք, մարդասէ՛ր
Տէր: Լսէ՛ մեզ, Ո՞վ Աստուած, մեր փրկիչը.
ականջդ մեզի խոնարհեցուր, որպէսզի զուր
տեղ չոգնինք, այլ՝ մեր ճիգը արդարութեան
գործ եւ աստուածապաշտութեան պտուղ
նկատէ: Ըստունէ՛ մեր աղօթքն ու
երկրպագութիւնը, ո՞վ Տէր, եւ քու
ողորմութեամբդ հատուցանէ մեզի,
առատապէս: Քու ամենազօր աշիդ հովանին
տակ ծածկէ մեզ, եւ Սուրբ Հոգիիդ
զօրութեամբը զօրացուր մեզ, ո՞վ Տէր: Աչքի
բիբի պէս պահէ մեզ եւ քու բարութիւնդ ցոյց
տուր մեզի, որպէսզի քու սուրբ անունդ գովուի
եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարած
ները մշտնջենաւոր փառաբանութեամբ քու
փառքդ կը հիւսեն բարձունքներու մէջ, Հայր
եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ
յախտեանս յախտենից: Ամէն:

Հովիս քաջ, հովիս բարի եւ յախտենական,
նայէ՛ եւ եկուր օգնէ՛ քու բանաւոր հօտիդ,
որ քու շուրջդ հաւաքեցիր քու գթութեամբդ: Որովհետեւ քու դիմացդ կանգնած՝ քու
ողորմութեանդ եւ գթութեանդ կը սպասենք,
Տէր: Օրհնէ՛ բոլորը, իմաստացո՞ւր ամէնքը,
ամէնքը լուսաւորէ եւ բոլորին պարգեւէ
երկինքի արքայութիւնն. որովհետեւ դո՛ւն ես
կեանքին տէրը, ողորմա՞ծ Աստուած, եւ քեզի
կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու
պատիւը, այժմ եւ միշտ եւ յախտեանս
յախտենից: Ամէն:

Սահակ Պարթեւ Հայրապետ

Խաչբառ



Ուղղահայեաց

- 1-Ոչ լուրջ արտայայտութիւն. յանցաւորները հոն կը դրուին
- 2-Կենդանի պստցնել. Գոյութիւն ունին
- 3-Ծածկոցի շուրջ դրուելիք զարդ. Ետեւէն՝ թափանցիկ հիւթ
- 4-Ազնուականներու հող. Ետեւէն՝ գոյութիւն ունինք
- 5-թուլամորթ
- 6-ստացիր. Ետեւէն՝ չսիրել
- 7-երբեմն պարապ կ'ըլլայ. լեռ
- 8-գիրերու հաւաքածոյ. գոյութիւն ունին. Ետեւէն՝ մատանիի զարդ կամ աղբիւր 9-ճաշակ
- 10-ուշանալ. Ժխտական իմաստ կու տայ
- 11-կատուները կը ձայնեն. հրաւէր


Հորիզոնական

- 1-Դաշտի մէջ նեղ ճամբայ. դրացի գիրեր
- 2-Այր մարդ. ունենալ
- 3-Խոհանոցի առարկայ. տուր-ին հակառակը. հակառակէն՝ տարի
- 4-Ետեւէն՝ հայերէն գիր մը. պզտիկ տուն. գոյն մը
- 5-Ետեւէն՝ եկուր. պատկեր. Ետեւէն՝ էական բայ
- 6-Լեցուն. համեմի բոյս մը
- 7-Հոքիլ. ձիերուն ոտքին տակ դրուող երկաթ
- 8-փոս. խրամ. անձս
- 9-Ցատկրտող կենդանի. Ետեւէն՝ չէ
- 10-պզտիկ տուն. ստեղծող

Յիսուսի այլակերպութիւնը


Յիսուսի այլակերպութիւնը պատահեցաւ լերան մը վրայ ուր բարձրացած էր Առ Պետրոսի, Յակոբոսի եւ Յովհաննէսի հետ: Հոն լուսաւոր ամա մը ծածկեց զիրենք եւ ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ ու անոնց հետ խօսեցաւ:

Գտիր այս առեղծուածին կտորներէն իրաքանչիւրին յարմարող տեղը ու տե՛ս թէ ամպին մէջէն լսուող ձայնը ի՞նչ ըսաւ...



Աստուածաշունչը մանուկներու համար


Տաղանդ




Ազնուական մարդ մը կար որ հեռաւար երկիր մը գնաց: Նախքան մեկնիլը, կանչեց իր ծառաները եւ անոնց միջեւ բաժնեց իր ունեցածը:

Առաջինին տուաւ 5 տաղանդ, երկրորդին 2 տաղանդ, իսկ երրորդին՝ 1 տաղանդ: Ան իւրաքանչիւրին տուաւ իր կարողութեանը համեմատ:

5 եւ 2 տաղանդ ստացող ծառաները անմիջապէս գործի լծուեցան: Սակայն 1 տաղանդ ստացողը գնաց ու իր տաղանդը պահեց հողին տակ:



Ժամանակը կ'անցնի եւ ազնուական մարդը կը վերադառնայ. ծառաները կը պատմեն թէ ինչ ըրին իրենց տաղանդներով:




5 տաղանդ ստացողը կ'ըսէ «5 տաղանդ ե'ւ շահեցայ»:
«Ապրի՞ս, բարի ծառայ, քեզի ուրախութեանս մասնակից պիտի դարձնեմ» կը պատասխանէ ազնուական մարդը:
2 տաղանդ ստացողը կ'ըսէ «2 տաղանդ ե'ւ շահեցայ»:
«Ապրի՞ս, բարի ծառայ, քեզի ուրախութեանս մասնակից պիտի դարձնեմ» կը պատասխանէ ազնուական մարդը:



Երրորդ ծառան կ'ըսէ «Ես քեզմէ կը վախնայի եւ այդ պատճառաւ տաղանդս պահեցի. ահաւասիկ տուածդ կը վերադարձնեմ քեզի»:

«Ծոյլ եւ վախկոտ ծառայ, եթէ կը վախճայիր տաղանդդ կորսնցնելէ, ապա պէտք էր օգնութիւն խնդրէիր զայն լաւապէս գործածելու համար», կը պատասխանէ ազնուական մարդը:

«Ուստի», կը շարունակէ մարդը, «Հիմա առէ՛ք մէկ դրամը եւ տուէ՛ք անոր որ տասը ունի, որովհետեւ ունեցողին պիտի տրուի աւելիով իսկ ունեցածը չօգտագործողը պիտի կորսնցնէ ունեցածը»:



Այս պատմութեան մէջի ազնուական մարդը Աստուած է:

Տաղանդը Աստուծոյ մեզի տուած կարողութիւններն են:

Աստուած մեզի զանոնք կուտայ, որ բարի նպատակով օգտագործենք, ո՞չ ծոյլ, եւ ո՞չ ալ վախկոտ ըլլանք, այլ՝ օգտագործենք մեր կարողութիւնները բարի գործեր ընելու համար:

Ի՞նչ է տաղանդը:



Ինչո՞ւ ազնուականը բոլոր
ծառաներուն
հաւասարապէս չի տար:



Ինչո՞ւ ազնուականը երկու
տաղանդ եւ մինգ տաղանդ
շահողներուն նոյնապէս կը
վարձատրէ:



Դրամ ըսել է, բայց
կրնայ նաեւ բան մը
ընելու կարողութիւն
նշանակել:

Որովհետեւ ան գիտէ որ
երեք ծառաները նոյն
կարողութիւնը չունին եւ
իրենց տաղանդները նոյն
ձեւով պիտի չի
գործածեն:

Որովհետեւ իրեն
համար շահածին
չափը չէ կարեւորը
այլ՝ ունեցածը
լաւապէս
օգտագործելու
կարողութիւնը:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Հոկտեմբեր ամսուան պատասխանները եւ մասնակցողները

Մանկապարտէզի անկիւն

Առաքեալները, ըրած, Բեթսայիդա,
հետեւեցաւ, քարոզել, արքայութեան,
բժշկեց

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն
1. բ. 405 2. գ. 36 3. գ. Վարագայ Սուրբ
Խաչ եւ դ. Գիտ Խաչի
4. գ. Ղուկաս

5. ա. Մկրտութիւն

6. բ. Վան

7. բ. Սուրբ Հոփիսիմէ

8. մանուկները, արգելք, ըլլաք,
որովհետեւ, արքայութիւնը

9. Կիրակնօրեայ, լուսաբաղձ, կայծերու,
ցալտած

10. քալենք, հարազատ, գնացքով,
Լոյս-աղբիւրին:

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. Հայ Դարոցի Տարի 2. գ. 36

3. բ. Մարկոս 4. բ. Մարկոս

5. Ան որ տակաւին չէ մկրտուած

6. Հաւատք, Յոյս, Սէր եւ Մկրտութիւն

7. գ. Աճապարանքով եղած

թարգմանութիւն

8. բ. Հարց

9. Եկեղեցին, Ժառանգ, Վերապաց,
խիզախ

10. մշկահոտ, բոյրովն, յաղթական, փշրին
Երկրորդականի անկիւն

1. ա. Մաշտոց բ. Պատմիչ գ. Քերթող դ.

Անյալթ եւ Նարեկացի զ. Շնորհալի

2. Թողիկ եւ Հովել

3. Կնքահօր

4. փութանակի

5. Պողոս Առաքեալ

6. Կանոնի մը 5,6,7 եւ 8րդ շարականներուն
մասին

6. Սիլվա Կապուտիկեան

7. 10.14

8. Վարդան Վարդապետ Արեւելցի

9. Կեցցեն, Հիմնադիր, Կիրակնօրեայ,
Զահակիրներ

10. Հնչեցէք, սրտերուն, վառ, Հայ Հոգին

Մասնակցողներ

Մանկապարտէզ

Սեակ Թեհինեան, Տանիէլ Տօնապետեան,
Լորա Տօնապետեան, Լիլի Զինչինեան,
Ալիս Մելեքեան, Սահակ Մելեքեան,
Քրիստինա Ակրեան, Յակոբ Քեպթաննեան,
Անդրանիկ Նասոյեան, Աննա Թիւթիւննեան
Անսխալ պատասխանողներ

Ցոլեր Անթեպեան, Սելենա Կարապետեան,
Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Փաթիլ Կարապետեան, Քրիստոֆըր

Արմութլու, Նշան Կիրակոսեան, Սեւակ
Դափիթեան, Ծօնաթան Չարֆաննեան, Ալիք
Գապաքեան, Դանիէլ Ակրեան, Միներ
Պանքեան, Կլորիա Կարապետեան,
Թաթիանա Քերեայեան, Խշխշեան Արշակ,
Խշխշեան Ռիթա, Ծեսիքա Մաթոսեան,
Կրէս Նարեկեան, Կարինէ Կարապետեան,
Արազ Քէպթաննեան, Ռիթա Մամիրոյեան,
Սերժ Դափիթեան, Նանար Եագուապեան:
Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան, Հրակ

Քիւփելեան, Քարինա Քիւփելեան:

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Կասիա Արմութլու, Գէորգ

Պոլիքեան, Զոհրապ Կարապետեան, Ալեք
Կարապետեան, Միներ Մաթոսեան, Սեւան
Մելեքեան, Քրիստոֆըր Նազարեան,
Թամար Թիւթիւննեան, Նանոր Քիւփելեան,
Դանիա Ապրալեան, Ռոզալին Զինչինեան,
Հրայր Մաթոսեան, Ներսէս Նասոյեան,
Մարիա Դանիէլեան

Անսխալ պատասխանողներ

Առնեն Պապիկեան, Դալար Գեպթաննեան,
Շէք Չարֆաննեան, Լորի Զինչինեան

Երկրորդականի անկիւն

Ցովիկ Կարապետեան, Թամար Պոլիքեան,
Քրիստին Կարապետեան, Գօգօ
Մաթոսեան, Անի Մելեքեան, Արի
Միրզաքեան, Լորա Սարիմանուկեան,
Սենդրակ Մամիրոյեան, Արման Նարեկեան,
Պետրոս Նազարեան, Րաֆֆի Դափիթեան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն**



Ամբողջացո՞ւր լստ Ղուկասի Աւետարանին 9.12-13
կ'իրիկնանար, Արձակէ', գտնեն, ամայի, ուտելիքը,
ձուկ, հաց, բաւականաչափ
Եթք օրը -----, տասներկու աշակերտները
մօտեցան Յիսուսի եւ լսին.

- ----- ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ
 գիւղերն ու ագարակները, հանգչին եւ ուտելիք -----,
 որովհետեւ հոս ----- տեղ ենք:

Յիսուս անոնց լսաւ.

- Դո՞ւք տուէք անոնց -----:

Անոնք լսին.

- Ամբողջ մեր ունեցածը հինգ ----- եւ երկու ----- է.
 բայց եթէ կ'ուզես, կ'երթանք ժողովուրդին համար
 ----- կերակուր կը գնենք:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր սուրբին տօնը տօնեցինք այս

տարի Նոյեմբեր 2 ին:

ա.- Ս. Յովհաննէս Ուսկերեան

Հայրապետ

բ.- Ս. Գէորգ

գ.- Ս. Սարգիս

դ.- Ս. Յովհաննէս Կարապետ

6.- Ի՞նչ կը կոչուի մեր եկեղեցւոյ 7

Խորհուրդներէն երկրորդը:

ա.- Մկրտութիւն

բ.- Դրոշմ

գ.- Ապաշխարութիւն

դ.- Հաղորդութիւն

2.- Այս տարի ե՞րբ տօնեցինք Ս.

Գաբրիէլ եւ Ս. Միքայէլ

Հրեշտակապետներուն տօնը:

ա.- Նոյեմբեր 2

բ.- Նոյեմբեր 4

գ.- Նոյեմբեր 11

դ.- Նոյեմբեր 21

7.- Մկրտութեան զգալի նշանը ջուրն

է: Ի՞նչ է Դրոշմին զգալի նշանը:

8.- Քահանան Կնունքի ընթացքին
գործածուղ Ս. Միտոնը դրած կ'ըլլայ
թռչունի կերպարանքը ունեցող սպասի
մը մէջ: Ի՞նչ է այդ թռչունը:

ա.- Արծիւ

բ.- Անգղ

գ.- Աղաւնի

դ.- Արտոյտ

3.- Ըստ հետեւեալը մէկ բառով:

Ոսկի Բերան Ունեցող

9.- 15-18 էջերուն մէջ Յիսուսի
պատմած առակին մէջ ո՞վ իր
ունեցած տաղանդը չգործածեց:

ա.- 5 տաղանդ ունեցողը

բ.- 2 եւ 5 տաղանդ ունեցողները

գ.- 1 եւ 2 տաղանդ ունեցողները

դ.- 1 տաղանդ ունեցողը

4.- Պատարագի ընթացքին քահանան

երբ կ'ըսէ «Եւ ընդ Սերովբէսն եւ ընդ Քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս...» որո՞նց մասին խօսած կ'ըլլայ:

ա.- Սերոբ անունով մէկու մը մասին

բ.- Քերոբ անունով մէկու մը մասին

գ.- Հրեշտակներու մասին

դ.- Նուագարաններու մասին

10.- Ըստ 15-18 էջերուն մէջ Յիսուսի
պատմած առակին մենք մեր
տաղանդը «կարողութիւնը» ինչի՝
համար պէտք է գործածենք:

5.- Ի՞նչ կը կոչուի մեր եկեղեցւոյ 7

Խորհուրդներէն առաջինը:

ա.- Մկրտութիւն

բ.- Դրոշմ

գ.- Ապաշխարութիւն

դ.- Հաղորդութիւն

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն

1.- Այս տարի ի՞նչ տօն տօնեցինք

Նոյեմբեր 4 ին:

ա.- Ս. Յովհաննէս Ռոկեբերան

Հայրապետ

բ.- Ս. Գէորգ

գ.- Ս. Սարգիս

դ.- Ամենալին Սրբոց

2.- Այս տարի ե՞րբ տօնեցինք Ս.
Յովհաննէս Ռոկեբերան Հայրապետին
տօնը:

ա.-Նոյեմբեր 2

բ.- Նոյեմբեր 4

գ.- Նոյեմբեր 11

դ.- Նոյեմբեր 21

3.- Ի՞նչ կը նշանակէ Ռոկեբերան

4.- Ի՞նչ կը նշանակէ Հրեշտակ բառը

Դ----- կամ Պ-----

5.- Ի՞նչ կը կոչուի մեր եկեղեցւոյ 7
Խորհուրդներէն երկրորդը:

ա.- Մկրտութիւն

բ.- Դրոշմ

գ.- Ապաշխարութիւն

դ.- Հաղորդութիւն

6.- Բառացիօրէն, ի՞նչ կը նշանակէ
Դրոշմ:

Կ---

7.- Դրոշմի խորհուրդը ստացած
մկրտեալը ի՞նչ կը կոչուի:

Աստուծոյ ----- կամ

Աստուծոյ -----

8.- Յիսուսի մկրտութեան ընթացքին,
Սուրբ Հոգին ինչի՞ կերպարանքով
յայտնուեցաւ:

ա.-Արծիւ

բ.- Անգղ

գ.- Աղաւնի

դ.- Արտոյտ

9.- Ի՞նչ են այն 9 մասերը զոր
Քահանան միւռոնով կ'օծէ եւ կը կնքէ
Դրոշմի ընթացքին:

ա. Ճ-----ը

բ. Ա-----

գ. Ա-----

դ. Ք-----

ե. Բ-----

զ. Զ-----

է. Ս-----

ը. Կ-----

թ. Ո-----

10.- Յովհաննէսի Աւետարանին 15.1
ին մէջ Յիսուս ի՞նչ կ'ըսէ իր մասին:
Ես եմ ճշմարիտ ----- եւ
Հայրս ----- է:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

**1.- Ամէն տարի ե՞րբ կը տօնենք
Ամենայն Սրբոցը:**

ա.- Նոյեմբեր 1 ին

բ.- Նոյեմբեր 4 ին

**գ.- Հոկտեմբեր 31ին յաջորդող
Ծաբաթ օրը:**

**դ.- Հոկտեմբեր 31ին յաջորդող
Կիրակի օրը:**

**2.- Ո՞ր դարուն ծնաւ Յովհան
Ոսկեբերան Հայրապետը:**

ա.-Ա.

բ.- Բ.

գ.- Գ.

դ.- Դ.

**3.- Յովհաննէս Ոսկեբերան ո՞ր
քաղաքին Եկեղեցւոյ Պատրիարքն էր:**

**4.- Յովհաննէս Մկրտիչ ո՞ր գետին
մէջ մկրտեց Յիսուսը:**

**5.- Դրոշմի ընթացքին Քահանան
ինչո՞ւ կը կնքէ ականջները:**

**Որպէսզի կարենանք -----
աստուածային պատուիրանները:**

**6.- Դրոշմի ընթացքին Քահանան կը
կնքէ քիթը, որպէսզի այս կնիքը մեզի
անուշութեան հոտ ըլլայ ու մեզի
առաջնորդէ -----**

**7.- Դրոշմի ընթացքին Քահանան կը
կնքէ ոտքերը, որպէսզի այս կնիքը
ուղղէ մեր ընթացքը դէպի**

-----:
-----:

**8.- Որոնք են Հայաստանեաց
Եկեղեցւոյ այլ դաւանակից
Եկեղեցիները: «Նշէ բոլորը»**

ա.-Ասորի

բ.- Հապէշ

գ.- Հնդիկ մալապար

դ.- Ղպտի

**9.- Նոր կտակարանի ո՞ր գիրքին մէջ
կը կարդանք թէ «հաւատքը առանց
գործերու մեռած է»:**

**10.- Միւռոնը իւրաքանչիւր քանի՝
տարին անգամ մը կը պատրաստուի
ա.-1**

բ.- 3

գ.- 5

դ.- 7

**Կարճ լուրեր Կիրակնօրեայէն
Կիրակնօրեայ Դպրոցը բաց է ամէն Կիրակի
ժամը 10:30 - 1:15**

Յաւելեալ տեղեկութիւններու համար կապ պահել, Տնօրէնին՝ Թորոս
Պապիկեանին հետ

Էմակ : director@sourphagop.org
Հեռ : (514) 956-1277

**«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի
Աերկայ եւ նախկին թիւնը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ:**

**Այցելեցէ՞ք www.sourphagop.org հասցէն
եւ ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը:**

**www.sourphagop.org ը
ընդունած է այցելութիւններ
100 տարբեր երկիրներէ**

www.sourphagop.org ի հաշուեցոյց

	Հոկտեմբեր	2006
Այցելութիւններ	3,754	55,813
Եզակի Այցելու	1,370	7,683
Այցի տետողութիւն	2:44	1:35
Երկիրներ	62	100
Քաղաքներ	269	1,232
Բացուած Գրութիւններ (.pdf)	1,080	8,527
Մաշտոցի Արձագանգ	515	6,185
Զարկեր	24,063	237,681
Դիտուած էջեր	6,240	81,569

Ամբողջական Հաշուեցոյցը կը գտնուի www.sourphagop.org ի
վրայ:

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ




Այս Դեկտեմբեր ամսուան 23-րդ օրը, Հայաստանեաց Եկեղեցին կը յիշատակէ անունը սաղմոսագիր Դափիթ թագաւորին, որ նաև ընդունուած է իբր մարգարէ: Դափիթի մասին կարդա՛ էջ 10-11-12

Դեկտեմբեր 2006
ԺԴ տարի- թիւ 4

Յիսուսի առաքելներ Թադէոս և Բարթողիմէոս: Էջ 8



Մեր կեանքի բազմաթիւ այլ երեւոյթներու նման,
երջանկութիւնն ալ անհամար բացատրութիւններ,
սահմանումներ եւ մեկնաբանութիւններ ստացող երեւոյթ մըն
է: Խմբագրական էջ 3



Հիմա որ ա՛լ հաւատքով արդարացած
ենք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի
միջոցաւ հաշտուած ենք Աստուծոյ
հետ: Ասէ Աստուած էջ 9

Սուրբ Յակոբ Մծբնացի, Սուրբ Ստեփանոս
նախավկայ, Պօղոս եւ Պետրոս
առաքելներ: Դեկտեմբեր ամսուան տօնացոյցը տես էջ 4

Ապաշխարել կը նշանակէ զդշումով
զգաստորէն անդրադառնալ մեր
գործած մեղքերուն, խոստովանիլ
այդ մեղքերը Աստուծոյ,
եւ թողութիւն խնդրել Աճկէ:
Խորհուրդին մասին կարդա՛ էջ 6-7

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի
ամսաթերթ

Խմբագիր՝
Ծաղիկ Թորիկեան Պոյամեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ.ի ներկայ եւ
նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ։ Այցելեցէ՞ք
www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը

Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի
կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝
Վերժին Գիւղթանձեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխանձեան
Յասմիկ Նաճարեան
Գարոլ Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխեն Իշխանձեան
Յասմիկ Գանաձեան

Լուսանկարիչ՝
Նիկոլ Դանիելեան

Տնօրին՝
Թորոս Պապիկեան

Այս թիւով . . .



Ի՞նչ բանի մէջ կը կայանայ երջանկութիւնը	Էջ 3
Ամսական տօնացոյց	Էջ 4
Ամսուան աշխատակից յօդուածագիրը	
Կարօ Նոխուտեան	Էջ 5
Եկեղեցական խորհուրդներէն՝ Ապաշխարութիւն	Էջ 6-7
Հայաստանեալց Եկեղեցւու նախարարերը	Էջ 8
Ասէ Աստուած	Էջ 9
Թագաւո՞ր, մարգարէ՞՞թէ՞	
սաղմոսագիր	Էջ 10
Դափիթ՝ Տիրոջ ընտրեալը	Էջ 11
Դափիթի Սաղմոսներէն	Էջ 12
Տուր ինձի	Էջ 13
Աստուածաշունչը մանուկներու համար	
..	Էջ 14-17
Եզակի գիրեր	Էջ 14
Ո՞րն է ճիշդ պատասխանը	Էջ 19-23
Կարճ լուրեր կիրակնօրեայէն	Էջ 24

Խմբագրական

Ի՞նչ բանի մէջ կը կայանայ երջանկութիւնը

Դեկտեմբեր ամիսը, տարուան բոլոր ամիսներուն պէս, հարուստ է իր կրօնա-եկեղեցական տօնելի առիթներով: Այդ տօնելի առիթներու կարգին են, օրինակ, Սուրբ Յակոբի անուանակոչութիւնը, Սուրբ Առաքեալներ Պետրոսի եւ Պողոսի լիշատակման տօնը եւ Սուրբ Ստեփանոս Նախավկայի նուիրուած տօնը:

Սակայն Դեկտեմբեր ամսուան տօները թիւով որքա՞ն ալ մեծ ըլլան ու ժողովուրդին համար սիրելի, անոնք նոյնքան հրապուրիչ եւ ընդհանրացած չեն որքան Նոր տարուան կամ Ամանորի տօնը, տարուան վերջը նշանակող եւ նոյն ատեն նոր տարեսկիզբ նշող Կաղանդի տօնը:

Կաղանդի ժամանումով, Դեկտեմբեր ամսուան ընթացքին կը ստեղծուի յատկապէս խանդակառ եւ ուրախ տրամադրութիւն: Կաղանդի պատրաստութիւնները ինքնին արդէն երջանկութիւն կը բերեն թէ՝ փոքրերուն, թէ՝ անոնց ծնողներուն: Սակայն ի՞նչ է ճիշդ երջանկութեան իմաստը: Ինչպէս եւ ինչո՞վ մարդ կ'երջանկանայ: Ի՞նչ ձեւով կը մեկնաբանուի «երջանկութիւն» կոչուող մարդկային զգացումը:

Մեր կեանքի բազմաթիւ այլ երեւոյթներու նման, երջանկութիւնն ալ անհամար բացատրութիւններ, սահմանումներ եւ մեկնաբանութիւններ ստացող երեւոյթ մըն է: Ան ամբողջութեամբ անշօշափելի հասկացողութիւն մըն է, որ չի համակերպիր այլ քննելի եւ կշռելի հիւթեր սահմանելու օրէնքներուն: Ան ներքին ապրում մը ըլլալուն պատճառաւ կը վերաբերի մարդ արարածի հոգիին եւ ներաշխարհին եւ անոր մեկնաբանութիւնը կը մնայ զուտ ենթակայական: Կարելի է նոյնիսկ ըսել թերեւս թէ որքան մարդեր կան նոյնքան ալ՝ երջանկութեան տրուող սահմանումներ:

Մեզմէ իւրաքանչիւրը տարբեր ձեւով երջանիկ կը զգայ ինքն իրեն եւ տարբեր պատճառներով: Ոմանց համար, յատակ է թէ

հիւթեղէն սեփականութիւնը երջանկութեան մեծ աղբիւր կը նկատուի: Ուրիշներու համար, առողջութիւնը, բախտաւորութիւնը, խաղաղութիւնը բաւարար են երջանկութիւն ստեղծելու համար: Մանուկներուն մօտ, նուէրները բաւարար են, իսկ ծնողներուն համար՝ գործի յաջողութիւնը: Նիւթեղէն բխող երջանկութեան հաւատացողները յետամնաց եւ հինաւուրց կը նկատեն հոգեւոր երջանկութեան ձգտողները եւ հակառակը, անհիւթեղէն երջանկութեան հետեւորդները, հիւթապաշտ պիտի կոչեն միւսները:

Սակայն ինչպէս միշտ, լաւագոյնը կը կայանայ առողջ հաւասարակշռութեան մէջ: Մարդուն կեանքին մէջ հիւթը շատ կարեւոր է, սակայն՝ ոչ միայն այդ: Հոգեւոր հարստութիւնը զէնք է ուղղակի, սակայն հիւթեղէնին նուազագոյն ապահովութիւնը՝ նոյնքան կենսական: Երկուքն ալ կարեւոր են եւ զիրար ամբողջացնող:

Ասով հանդերձ կարեւոր է ընդունիլ թէ հոգեւոր երջանկութիւնը անկասկած առանձնական մը ունի, որ հիւթեղէնը, ինք, չի կրնար հրամցնել: Մինչ հիւթը անցողակի է ու ենթակայ՝ կեանքի աննախատասելի պայմաններու քմայքին, հոգեղէն երջանկութիւնը մարդուն կամքով շահուած ու ներսիդին կուտակուած ըլլալուն շնորհիւ անհասանելի է արտաքինէն եւ առ այդ՝ դժուար խորտակելի: Այս առումով, ան աւելի հաստատուն եւ տոկուն երջանկութիւն մըն է քան հիւթեղէնը: Այս պատճառաւ է որ Կաղանդի առթիւ, փոխանակուող նուէրներու կարգին, մեզմէ իւրաքանչիւրը երջանկութիւն փնտուելու է նաեւ իր զաւկի ժպիտին, ընտանիքի անդամներու գուրգուրանքին, նպատակի մը իրականացման կամ Աստուծոյ շնորհած մէկ այլ բարիքին մէջ: Իսկ եթէ յատկապէս կեդրոնանանք այս վերջինին վրայ, երջանկութիւնը կը դառնայ մարդկային կեանքի ամենէն ձեռնիաս եւ անխորտակելի վիճակներէն մէկը:

Դեկտեմբեր ամսուան տօնացոյց

- Դեկտեմբեր 2: Սուրբ առաքեալներ Թաղէոս եւ Բարթողիմէոս
 Դեկտեմբեր 5: Ս. Արգար Ա. քրիստոնեայ թագաւոր
 Դեկտեմբեր 9: Յղութիւն Ս. Աստուածածնի Աննայէն
 Դեկտեմբեր 16: Ս. Յակոբ Մծբնայ հայրապետ
 Դեկտեմբեր 23: Սուրբեր Դափիթ Մարգարէին եւ Յակոբ Տեաննեղբայր Առաքեալին
 Դեկտեմբեր 25: Ս. Ստեփանոս նախավկայ «նախասարկաւագ եւ առաջին մարտիրոս»
 Դեկտեմբեր 26: Ս. Առաքեալներ Պետրոս եւ Պողոս
 Դեկտեմբեր 28: Որոտման որդիք Ս. Յակոբ Առաքեալ եւ Ս. Յովհաննէս Աւետարանիչ
 Դեկտեմբեր 30: Ս. Բարսեղ Կեսարացի

Դամասկոսի ճամբան

Քրիստոսի համբարձումէն ետք, իր հետեւորդներուն եւ առաքեալներուն դէմ փարիսեցիներու կողմէ տարուած հալածանքներ կատարողներէն ամեննէն խիստ անձնաւորութիւններէն մէկն էր Սողոս անունով հրեայ վրանագործ մը որ ունէր Հռոմէական քաղաքացիութիւն: Հրեայ բարձր կրօնական շրջանակներու կողմէ անոր պարտականութիւն տրուեցաւ մեկնիլ Դամասկոս ձերբակալելու համար քրիստոնեայ հաւատացեալներ ու զանոնք բերել Երուսաղէմ:

Դամասկոսի ճամբուն վրայ
 Սողոս, որ յետագային
 կրուեցաւ Պողոս,
 արժանացաւ Աստուծոյ
 անմիջական յայտնութեան:
 Իրապէս ալ, ճառագայթող
 զօրաւոր լոյսի մը ընդմէջէն,
 Յիսոս երեւեցաւ անոր եւ
 պատուիրեց որ դադրեցնէ իր
 հալածանքները ու դառնայ
 Նոր Կտակարանի քարոզի:
 Պողոս առաքեալ բազմաթիւ
 հրաշքներ գործած է եւ
 հիմնած եկեղեցիներ:

Ծնորիի իր անհամար
 բանաւոր քարոզներուն, գրած
 թուղթներուն, առաքելական
 ճամբորդութիւններուն,
 տեսիլքներուն եւ
 յայտնութիւններուն, ան կը
 նկատուի Քրիստոսի գլխաւոր
 առաքեալը:



Bartolome Esteban Murillo (1618-1682)

Le chemin de Damas

Musée du Prado, Madrid

Ամսուան աշխատակից յօդուածագիրը . . .

Կրօնաբարոյական դաստիարակութիւնը հայ դպրոցէն ներս

Կարօ Նոյուտեան

Նմանակող ոճրագործներու այս դարուն մէջ, մարդակերտումի դժուար աշխատանք մը կ'իյնայ հայ դպրոցներու ուսերուն ընդհանրապէս եւ արեւմտեան այս ափերուն վրայ գտնուող հայ դպրոցներու ուսերուն՝ մասնաւրապէս։ Համաշխարհազնացումը որքան որ նոր հորիզոններ կը բանայ այնքան ալ սահմաններ կը պղտորէ եւ անկայուն վիճակ կը ստեղծէ։ Հակահերոսներ կը յաջողին անմահանալ պատմութեան էջերուն վրայ, մինչ նոր սերունդը, շուարած, զանոնք ենթագիտակցաբար կը հերոսացնէ։ Այսպիսով բարիին ու չարին զատորոշումը կը դառնայ հինցած խաղ մը եւ պատեհապաշտութիւնը կը գրաւէ երկութին ալ տեղը։ Եթէ եղածը իմ հաշուիս կու գայ ուրեմն լաւ է, եթէ ոչ, միայն անտարբերութեանս արժանի է։ Բարոյական կողմնացոյցի բացակայութիւն եւ սնանկութիւն։

Հայուն համար մտահոգութիւնը կրկնակի է։ Ան ոչ միայն քրիստոնեալ պէտք է ըլլայ, այլ նաեւ՝ հայ քրիստոնեալ։ Ան ընդհանրապէս ընկերութեան մէջ յաջող անհատ դառնալու ճնշումին ենթարկուելէ անջատ, նաեւ կը գտնուի արժանապատութեամբ իր հայութիւնը ապրելու ճնշումին տակ եւ յաճախ առօրեայ հետքին մէջ կը մոռնայ «յաջող» բառին սահմանումը։ Եթէ ընտանիքը, եկեղեցին եւ դաստիարակը չեն կրցած կերտել մարդը իր մէջ, պատերազմին արդիւնքը արդէն իսկ վճռուած է։ Ան արդէն ինկած է նիւթապաշտութեան ճիրաններուն մէջ։ Յաջողութիւնը իրեն համար կը նշանակէ ուրիշ բան։

Հակառակ բոլոր այս թակարդներուն կը հաւատանք որ հայ քրիստոնեալ հաւատքը եւ հայ եկեղեցին այս բոլոր մտահոգութիւնները գործնականապէս փարատելու ուժականութիւնն ունին ապագայ հայ սերունդներու բարոյական առողջ զարգացման ի խնդիր։


Այսօրուան ընկերութեան մէջ եկեղեցւոյ եւ դպրոցի շալակներուն կը մնայ մեր զաւակներուն բարոյական ողնայար տալու հիմնական այդ պատասխանատութիւնը։

Եկեղեցւոյ խորհուրդները

Մաշտոցի Արձագանգի անցեալ թիւով մենք տեսանք թէ եկեղեցական եօթ խորհուրդներէն երկրորդն է Դրոշմը որմով կնքուող ենթական կը ստանայ Աստուծոյ կողմէ իրեն պարգևուած Սուրբ Հոգի շնորհքը: Դեկտեմբեր ամսուան այս թիւով կը ներկայացնենք խորհուրդներէն երրորդը՝ ապաշխարութիւնը:

Ապաշխարել կը նշանակէ զղջումով զգաստօրէն անդրադառնալ մեր գործած մեղքերուն առջեւ, խոստովանիլ այդ մեղքերը Աստուծոյ, եւ թողութիւն խնդրել Անկէ:

Մեղքը, որ յանցագործութիւն է, մարդը կը հեռացնէ Աստուծմէ ու ան կը կորսնցնէ Անոր պարգեւած շնորհները, ինչպէս խղճի հանգստութիւնը: Վերագտնելու համար Աստուծոյ հետ անկեղծ այս կապը եւ արժանանալու համար Անոր Շերումին, մեղաւոր անձը կը դիմէ ապաշխարութեան:



7 Մահացու Մեղքերը

Հպարտութիւն, Նախանձ, Բարկութիւն,
Ծովութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն,
Բղջախոհութիւն

Գիտէի՞ր թէ . . .

Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդները անկրկնելի են, մինչդեռ Ապաշխարութեան խորհուրդը կը կրկնուի կեանքին մէջ պարբերաբար, որովհետեւ մարդը իր կեանքին մէջ յանձնի կը տկարանայ եւ միշտ ենթակայ է մեղանչելու:

Կեանքի մէջ ամէն մարդ մեղքեր կը գործէ, գիտակցաբար կամ անգիտակցաբար: Այդ իսկ պատճառաւ իրաքանչիւր քրիստոնեայ պէտք է դարձի գայ, զղջայ իր գործած յանցանքներուն համար, խոստովանի իր մեղքերը ու ապաշխարէ որպէսզի սրբուի իր մեղքերէն:

Ապաշխարութիւն թէ՝ խոստովանութիւն

Ապաշխարութիւնը եկեղեցական խորհուրդ մըն է որովհետեւ ապաշխարողը իր մեղքերուն համար թողութիւն կը ստանայ, կը նորոգուի, կը վերականգնի, եւ ներքին փոփոխութիւն եւ հոգեկան խաղաղութիւն կ'ունենայ:

Սակայն ապաշխարութեան այս հոգեկան վիճակին հասնելու համար, մեր եկեղեցիէն ներս որդեգրուած է ապաշխարութեան խորհուրդը կատարելու շօշափելի ծեւ մը, որ բոլորիս ծանօթ է «խոստովանք» անուան տակ:

Ընդհանրութիւններ ապաշխարութեան մասին

1. Ապաշխարութեան խորհուրդը կը սկսի մեղքի գիտակցումով:
2. Մեղքին գիտակցող անձը պէտք է անկեղծօրէն զղչայ, այլևս չկրկնելու վճռակամութիւնը ունենալ եւ Աստուծոյ խոստովանի ու թողութիւն խնդրէ:
3. Հայ Եկեղեցոյ մէջ ընդհանրապէս խոստովանութիւնը կը կատարուի հաւաքական կերպով ձեռնադրեալ հոգեւորականին առջեւ Ս. Պատարագի ընթացքին:
4. Խոստովանութեան արարողութիւնը ապաշխարութեան խորհուրդին կատարումն է:
5. Օծեալ հոգեւորականը միայն իրաւոնք ունի ապաշխարողին թողութիւն տալու, ինչպէս Յիսուս իր Առաքեալներուն տուաւ այս իշխանութիւնը ըստ Մատթէոս 18.18 ին «... եւ ինչ որ արձակէք երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ», եւ Առաքեալներն ալ իրենց կարգին փոխանցեցին իրենց յաշորդող եպիսկոպոսներուն:
6. Խոստովանութեան գացող անձը պէտք է պատրաստ ըլլայ իր մեղքերուն համար որոշ նեղութիւն մը կրելու (ապրելակերպի փոփոխութիւն մը ներմուծելու իր կեանքին մէջ):

Ինչպէ՞ս կը կատարուի խոստովանութիւնը

Հայաստանեայց Եկեղեցիէն ներս խոստովանութիւնը կը կատարուի ընդհանրապէս հաւաքական կերպով:

Պատարագի ընթացքին, ապաշխարել ուզող հաւատացեալները կը մօտենան դէպի դաս, ու հոն ծնրադրելով կ'արտասանեն «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան» զղոսի աղօթքը, որմէ ետք քահանան «Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուծ եւ թողութիւն շնորհեսցէ» աղօթքը արտասանելով, Աստուծոյ անունով իրենց մեղքերէն կ'արձակէ բոլոր ապաշխարողները:

Քահանան այս կը կատարէ իբրեւ հաշտութեան միջնորդ ապաշխարողին եւ Աստուծոյ միջեւ եւ բարեխօս Աստուծոյ Միածին Որդիին մօտ:




Հայաստանեաց առաքելական Եկեղեցւոյ հախահայրերը

Յիսուս իր յարութեաէն ետք իր աշակերտներուն պատուիրեց երթալ աշխարհի չորս կողմերը եւ քարոզել աւետարանը: Առաքեալները, Յիսուսի պատուէրին համաձայն ցրուեցան աշխարհի ամէն կողմերը ու իրենց քարոզութիւններով քրիստոնեայ Եկեղեցիներ սկսան հաստատել:

Յիսուսի տասներկու առաքեալներէն երկուքը՝ Թադէոս եւ Բարթողիմէոս, Եկան Հայաստան եւ հոն տարածելով Աւետարանի ճշմարտութեան լոյսը, հաստատեցին Հպատանեաց առաքելական Սուրբ Եկեղեցին:

Թադէոս առաքեալի մասին...



Սուրբ Գիրքին մէջ, Թադէոս առաքեալ կը յիշուի նաեւ Ղերենս անուան տակ: Ան Հայաստան այցելած ու հոն քրիստոնեութիւն քարոզած առաջին առաքեալն է: Անոր գործունէութեան գլխաւոր կեդրոնը կը նկատուի Վասպուրական նահանգի Արտազ գաւառը, ուր հաստատուած էր Սանատրուկ թագաւորի պալատը:

Առաքեալի ամենէն մոլեռանդ թշնամին հանդիսացաւ Սանատրուկ թագաւորը, որ տեսնելով իր ժողովուրդին, պալատականներուն եւ նոյնիսկ ի՞ր իսկ աղջկան քրիստոնէական հաւատք ընդունիլը, մահուան դատապարտեց թէ՛ առաքեալը, թէ ի՞ր իսկ դուստրը:

Թադէոս առաքեալ Հայաստան բերած է այն գեղարդը որմով, ըստ աւանդութեան, խոցուած է խաչուած Քրիստոսի կողը:

Բարթողիմէոս առաքեալի մասին...

Յովհաննէսի Աւետարանին մէջ, Բարթողիմէոս առաքեալ կը յիշատակուի Նաթանայէլ անուան տակ: Յիսուս, վկայելով անոր մասին կ'ըսէ. «Ահաւասիկ ճշմարիտ իսրայէլացի մը որուն մէջ նենգութիւն չկայ»:

Սուրբ Բարթողիմէոս իր քարոզութեան ճամբով հասաւ Հայաստան եւ առաջին հերթին մտաւ Սիւնեաց նահանգ: Անոր քարոզութեան գլխաւոր վայրերէն մէկն էր Գողթն գաւառը ուր առաքեալի ձեռքով կառուցուած է Տեանընդառաջ Եկեղեցին: Առաքեալը անցաւ նաեւ Արտաշատ քաղաք: Հոն է, որ ան հանդիպեցաւ Թադէոս առաքեալի:

Կ'ըսուի թէ Սուրբ Բարթողիմէոս Հայաստան բերած է Տիրամօր սրբապատկերը եւ Անձեւացեաց գաւառին մէջ, Անարիտ դիցութիի մեհեանի նախկին վայրին վրայ հիմնած Սուրբ Աստուածածին Եկեղեցին:



Ասէ Աստուած...

Քրիստոսի յարութենէն քանի մը տարիներ ետք արդէն քրիստոնէութիւնը սկսած էր արմատ նետել Հռոմի մէջ: Պօղոս, որ հեթանոսներուն մէջ քարոզելու առաքելութիւնը տացած էր Աստուածէ, կ'ուզէր երթալ նաև Հռոմ եւ մինչեւ Սպանիա: Այս ճամբորդութիւնը նախապատրաստելու համար, ան նամակ մը կը գրէ Հռոմի քրիստոնեաներուն: Նամակին նիմնական նպատակն է քացայտել հաւատքին եւ շնորհին դերը քրիստոնեաց մարդու կեանքին մէջ:


**Մարդոց յանցանքը
Հռոմայեցիներուն 1.18-25**

Բայց Աստուածոյ բարկութիւնը երկինքէն պիտի յայտնուի մարդոց անհաւատութեան եւ անիրաւութեան համար, որոնց անիրաւութիւնը թոյլ չի տար որ ճշմարտութիւնը երեւան գալ: Որովհետեւ Աստուածոյ մասին ինչ որ կարելի է գիտնալ գիտեն արդէն, քանի Աստուած ինք յայտնեց անոնց:

Արդարեւ, աշխարհի ստեղծումէն ի վեր ստեղծագործութեան ընդմէջէն կ'իմացուին ու կը տեսնուին Աստուածոյ աներեւոյթ յատկանիշները, այսինքն՝ մշտնշենաւոր գօրութիւնը եւ անոր աստուածութիւնը. Եւ ասիկա՝ որպէսզի մարդիկ ունէ արդարացում չունենան: Որովհետեւ զԱստուած ճանշնալով հանդերձ իբրեւ Աստուած չփառաւորեցին եւ շնորհակալ չեղան, այլ՝ անհնեթեթ խորհուրդներ ունեցան, որով իրենց միտքը անմտութեամբ խաւարեցաւ: Իրենք զիրենք իմաստուն համարելով՝ յիմարացան եւ անմահ Աստուածոյ փառքը յատկացուցին մահկանացու մարդոց, թոշուներու, չորքոտատիներու եւ սողուներու հմանութիւնը եղող պատկերներու: Այս պատճառով ալ Աստուած թոյլ տուաւ որ իրենց սրտի ցանկութիւններով պղծութեան յանձնուին եւ իրենք իրենց մարմինը անպատուեն, քանի որ Աստուածոյ վերաբերմամբ ճշմարտութեան փոխարէն ստութիւնը նախընտրեցին, արարածներուն յարգանք ընձայեցին եւ զանոնք պաշտեցին, փոխանակ արարիչը պաշտելու որ օրինեալ է յափտեան. ամէն:

**Արդարացած եւ հաշտուած ենք
Աստուածոյ հետ
Հռոմայեցիներուն 5.1-5**

Հիմա որ ա՛լ հաւատքով արդարացած ենք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հաշտուած ենք Աստուածոյ հետ: Քրիստոս ինք մեզի համար կարելի դարձուց հաւատքով հասնիլ այն շնորհին, որոն մէջ կ'ապրինք հիմա եւ կը պարծենանք Աստուածոյ փառքին արժանանալու յոյսով: Եւ ոչ միայն այսքան. այլ տակաւին կը պարծենանք նաև մեր նեղութեանց մէջ, գիտնալով որ նեղութիւնները մեզի համբերութիւն կու տան, համբերութիւնը՝ տոկունութիւն, տոկունութիւնը՝ յոյս, իսկ յոյսը երբեք ամօթով չի ձգեր, որովհետեւ Աստուածոյ սէրը տեղ գտած է մեր սիրտերուն մէջ՝ մեզի տրուած Սուրբ Հոգիին միջոցաւ:



Թագաւոր, մարգարէ՞ թէ՝ սաղմոսագիր

Մեզմէ քիչեր կան որոնք չեն լսած «Սաղմոս» բառը եւ չեն գիտեր անոր ինչ ըլլալը:

Արդարեւ, սաղմոսները օրիներգներ, աղօթքներ եւ զանազան այլ կերպի քերթուածներ են, որոնք կ'արտայալտեն Աստուծոյ հանդէա խոր հաւատք եւ սէր: Հին կտակարանի գրքերէն Սաղմոսներու գիրքը կը համախմբէ 150 Սաղմոսներ, որոնցմէ 73-ը աւանդաբար կապուած են Խրայէլի Դաւիթ թագաւորին:

Այս Դեկտեմբեր ամսուան 23-րդ օրը, Հայաստանեաց Եկեղեցին կը յիշատակէ անունը սաղմոսագիր Դաւիթ թագաւորին որ նաև ընդունուած է իբր մարգարէ:

Ո՞վ է Դաւիթ

Դաւիթ Խրայէլի երկրորդ եւ մեծագոյն թագաւորն էր: Ան զաւակն էր Յէսսէի, ծնած Բեթլէհէմ 1085 թուականին նախքան Քրիստոս:

Իբրեւ թագաւոր յաջորդեց Սաւուդին ու նշանաւոր եղաւ իր բարձր աստիճանի իմացութեամբ եւ հանճարով: Իր գործած զանազան ոճիրներով եւ մեղքերով հանդերձ, ան կը յիշուի իր առաքինի վարքին համար եւ պատմութեան մէջ անցած է իբր առատաձեռն, ուղղամիտ, արի եւ յարատեսող թագաւոր:

Իսկ իբր աստուածապաշտ, ան ճանչցուած է իր խոր եւ շերմեռանդ հաւատքով:

Երաժշտութեան եւ պաշտամունքի հանդէա իր ունեցած սիրոյն շնորհիւ ան կը նկատուի ըլլալ Խրայէլի ամենէն ծանօթ սաղմոսագիրը:



Դաւիթ՝ Տիրոջ ընտրեալը


Ա.Թագաւորաց 16

Տէրը՝ Սատուղը Խարայէլի թագաւոր նշանակելուն համար զղաց: Ան ըսաւ Սամուէլի. «Ես Սատուղը զրկած եմ Խարայէլի թագաւորութեան: Ծիշ մը իւղ ա՛ն, եկո՛ր, քեզ Բեթլէհիմ՝ դրկեմ, Յեսսէի քով, որովհետեւ անոր որդիներէն մէկը թագաւոր ընտրած եմ»:

Բեթլէհիմ քաղաքի ծերերը դիմաւորեցին Սամուէլը եւ հարցուցին թէ ի՞նչ նպատակով եկած է: Սամուէլ ըսաւ թէ Տիրոջ զոհ մատուցանելու եկած է: Ան Յեսսէն եւ անոր որդիները զոհաբերութեան հրափրեց: Երբ անոնք եկան, Սամուէլ, Եղիազարը՝ Յեսսէի մեծ որդին տեսնելով, ըսաւ. «Իրաւ որ Տէրոջ ընտրած արքան այս է»: Տէրը ըսաւ Սամուէլի. « Անոր տեսքին մի՛ նայիր, ո՛չ ալ հասակին բարձրութեան, որովհետեւ ան իմ ընտրեալս չէ»:

Յեսսէ կանչեց իր միւս որդիները եւ անոնք տողանցեցին Սամուէլի առջեւ: Սամուէլ տեսնելով Յեսսէի միւս որդիները, հարցուց անոր. «Միայն ասո՞նք են քու որդիներդ»: Յեսսէ պատախանեց. «Վիոքրիկ տղայ մըն ալ ունիմ որ ոչխար կ'արածէ»: Սամուէլ ըսաւ. « Մարդ դրկէ եւ բերել տուր զայն»:

Տղան եկաւ: Ան խարտեաշ էր, սիրուն աշքերով ու Տիրոջ համար գեղեցիկ տեսքով: Տէրը ըսաւ Սամուէլի. «Ե՛լ, օծէ՛ Դաւիթը, որովհետեւ այս է իմ ընտրած»: Սամուէլ վերցուց իւղով լեցուն շիշը եւ օծեց Դաւիթը: Այդ օրուընէ ետք, Տիրոջ հոգին զօրացուց Դաւիթը:



Դաւիթի սաղմոսներէն, Սաղմոս 8 ը

**Աստուծոյ իհառքը
Եւ մարդուն տրուած պատիւը**

**Ո՞վ Տէր, մեր Տէրը,
Ի՞նչ իհառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:**

Փառքդ աւելի բարձր է՝ քան երկինքը.
բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով
գովեստդ հիսեցիր քեզի հակառակողներուն դիմաց,
որպէսզի լուսթեան մատնես
թշնամիներդ եւ հակառակորդներդ:
Երբ կը դիտեմ երկինքդ, մատներուդ գործը,
Կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր,
Կը մտածեմ. – Ի՞նչ է մարդը, որ կը յիշես զայն,
Մարդ արարածը ի՞նչ է որ հոգածութիւն ցոյց կու տաս անոր:
Զայն քիչ մը վար դասեցիր քեզմէ,
իհառքով ու պատուով զայն պսակեցիր.
քու բոլոր ստեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն,
անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ,
հօտերն ու արշաուները, նաեւ բոլոր վայրի անասունները,
երկինքի թոշուններն ու ծովուն ծուկերը,
եւ ծովերուն մէջ լողացող բոլոր Էակները:

**Ո՞վ Տէր, մեր Տէրը,
Ի՞նչ իհառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:**

Սաղմոսավանք



Սաղմոսավանի Սաղմոսավանքը, 13-րդ դար

Սաղմոսավանքը կը գտնուի
Հայաստանի Արագածոտնի մարզի
սահմաններէն ներս: Սաղմոսավան
գիւղէն ներս կառուցուած այս վանքը
եղած է միջնադարեան Հայաստանի
հոգեւոր կեդրոններէն մէկը:
Շինուած է Տուֆէ եւ անոր
ամենահին յուշարձանն է Սուլբ Սիոն
եկեղեցին, կառուցուած Վաչէ
Վաշուտեան իշխանի հրամանով,
1215 թուականին: Համալիրին մաս
կը կազմէ նաեւ Սուլբ Աստուածածին
եկեղեցին:

Տուր ինծի . . .

Տուր ինծի իմաստութիւնը, Տէր, որ կարենամ գնահատել իմ կեանքի վայրկեանները, գեղեցկութիւնն իմ զգայարանքներուն, ժպիտը մանկան, շողն իմաստութեան:

Տուր ինձ շնորհը, Տէր, որ կարենամ լսել թեւաբախումը հրեշտակներուն իմ հոգիին մէջ, իմ տան ու ճամբաններուն վրայ:

Եթէ յանկարծ այդ շողերուն դէմ փակուին իր հոգիին պատուհանները, երբ ըլլայ խաւար, այն ատեն իմ հոգին կրնայ նորէն սատանաններու եւ դեւերու բնակավայր դառնալ, որովհետեւ անոնք մեզի հետ կ'ապրին ու մենք չենք տեսներ:

Այն ատեն հրեշտակներու թեւերուն փոխարէն, իմ մէջս պիտի լսեմ դիւային քրքիչը, սպաննելու, ատելու, զրայարտելու, նախանձելու եւ իմ եղկելի գոյութիւնը մինչեւ գերեզման քաշկըռոտելու:

Այն ատեն ատելութիւններով պիտի մտնեմ անկողին ու իմ երազները նաշխուն պիտի հեռանան ի սպառ, կախարդական թռչունին պէս:

Երբ արթննամ, այն ատեն պիտի չտեսնեմ այն արեւը որ կ'իյնար պատուհանիս ու ձեռքիս վրայ:

Եթէ անկողին երթամ, Տէր, առանց իմ թշնամիս ներելու, այն ատեն կը հաւատամ որ հիւանդ է իմ մարմինը ու շուքի մը պէս, դեւն է սողոսկեր իմ հոգիին մէջ:

Օգնէ՛ ինծի, Տէր, որ չփակուին պատուհաններն իմ հոգիին: Տուր ինձ իմաստութիւնը որ Քեզ զգամ, տեսնեմ Քեզ քու բոլոր ստեղծագործութիւններուն մէջ: Տեսնեմ Քեզ ծառին, ծաղիկին, մարդուն ու անբանին մէջ:

Այն ատեն պիտի խօսիս ինծի հետ, Տէր, ու ես իմ մարմնիս մէջէն պիտի լսեմ Քու ձայնը:

*Համաստեղ
Աղօթարան
Պէյրութ 1957*

Աստուածաշունչը մանուկներու համար Ո՞վ է մեծը

Կափառառամի ճամբուն վրայ, Յիսուսի աշակերտները կը վիճէին գիտնալու համար թէ ո՞վ էր իրենց մէջ ամենէն մեծը եւ ամենէն կարեւորը:

«Ես եմ».


«Ոչ ես եմ» կը կրկնէին անոնք:



Եթք տուն մտան, Յիսուս հարցուց անոնց.

«Ի՞նչ բանի մասին կը վիճաբանեիք ճամբու ընթացքին»:

Աշակերտները լուռ մնացին եւ չպատասխանեցին հարցումին:



Ուրեմն Յիսուս նստաւ, իր շուրջ հաւաքեց 12 աշակերտները եւ ըստ անոնց.

«Եթէ մէկը կ'ուզէ առաջինն ու ամէնէն կարեւորը ըլլալ թող բոլորին վերջինը եւ բոլորին սպասաւորը ըլլայ»:

Այդ վայրին մօտերը փոքրիկներ կը խաղային. Յիսուս կանչեց անոնցմէ մէկը, գրկեց զինք եւ ըսաւ.

«Ով որ այսպիսի փոքրիկ մը ընդունի՝ զիս ընդունած կ'ըլլայ,
եւ ով որ զիս կ'ընդունի՝ իմ երկնաւոր Հայրս ընդունած կ'ըլլայ:

Այս դէպքէն ետք աշակերտները ամչցան ու ալ չվիճաբանեցան: Անոնք սորվեցան ինչպէս իրաւ մեծ եւ արժանի աշակերտներ ըլլալ:



Յիսուս կ'ուզէր բացատրել իր աշակերտներուն որ Աստուծոյ հետեւելու համար պէտք չկայ պատասխանառու կամ կարեւոր անձ ըլլալ, այլ պէտք է լաւագոյնը ընելով, համեստ ու բարի ըլլալով ներկայանալ անոր առջեւ:

Ինչո՞ւ
աշակերտները
չպատասխանեցին
Յիսուսին:



Որովհետեւ անոնք
գիտէին որ իրենց
վէճը անհմաստ
նիւթի մը շուրջ էր:

Ինչո՞ւ Յիսուս
մանուկ մը գրկեց ու
ընդունեց իր մօտ:



Այդ ժամանակին
փոքրերը մեծերուն
բնաւ չէին
մօտենար: Այս
պատմութեան մէջ,
Յիսուս փոքրիկին
տեղ տուաւ
մեծերուն մէջ ցոյց
տալու համար թէ
փոքրիկները
նոյնքան կարեւոր
են որքան մեծերը:

Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

է	թ	դ	ա	բ	զ	ը	ե	գ
ը	գ	թ	թ	ե	է	ա	զ	դ
ե	ա	զ	դ	գ	ը	է	թ	թ
թ	դ	գ	ը	ա	բ	ե	է	զ
ա	զ	ե	գ	է	թ	բ	դ	ը
թ	է	ը	զ	դ	ե	գ	ա	
գ	թ	թ	ե	զ	ա	դ	ը	է
զ	ե	է	թ	ը	դ	թ	գ	ա
դ	ը	ա	է	թ	գ	զ	թ	ե

Նախորդ «Եզակի գիրեր» ուն
լուծումը

թ	թ	ը	գ		ե	դ	զ	ա
	ա	է		թ	թ		ը	
	ե	գ		ը	դ	է		թ
գ		ե	ը		թ	ա	դ	է
	ը		է	թ		ե		զ
է	զ	ա		դ	գ	թ		
ը		թ	թ	ե		զ		գ
	գ		դ		զ	ը	է	
ա	է	զ	թ	գ		թ	ե	դ

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, թ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իրաքանչիւր գիր իրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Ո՞ր է ճիշդ պատասխանը Նոյեմբեր ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն

Կ'իրիկնանար, Արձակէ՛, գտնեն, ամայի,
ուտելիքը, հաց, ձուկ, քաւականաչափ

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. ա. Ս. Յովհաննէս, Պոկերան

Հայրապետ

2. գ. Նոյեմբեր 11

3. Պոկերան

4. գ. Հրեշտակներու մասին

5. ա. Մկրտութիւն

6. թ. Դրոշմ

7. Միտուն

8. գ. Աղաւնի

9. դ. 1 տաղանդ ունեցողը

10. բարի գործեր ընելու համար:

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. դ. Ամենայն Սրբոց

2. ա. Նոյեմբեր 2

3. «Պոկի» բերան, գեղեցիկ լեզու ունեցող

4. Դեսպան կամ Պատգամաւոր

5. թ. Դրոշմ

6. Կճիք

7. Կնքեալ, Օծեալ

8. գ. Աղաւնի

9. Ծակատը, Սչքերը, Ականջները, Քիթը,
Բերանը, Զեռքերը, Սիրտը «կործքը»,
Կոնակը, Ոտքերը

10. որթատունկը, մշակն

Երկրորդականի անկիւն

1. գ. Հոկտեմբեր 31 ին յաջորդող Շաբաթ
օրը:

2. դ. Դ.

3. Կոստանդնուպոլսոյ

4. Յորդանան

5. Լսել

6. Կեանքէ, կեանք

7. Յահտենական կեանք

8. բոլորը դաւանակից են Ասորի, Հապէշ,
Հնդիկ մալապար, Ղատի

9. Յակոբոս Առաքեալի նամակը

10. դ. 7

Ո՞րն է ճիշդ պատասխանը Նոյեմբեր ամսուան մասնակցողները

Սուրբ Յակոբ Կիրակօնօրեալ Դպրոց

Մանկապարտէզ

Սեւակ Թեհինեան, Տանիէլ Տօնապետեան,
Լորա Տօնապետեան, Լիլի Չինչինեան,
Ալիս Մելեքեան, Սահակ Մելեքեան,
Քրիստինա Ակրեան, Յակոբ Քեպթանճեան,
Անդրամիկ Նասոյեան, Աննա Թիւթիւնճեան
Անսխալ պատասխանողներ
Ցոլեր Անթեպեան, Սելենա Կարապետեան,
Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն
Փաթիլ Կարապետեան, Քրիստոֆըր
Արմութլու, Նշան Կիրակոսեան, Սեւակ
Դաւիթեան, Շօնաթան Զարֆանեան, Ալիք
Գապաքեան, Դանիէլ Ակրեան, Միներ
Պանքեան, Կլորիա Կարապետեան,
Թաթիանա Քեհինայեան, Խշխշեան Արշակ,
Խշխշեան Ռիթա, Շեսիքա Մաթոսեան,
Կրէս Նարեկեան, Կարինէ Կարապետեան,
Արազ Քէպթանճեան, Ռիթա Մամիրոյեան,
Սերժ Դաւիթեան, Նանար Եագուպեան:
Անսխալ պատասխանողներ
Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան, Հրակ
Քիւփելեան, Քարինա Քիւփելեան:

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գէորգ Պուիքեան, Զոհրապ Կարապետեան,
Ալեք Կարապետեան, Միներ Մաթոսեան,
Սեւան Մելեքեան, Քրիստոֆըր Նազարեան,
Թամար Թիւթիւնճեան, Նանոր Քիւփելեան,
Ռոզալին Չինչինեան, Հրայր Մաթոսեան,
Ներսէս Նասոյեան, Մարիա Դանիէլեան
Անսխալ պատասխանողներ
Առէն Պապիկեան, Դալար Գիւպթանճեան,
Շէք Զարֆանեան, Լորի Չինչինեան,
Կասիա Արմութլու

Սուրբ Յակոբ Ազգային Վարժարան
Վարդգէս Եւ Աստղիկ Սարաֆեան
Նախակրթարանի Ե. դասարանի
աշակերտներ


Մասնակցողներ
Սերոբ Թաշճեան
Անուշ Ներսէսեան
Արեգ Համբարձումեան
Լեօնարտօ Թորոսեան
Նելլի Օհաննէսեան
Ժագ-Սիօն Գասպարեան
Զրիս Չաքըճեան
Գարին Մարգարեան
Էլի Գույումճեան
Յովսէփ Կիւլեան
Դուին Տօնապետեան
Երիք Գասարճեան
Դալար Գիւպթանճեան
Աբրահամ Թանուսեան
Ալիք Կարապետեան
Անդրանիկ Պաղտասարեան
Անսխալ պատասխանողներ

Դաւիթ Աթոլիկեան
Սեւակ Թաշճեան
Գրիգոր Պալապանեան
Տիրան Ամիկեան
Արի Վարժապետեան
Արի Թորոսեան
Շանթալ Թորոսեան
Առէն Պապիկեան
Ճորժ Գալլողլեան
Սարին Պէզճեան
Թալի Բակլայեան

Երկրորդականի անկիւն

Յովիկ Կարապետեան, Թամար Պուիքեան,
Քրիստին Կարապետեան, Գօգօ
Մաթոսեան, Անի Մելեքեան, Արի
Միրզայեան, Լորա Սարիմանուկեան,
Սեդրակ Մամիրոյեան, Արման Նարեկեան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն**



Ամբողջացո՞ւր «Ղուկաս 2.8-14»

Հովհաններ, խաղաղութիւն, Փրկիչը, խանձարուրով, հաճութիւն,
հրեշտակը, աւետիս, Օծեալ

Այնտեղ, դաշտերուն մէջ ----- կային, որոնք գիշերով իրենց հօտերուն
պահակութիւն կ'ընէին: Տիրոջ ----- անոնց երեւցաւ եւ Տիրոջ փառքը
լոյսի պէս անոնց վրայ ծագեցաւ: Հովհանները սաստիկ վախցան. հրեշտակը ըսաւ
անոնց.

- Մի՛ վախնաք, ձեզի ----- մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ
ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր -----
ծնաւ, որ ----- Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի... հոն
մանուկ մը պիտի գտնէք՝ ----- փաթթուած եւ մսուրի մէջ դրուած:
Եւ յանկարծ այդ հրեշտակին միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն մը, որ
կ'օրինաբանէր զԱստուած, ըսելով.

«Բարձունքներուն մէջ Աստուծոյ փա՛ռք, ----- երկրի վրայ
եւ մարդոց միշեւ ----- »

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

- 1.- Ո՞ր սուրբին տօնը պիտի տօնենք
այս տարի Դեկտեմբեր 16 ին:
ա.- Ս. Թաղէոս եւ Բարթողիմէոս
բ.- Ս. Ստեփանոս նախավկայ
գ.- Ս. Պետրոս եւ Պօղոս
դ.- Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ

- 2.- Այս տարի ե՞րբ պիտի տօնենք Ս.
Ստեփանոս նախավկային տօնը:
ա.-Դեկտեմբեր 25
բ.- Դեկտեմբեր 27
գ.- Դեկտեմբեր 28
դ.- Դեկտեմբեր 29

- 3.- Ս. Պօղոս Առաքեալ
Քրիստոնեայ ըլլալէն առաջ ի՞նչ կը
կոչուէր:
ա.- Պետրոս
բ.- Յակոբ
գ.- Սողոս
դ.- Նաթանայէլ

- 4.- Սողոս ի՞նչ արհեստ ունէր:
ա.- Հողագործ էր
բ.- Զենորս էր
գ.- Հովիւ էր
դ.- Վրանագործ էր

- 5.- Յիսուս ո՞ր քաղաքի ճամբուն
վրայ երեւցաւ Սողոսի:
ա.- Հալէա
բ.- Պէյրութ
գ.- Դամասկոս
դ.- Նազարէթ

- 6.- Թո՛ւե այն մահացու մեղքը որ
«Ծ» գիրով կը սկսի:

Ծ-----

- 7.- Յիսուսի 12 Առաքեալներէն
որո՞նք Հայաստան եկան: Գրէ՝
ժամանակագրական շարքով:

Նախ՝ Ս. -----	Առաքեալ
յետոյ՝ Ս. -----	Առաքեալ

- 8.- Աստուածաշունչը կազմող
գիրքերէն ո՞ր մէկը ամենէն երկարն է:

- ա.-Սաղմոսներու Գիրքը
բ.- Առակներու Գիրքը
գ.- Մաթէոսի Աւետարանը
դ.- Ղուկասի Աւետարանը

- 9.- Դափիթ թագաւոր
Աստուածաշունչի ո՞ր գիրքին մէկ
մասը գրեց:

- ա.-Սաղմոսներու
բ.- Առակներու
գ.- Մաթէոսի Աւետարան
դ.- Ղուկասի Աւետարան

- 10.- Հստ 15-18 էջերուն մէջ
ներկայացուած պատմութեան ըստ
Յիսուսի ո՞վ է մեծը:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն

1.- Ո՞վ էր առաջին սարկաւագը:

ա.- Ս. Թադէոս

բ.- Ս. Ստեփանոս նախավկայ

գ.- Ս. Պետրոս

դ.- Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ

2.- Մեր դպրոցին անունը ո՞ր սուրբին անունով է:

ա.- Ս. Յակոբ Մծբնայ հայրապետ

բ.- Ս. Յակոբ Տեառնեղբայր

Առաքեալ

գ.- Որոտման որդի Ս. Յակոբ

դ.- Որոտման որդի Ս. Յովհաննէս

3.- Ս. Պօղոս Առաքեալ Յիսուսի 12 Առաքեալներէն մէ՞կն էր:

ա.- Այս

բ.- Ոչ

4.- Այս գիրքերէն որո՞ն մէջ կրնանք կարդալ Պօղոսի մասին:

ա.- Մաթէոսի Աւետարան

բ.- Ղուկասի Աւետարան

գ.- Մարկոսի Աւետարան

դ.- Առաքեալներուն գործերը

5.- Պատարագի լնթացքին երբ խոստովանահայր քահանան կ'ըսէ «Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած եւ թողութիւն շնորհեսցէ...» ո՞ր խորհուրդն է որ կը կատարուի

ա.- Մկրտութիւն

բ.- Դրոշմ

գ.- Ապաշխարութիւն

դ.- Հաղորդութիւն

6.- Պատարագի լնթացքին

կատարուող խոստովանութիւնը մեր եկեղեցւոյ 7 Խորհուրդներէն ո՞րն է:

ա.- Մկրտութիւն

բ.- Դրոշմ

գ.- Ապաշխարութիւն

դ.- Հաղորդութիւն

7.- Ո՞վ Հայաստան բերած է Ս.

Գեղարդը որմով խոցուած էր Յիսուսի կողը խաչափայտին վրայ:

8.- Ս. Բարթողիմէոս Առաքեալը յիշուած է Մատթէոսի, Մարկոսի եւ Ղուկասի Աւետարաններուն մէջ: Իսկ Յովհաննէսի Աւետարանին մէջ ան կը յիշուի իր երկրորդ անունով: Ի՞նչ է այդ անունը:

9.- 150 Սաղմոսներուն մէջէն վարը յիշուած 4 էն մէկը ամենակարճն է եւ ուրիշ մը ամենաերկարը: Գտի՛ր զանոնք:

ա.- Սաղմոս 1 -----

բ.- Սաղմոս 23 -----

գ.- Սաղմոս 117 -----

դ.- Սաղմոս 119 -----

10.- Հայաստանի ո՞ր մարզին մէջ կը գտնուի Սաղմոսավանքը:

ա.- Արարատեան մարզ

բ.- Արագածոտնի մարզ

գ.- Սիւնիքի մարզ

դ.- Վայոց Ձորի մարզ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1.- Ո՞վ էր Քրիստոսի Նախավկան:

ա.- Ս. Թադէոս

թ.- Ս. Ստեփանոս

գ.- Ս. Պետրոս

դ.- Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ

6.- Մէկ բառով բացատրէ:

զղումով զգաստանալ մեր գործած
մեղքերուն առջեւ, խոստովանիլ այդ
մեղքերը Աստուծոյ եւ թողութիւն
խնդրել Աստուծմէ:

2.- Ս. Թադէոս Առաքեալ թաղուած

է Ս. Թադէի վանքին մէջ: Ներկայս

ո՞ր երկրին մէջ կը գտնուի այս վանքը :

ա.-Հայաստան

թ.- Իրան

գ.- Թուրքիա

դ.- Վրաստան

7.- Մկրտութեան խորհուրդը

նախապայման է Դրոշմի խորհուրդին:

Ո՞ր խորհուրդը նախապայման է

Հաղորդութիւն ստանալու:

3.- Նոր Կտակարանի հետեւեալ

գիրքերէն որո՞նք գրուած են Ս.

Պօղոս Առաքեալի կողմէ:

ա.- Նամակ Հռոմայեցիներուն

թ.- Նամակ Կորնթացիներուն

գ.- Նամակ Թեսաղոնիկեցիներուն

դ.- Նամակ Տիտոսի

8.- Սաղմոսները թուով 150 հատ են:

Գրէ այս սաղմոսներուն հայերէն

թուագրումը ըստ LXX ի:

Օրինակ

Սաղմոս թիւ 1 Ս.

Սաղմոս թիւ 11 ----

Սաղմոս թիւ 119 ----

Սաղմոս թիւ 150 ----

9.- Ամբողջացո՞ւր ըստ Հռոմայեցիս

5.1 ին:

«Հիմա որ ա՛լ հաւատքով

արդարացած ենք, մեր Տիրոջ

----- ----- միջոցաւ

հաշտուած ենք ----- հետ :»

10.- Ո՞ր մարգարէն Դաւիթը

թագաւոր օծեց :

5.- Մէկ բառով բացատրէ:

Կրօնական կամ բարոյական յանցանք,

Աստուծոյ անհնազանդութիւն, Աստուծմէ

հեռացում:

Կարճ լուրեր Կիրակնօրեայէն

Կիրակնօրեայ Դպրոցը բաց է ամէն Կիրակի
ժամը **10:30 – 1:15**

Յաւելեալ տեղեկութիւններու համար կապ պահել, Տնօրէնին՝ Թորոս
Պապիկեանին հետ

Էմակ : director@sourphagop.org

Հեռ : (514) 956-1277

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

Աերկայ եւ նախկին թիւնը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ:

Այցելեցէ՞ք www.sourphagop.org հասցեն
եւ ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը:

www.sourphagop.org ը

ընդունած է այցելութիւններ
8,500 եզակի այցելուներէ

www.sourphagop.org ի հաշուեցոյց


	Նոյեմբեր	Հոկտեմբեր	2006
Այցելութիւններ	4,522	3,754	60,343
Եզակի Այցելու	1,426	1,370	8,505
Այցի տեւողութիւն	2:30	2:44	1:39
Երկիրներ	61	62	103
Քաղաքներ	320	269	1,321
Բացուած Գրութիւններ (.pdf)	1,389	1,080	9,920
Մաշտոցի Արձագանգ	973	515	7,160
Զարկեր	29,233	24,063	267,032
Դիտուած Էջեր	7,719	6,240	89,330

Ամբողջական Հաշուեցոյցը կը գտնուի www.sourphagop.org ի
վրայ:

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ



Շնորհաւոր Նոր Տարի և Սուրբ Ծննդունի

Յունուար 2007
ԺԴ տարի- թիւ 5

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Զեզի մեզի մեծ աւետիս

Կամքը մարդկային կեանքի յատուկ
այն արտայատութիւնն է որուն շնորհիւ
դրդապատճառէ մը մղուած ցանկալի
նպատակ մը իսկական ու շարժուն
գործողութեան կը վերածուի:
Խմբագրական էջ 3

Եթէ առաջին ուխտը անթերի ըլլար, երկրորդ մը
պէտք պիտի չըլլար: Ասէ Աստուած էջ 9

Հաղորդութեան ճաշակումով,
Բաւատացեալը Քրիստոսի
ներկայութիւնը կ'ընդունի իր
ներսիդին: Խորհուրդին մասին կարդա'
էջ 6-7

Յովհաննէս Մկրտիչ Քրիստոսի գալուստը
նախապատրաստող դէմքը եղաւ ու այդ լուսաւորութեան
գործը սկսած ըլլալու համար կոչուեցաւ Կարապետ:
Յունուար ամսուան տօնացոյցը տես էջ 4

Սուրբ Ծննդուի Տօնակատարութիւն
Կիրակօնօրեայ Դպրոցէն ներս:
Տեղեկատուականը կարդա' էջ 10-11-12

Աստուածայալտնութիւն. Յիսուսի ծնունդով
Աստուած կը յայտնուի մարդկութեան: Հաջկական
Ծննդի մասին տես էջ 5

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի
ամսաթերթ

Խմբագիր՝
Ծաղիկ Թորիկեան Պոյամեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ.ի ներկայ եւ
նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ։ Այցելեցէ՞ք
www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը

Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի
կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝
Վերժին Գիւղթանձեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխանձեան
Յասմիկ Նաճարեան
Գարող Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխեն Իշխանձեան
Յասմիկ Գանաձեան

Լուսանկարիչ՝
Նիկոլ Դանիելեան

Տնօրին՝
Թորոս Պապիկեան

Այս թիւով . . .



Կամքի շնորհիւ	Էջ 3
Մկրտիչ, Կարապե՞տ թէ մեծ մարգարէ	Էջ 4
Հայկական Ծնունդի մասին.....	Էջ 5
Եկեղեցական խորհուրդներէ՞ն՝ Հաղորդութիւն	Էջ 6-7
Սուրբ Վահագն Գողթնացի	Էջ 8
Ասէ Աստուած	Էջ 9
Սուրբ Ծնունդի տօնակատարութիւն Կիրակնօրեայ Դպրոցէն ներս	Էջ 10-11-12
Ծնունդի գիշեր	Էջ 13
Աստուածաշունչը մանուկներու համար	Էջ 14-17
Եղակի գիրեր	Էջ 14
Ո՞րն է ճիշդ պատասխանը	Էջ 19-23
Կարճ լուրեր կիրակնօրեայէն.....	Էջ 24

Խմբագրական

Կամքի շնորհիւ

Նոր տարուան սկիզբը մարդոց մօտ կարծես կը յառաջացնէ նորոգուելու հաստատ տրամադրութիւն, նոր ձեռնարկումներու դիմելու, իրենց կեանքին կամ ապրելակերպին մէջ նորութիւններ մտցնելու, մէկ խօսքով նոր եռանդով ու տրամադրութեամբ սկսող Տարին դիմաւորելու:

Մարդոց այսպիսով նորոգուած ծրագիրները իրենց բնոյթներով անհամար ու տեսակաւոր են: Փոքր ու համեստ յուսադրումներէ մինչեւ մեծամոլ ու անիրականանալի ցանկութիւններու կարելի է հանդիպիլ: Ամէն մէկս կը ցանկայ տարբեր ձեւով նորոգուիլ: Սակայն ինչ որ ալ ըլլայ մարդուս ծրագիրը, ան կը կարօտի մարդ արարածին տնօրինութեան յանձնուած յատուկ կարողութեան մը, որուն շնորհիւ նորոգուելու ցանկութիւնը զուտ փափաքի վիճակէն անցնելով պիտի վերածուի գործօն արարի: Այս կարողութիւնը կամքն է:

Կամքը մարդկային կեանքի յատուկ այն արտայայտութիւնն է որուն շնորհիւ դրդապատճառէ մը մղուած ցանկալի նպատակ մը իսկական ու շարժուն գործողութեան կը վերածուի: Այսինքն մարդը ոչ միայն կը մտածէ, կը բաղձայ, կ'երազէ այլեւ աւելին կը ձգտի, կ'աշխատի ու կը գործադրէ իր փափաքը: Ան կը կշռադատէ ապա որոշում կ'առնէ ու գործի կ'անցնի:

Կամքը մարդկային կեանքէն ներս առաջնահերթ դեր խաղող յատկութիւն մըն է: Ամէն մարդ կամքի տէր չէ անպայման իսկ եղողներն ալ հաւասարապէս օգրաւոր կամք կրնան չունենալ: Սակայն ինչ որ ալ ըլլան կամքի յատկութիւններն ու ուժգնութիւնը, ան ինքն իր վրայ իշխելու կարողութիւն

կ'արտայայտէ. կարողութիւն ցանկալի կացութեան մը հասնելու համար նիւթեղէն թէ հոգեկան կարգի խոշընդուներ յաղթահարելու, իսկ ոչ ցանկալի, խուսափելի կամ վտանգաւոր կացութենէ մը հեռանալու համար ինքն իր վրայ իշխելու ու բնազդին դէմ դնելով ինքզինք փրկելու:

Նոր տարին հոգեպէս նորոգուելու լաւագոյն առիթ մըն է եւս: Ներելու, սիրելու, ընդունելու. առաքինի եւ հաւատաւոր կեանք մը ապրելու որոշում առնելու աննման առիթ մը: Սակայն այս բոլորին համար կամք պէտք է: Պէտք է որոշել որ հոգեկան վերածնունդը ամրատեշտութիւն մըն է: Ապա, տեսականէն անցնիլ գործէականին, առաքինի ըլլալ փափաքելէ անդին առաքինի կեանք ապրիլ, բարի գործ տեսնելով, համեստ ըլլալով, ժուտկալ մնալով, մեր հակառակորդներուն ներելով ու մեր շրջապատը սիրելով: Կամքի տէր ըլլալ իշխելու համար մեր նախնական ցանկութիւններուն վրայ ու դիրին լուծումները թողելով նայիլ աւելի օգտաշատին:

Թող այս նոր տարին երթի մը սկիզբը ըլլայ մեր բոլորին համար, հոգեպէս նորոգուելու ու մեր կամքի գօրութեան շնորհիւ նմանելու, որքան որ մարդկայնօրէն կարելի է, Քրիստոսի՝ իսկ նորոգեալ ու բարձրագոյն օրինակին. անձնականէն զեղչելով դառնալու դէպի ուրիշը, անհատականէն մեկնելով բացուելու դէպի հաւաքականին:

**ԾԱՌՀԱԿՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**



Յունուար ամսուան տօնացոյց

- Յունուար 1: Տարեմուտ եւ Կաղանդ
 Յունուար 5: Շրագալոյց Սուրբ Ծննդեան, Խթում
 Յունուար 6: Սուրբ Ծնունդ
 Յունուար 7: Յիշատակ մեռելոց
 Յունուար 13: Անուանակոչութիւն Յիսուս Քրիստոսի
 Յունուար 15: Ծնունդ Սուրբ Յովհաննու Կարապետի
 Յունուար 18: Սուրբ Անտոն ճգնաւոր
 Յունուար 23: Սուրբ Վահան Գողթնացի
 Յունուար 27: Սուրբ Գրիգոր աստուածաբան

Մկրտիչ, Կարապետ, թէ Մեծ Մարգարէ



Jacopo Carrucci
(1494-1557)

*La naissance de
Jean Baptiste*

Galerie des offices,
Florence

Այս երեք կոչումներն ալ կը վերաբերին Աստուածաշունչի մեծագոյն դէմքերէն Յովհաննէս Մկրտիչին, որուն ծննդեան աւետիսը բերաւ Գարբիէլ հրեշտակը, Քրիստոսի ծնունդի աւետումէն իսկ առաջ: Ան զաւակը պիտի ըլլար Եղիսաբէթի եւ Զաքարիայի: Իր յառաջացած տարիքի բերմամբ, Զաքարիա կասկած արտայայտեց Տիրոջ իրեն աւետած լուրին առջեւ: Առ ի հետեւանք իր կասկածներուն, ան համր դարձաւ ու այդպէս անխօս մնաց մինչեւ իր զաւին, Յովհաննէսի ծնունդը:

Յովհաննէս Մկրտիչ Քրիստոսի գալուստը նախապատրաստող դէմքը եղաւ ու այդ լուսաւորութեան գործը սկսած ըլլալու համար կոչուեցաւ Կարապետ: Ան հաւատացեալները մկրտեց ջուրով ու անոնց կարգին նաև Յիսուս ի՞նք: Մկրտութեան ընթացքին, երբ Յիսուս կ'ալօթէր, երկինքը բացուեցաւ եւ Սուրբ Հոգին տեսանելի կերպարանքով աղաւնիի պէս իշաւ անոր վրայ:

Քրիստոսի ծնունդն ու մկրտութիւնը մեր եկեղեցին ներս ծանօթ են «Աստուածայայտնութիւն» անունը կրող տօնախմբութեան տակ:

Հայկական Ծնունդ

Հայաստանեաց եկեղեցւոյ ամենէն հարազատ եւ սիրելի տաղաւարներէն է Սուրբ Ծնունդը, որ մտերմիկ ձեւով հայերուս կողմէ կը կոչուի նաեւ «Հայկական Ծնունդ»։ Ան Քրիստոսի կեանքին վերաբերող երկու դրուագներու յիշատակման օրն է որ կը կոչուի նաեւ Աստուածայայտնութիւն։ իրապէս ալ, Յիսուսի ծնունդով Աստուած յայտնուեցաւ մարդկութեան։

Հայկական Ծնունդի
տօնակատարութիւնները կը վերաբերին ուրեմն յատկապէս Յիսուս մանուկի Բեթեհէմի համեստ պայմաններու մէջ ծննդեան, ինչպէս նաեւ անոր մկրտութեան։ Այս երկրորդ իրողութեան հետևողութեամբ, մեր եկեղեցին ներս, Ծնունդի սուրբ պատարագէն անմիշապէս ետք կը կատարուի շրօրինէք առ ի յիշատակ Քրիստոսի Յորդանան գետին մէջ մկրտուած ըլալուն։

Հայկական ծնունդը կը յիշատակուի Յունուար 6-ին։ Այս օրը նախորդող օրը, Յունուար 5ը կը կոչուի խթման գիշեր ու ընտանեկան հաւաքոյթներու նուիրուած երեկոյ մըն է ուր կը կատարուի շքեղ ընտանեկան տօնախմբութիւն եւ ծննդեան ընթրիք։ Թէեւ տարիներու ընթացքին ու սփիտքեան ազդեցութեան տակ խթման երեկոն նուազ գրաւիչ ու կեդրոնական դարձած է, սակայն մեծ թիւով ընտանիքներ կը շարունակեն պահպանել ու յարատենել տիպար հայկական այս սովորութիւնը։

Խթումը կը կոչուի նաեւ ճրագալոյց որովհետեւ սովորութիւն է խթման պատարագի ընթացքին հաւատացեալներուն ձեռքը վառած մոմ տեսնել ու արարողութեան աւարտին այդ մոմերը տուն փոխադրելով Քրիստոսի ծննդեան աւետիսը հասցնել տուն եւս։



«Մեծ է եւ սքանչելի խորհուրդը որ ազօր յայտնուեցաւ։ նովիւներ հրեշտակներուն հետ կ'երգեն, աշխարհին աւետիս կու տան»։

«Նոր Արքայ մը ծնաւ Բեթղեհէմ քաղաքին մէջ։ մարդոց որդիներ, օրինեցէք որովհետեւ մեզի համար մարմնացաւ»։

«Արդարութեան արեգակ անսկիզբ Աստուած, որ Հօր անձառելի ծոցէն՝ Էութենէն ծագեցար, հրեշտակներուն հետ քեզ կը փառաբանենք մեր հայրերուն Աստուածը»։

Եկեղեցւոյ խորհուրդները

Մաշտոցի արձագանգի նախորդ թիւով մենք ծանօթացանք հապաստանեաց Եկեղեցւոյ երրորդ խորհուրդը նկատուող Ապաշխարութեան, որ գործօն կերպով կ'իրականանայ Խոստվանանքի միջոցաւ։ Յունուար ամսուան այս թիւով պիտի ներկայացնենք յաջորդ խորհուրդը, ամենէն կարեւորն ու կեդրոնականը՝ Հաղորդութիւնը։

Բառացիօրէն, հաղորդութիւն կը նշանակէ մասնակցութիւն, միացում, հաստատուող կապ։ Մեր Եկեղեցիէն ներս հաղորդութիւն կը կոչուի Սուրբ Պատարագի ընթացքին հանդիպող այն պահը ուր հաւատացեալը կը միանայ Քրիստոսի, ճաշակելով բաղարջ հաց եւ անապական գինի, որոնք Սուրբ Հոգի գօրութեամբ գոյափոխուած կ'ըլլան Յիսուս Քրիստոսի մարմնին եւ արեան ըստ Յիսուսի հաստատումին։



Հաղորդութեան խորհուրդը հաստատած է Քրիստոս ինք, իր աշակերտներուն հետ ունեցած վերջին ընթրիքի ընթացքին։ Առա թէ ինչպէս, ըստ Մատթէոսի աւետարանին.-

« Եւ մինչ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրինեց, կտրեց եւ բաժնեց աշակերտներուն, ըսկելով։

- Առէք, կերէք, ասիկա իմ մարմինս է։

Ապա առաւ բաժակը, գործութիւն յալտնեց Աստուծոյ եւ տուաւ իր աշակերտներուն, ըսելով։

- Բոլորդ խմեցէք ասկէ. ասիկա իմ արիւնս է, որով Աստուծոյ հետ նոր ուխտ կը կնքուի եւ որ շատերու համար կը թափուի իրենց մեղքերու թողութեան համար։»

Մատթէոս 26.26-28

Այս եղելութեան հետեւողութեամբ, Հաղորդութեան խորհուրդը կը կատարուի ամէն Պատարագի ընթացքին, սուրբ սեղանին վրայ, ուր Սկիհին մէջ դրուած հացն ու գինին Սուրբ Հոգի ներգործութեամբ կը վերածուին Քրիստոսի մարմնին եւ արեան, ու պատարագիչ քահանան, հաղորդութեան նշխարը բազմաթիւ մասերու կը բաժնէ ու կը բաշխէ հաւատացեալներուն զայն գինիին խառնելէ ետք։

Ինչպէ՞ս ստանալ հաղորդութիւնը

Հաղորդութիւն ստանալու համար հաւատացեալը պարտի ծոմ պահած ըլլալ: Խոստովանելէ ետք ան երկիւղածութեամբ կը վերադառնայ իր տեղը, խորհրդածելով Աստուծոյ այս շնորհին արժանանալու բարձր բարիքին մասին:

Եթե իր կարգը հասնի, հաղորդուողը նախ կը խաչակնքէ ապա «Մեղայ Աստուծոյ» կ'ըսէ ու կը ստանայ Սուրբ Հաղորդութիւն:

Իսկ ի՞նչ ընել հաղորդուելէ ետք

Ամենէն մեծ սխալը պիտի ըլլայ հաղորդուելէ ետք անմիջապէս դուրս գալ եկեղեցին ու հեռանալ: Ընդհակառակը, պէտք է վերադառնա եկեղեցւ մէջ իր տեղը եւ աղօթել, շնորհակալութիւն յայտնելով Աստուծոյ իր տուած թողութեան եւ շնորհին համար: Իսկապէս ալ եթէ ուշադրութեամբ հետեւինք Սուրբ Հաղորդութեան յաջորդող շարականներուն, կը նկատենք որ անոնք շնորհակալական եւ փառաբանական են:

«Լցաք ի բարութեանց քոց, Տէ՛ր, ճաշակելով զՄարմին քո եւ զԱրին: Փառք ի բարձուն կերակրողիդ զմնզ:»

« Լիացանք բարիքներովդ, Տէ՛ր, ճաշակելով Մարմինդ եւ Արին: Փա՛ռք բարձունքը գտնուողիդ եւ մեզի կերակրողիդ:

Դուն որ մշտապէս կը կերակրես մեզի, առաքէ՝ մեզի հոգեւոր քու օրհնութիւնդ: Փա՛ռք բարձունքը գտնուողիդ եւ մեզի կերակրողիդ:»

Հաղորդութեան ճաշակումով, հաւատացեալը Քրիստոսի ներկայութիւնը կ'ընդունի իր ներսիդին եւ կը սրբուի ու կը մաքրուի իր մեղքերէն, Սուրբ Հոգույն շնորհներովը կը զօրանայ եւ արժանի կը դառնայ երկնքի արքայութեան:



**Հայկական նշխարի կաղապար
Հայկական նշխարը միայն ջուր եւ ալիսը խառնելով պատարաստուած է:**

ԱՃ 2.5 «մատնաշափի կամ բժաշափի» տրամագիծ ունի ու անոր վրայի նաշխը կը ստացուի կլոր կաղապարուած խմորը այս պատկերի մէջ տեսնուող կնիքին վրայ ճնշելով:



Յիշատակութիւն Սուրբ Վահան Գողթնացիի Յունուար 23

Արաբական տիրապետութեան շրջանին, բազմաթիւ հայ իշխանները ու անոնց զաւակները գերի տարուեցան Դամասկոս հոն կրթուելու համար իսլամական հաւատքի մէջ ու արաբ դառնալու համար: Տարագրուող մանուկներու կարգին կը գտնուէր Գողթնի Խոսրով իշխանի որդին, չորս տարեկան Վահանը: Արաբները անոր անունը փոխելով զայն կոչեցին Վահապ:

Վահան, իր ուշիմութեան շնորհի արժանացաւ յատուկ խնամքի ու դարձաւ Օմար ամիրապետին նախարած արքունի պաշտօնեան:

Յովհան Օձնեցի կաթողիկոս իր Դամասկոս այցելութեան ընթացքին արտօնութիւն խնդրեց Օմար ամիրապետէն որ հայ տարագիր իշխանները վերադառնան հայրենիք ու յաջողեցաւ ձեռք ձգել այդպիսի արտօնութիւն: Վահան որ թէեւ իսլամ կրօնքին մէջ մեծած էր, իմացած էր թէ ինք հայ Իշխանի մը որդին էր: Հետեւաբար, ինք եւս փափաքեցաւ վերադառնալ Հայաստան, խոստանալով ամիրապետին վերադառնալ Դամասկոս իր հօրենական կալուածները ժառանգելէ ու հայրենի հողը տեսնելէ անմիջապէս ետք:

Վահան իր հայրենի գաւառը հասնելէ ետք տեղեկացաւ Օմար ամիրապետին մահուան մասին ու որոշեց մնալ Հայաստան ու վերագտնել իր քրիստոնեայ հաւատքը:

Վահանի քրիստոնեայ դառնալու լուրը երբ Դամասկոս հասաւ, օրուան ամիրապետը որոշեց ձերբակալել զայն ու դատել: Ու այսպիսով սկիզբ առաւ հալածանքի երկար շրջան մը ուր Վահան, թափառելով Հայաստանի զանազան կողմերը, ժամանակաւոր կերպով կ'ապաստանէր զանազան շրջաններու վանքերէն ներս ապա

կը ստիպուէր տեղափոխուիլ չվտանգելու համար տեղի վաճականներն ու բնակիչները: Այս թափառական վիճակի վերջին հանգրուանը հանդիսացաւ Սիփան լերան ստորոտը գտնուող Երաշխաւորաց վանքը, որուն մեծաւոր Հայր Արտավազդը պատսպարեց ու քաջալերեց զինք:

Գիտնալով հանդերձ թէ իսլամութենէն հրաժարող անձը մահուամբ կը պատժուէր, Վահան որոշեց ներկայանալ Հեղամ ամիրապետին, յայտնել անոր իր քրիստոնեայ հաւատքին հաւատարիմ մնալու փափաքը: Ամիրապետին մեծ խոստումները ապարդիւն մնացին ու Վահան մերժեց որեւէ ձեւով հրաժարիլ իր քրիստոնեայ հաւատքէն:

Վահան Գողթնացիի նահատակութիւնը այլ օրինակ մըն է հերոսական կեցուածքի մը ըստ որուն քրիստոնեայ հաւատացեալներ հաստատուն մնացած են իրենց հաւատքին հանդէպ ու մերժած ուրանալ զայն: Անոնց յիշատակը վառ կը մնայ միայն երբ իրենց նահատակութիւնը արժեւորենք մենք ենս կառչած մնալով մեր հաւատքին ու ապելով իբր Քրիստոսի սիրով ու հաւատքով շնորհուած հաւատքեալներ:

**Գողթն գաւառը կը գտնուի
Նախիջեւանի մէջ որ
ներկայիս Ատրապէյճանի
տիրապետութեան տակ է:
Անոր քաղաքներէն են
Տիգրանաւան եւ Ագուլիս :**

Ասէ Աստուած . . .

**Նոր եւ լաւագոյն ուխտի մը
Քահանայապետը**

Վերեւ ըսածներուս միտք բանին սա է,
որ մենք ունինք այնպիսի Քահանայապետ մը,
որ ամենազօր Աստուածոյ աթոռին աջ կողմը
նստած է, երկինքի մէջ, իբրեւ պաշտօնեալ՝
երկնաւոր Սրբարանին, այսինքն այն ճշմարիտ
խորանին՝ որ Տիրոջ ձեռքով կանգնուած է եւ
ո՞չ թէ մարդոց:

Արդարեւ, ոեւէ քահանայապետ զոհեր
եւ նուէրներ մատուցանելու համար կարգուած
է. ուստի Քրիստոս ինք ալ պէտք էր
մատուցանելիք մը ունենար: Եթէ երկրի վրայ
ըլլար՝ թէրեւ քահանայ իսկ չէր ըլլար,
որովհետեւ արդէն կային քահանաներ, որոնք
Աստուածոյ Օրէնքին համաձայն նուէրներ կը
մատուցանէին: Սակայն երկրաւոր
քահանաները երկնաւոր իրականութեանց
օրինակով եւ անոնց մօտաւոր նմանութեամբ
կը կատարէին պաշտամւնքը, ինպէս որ
Աստուած Մովսէսի հրահանգեց, երբ անհկա
վկայութեան խորանը պիտի շինէր. «Տե՛ն, -
ըստ Աստուած, - ամէն ինչ շինէ ճիշդ այն
օրինակով, որ քեզի ցոյց տուի լերան վրայ»: Մինչդեռ հիմա Յիսուս շատ աւելի գերազանց
քահանայութեան մը հասաւ քանի միջնորդը
եղաւ գերազանց ուխտի մը, որ իբրեւ օրէնք՝
շատ աւելի լաւ խոստումներու վրայ
հաստատուած է:



Ուխտին փոփոխութեան հոչակումը

Եթէ առաջին ուխտը անթերի
ըլլար, երկրորդ մը պէտք պիտի չըլլար: Բայց
Աստուած կը մեղադրէ իր ժողովուրդը, եւ
կ'ըսէ.-

«Ահասափկ կը մօտենամ օրերը, կ'ըսէ Տէրը, -
երբ նոր ուխտ մը պիտի կնքեմ
Խրայէլի ժողովուրդին եւ Յուդայի ժողովուրդին
հետ:

Ասիկա պիտի չըլլայ՝ այն Ուխտին պէս,
որ իրենց հայրերուն հետ կնքեցի այն օրը
երբ իրենց ձեռքէն բռնած՝
դուրս հանեցի Եգիպտոսէն.

որովհետեւ հաւատարիմ չմնացին իմ Ուխտին,
եւ ես երեսի վրայ թողուցի զիրենք», կ'ըսէ
Տէրը:

«Արդ, հետեւեալն է Ուխտը,
որ Խրայէլի հետ պիտի կնքեմ գալիք
օրերուն, -
կ'ըսէ Տէրը.-

իրենց միտքերուն մէջ պիտի դրոշմեմ իմ
օրէնքներս,
իրենց սիրտերուն վրայ պիտի գրեմ զանոնք.
ես իրենց Աստուածը պիտի ըլլամ,
ես իրենք՝ իմ ժողովուրդս:

Ա՛ ոեւէ մէկը պէտք պիտի չունենայ իր ընկերոց
սորվեցնելու,
ոեւէ մէկը պէտք պիտի չունենայ
իր եղբօրը բսելու՝ «Տէրը ճանշիր».
որովհետեւ փոքրէն մինչեւ մեծ՝
ամէնքն ալ զիս պիտի ճանշնան:
Ես պիտի քաւեմ իրենց անիրաւութիւնները,
ա՛ պիտի չշիշեմ
իրենց մեղքերն ու անօրէնութիւնները»:

Արդ, Նոր Ուխտի մը մասին խօսելով՝
այլեւս հինցած կը նկատէ առաջինը. իսկ ինչ
որ հինցած է ու ժամանակավրէա՝
կ'անհետանայ:

Երրայեցիներուն 8.1-13

Ամսուան աշխատակից յօդուածագիրը . . .

**Սուրբ Ծննդի տօնակատարութիւն
Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցէն ներս**

Սոսի Գրիգորեան Դանիէլեան



Ինչպէս նախանցեալ տարիներուն, այս տարի եւս, Մոնթրէալի Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը հրավիրած էր իր աշակերտներու ծնողներն ու բարեկամները ընթացիկ տարուան ամանորեան հանդէսին:

Հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի օր, 7 Յունուար 2007-ի առաւոտեան ժամը 11:30-ին, Սուրբ Յակոբ Վարժարանի Բասդրմանեան սրահէն ներս: Սրահը լեցուած էր Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներու ուրախութեան ձայնով. բոլորն ալ հագուած էին իրենց նախասիրած գեղեցիկ զգեստները ու անհամբեր կը սպասէին հանդէսի սկսելուն.... եւ Կաղանդ Պապուկի ժամանումին:

Հանդէսի բացման խօսքը արտասանեց Կիրակնօրեայ դպրոցի բարգաւաճման ի խնդիր անսակարկ աշխատանք տանող տնօրէն՝ Պրն. Թորոս Պապիկեան: Ան ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք, հակիրճ կերպով բաց չափազանց հասկնալի բառերով ու երեխաներու բոլոր խումբերուն համելի ոճով փոխանցեց Սուրբ Ծննդեան տօնակատարութեանց երկու

տարբեր որդեգրուած թուականներու ստեղծած շփոթին բացատրութիւնը: Ան աւելցուց նաեւ թէ Հայ Առաքելական եկեղեցին ինչո՞ւ շեղած չէ ու պահած Յունուար 6-ը իբրև Յիսուս Քրիստոսի Ծննդեան տօնակատարութեան օր: Տնօրէնը քաջալերեց բոլոր Եերկաներուն, որպէսզի այլ ընկերութիւններու մէջ ամենայն հանգստութեամբ կարողութիւն ունենան փոխանցելու այդ բացատրութիւնը: Պրճ. Պապիկեան, Սուրբ Ծնունդի տօնին զուգահեռ, նաեւ սքանչելի մէջբերումով մը շեշտեց հայ լեզուին ու հայ մնալու առաքինութիւններուն մասին. ան բաւարար շնկատեց սոսկ հայերէն խօսիլը, այլ կարեւորութեամբ աւելցուց հայերէն գրելու եւ հայերէն կարդալու անհրաժեշտութիւնը մեր առօրեայի որեւէ մէկ գործունեութեան կամ աշխատանքի ընթացքին:

Պրճ. Տնօրէնին խօսքէն անմիջապէս ետք, պատրաստուած Կիրակնօրեայ դպրոցի տարբեր կարգերու աշակերտներու կողմէ, ներկայացուեցաւ Յիսուսի Ծնունդի կենդանի պատկեր մը. նոյն պահուն, սոյն պատկերին հաղորդումը Կ'ընթերցուէր այլ խումբի աշակերտներու կողմէ: Երեխանները հիանալի կերպով յաջողեցան պատկերին խորհուրդն ու պատգամը փոխանցել:

Երեխաններուն ուրախութիւնը հասաւ իր գագաթնակէտին, երբ վերջապէս սրահէն ներս մտաւ իր մեծ տոպրակով, բոլորին շատ սիրելի Կաղանդ Պապուկը: Աշակերտներու եւ դաստիարակներու խանդավառ երգերն ու ծափերը ճեղքելով, Կաղանդ պապուկը բարձրացաւ բեմ: Ապա երեխաններ խումբերու բաժնուած հրաւիրուեցան բեմ, իրենց սորված երգերն ու արտասանութիւնները լսցուցին Կաղանդ Պապուկին. Երկվայրկեան մը տրամադրելով եւ արժեւորելով իւրաքանչիւր երեխայի ներկայութիւնը, Կաղանդ Պապուկը ծանօթացաւ բոլորին անխտիր. նույն ներու տոպրակը փոխանցեց դաստիարակներուն, փոխանցեց նաեւ իր բարեմաղթութիւնները, ու յաջորդ տարի դարձեալ հանդիպելու խոստումով, ան հրաժեշտ առաւ ու հեռացաւ սրահէն:



Կաղանդ Պապուկը ճամբելէ ետք, դաստիարակներու առաջնորդութեամբ, աշակերտութիւնը հաւաքուեցաւ վարժարանին ճաշարանը, ուր իրաքանչիւր երեխայ ստացաւ իր նույն ծրարը, որուն մէջ կար նաև դաստիարակներու կողմէ բժախնդրօրէն պատրաստուած շատ գեղեցիկ ձեռային աշխատանք պնակ մը, իբր պատկեր ունենալով Յիսուսի Ծնունդն ու անոր խորհրդանշող շարականը:

Շուրջ երկու ժամ տեսող այս ուրախութիւնը վերջ գտաւ Աերկաներու ողջագուրումներով ու բարեմաղթութիւններու փոխանակումով:

Իբրեւ ծնողք, կը մնայ շատ բարձր գնահատել Կիրակնօրեայ դպրոցի յարկէն ներս տարուած Աստուածահանոյ բոլոր աշխատանքները, շնորհաւորել տնօրէնութեան ու անձնակազմին աննկուն կամքն ու կրոնվը ու վերջապէս իրաքանչիւրին մաղթել ամենէն ազնիւը, ամենէն բարին ու ամենէն վսեմը:

Սիրելի ծնողք,


Երբ այս վերջին տողերս վերապահեմ ինձ համար, մեղանշած պիտի ըլլամ: Հոս կ'ուզեմ բարձրաձայն կարդաք անպայման:

Խնդրեմ, ձեր նախապատութիւններու ամենէն վերը դասէք ձեր զաւակներուն հետ իրաքանչիւր հանգրուանը ապրելու ցանկութիւնը: Իրաքանչիւր պահ կամ վայրկեան անկրկնելի է ու յատուկ: Բացառութիւններ միշտ յարգելի են, բայց եթէ կարելիութիւնը ստեղծէիք ու ներկայ գտնուէիք այս օրուան հանդիսութեան, հաւատացէք որ ձեր զաւակներուն ուրախութիւնը պիտի կրկնապատկուէր ու հանդէսը պիտի ստանար յաւելեալ փայլք:



ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՈՒՆ
ՎԱՐՁՔԸ ԿԱՏԱՐ ՈՒ ԶԵՌՔԵՐԸ ԴԱԼԱՐ:

Ծնունդի գիշեր



Այս աստեղավառ Ծնունդին գիշեր
Ասմպերէն ծաղիկ թափեր կը ձիւնէ,
Ինչպէս նշենին հովէն տարութեր
Արփագոյն՝ լոյսէ աստղեր կը ձիւնէ:
Իմ մանուկ հոգիս, իմ հոգին դեռ կոյս,
Որ, ի՞նչ ջերմեռանդ խանդով զզմալլուն՝
Կաթոգին խնդրեց քեզմէ, ո՞վ Յիսուս,
Որ աստղ մ'ինձ դրկես երկինքէդ փայլուն:

Այն խորհրդաւոր Ծնունդին գիշեր,
Ծաճանչի մը մէջ տեսայ եւ Աստուած,
Սիրտը արիւնած, ճակատը փուշեր,
Թշուառ մարդկութեան երազին զոհուած,
Ծաղկատի հոգիս, հոգիս խանդավառ
Խնդրեց որ կեանքով օծես, ո՞վ Յիսուս,
Դուն որ մեր անհուն պատրանքը տեսար
Պակի սկիհը իմ երազներուս:

Հիմա ծնունդի գիշեր է խաւար
Ու բեթղէիմի աստղին տեղ արծաթ՝
Հորիզոնին մէջ կը շարժին երկար
Ծով անլուսութեան կուռ ամպեր երկաթ։
Բայց միշտ ջերմեռանդ՝ այլ հիւծուած
հոգիս,
Կու գայ պաղատիլ քեզի, ո՞վ Յիսուս,
Զի շիշան աստղեր, երազներ կեանքիս,
Դուն ցողէ ինծի նոր հաւատք, նոր լոյս։

Սիսիլ
Գրական Ցոլքեր
Վենետիկ, 1955

Նոր Տարի

Նոր տարի, աւետաբեր նոր յոյսերու, նոր
ակնկալութիւններու։

Նոր տարի, հրաւէր վերանորոգուելու։

Նոր տարի, յուշարար ինքզինք քննելու,
ինքզինք ճանշնալու։

Նոր տարի, խորհրդատուի սխալները
ընդունելու, ճիշդը ճանշնալու, ճշմարիտին
գինուորագրուելու։

Նոր տարի, կոչ նոր յանձնառութիւններու։
Կոչի կեանքը ծրագրուած հունաւորելու։

Կոչի կամքը լարելու եւ հաստատ քայլերով
դէպի յառաջ երթալու։

Նոր տարի, պատգամաբեր իմաստանալու,
«Ես»-ը զսպելու, «մենք»-ը զօրացնելու,
ազգը առողջացելու եւ հայրենիքը
հզօրացնելու։

Նոր տարի, ինչե՞ր, ինչե՞ր չի թելադրեր
մեր բոլորին. մեր պատուական, մեր
դարաւոր, մեր փառաւոր ժողովուրդին.
բազում անհամար նոր տարիներու՝ բազում,
անհամար մաղթանքները, յուսադրումներն
ու հիասթափութիւնները իր շալակին տանող
արմենական ցեղի զաւակներու։

Յուսոյ աստղը կը պլալայ հորիզոնին վրայ։
Ու մենք ի՞նչ փոյթ, թէ հազար անգամ
խաբուած, հազար անգամ ինկած ու ելած,
նոր փշոտ, տատասկներով լի ճանապարհին
վրայ մանուկ մը մեր արտին մէջ, կը քալենք
դէպի աղբիւրը լոյսին, դէպի աղբիւրը
յոյսին։

Աստուածաշունչը մանուկներու համար Յիսուս եւ Զակքէոս



Օր մը Յիսուս Երիքով անունով քաղաք մը հասաւ:

Զակքէոս անունով հարուստ մարդ մը կար հոն որ մաքսապետ էր եւ կ'ուզէր տեսնել թէ ո՞վ է Յիսուսը, բայց չէր կրնար որովհետեւ կարճահասակ էր:

Ան վազեց եւ ծառի մը վրայ ելաւ որպէսզի լաւ տեսնէ:



Երբ Յիսուս հասաւ այդ տեղը, վեր նայեցաւ եւ ըստ.-

«Զակրէս, աճապարէ, վար իշիր, որովհետեւ այսօր պէտք է որ տունդ գիշերեմ»:

Անմիջապէս Զակրէս վար իշաւ եւ ուրախութեամբ ընդունեց Յիսուսը:


Այս տեսնելով մարդիկ ըսին.-

«Յիսուս մեղաւոր գողի մը տունը կ'երթալ»

Զակը և Յիսուսի ըսաւ.-

«Ունեցածիս կէսը աղքատներուն պիտի տամ եւ եթէ մէկէն գողցած եմ, անոր չորս անգամը պիտի վերադառնեմ»:

Յիսուս ըսաւ.- «Այսօր այս տունը փրկուեցաւ քանի որ մարդ յախտենական կորսուած չէ. Աստուծոյ որդին եկաւ կորսուածը փնտոելու եւ փրկելու»:



Այս պատմութիւնը կ'ըսէ որ Յիսուս միշտ պատրաստ է մեր տուները, այսինքն մեր սիրտերուն մէջ գալու, եթէ մենք ուզենք զինք ընդունիլ:

Երբ մենք զինք ճանշնանք եւ զինք ընդունինք, ան մեզի մեր վախերէն եւ տիրութիւններէն կը ձերբազատէ:

Ի՞նչ կը նշանակէ
մաքսապետ



Անձ մըն է որ
մարդոցմէ տուրք կը
հաւագէ: Ան չէ
սիրուած եւ անոր
մասին գող կ'ըսեն:

Ինչո՞ւ Յիսուս ուզեց
Զակրէոսի տունը
երթալ:



Որովհետեւ տեսաւ որ
Զակրէոս կը վազէր եւ
կ'ուզէր անպայման զինք
տեսնել:

Ինչո՞ւ Զակրէոս այդպէս
պատասխանեց Յիսուսին:



Որովհետեւ մարդ չէր
սիրեր զինք եւ երբ
Յիսուս իր ընկերը եղաւ,
ան առատաձեռն
դարձաւ:

Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

թ	բ	ը	գ	է	ե	դ	զ	ա
դ	ա	ե	զ	բ	թ	գ	ը	ե
զ	ե	գ	ա	ը	դ	է	թ	բ
գ	թ	ե	ը	զ	բ	ա	դ	է
բ	ը	դ	է	թ	ա	ե	զ	գ
է	զ	ա	ե	դ	գ	թ	բ	ը
ը	դ	թ	բ	ե	է	զ	ա	գ
ե	գ	բ	դ	ա	զ	ը	է	թ
ա	է	զ	թ	գ	ը	բ	ե	դ

Նախորդ «Եզակի գիրեր» ուն
լուծումը

		թ			դ	զ	ը	
ե	ը		բ			է		
ա			թ	ե			դ	
բ	զ	գ	ե	ը				
	դ						ա	
					է	բ	զ	զ
	գ			զ	թ			է
		ը		է		ե		դ
	թ	բ	ա			զ		

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, զ, դ, ե, գ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Ո՞ր է ճիշդ պատասխանը Դեկտեմբեր ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն
Հովիներ, հրեշտակը, աւետիս, փրկիչը,
օծեալ, խանձարուրով, խաղաղութիւն,
հաճութիւն

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. դ. Ս. Ցակոր Մծբնայ Հայրապետ

2. ա. Դեկտեմբեր 25

3. Սողոս

4. դ. Վրանագործ Էր

5. գ. Դամասկոս

6. Ծովութիւն

7. Թադէոս, Բարթողիմէոս

8. ա. Սաղմոսներու Գիրքը

9. ա. Սաղմոսներու

10. բոլորին օգնողը

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. բ. Ս. Ստեփանոս նախավկայ

2. ա. Ս. Ցակոր Մծբնայ Հայրապետ

3. բ. Ոչ

4. դ. Առաքեալներուն Գործերը

5. գ. Ապաշխարութիւն

6. գ. Ապաշխարութիւն
7. Ս. Թադէոս Առաքեալ
8. Նաթանայէլ
9. գ. Սաղմոս 117 անենէն կարճը, դ.
- Սաղմոս 119 անենէն երկարը
10. բ. Արագածոտնի մարզ

Երկրորդականի անկիւն

1. բ. Ս. Ստեփանոս
2. բ. Իրան
3. ա., բ., գ., եւ դ. «բոլորը»
4. Ա. Տիմոթէոս, Բ. Տիմոթէոս, Տիտոս, փիլիմոն
5. մեղք
6. Ապաշխարել
7. Ապաշխարութիւն
8. Ժ, ՃԺԸ, ՃԸ
9. Ցիսուս Քրիստոսի, Աստուծոյ
10. Սամուէլ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Դեկտեմբեր ամսուան մասնակցողները

Սուրբ Յակոբ Կիրակօնօրեալ Դպրոց

Մանկապարտէզ

Սեւակ Թեհինեան, Տանիէլ Տօնապետեան,
Լորա Տօնապետեան, Լիլի Չինչինեան,
Ալիս Մելեքեան, Սահակ Մելեքեան,
Քրիստինա Ակրեան, Յակոբ Քեպթանճեան,
Անդրամիկ Նասոյեան, Աննա Թիւթիւնճեան
Անսխալ պատասխանողներ
Ցոլեր Անթեպեան, Սելենա Կարապետեան,
Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն
Փաթիլ Կարապետեան, Քրիստոֆըր
Արմութլու, Նշան Կիրակոսեան, Սեւակ
Դաւիթեան, Շօնաթան Զարֆանեան, Ալիք
Գապաքեան, Դանիէլ Ակրեան, Միեր
Պանքեան, Կլօրիա Կարապետեան,
Թաթիանա Քեհինայեան, Խշխշեան Արշակ,
Խշխշեան Ռիթա, Շեսիքա Մաթոսեան,
Կրէս Նարեկեան, Կարինէ Կարապետեան,
Արազ Քէպթանճեան, Ռիթա Մամիրոյեան,
Սերժ Դաւիթեան, Նանար Եագուպեան,
Հրակ Քիւփելեան, Քարինա Քիւփելեան:
Անսխալ պատասխանողներ
Սեւակ Պապիկեան, Արին Անթեպեան:

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գէորգ Պուիքեան, Զոհրապ Կարապետեան,
Ալեք Կարապետեան, Միեր Մաթոսեան,
Սեւան Մելեքեան, Քրիստոֆըր Նազարեան,
Թամար Թիւթիւնճեան, Նանոր Քիւփելեան,
Ռոզալին Չինչինեան, Հրայր Մաթոսեան,
Ներսէս Նասոյեան, Մարիա Դանիէլեան
Անսխալ պատասխանողներ
Առէն Պապիկեան, Դալար Գիւպթանճեան,
Շէք Զարֆանեան, Լորի Չինչինեան,
Կասիա Արմութլու

Երկրորդականի անկիւն

Ցովիկ Կարապետեան, Թամար Պուիքեան,
Քրիստին Կարապետեան, Գօգօ
Մաթոսեան, Անի Մելեքեան, Արի
Միրզայեան, Լորա Սարիմանուկեան,
Սեդրակ Մամիրոյեան, Արման Նարեկեան

Սուրբ Յակոբ Ազգային Վարժարան
Վարդգէս Եւ Աստոիկ Սարաֆեան
Նախակրթարանի Ե. դասարանի
աշակերտներ
Մասնակցողներ
Դաւիթ Աթոլիկեան
Սեւակ Թաշճեան
Գրիգոր Պալապանեան
Տիրան Ամիկեան
Արի Վարժապետեան
Շակալ Թորոսեան
Ճործ Գալլողեան
Սարին Պէզճեան
Թալի Բակլայեան
Սերոբ Թաշճեան
Անուշ Ներսէսեան
Արեգ Համբարձումեան
Նելլի Օհաննէսեան
Ժագ-Սիօն Գասպարեան
Ջրիս Չաքըճեան
Գարին Մարգարեան
Ցովսէփ Կիւկեան
Դուկին Տօնապետեան
Էրիք Գասարճեան
Դալար Գիւպթանճեան
Արդահամ Թանուսեան
Ալիք Կարապետեան
Անդրանիկ Պաղտասարեան
Ճեսիֆըր Եռևաննէսան
Լորեն Մանուկեան
Մելինէ Կիւկիւմեան
Գարովին Գորգեճեան
Րաֆֆի Կէտիկեան
Էտի Տէտէյեան
Ալին Տէրտերեան
Գօգօ Ճանսըզեան
Փաթիր Պազարպաշեան
Զօհրապ Շահիննէսան
Ոիթա Գասբարեան
Մարինա Սաղրեան
Ժագ Զարֆանճեան
Արօ Պզտիկեան
Նարէ Մարկոսեան
Ներսէս Նասոյեան
Սեւակ Փաշայեան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն**



**Ամբողջացո՞ւր լստ Մատթէոսի Աւետարանին 2.9-12
հրահանգը, աստղը, առաջնորդեց, երկրպագեցին,
ոսկի, կնդրուկ, զմուռս, երազի**

Թագաւորին այս ----- լսելէ ետք, մոգերը
մեկնեցան: Անոնք չափազանց ուրախացան, երբ կրկին տեսան
այն -----, որ արեւելքի մէջ տեսեր էին. Եւ ահա աստղը
-----զիրենք մինչեւ որ եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ
ուր երեխան կը գտնուէր: Երբ տուն մտան, տեսան երեխան իր
մօրը՝ Մարիամին հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով
----- մանուկին: Ապա բացին իրենց արկղերը եւ
Յիսուսի ընծայեցին իրենց նուերները՝ -----,
----- եւ -----:

Յետոյ ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը, առանց
Հերովդէսի հանդիպելու, ինչպէս որ Աստուած ----- մը մէջ
հրահանգեց իրենց:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. Դասարաններու անկիւն

1.- Ո՞ր օրը կը տօնենք Յիսուս

Մանուկին տարեդարձը:

- ա.- 25 Դեկտեմբեր
- բ.- 31 Դեկտեմբեր
- գ.- 1 Յունուար
- դ.- 6 Յունուար

2.- Ո՞ր օրը կը տօնենք Յիսուս

Մանուկին մկրտութիւնը:

- ա.- 25 Դեկտեմբեր
- բ.- 31 Դեկտեմբեր
- գ.- 1 Յունուար
- դ.- 6 Յունուար

3.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ մկրտուեցաւ:

- ա.- 1 տարեկան
- բ.- 2 տարեկան
- գ.- 12 տարեկան
- դ.- 30 տարեկան

4.- Դուն Ե՞րբ մկրտուեցար «Մամային կամ Պապային հարցուր»:

 Տարի Ամիս Օր

5.- Յիսուս ինչո՞վ մկրտուեցաւ:

- ա.- Զեթ
- բ.- Զուր
- գ.- Միւռոն
- դ.- Իւղ

6.- Զրօրինէքը տեղի կ'ունենայ Յիսուսի մկրտութեան օրը: Ե՞րբ տեղի կ'ունենայ Զրօրինէքը:

- ա.- 5 Յունուարին
- բ.- 6 Յունուարին Պատարագէն ետք
- գ.- 6 Յունուարին Պատարագէն առաջ
- դ.- 7 Յունուարին

7.- Ս. Ծնունդի ճրագալոյցը տեղի կ'ունենայ Սուրբ Ծնունդին խթման գիշերը: Ե՞րբ տեղի կունենայ Ս.

Ծնունդի ճրագալոյցը:

- ա.- 5 Յունուարին
- բ.- 6 Յունուարին Պատարագէն ետք
- գ.- 6 Յունուարին Պատարագէն առաջ
- դ.- 7 Յունուարին

8.- Յունուարի ո՞ր օրը եկեղեցիին մէջ մոմ կը բաժնեն, կը վառենք եւ վառած մոմերով տուն կը վերադառնանք:

Յունուար -- ին:

9.- Զակրէոս ինչո՞ւ ստիպուեցաւ ծառի մը վրայ ելլել որպէսզի Յիսուսը տեսնէ:

Որովհետեւ կ-----կ էր:

10.- Հաղորդութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն:

Անապակ Գ--- եւ Ն---- «որ ջուր եւ ալիւր խառնելով կ'ունենանք:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն

- | | |
|--|--|
| 1.- Ի՞նչ է Յովհաննէս Մկրտիչի հօր
անունը: | ա.- 4
բ.- 6
գ.- 10
դ.- 3 |
| 2.- Ե՞րբ է Սուրբ Ծննդեան խթման
օրը: | 7.- Ո՞ր Սուրբ Խորհուրդի կատարումը
նախապայման է իրաքանչիւր անգամ
Սուրբ Հաղորդութիւն ստանալու: |
| ա.- 25 Դեկտեմբեր
բ.- 31 Դեկտեմբեր
գ.- 5 Յունուար
դ.- 7 Յունուար | ա.- Մկրտութիւն
բ.- Դրոշմ
գ.- Ապաշխարութիւն
դ.- Սուրբ Հաղորդութիւն ստանալու
նախապայման չկայ: |
| 3.- Ե՞րբ կը տօնենք Յիսուսի
Աստուածայալտնութիւնը: | 8.- Իր մկրտութենէն անմիջապէս ետք
Յիսուս ի՞նչ ըրաւ: |
| ա.- 25 Դեկտեմբեր
բ.- 31 Դեկտեմբեր
գ.- 5 Յունուար
դ.- 6 Յունուար | ա.- Տուն վերադարձաւ
բ.- Եգիպտոս գնաց
գ.- Անապատ առաջնորդուեցաւ եւ 40
օր ծոմ պահեց
դ.- Ընտրեց իր աշակերտները: |
| 4.- Ո՞ր բարեմաղթութեան կրնանք
պատասխանել ըսելով՝
Օրինեալ է յայտնութիւնը Քրիստոսի
Ք----- ----- ----- | 9.- Յիսուս ո՞ր գետին մէջ
մկրտուեցաւ: |
| 5.- Քրիստոս Ե՞րբ հաստատեց Սուրբ
Հաղորդութեան խորհուրդը: | ա.- Արաք
բ.- Եփրատ
գ.- Տիգրիս
դ.- Յորդանան |
| ա.- Ծաղկազարդին
բ.- Վերջին ընթրիքին՝ Հինգշաբթի
գ.- Վերջին ընթրիքին՝ Ուրբաթ
դ.- Համբարձումին | 10.- Քահանան Սուրբ
Հաղորդութիւնը ո՞ր եկեղեցական
սպասին մէջ կը պատրաստէ: |
| 6.- Հայկական նշխարը
մօտաւորապէս քանի՛ սանդիմեթք
տրամագիծ ունի: | -----: |

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

**1.- Ս. Հաղորդութեան Խորհուրդին
արարողութիւնը կը կոչուի Սուրբ**

Պատարագ: Ի՞նչ կը նշանակէ Պատարագ:
ա.- զոհ, նույր, ընծայ
բ.- երգ, շարական
գ.- քարոզ
դ.- խոստովանութիւն

**2.- Հին Ուխտը դաշինք մըն էր Աստուծոյ
եւ իսրայէլի ազգին միջեւ:** Հին Ուխտի
շրջանին իրենց մեղքերուն քաւութեան
համար մարդիկ ի՞նչ կը նուիրէին Աստուծոյ:
ա.- մաքուր կենդանիներ
բ.- անուշահոտ խունկ
գ.- երկրի բերքէն զանազան ընծաներ
դ.- ա, բ, եւ գ

**3.- Ներկայիս կ'ապրինք Նոր Ուխտի
շրջանին մէջ:** Հետեւեալներէն որո՞նք
շիտակ հաստատումներ են:
ա.- Նոր Ուխտը դաշինք մըն է Աստուծոյ եւ
համայն աշխարհի մարդոց հետ:
բ.- Նոր Ուխտի միջնորդը եղաւ մեր Տէրը
Յիսուս Քրիստոս:
գ.- Նոր Ուխտին հաստատումով դադրեցաւ
կենդանիներու զոհագործութիւնը,
որովհետեւ Քրիստոս խաշին վրայ իր սուրբ
արիւնը թափելով զոհուեցաւ ու նուիրուեցաւ
հօր Աստուծոյ մեր մեղքերուն քաւութեան
համար:

դ.- ա, բ, եւ գ

**4.- Որո՞նք կրնան պատարագ
մատուցանել:**

ա.- Քահանայական պաշտօն ունեցող
եկեղեցականներ:
բ.- Սարկաւագներ
գ.- Դափիրներ
դ.- Ունէ հաւատացեալ

**5.- Պատարագի ընթացքին ի՞նչ է
սարկաւագին պաշտօնը:**

ա.- սպասաւորել Սուրբ պատարագի
սեղանին
բ.- Աւետարան կարդալ
գ.- Խնկարկել
դ.- ա, բ եւ գ

**6.- Սուրբ Վահան Գողթնացի ո՞ւր
տարագրուեցաւ երբ տակալին 4 տարեկան
էր:**

**7.- Ո՞ր հայ կաթողիկոսը Օմար
ամիրապետէն որ հայ տարագիր իշխանները
վերադառնան հայրենիք:**

**8.- Ո՞ր լերան ստորոտը կը գտնուէր
Երաշխաւրաց Վանքը:**

**9.- Ո՞ր աւետարանին մէջ կը կարդանք
Յիսուսի Զակրէոսի հետ հանդիպումին
մասին:**

**10.- Ամբողջացո՞ւր Ս. Ծննդեան
շարականը:**

Խորհուրդ ----- եւ -----
որ յայսմ ----- յայտնեցաւ
Հովհիք երգեն -----
տան ----- աշխարհի

Անբաւելին ----- եւ -----
ի ----- պատեցաւ
ոչ մեկնելով ի -----
ի սուրբ ----- բազմեցաւ:

Կարճ լուրեր Կիրակնօրեայէն

. Մեր Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներէն խոմք մը, 17 Դետկեմբեր 2006 ին Սուրբ Յակոբի Անուանակոչութեան Տօնին առիթով Եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Տիկնանց Օժանդակ Մարմնին կողմէ կազմակերպուած աւանդական ճաշկերոյթին ընթացքին ներկայացուց գեղարուեստական յալտագիր մը:

. Դեկտեմբեր 26, 2006 ին Տեղունը, ուսուցիչներէն, աշակերտներէն եւ ծնողներէն խոմք մը միասնաբար դիտեցին “The Nativity Story” Ֆիլմը:

. Ծնորհակալութիւն Մոնթրէալի ՀՕՄ-ի Սուէ մասնաճիւղին որ Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդին առիթով \$200 նուիրեց Կիրակնօրեայ Դպրոցին:

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

Եերկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ համացանցի վրայ: Այցելեցէ՛ք www.sourphagop.org հասցէն եւ ընտրեցէ՛ք Պարբերաթերթ բաժանումը:

Կազմակերպութեամբ՝ Ս. Յակոբ Եկեղեցւոյ Գործադիր Մարմնի

ՄԻԶ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ:

Չաբաթ, 27 Յունուար 2007-ի Երեկոյեան Ժամը 7:30 ին

Կը մասնակցին Դպրաց Դասերը՝ Յոյն Ուղղափառ Միքացէլ եւ Գարբիէլ Հրեշտակապետաց Եկեղեցւոյ, Transfiguration of our Lord Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ «Beat Attitudes Team», Ս. Յակոբ Առորի Ուղղափառ Եկեղեցւոյ, Էրիթրէական Ուղղափառ Եկեղեցւոյ, մեր Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ, Այլեւ՝ Հայ Եկեղեցական Երաժշտութեան Հնգեակը: **ՄՈՒՏՔԲԸ ԱԶԱՏ**

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

**Զորեքշաբթի, 14
Փետրուար 2007**

**Երեկոյեան
Ժամերգութիւն
Ժամը 7:30 ին**

**www.sourphagop.org ի 2006
տարուան հաշուեցոյցը**


Այցելութիւններ	66,537
Եղակի Այցելու	9,600
Այցի Միջին տեսողութիւն	1:45
Երկիրներ	105
Քաղաքներ	1,432
Բացուած Գրութիւններ (.pdf)	11,388
Մաշտոցի Արձագանգ	8,191
Զարկեր	297,026
Դիտուած Էջեր	98,650

Ամբողջական Հաշուեցոյցը կը գտնուի www.sourphagop.org ի վրայ:

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ



Վարդանանց Պատերազմի մանրանկար

Փետրուար 2007
ԺԴ տարի- թիւ 6

Տեառնընդառաջի օրով սովորութիւն է այցելել Օորապսակ զոյգեր եւ նույր տալ անոնց: Տօնին մասին կարդա' էջ 5



Սուրբ Սարգիս Զօրավար,
փետրուար 3: Ամսուան
տօնացուցը տես էջ 4

Վտանգը կը կայանայ երբ բարոյական յայթանակի
յլացքը կը դառնայ բաւարարուածութեան զգացում
ու բիշով գոհանալու համազօր
տրամադրութիւն: Խմբագրականը կարդա' էջ 3

« Աճեցէ՛ք ու բազմացէ՛ք եւ լեցուցէ՛ք երկիրը »: Պասկի խորհուրդին մասին կարդա' էջ 6-7

Արեւագալի շարակաները հեղինակութիւնն են Սուրբ Ներսէս Շնորհալիի: Մեծ
Պահքի շրջանին յատուկ այս արարութիւններուն մասին կարդա' էջ 11

Տիեզերական կը կոչուին քրիստոնէական Եկեղեցիներու բարձրագոյն խալի
Եկեղեցական ժողովները, որոնցմէ բխող որոշումները օրին ստացած են պետական
որոշումի համազօր արժէք: կարդա' էջ 12

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօրեայ Դպրոցի
ամսաթերթ

Խմբագիր՝
Շաղիկ Թորիկեան-Պոյամեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ.ի ներկայ եւ
նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ։ Այցելեցէ՞ք
www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը։

Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօրեայ Դպրոցի
կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝
Վերժին Գիւղթանձեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխանձեան
Յասմիկ Նաճարեան
Գարոլ Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխեն Իշխանձեան
Յասմիկ Գանաձեան

Լուսանկարիչ՝
Նիկոլ Դանիելեան

Տնօրէն՝
Թորոս Պապիկեան

Այս թիւով . . .



Յաղթանակէ յաղթանակ	Էջ 3
Սուրբ Սարգիս զօրավար	Էջ 4
Տեառնընդառաջ	Էջ 5
Եկեղեցական խորհուրդներէն՝	
Սուրբ Պատակ	Էջ 6
Գիտելիքներ՝ Վարդանանցի մասին . . .	Էջ 7
Նախամուսնական խորհրդատութիւն .	Էջ 8
Ասէ Աստուած	Էջ 9
Մեծ Պահքի մասին	Էջ 10
Արեւագալի, խաղաղական, Հանգստեան ժամերգութիւններ	Էջ 11
Տիեզերական ժողովներ	Էջ 12
Սուրբ Սահակ Պարթեւ	Էջ 13
Աստուածաշունչը մանուկներու համար	Էջ 14-17
Եզակի գիրեր	Էջ 14
Ո՞րն է ճիշդ պատասխանը	Էջ 19-23
Կարճ լուրեր Կիրակօրեալէն	Էջ 24

Խմբագրական**Յաղթանակէ յաղթանակ**

Հաւաքանութեան մը կեանքէն ներս կան իրողութիւններ, որոնք ժամանակի ընթացքին եւ անվերջ կրկնուելով կը դառնան անգիր օրէնք կամ սովորութիւն։ Մեր, հայերուս, օրինակը այդպիսին է, երբ կը մտած ենք բոլոր այն ժողովրդային սովորութիւններուն մասին, որոնք սերունդէ սերունդ, դարէ դար գոյատեւած են, ու քիչ թէ շատ փոփոխութիւններ կրելով հասած՝ մեզի։

Այսպիսով հաստատուած սովորութիւններու նման կան նաև ժողովրդային հաւատալիքներ, կամ նոյնիսկ խօսքեր, որոնք կրկնուելով կրկնուելով վերածուած են անգիր իրողութեան, անառարկելի իրականութեան։

Փետրուար ամսուան ընթացքին յիշատակուող Վարդանանց պատերազմին վերաբերող հասկացողութիւնը այսպիսի օրինակ մըն է։ Ան անխուսափելիօրէն կը լիշուի տարուէ տարի, ու կարծես կ'ամփոփէ ճակատագրական ու պատմական այս դէպքին ամբողջութիւնը։ Խօսքը կը վերաբերի Վանդանանց պատերազմի աւարտին հայ ժողովուրդի «Բարոյական յաղթանակ» տարած ըլլալուն մասին։

Մեզմէ ո՞վ չէ հանդիպած այս նախադասութեան ու ծանօթ չէ անոր. քիչ մարդիկ, վստահաբար։ Մեր դպրոցական դասագրերը նոյնիսկ այսպիսով կ'եզրափակեն հայոց պատմութեան դասի այդ գլուխը։ Վարդանանց պատերազմի մասին որեւէ ուսումնասիրութիւն կամ տեղեկատուութիւն պիտի նշէ անպայման թէ ինչպէս հայերը այդ օր ուազմական եւ զինուրական գետնի վրայ կրած իրենց պարտութեամբ հանդերձ, Վարդանանց պատերազմի իբր արդիւնք, շարունակեցին գոյատեւել իբր հայ ազգ եւ քրիստոնեալ ժողովուրդ։ Իրողութիւն է այս ու ընդունուած եզրակացութիւն։

Հետաքրքրական է վեր առնել այս

խօսքը ու մտածել անոր մասին, մանաւանդ, երբ ան սերտ նմանութիւն ունի քրիստոնէական հաւատքին առընչուող մէկ առաջնահերթ կանոնի հետ, որն է հոգիին եւ հոգեկանին գերադասութիւնը նիւթական, երկրային որեւէ յաղթանակ։

Բարոյական յաղթանակի մը հզօրութիւնը կրնայ նոյնքան մեծ ու ազդու ըլլալ որքան իսկական, շօշափելի արդիւնք տուած յաղթանակ մը, եթէ ոչ աւելի։ Վտանգը սակայն կը կայանայ երբ բարոյական յաղթանակի յուացքը կը դառնայ բաւարարուածութեան զգացում ու քիչով գոհանալու համազօր տրամադրութիւն։ Երբ մարդ իր պարտութիւնը, ճիզի խնայողութիւնը կամ եռանդի ու օօրաւոր կամքի պակասը կ'արդարացնէ այն խօսքով թէ «կարեւորը մասնակցիլն է եւ ոչ՝ յաղթելը», կամ թէ «թէեւ պարտուեցայ բայց բարոյական յաղթանակը իմն էր»։ Պէտք է զգուշանալ, որ բարոյական յաղթանակը չվերածուի քիչով բաւարարուելու զգացումի, ու մեր կրած մէկ կորուստի կամ պարտութեան առջեւ՝ միխթարական խօսքի։ «Բարոյական յաղթանակ» արդիւնքը զգուշութեամբ յայտարելու է մարդս, ու միայն այն պարագային, երբ իսկապէս, պայքարին արդիւնքը թէեւ առաջին, ուսումնասիրելի, ու նիւթապէս կշոելի հերթին ժխտականն է, բայց անոր ետին, ընդհանուր ու թերեւս աւելի ուշ քաղուելիք արդիւնքը՝ դրական։

Ահա, Վարդանանց պատերազմի վերաբերող այլ դասերու կարգին ա՛յս եւս փոխանցելու ենք մեր փոքրերուն, բացատրելով թէ կեանքի մէջ յաղթանակները երբեմն անմիջապէս չեն տարուիր ու տեսանելի չեն ըլլար։ Երբեմն մեր պարտութիւնները մեզի կը ծառայեն իբրեւ դաս, եւ դուռ կը բանան յաւելեալ այլքարի, յաւելեալ եռանդով ու հաւատքով տարուած աշխատանքի, որը իր կարգին, աւելի ուշ կ'արդիւնաւորուի փայլուն եւ սրանչելի յաղթութեամբ։

Փետրուար ամսուան տօնացոյց

Ուրբաթ 2: Յիշատակ Յովնան մարգարէի

Չարաթ 3: Սուլք Սարգիս զօրավար

Չարաթ 10: Սուլք Սահմակ Պարթեւ

Երեքշաբթի 13: Սրբոց Ղետնուեանց քահանայից

Չորեքշաբթի 14: Տեառնընդառաջ

Հինգշաբթի 15: Սրբոց Վարդանանց զօրավարացն

Չարաթ 17: Կոստանդնուպոլսոյ ժողովի 150 հայրապետացն

Կիրակի 18: Ա. Կիրակի, Բուն Բարեկենդան

Երկուշաբթի 19: Սուաչին օր Մեծ Պահքի

Չարաթ 24: Սուլք Թէոդորոս զօրավար

Կիրակի 25: Բ. Կիրակի, Արտաքսման



Յովնան մարգարէ

Սուլք Սարգիս զօրավար

Սուլք Սարգիս զօրավար մեր ժողովուրդի կողմէ կը նկատուի երիտասարդներու ու սիրահարներու պաշտպան Սուլք: Հստ աւանդութեան, ան իր օրերուն փախցուցած է աղջիկ մը ու այդ դէպքին շնորհիւ, երիտասարդներուն կողմէ նկատուած՝ իբրեւ զիրենք ամենէն աւելի լաւ հասկցող Սուլքը:

«Այդ տօնին մաքուր ալիւրից թխում են խիստ աղի գաթայ. Երեկոյեան սիրահարուած երիտասարդներն ու կոյսերը ուստում են այդ գաթայից եւ առանց ջուր խմելու քնում: Եթէ երազում իրենց սիրոյ առարկայից ջուր առան, կամ ջուր տուին խմելու՝ դա նշան է թէ ցանկալի նպատակին կը հասնեն»: (Աւետիս Ահարոննեան)

Ծագումով յոյն, քաղաքացիութեամբ Հռոմէացի Սուլք Սարգիսը ապրած է չորրորդ դարուն: Ան Հռոմի Կոստանդիանոս կայսեր կողմէ նշանակուած էր իր ծննդավայրի Կապադովկիոյ զօրապետ: Կոստանդիանոսի յաջորդող Կայարը՝ Յովիանոս Ուրացոյ, սաստիկ հալածանք բացաւ քրիստոնեաներուն դէմ ու դիմելով անոնց հրաւիրեց որ վերադառնան հեթանոսական նախկին պաշտամունքին: Զօրավարը շուտով հասկցաւ թէ նահատակութիւն կը սպասէր իրեն որովհետեւ ոչ մէկ ձեւով մտադիր էր ուրանալ իր քրիստոնէական հաւատքը: Ան իր զաւկին, Մարտիրոսի ընկերակցութեամբ, հեռացաւ իր հայրենիքէն ու մեկնեցաւ Պարսկաստան: Հոն, Շապուհ Բ. արքան զինք նշանակեց պարսկահոնմէական սահմաններու պաշտպան զօրապահ:

Թէեւ զօրավարը բազմաթիւ յաղթանակներ կ'ապահովէ պարսիկ արքային, բայց անոր քրիստոնեայ հաւատքի քարոզչութիւն ընելու լուրը որեւէ դրական ընդունելութիւն չ'ստանար: Խսկապէս ալ, զօրավարը իր քարոզչութեան շնորհիւ քրիստոնէական հաւատքին դարձուցած էր պարսկական բանակի բազմաթիւ անդամներ:

Զօրավարին քրիստոնէութեան հաւատարիմ մնալու որոշումը պատճառ կ'ըլլայ որ նահատակուի, իր որդույն Մարտիրոսի ու պարսկական բանակէն 14 հաւատարիմ զինուրականներու հետ:

Տեառնընդառաջ Նորապսակ զոյգերու օրինութեան օր

Տեառնընդառաջ կը նշանակէ ելլել կամ գալ Տիրոջ առջեւ, Եերկայանալ Անոր: Հայաստանեաց եկեղեցիէն ներս Տիրոջ առջեւ գալու կամ Տեառնընդառաջի տօնը կը վերագրուի Քրիստոսի տաճարին նուիրման, երբ ան քառասուն օրուան մանուկ եղաւ: Յիսուսի տաճար ընծայման վերաբերող հատուածը կը գտնուի Ղուկասի աւետարանին երկրորդ գլխուն տակ, 22-38 համարներուն մէջ:

Իսկ երբ Մովսէսի հաստատած Օրէնքին համաձայն անոնց ծխական մաքրու թեան ժամանակը լրացաւ, Յովսէփին ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին Տիրոջ ընծայելու համար:

Տեառնընդառաջին կը տրուի նաև Տէրնտեզ կամ Տէրնտաս անունը որ «Տէրն ընդ ձեզ» արտայալտութեան ձեւափոխուած տարբերակն է:

Հայաստնեաց եկեղեցին Տեառնընդառաջը կը տօնէ Քրիստոսի ծնունդէն քառասուն օր ետք, այսինքն անշարժ կերպով Փետրուար 14-ին:



Տեառնընդառաջի առթիւ կայացած սովորութիւններ

Տեառնընդառաջի օրը, մայրեր իրենց քառասնօրեայ զաւակները կը բերեն եկեղեցի ուր քահանան, դիմելով Աստուծոյ, կը խնդրէ որ Անոր ամենազօր Աշը միշտ պահապան մնայ մանուկին վրայ:

Տեառնընդառաջը նաև առիթ դարձած է եկեղեցիէն ներս նորապսակ զոյգերու օրինութեան: Փետրուար 14-ին, Տեառնընդառաջի պատարագի աւարտին, Հայ առաքելական եկեղեցիներէն ներս կը կատարուի նորապսակ զոյգերու օրինութեան կարգ: Քահանան աղօթքով կ'օրինէ իրեն դիմող զոյգերն ու անոնց միութիւնը, զօրացնելու համար անոնց սիրոյ եւ հաւատարմութեան փոխադարձ յանձնառութիւնը:

Այդ արարողութեան ընթացքին, Աստուծաշունչէն կը կարդացուին խրատներ որոնց հիմնականն է տէրունական հետեւեալ պատգամը. -

**«Ինչ որ Աստուած միացուց,
մարդը թող չբաժնէ»:**

Տեառնընդառաջի օրով սովորութիւն է այցելել նորապսակ զոյգեր եւ նուէր տաւ անոնց:

**Տեառնընդառաջի
ժողովրդականացած եւ աւելի դիւրին
ձեւն է Տեառնընդառաջ:**

Եկեղեցւոյ խորհուրդները Սուրբ Պատրիարք Ամուսնութիւն



Յունուար ամսուան թիւով մենք ծանօթացանք Եկեղեցական խորհուրդներէն Հաղորդութեան որուն ճաշակումով հաստացեալը Քրիստոսը կ'ընդունի իր ներսիդին ու կը միանայ Անոր: Փետրուար ամսուան այս թիւով մենք պիտի նկարագրենք մեր Եկեղեցւոյ հինգերորդ խորհուրդը՝ Սուրբ Պատրիարք:

«Աճեցէ՛ք ու բազմացէ՛ք եւ լեցուցէ՛ք երկիրը»:

Ահա այս բառերը արտասանելով, Աստուած օրինեց Ադամն ու Եւան ու զանոնք միացնելով Իր իսկ ձեռքով հաստատեց ամուսնութեան խորհուրդը:

Ամուսնութիւնը այր եւ կնոջ միութիւնն է Աստուծոյ օրինութեամբ: Սուրբ Պատրիարքողութիւնը սիրոյ եւ հաւատարմութեան խոստում մըն է, որ ամուսնացող զոյգը կը կատարէ հանրութեան ու Աստուծոյ առջեւ: Պատրիարք խորհուրդով, զոյգը կը ստանայ աստուած ային օրինութիւն, փոխադարձ յարգանքի, նուիրուածութեան, հաւատարմութեան մէջ յարատեելու շնորհ, նեղութիւնները համբերութեամբ դիմագրաւելու կարողութիւն, ինչպէս նաև իմաստութեամբ իսկական քրիստոնեայ ընտանիք մը ստեղծելու զօրութիւն:

Այնպէս ինչպէս որ Յիսոս ու Եկեղեցին իրարմէ անբաժան են, նոյնպէս ալ պսակուող զոյգը կը միաւորուին փոխադարձ անբաժանելի սիրով: Այս սէրը օրինելով է որ Աստուած փեսային կը պատուիրէ տէր կենալ իր կնոջ այնպէս՝ ինչպէս Յիսոս տէր կեցաւ իր Եկեղեցւոյն, իսկ հարսին կը պատուիրէ հնազանդ մնալ իր ամուսնոյն, այնպէս՝ ինչպէս Եկեղեցին հնազանդ մնաց Քրիստոսի:

Խաչեղբա՞յր կամ Կնքահայր

Խաչեղբայրը հարսին ու փեսային օրինաւոր ամուսնութեան պաշտօնական վկան է:

Իրաքանչիւր պսակուող զոյգ կ'ընտրէ խաչեղբայր մը որ Սուրբ Պատրիարքողութեան ընթացքին Քրիստոսի խաչը կը բռնէ հարսին ու փեսային գլխուն վերեւ: Աչսպիսով խաչը հովանի կ'ըլլայ ու պաշտպան՝ նորապսակ զոյգին:

Յաճախ խաչեղբայրը ժողովուրդին կողմէ կը կոչուի կնքահայր որովհետեւ, ըստ հին սովորութեան մը, պսակուող զոյգին գլխուն վերեւ խաչը հովանի բռնելու պաշտօնը կը տրուէր փեսային մկրտութեան կնքահօր կամ անոր որդուոյն:

Գիտէիր թէ...

Պօղոս առաքեալ սուրբ պսակի խորհուրդը կը նմանցնէ Քրիստոսի եւ Անոր Եկեղեցիին միշեւ գոյացած փոխադարձ սիրոյն եւ անքակտելի միութեան:

Ամուսնութիւն թէ Պատրիարք

Ամուսնութեան արարողութիւնը կը կոչուի նաև Սուրբ Պատրիարք: Իրապէս ալ, արարողութեան ընթացքին, փեսային եւ հարսին գլխուն պսակ կամ թագ կը դրուի: Այս պսակը կը խորհրդանշէ Աստուծոյ փառքն ու պատիւը որ կ'իջնէ ամուսնացող զոյգին վրայ ու կ'օրինէ զանոնք: Այս պսակի կամ թագի զետեղման շնորհիւ փեսան կը կոչուի թագաւոր եւ հարսը՝ թագուիի:



Գիտէի՞ր թէ...

Ս. Եղիշէ Պատմիչ իր «Վարդանի եւ Հայոց Պատերազմի մասին» երկին մէջ մեզի տուած է ականատեսի իր վկայութիւնը:

Ի՞նչ կը նշանակէ...

Քանզի Հայր Մեր Զատուրբ Աւետարանն Գիտեմք եւ Մայր ԶԱռաքելական Եկեղեցի Կաթողիկէ

Գիտէի՞ր թէ...

«Նորահրաշ պսակաւոր» շարականը գրուած Ս. Ներսէս Շնորհալիի կողմէ եւ Նուիրուած Վարդանանցի սուրբերուն, բաղկացած է տասը տուներէ եւ ան ծայրակապն է «Ներսէսի Երգ»-ին:

«Նորահրաշ պսակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց...

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին...

Րենական լուսով լցեալ արիացեալն քաջն Արտակ...

Սրբափայլ զգեստու պճնեալ ի յերկնաւոր հանդիսադրէն...»

Ցաջորդող վեց տուները կու գան ամբողջացնելու խօսքին մնացեալ գիրերը:

Գիտէի՞ր թէ...

Վարդանի եւ իր 1036 ընկերներու նահատակութիւնով սկսած պատերազմը աւարտեցաւ 33 տարիներ եւոք իր եղբօրորդի Վահան Մամիկոնեանի Յաղթանակով եւ 484 թուականի Նուարակի մէջ ստորագրուած դաշնագրով: Այս Դաշնագիրը աշխարհի առաջին մարդկային իրաւունքներու դաշնագիրն է «հսուան rights declaration», հետեւեալ պայմաններով:

ա. Հայաստանի շնորհել ինքնավարութիւն:

բ. Որեւէ Հայ չի վերածել մոգի:

գ. Հայաստանէն Աստրուշաններու վերացում:

դ. Արգիլել Եկեղեցւոյ անարգումը:

ե. Հայերուն շնորհել Քրիստոնէական պաշտամունքի ազատութիւն

Նոյն Դաշնագրին մէջ, Հայեր հետեւեալ խրատները կու տան Պարսից թագաւորին

ա. Որպէսզի Պարսիկներուն գործերն ալ յաջող լնդանան, գիտցէ՛ք զատորոշել լաւը՝ վատէն, պիտանին՝ անպէտքէն:

բ. Գնահատեցէ՛ք այն որ պատուական, քաջ եւ օգտակար է միայն:

գ. Արհամարիեցէ՛ք գէշ եւ անպիտան մարդիկը:

դ. Սիրեցէ՛ք աշխատասէրը որ լաւ արդիւնքներ կու տայ:

ե. Բարեկամ եղէ՛ք իմաստուն խորհուրդներ տուող մարդոց, եւ անմիտները հեռացուցէ՛ք հրապարակէն:

Դեռեւս, Պարսիկներու թագաւորը պէտք է ի՞ր իսկ աչքերով տեսնէ եւ ականջներով ստուգէ խնդիրներու խկութիւնը: Պէտք չէ դատէ սուս խօսքերու վրայ հիմնուելով, այլ՝ փաստեր պէտք է փնտոէ ամբաստանելէ առաջ:

Նախամուսնական խորհրդատութիւն

Գրիգոր Վրդ. Զիփթճեան

«Ներկայ աշխարհը իր բարոյական հարցերով»

Անթիիաս-2001

Գիտակից ամուսնութեան մը կնքումին համար օրէ օր կարեւորութիւն ստացող հանդիպում մը սկսաւ դառնալ ամուսնութենէն առաջ հոգեւոր հովիտին հետ մտերմիկ, խորհրդակցական զրոյց մը՝ նախամուսնական խորհրդատութիւնը:

Հետաքրքրական է նկատել, որ յատուկ պահանջք կայ նաեւ այս մասին, նոյնինքն ենթականերուն՝ պսակուելիք զոյգին կողմէ։ Աւելի՝ հետաքրքրական է նկատել, որ համալսարանական բարձրագոյն կրթութեան հասած համալսարանաւարտ երիտասարդներուն ու երիտասարդուհիներն են առաելաբար այս հանդիպումը պահանջողները։

Մարդ որքան զարգանայ, այնքան աւելի՝ պիտի անդրադառնայ ընտանիքին կարեւորութեան, ընկերութեան կեանքին մէջ։
...

Նախամուսնական այս խորհրդատութիւնը, մարդուն համար ամենէն էական երեւոյթին՝ ամենէն մտերմիկ, ամուսնական փոխ-յարաբերական իր գիտակից կեանքին մասին կարծիքներու փոխանակման սքանչելի առիթ մըն է, նախքան անոր սահմաններէն ներս մտնելը։ Այս խորհրդատութեան ընթացքին է որ հոգեւոր հովիլը պիտի բացատրէ նախ իր կատարելիք եկեղեցական արարողութիւնը, Սուրբ Պատկի Խորիութը, իր պսակած թերեւս բազմահարիւր զոյգերէն իւրաքանչիւրին հետ ունեցած իր հանդիպումներէն մէջբերումներ պիտի կատարէ, ու Սուրբ Գիրքէն քաղելով իր օրինակները, պիտի առաջնորդէ շահեկան զրոյցը։ Այնտեղ կրնան արծարծուիլ հարցեր, որոնց մասին ճիշդ է որ մտածած ես, բաց առիթը չէ ներկայացած որ արտայալտուիս, մանաւանդ այն անձին, որ քու կինդ կամ ամուսինդ ըլլառ համար ընտրած ես։...

Պատահած է որ առանց նախամուսնական խորհրդատութեան Սուրբ

Պատկի եկած հարս մը վշտացած է, երբ պսակող եկեղեցականը արարողութեան ընթացքին, խրատական բաժնի աւարտին խօսքը ուղղելով անոր հարցուցած է. «Կը խոստանա՞ն տէր եւ ՀՆԱԶԱՆՌ ըլլալ այս պարոնին որ քու ամուսինդ պիտի ըլլայ եւ հաւատարմութեամբ սիրել զայն»։ Ահաւասիկ բառ մը՝ «ՀՆԱԶԱՆՌ», որ կրնայ հաւասարութեան դարու մէջ ապրող կնոջ համար «արժանապատութեան» հարց ստեղծել։ Սակայն նախամուսնական խորհրդատութենէ անցնող զոյգը երբ այս բառին Սուրբ Գրային իմաստին ու նշանակութեան անդրադառնայ, պիտի տեսնէ որ այնտեղ ստորակալութեան հարց չկայ, եւ առիթ չի տար փեսային «լոխորտանքին» ու հարսին «նուաստացման»։ Բան մը որ անցնող սերունդին մօտ այնքան շեշտուած էր։

Հոգեւոր հովիտին եւ սուրբ պսակի արժանանալիք զոյգին միջեւ եղած այս զրոյցը առիթ մըն է նաեւ վերաբերելու բարոյական տիեզերական սկզբունքներ, որոնց վրայ կը կանգնի մարդկութիւնը։ Այդ սկզբունքները ոչ միայն բացարձակ, այլև յափտենական են։ Անոնք նման են տիեզերքի ներդաշնակութեան օրէնքին, որուն յափտենական թաւալքին մէջ յառաջ եկող խախտում մը՝ աղէտ կրնայ դառնալ։

Բարոյական կեանքի աղէտները խորունկ զգացումով մը՝ Սէ՛ր-ով կը վերանան ու կը փարատին։ Ուրեմն որքան շահեկան պիտի ըլլար այն բառին բոլոր տեսակներուն մասին երկա՛րօրէն խօսիլ։ Սէ՛ր՝ Աստուծոյ հանդէպ, Սէ՛ր՝ ծնողներուն հանդէպ, Սէ՛ր՝ իրարու հանդէպ, Սէ՛ր՝ զաւակներուն հանդէպ եւ ի վերջոյ Սէ՛ր՝ իր նմաններուն հանդէպ։ Սիրոյ մասին այն անկեղծ զրոյցին առաջին հիստն է նախամուսնական խորհրդատութիւնը, որոնց բարերար անդիւնքները ցարդ բազմաթիւ զոյգեր վայելած են։

Ասէ Աստուած...
Ծաշու աւետարան 17 Փետրուար 2007
Բ. Կորնթացիներուն 6.1-17

Արդ, որովհետեւ Աստուածոյ գործակիցներն ենք, կ'աղաշենք ձեզի, մի՛ վատնէք Աստուածէն ձեր ստացած շնորհը: Որովհետեւ Աստուած կ'ըսէ.-

«Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի քեզ,
երբ փրկութեան օրը հասաւ՝ օգնեցի քեզի»:

Ոեւէ բանով պատճառ մի՛ ըլլաք որ Աստուածոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ՝ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուածոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խոռվարաբերու վայրագութիւնները, յոգնութիւնը, անքնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք՝ մաքուր սրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութիւնը քարոզելով, Աստուածոյ զօրութեամբ եւ արդարութեամբ զինուած՝ չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ այլայլիք՝ ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն: Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք գիտենք թէ ճշմարտութենէն շենք շեղած: Թող չուզեն մեզ ճանշնալ. մենք գիտենք թէ մեզ լաւ կը ճանշնան: Թող մեռած սեպեն մեզ. մենք ահա կենդանի ենք: Թող մեզ պատժապարտ համարեն. մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տիսուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք շատերու կեանքերը կը ճոխացնենք: Այլ՛, կը թուի թէ ոչինչ ունինք, մինչդեռ ամէն ինչ ունինք:

Կենդանի Աստուածոյ տաճարն ենք

Բնաւ անհաւատներու լծակից մի՛ ըլլաք: Ի՞նչ կապ կրնայ ունենալ արդարը անօրէնին հետ, կամ ի՞նչ նոյնութեան եզր կրնայ ըլլալ լոյսին ու խաւարին միշեւ: Ի՞նչ համաձայնութիւն կրնայ ըլլալ Քրիստոսի եւ Սատանային միշեւ, կամ ի՞նչ գործ ունի հաւատացեալը անհաւատին հետ: Ի՞նչ նմանութիւն կայ Աստուածոյ տաճարին եւ մեհեաններուն միշեւ:

Արդարեւ, մե՛նք ենք կենդանի Աստուածոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.-

«Անոնց մէջ պիտի բնակիմ
եւ անոնց հետ պիտի ապրիմ:
Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ
եւ անոնք՝ իմ ժողովուրդս»:

Ահա թէ ինչո՞ւ Աստուած կը հրահանգէ մեզի.-

«Անշատ եւ հեռո՛ կեցէք հեթանոսներէն.
պիդ բաներու մի՛ դաշիք,
եւ ես ձեզ պիտի ընդունիմ:
Ես ձեզի Հայր պիտի ըլլամ,
եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի
ըլլաք,-
կ'ըսէ ամենակալ Տէրը»:



Մեծ Պահքի մասին

Այս տարի, Փետրուար ամսուան յատկանշական եւ կարեւորութեամբ նշելի օրերէն մէկն է Երկուշաբթի 19 Փետրուարը՝ Մեծ Պահքի առաջին օրը:

Իսկապէս ալ, Մեծ Պահքը, իբր Սուրբ Զատիկը նախորդող քառասնօրեայ պահեցողութեան շրջան, կը սկսի Բուն Բարեկենդանի Երկուշաբթին ու Կ'երկարի մինչեւ Սուրբ Յարութեան Աւագ շաբաթը։ Աւագ շաբաթը ինք ե'ւս պահքի շաբաթ մը ըլլալով, պահեցողութեան օրերու ընդհանուր թիւը կը հասնի 48-ի։ Մեծ Պահքի բոլոր տեսողութեան, եկեղեցին խորանը կը մնայ փակ։ հոսկէ կը ծագի «փակեալ խորան» արտայայտութիւնը։

Ի՞նչ է պահեցողութիւնը

Գիտէի՞ր թէ...

Մեծ Պահքի շրջանին կայ միայն մէկ տօն որուն պատարագը բացառաբար կը մատուցուի բաց խորանով։ Այդ տօնն է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի «Մուտն ի Վիրապ»-ը որ այս տարի կը յիշատակենք Մարտ 24 ին։

Պահեցողութիւնը կամաւոր ինքնազապումի, ինքնազրկումի շրջան մըն է որ կը միտի մարմնին չափազանց ցանկութիւնները զսպելով զօրացնել հոգին։

Ի՞նչ ձեւով կը կատարուի պահեցողութիւնը ներկայիս

Եթէ անցեալին պահեցողութիւնը ամբողջութեամբ ծոմապահութեան համազօր էր, ներկայիս ան կը նշանակէ որոշուած օրերուն հրաժարիլ մսեղէնէ եւ ընդհանրապէս կենդանական բնոյթ ունեցող սնունդներէ։ Ընդունուած է ուրեմն ուտել բանշարեղէն, ընդեղէն եւ այլ բուսական ծագում ունեցող կերակուրներ։ Պահեցողութիւնը եկեղեցին կողմէ հաստատուած պարտադրիչ հրահանգ չէ, այլ՝ յանձնարարելի օրէնք։ Պահեցողութիւնը պէտք է ըլլայ կամաւոր եւ ինքնաբուխ։

**Ուրեմն Պահքը սննդականոն փոխելո՞վ
կը կիրարկուի**


Պահքը իր ամբողջական նպատակին ծառայած պիտի չըլլայ եթէ, ժումկալութեան հետ զուգահեռ, հաւատացեալը շդիմէ աղօթքի եւ ողորմութեան։



փակեալ խորան

Արեւագալի, Խաղաղական, Հանգստեան Ժամերգութիւններ

Մեծ Պահքի շրջանին, Հայաստանեաց եկեղեցին իր հաւատացեալներուն համար նախատեսած է աղօթքի եւ ինքնամփոփման արարողութիւններ, որոնք ծանօթ են «Արեւագալ» կամ «Խաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւն» անուններուն տակ: Անոնց ամենէն աւելի ընդհանրացած կոչումն է «Հսկում» բառով ներկայացուող արարողութիւնները: Այս արարողութիւնները տեղի կ'ունենան ընդհանրապէս Զորեքշաբթի եւ Ուրբաթ երեկոները:



Գիտեի՞ր թէ...



Արեւագալի շարականները հեղինակութիւնն են Սուրբ Ներսէս Շնորհալիի: Անոնց մէջ ամենէն աւելի յիշատակուող նիւթն է հոգեւոր լոյսը, ինչպէս նաև ճշմարիտին ու գեղեցիկին փառաբանութիւնը: Ահա հատուած մը Արեւագալի շարականներէն.-

Արեւելքէն մինչեւ արեւմուտք, քրիստոնեայ բոլոր երկիրներուն մէջ, որ որ ալ սրբութեամբ Տէրը օգնութեան կը կանչեն, անոնց բարեխօսութեամբ թող Տէրը ողորմի մեզի: Աղօթենք եւ աղաշենք Աստուծոյ, որ մեզ փրկէ մեղքերէն եւ աշխարհի ցանկութենէն, ընդունի մեր սրտաբուխ աղօթքներն ու խնդրանքները, եւ իր սուրբերուն հետ միասին մեզ արժանի ընէ հաւատքին եւ իր պատուիրաններուն: Ամենակալ Տէր, մեր Աստուծուածք, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Տիեզերական ժողովներ

Հայաստանեաց Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ, Վարդանանցին յաջորդող Շաբաթ օրը, այս տարի Փետրուար 17ին, վերապահուած է Կոստանդնուպոլսոյ տիեզերական ժողովին մասնակցած 150 հայրապետներու յիշատակին:

Տիեզերական կը կոչուին քրիստոնէական Եկեղեցիներու բարձրագոյն խափ Եկեղեցական ժողովները, որոնցմէ բխող որոշումները օրին ստացած են պետական որոշումի համազօր արժէք: Բնականաբար, անոնք «Տիեզերական» կը կոչուին նաև որովհետև ընդունուած կ'ըլլան բոլոր մասնակից Եկեղեցիներուն կողմէ:

Այս տիեզերական ժողովները գումարուած են հոռմէական, ապա բիւզանդական կայսրերու նախաձեռնութեամբ:

Հայաստանեաց Եկեղեցին կ'ընդունի տիեզերական առաջին երեք ժողովները, որոնք են հետեւեալները.-

Նիկիոյ տիեզերական ժողովը, 325 թուականին որուն իբր արդիւնք մեզի հասած է Նիկիոյ հանգանակը, մեր բոլորին ծանօթ «Հաւատամք»-ը: (Տես յաջորդ Եջը)

Կոստանդնուպոլսոյ տիեզերական ժողովը, 381 թուականին, որուն ընթացքին հաստատուեցաւ սուրբ Երրորդութեան համազօր Աստուածութիւնը:

Եփեսոսի տիեզերական ժողով, 431 թուականին, որուն ընթացքին մերժուեցաւ Քրիստոսի մէջ ընդունիլ Երկու բնութիւններ՝ աստուածայինն ու մարդկայինը:

Հայաստանեաց Եկեղեցին հաւատարիմ մնալով այս երեք տիեզերական ժողովներու դաւանանքին, մերժեց Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովը, տեղի ունեցած 451 թուականին, անհամոզիչ համարելով անոր «մէկ անձ եւ Երկու բնութիւն» քրիստոսաբանական բանաձեւը:

Նիկիոյ տիեզերական ժողովի արդիւնք՝

Նիկիական հանգանակը

Կը հաւատանք մէկ Աստուծոյ, ամենակալ Հօր, ստեղծիչին Երկնքին եւ Երկրի, տեսանելիներուն եւ անտեսանելիներուն:

Եւ մէկ Տիրոց Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ Որդիին, ծնած Հայր Աստուծմէ՝ միածին, այսինքն՝ Հօրը Էութենէն: Աստուած՝ Աստուծմէ, լոյս՝ լոյսէն, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստուծմէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն Հօր բնութենէն, որով եղաւ ամէն բան Երկինքի մէջ եւ Երկրի վրայ՝ Երեւելիներն ու աներեւոյթները: Որ մեզի՝ մարդոցս համար եւ մեր փրկութեան համար Երկինքէն իշաւ, մարմնացաւ, մարդացաւ, կատարելապէս ծնաւ Սուրբ Կոյս Մարիամէն՝ Սուրբ Հոգիով: Որով առաւ մարմին, հոգի եւ միտք եւ ամէն ինչ որ կայ մարդուն մէջ՝ ճշմարտապէս եւ ոչ թէ կարծիքով: Զարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, Երրորդ օրը յարութիւն առաւ եւ նոյն մարմինով Երկինք ելաւ՝, նստաւ Հօրը աշ կողմը: Պիտի գայ նոյն մարմինով եւ Հօրը փառքով՝ դատելու ողջերը եւ մեռածները, որուն թագաւորութեան վախճան չկայ:

Կը հաւատանք նաև ամեղ եւ կատարեալ Սուրբ Հոգիին, որ խօսեցաւ Օրէնքին, Մարգարէներուն եւ Աւետարաններուն միջոցաւ. որ Յորդանան իշաւ, քարոզեց առաքեալներուն բերնով եւ բնակեցաւ սուրբերուն մէջ:

Կը հաւատանք նաև միայն մէկ, ընդհանրական եւ առաքելական, սուրբ Եկեղեցիին, մէկ մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերու քաւութեան ու թողութեան, մեռելներու յարութեան, հոգիներու եւ մարմիններու յափտենական դատաստանին, Երկինքի թագաւորութեան եւ յափտենական կեանքին:


Սուրբ Սահմակ Պարթեւ

387 թուին, 39 տարեկանին Հայոց կաթողիկոս ծեռնադրուած այս հոգեւորականին անունը մեր բոլորին ծանօթ է իբր հայ գիրերու գիտէն ետք, հայերէն լեզուի եւ աստուածաշունչի պատուիրաններու տարածման աշխատանքին մէջ առաջնահերթ դեր խաղցած անձնաւորութիւն։ Խվապէս ալ, իր կաթողիկոսութեան օրերուն էր որ Մեսրոպ Մաշտոց եկեղեցական դարձաւ ու լծուեցաւ հայ գիրերու ստեղծման աշխատանքին։ Հայ գիրերու գիտէն վերջ, տարիներ շարունակ ան զբաղած է հայրենիքի հոգեւոր կեանքի բարեկարգութեան վերաբերող հարցերով ու հիմնական նպատակ ունեցած է տարածել հայ դպրութիւնը ամենուրեք։

Սուրբ Սահմակ Պարթեւ, ծնած է 348 թուին, Կեսարիա, եւ որդին է Ներսէս Մեծի։ Ան կը նկատուի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի տոհմին անդամներէն մէկը։ Անոր միակ դուստրը, Սահմականոյշ, մայրը պիտի ըլար Քաջն Վարդան Մամիկոնեանի։

Նախնական ուսումը իր ծննդավայրէն Աերս ստանալէ ետք, ան մեկնեցաւ Բիզանդիոն - Կ. Պոլիս - որ այդ ժամանակաշրջանին ուսման բարձրագոյն կեդրոններէն մէկն էր։ Հոն, Սահմակ Պարթեւ տիրապետեց կրօնական, եկեղեցական եւ այլ գիտութիւններու, ինչպէս նաև օտար բազմաթիւ լեզուներու, որոնցմէ էին յունարէնն ու պարսկերէնը։

Սուրբ Սահմակ Պարթեւ կարգաւորած է Հայաստաննեաց եկեղեցւոյ տօնացուցը, գրած բազմաթիւ հոգեւոր կանոններ, այսինքն շարականներու շարքեր, եղանակաւորած է նաև շարականներ, պատարագամատոց եւ ծիսական աղօթքներ։ Ս. Սահմակ Պարթեւ եւ Ս. Մեսրոպ Մաշտոց իրենց աշակերտներուն հետ կը ծաւալեն թարգմանչական աշխատանքները, որոնց առաջինը կը հանդիսանայ Աստուածաշունչը։ Այսպէս է որ Սահմակ Ա. Պարթեւ հայրապետ կը նկատուի մեր ոսկեդարու կերտիչներէն մէկը։



**Շարական
Սուրբ Սահմակ Պարթեւ
հայրապետին**

**Դուն սուրբ հայրերուն
արմատներէն մեզի գաւազան բխեցուցիր
սուրբ Սահմակ հայրապետը քու հօտող
հովուելու ո՞վ Քրիստոս։**


**Դուն հայերուս անգիտութեան
խաւարը ջնջեցիր՝ ասով իմաստութեան
լոյսը ծագեցնելով Թորգոնի որդիներուն։**

**Դուն քու յառաջիկայ խորհուրդը
տեսիլքով յայտնեցիր սուրբին, անոր
յիշատակին՝ ընդունէ տօնողներուս
աղաչանքը։**

Աստուածաշունչը մանուկներու համար Ե՛Լ ԵՒ ՔԱԼԵՇ

Օր մը, տան մը մէջ, Յիսուս կը խօսէր Տիրոջ մասին:
Մեծ բազմութիւն մը հաւաքուած էր զինք մտիկ ընելու համար
Եւ այլեւս տեղ չէր մնացած իր մօտերը:

Եւ ահա քանի մը հոգիներ անդամալոյծ մը բերին մահիճի մը
վրայ:



Անոնք կ'ուզէին անպայման հիւանդը Յիսուսի մօտեցնել:

Սակայն տեղ չկար, ուրեմն տանիք ելան եւ առաստաղէն կախելով՝ մահիճով միասին հիւանդը իջեցուցին ճիշդ Յիսուսի առջեւ, որովհետեւ անոնք վստահ էին որ Յիսուս կրնար զինք առողջացնել:



Երբ Յիսուս անոնց հաւատքը տեսաւ անդամալոյծին ըսաւ՝ «մեղքերդ ներուած են»:

Քանի մը պատասխանատուներ ջղալնացան ու իրարու ըսին.

«Ո՞վ է այս մարդը. Միայն Աստուած կրնայ մարդոց մեղքերը ներել. Այսպիսով ան զԱստուած կ'անարգէ»:

Յիսուս անոնց մտածումը գիտնալով ըսաւ.- «Ո՞րը աւելի դիւրին է «մեղքերդ ներուած են» ըսե՞լը,թէ «Ել եւ քալէ՛» ըսելը»:

Ապա ան աւելցուց. «Զեզի ցոյց պիտի տամ, որ Հայրս զիս դրկեց որ մարդոց մեղքերը ներեմ»:

Եւ դառնալով անդամալոյծին, ըսաւ.- «Ե՛լ, առ մահիճդ, եւ տո՛ւնդ գնա»: Անմիջապէս անդամալոյծը ոտքի ելաւ, առաւ մահիճը, եւ Աստուած փառաբանելով տուն գնաց:



Այս պատմութեամբ Յիսուս կ'ուզէր բացատրել մարդոց որ Աստուած կը դարմանէ մեր հիւանդութիւններն ու տկարութիւնները որպէսզի մեր կեանքը լաւ ապրինք:

Ի՞նչ կը նշանակէ
անդամալոյծ:



Անդամալոյծը մարդ
մըն է որ չի կրնար
քալել:

Ինչո՞ւ Յիսուս
անդամալոյծին կ'ըսէ
«մեղքերի ներուած
են»: Ան սխալ բան
չեր ըրած,
պարզապէս հիւանդ
էր:

Այս, բայց այդ
օրերուն, կը կարծուեր
որ մարդիկ կը
հիւանդանային
որովհետեւ սխալ կամ
մեղք գործած էին:



Յիսուս
իրապէս զինք
առողջացո՞ւց:
Անկարելի է:

Ներկաները հոն էին եւ
տեսան պատահածը:
Յիսուս ուրիշ շատ
բուժումներ ալ ըրած է:



Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

գ	թ	թ	է	ա	դ	զ	ը	ե
ե	ը	դ	թ	գ	զ	է	թ	ա
ա	է	զ	թ	ե	ը	թ	դ	գ
թ	գ	գ	ե	ը	ա	դ	է	թ
ը	դ	է	զ	թ	գ	ե	ա	թ
թ	ե	ա	դ	է	թ	ը	գ	զ
դ	գ	ե	ը	զ	թ	ա	թ	է
զ	ա	ը	գ	թ	է	թ	ե	դ
է	թ	թ	ա	դ	ե	գ	զ	ը

Նախորդ «Եզակի գիրեր» ուն
լուծումը

թ			ե			զ	դ	
		զ	ա	է				թ
ը		թ	դ					ե
թ		դ	թ				ը	
թ			զ		գ			ա
	է				դ	զ		թ
					դ	զ		թ
					ա	է		գ
է	զ			ը	ե	թ		
	ա	գ			զ		ե	

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, թ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իրաքանչիւր գիր իրաքանչիւր՝

- Բորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- իննեակ քառակուսիի մէջ

Ո՞ր է ճիշդ պատասխանը Ցունուար ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն
հրահանգը, աստղը, առաջնորդեց,
երկրագեցին, ոսկի, կնդրուկ, զմուս,
երազի

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն
1. դ. 6 Ցունուար
2. դ. 6 Ցունուար
3. դ. 30 տարեկան
4. ենթակալական
5. թ. Զուր

6. թ. 6 Ցունուարին Պատարագէն ետք

7. ա. 5 Ցունուարին

8. Ցունուար 5 ին

9. կարճահասակ

10. Գիճի եւ նշխար

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. գ. Զաքարիա

2. գ. 5 Ցունուար

3. դ. 6 Ցունուար

4. Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ

5. թ. Վերջին ընթրիքին՝ Հինգշաբթի

6. թ. 6 սանդիմեթր
7. գ. Ապաշխարութիւն
8. գ. Անապատ առաջնորդուեցաւ եւ 40 օր ծով պահեց
9. դ. Ցորդանան
10. Սկիբ

Երկրորդականի անկիւն

1. ա. զոհ, նուեր, ընծայ

2. դ. ա, թ եւ գ

3. դ. ա, թ եւ գ

4. ա. Քահանայական պաշտօն ունեցող

եկեղեցականներ

5. դ. ա, թ եւ գ

6. Դամասկոս

7. Ցովիաննես Օձնեցի

8. Սիփան

9. Ղուկասի

10. մեծ, սքանչելի, աւուր, ընդ,

հրեշտակս, աւետիս, երկնի, երկրի,

խանձարուս, Հօրէ, այրին

Ո՞րն է ճիշդ պատասխանը Յունուար ամսուան մասնակցողները

Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոց

Մասնակապարտէզ

Սեւակ Թեհինեան, Տանիէլ Տօնապետեան,
Լորա Տօնապետեան, Լիլի Չինչինեան,
Ալիս Մելեքեան, Սահակ Մելեքեան,
Քրիստինա Ակրեան, Ժիվի Քէօշկերեան,
Անդօ Նասոյեան, Թամարա Պետրոս,
Ցոլեր Անթեպեան, Տելենա Կարապետեան,
Անսխալ պատասխանողներ

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Փաթիլ Կարապետեան, Քրիստոֆըր
Արմութլու, Նշան Կիրակոսեան, Արա
Միրզոյեան, Սեւակ Դափթեան, Ծօնաթան
Զարֆանեան, Ալիք Գապաքեան, Դանիէլ
Ակրեան, Միներ Պանքեան, Կիորիա
Կարապետեան, Խշխչեան Ռիթա, Ծեսիքա
Մաթոսեան, Կրէս Նարեկեան, Ցարութ
Նասոյեան, Կարինէ Կարապետեան, Արազ
Քէպթաննեան, Ռիթա Մամիրոյեան, Մերժ
Դափթեան, Հրակ Քիւփելեան, Սեւակ
Պապիկեան, Արին Անթեպեան:
Անսխալ պատասխանողներ
Յակոբ Չինչինեան,

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գէորգ Պոլիքեան, Զոհրաա Կարապետեան,
Ալեք Կարապետեան, Միներ Մաթոսեան,
Սեւան Մելեքեան, Թեհինեան Շողիկ,
Նանոր Քիւփելեան, Ռոզալին Չինչինեան,
Հրայր Մաթոսեան, Մարիա Դանիէլեան,
Լորի Չինչինեան,
Անսխալ պատասխանողներ
Առէն Պապիկեան, Դալար Գիւպթաննեան,
Կասիա Արմութլու

Երկրորդականի անկիւն

Ցովիկ Կարապետեան, Քրիստին
Կարապետեան, Գօգօ Մաթոսեան, Արի
Միրզայեան, Լորա Սարիմանուկեան,
Սեդրակ Մամիրոյեան, Արման Նարեկեան

**Սուրբ Յակոբ Ազգային Վարժարան
Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան
Նախակրթարան**

Դ. դասարանի Մասնակցողներ

Լորի Չուխանեան, Աւետիս Թիւֆէնքնեան,
Աստրինա Մուրատեան, Թովմաս Զաքուր,
Վանէսա Փիլիկեան, Գրիստիան Տիւպէ,
Արամ Անասալ, ՇանթՂազելեան, Սանտրա
Թիւֆէնքնեան,

Անսխալ պատասխանողներ

Դինա Կարապետեան, Սառա Թէրզեան,
Սիրվարդ Սապաղեան, Արամ
Պարթենեան, Արիկի Չերքէզեան, Գարին
Տանաօլլեան, Ռուպինա Տէմիրնեան,
Ալեքսանտր Զաքեան, Ալեք Կարապետեան,
Միներ Շարաշեան, Մելիսա Պետրոս,
Թամար Մերտիսեան, Լինէթ
Խարայէլեան, Սեւան Մելեքեան, Ազնիւ
Աղպապեան, Սանտրա Կիւփիմեան, Բիթըր
Սարգիս, Սերենա Քիլլիքեան, Նաթալի
Հայրապետեան, Շողիկ Թեհինեան,
Մարիամ Մկրտիչեան, Ալինա Մարտիրոս,
Ալեք Թուպի, Ռուբեն Չերշեան, Տանիէլ
Չիւլուքովսի, Արթիւր Պէքարեան,
Դանիա Ժօննէթ, Սեւան Ցուփիկեան, Արա
Սոպանեան, Լորի Չոպոյեան

Ե. դասարանի Մասնակցողներ

Դաւիթ Արոլիկեան, Սեւակ Թաշճեան, Նայիրի
Թաշճեան, Սեւանա Օլիվիէ, Անդրանիկ
Պաղտասարեան, ճենիֆըր Եռնանեան, Լորէն
Սանուկեան, Սելինն Կիւլիմեան, Գարուլին
Գորգեննեան, Ռաֆֆի Կետիկեան, Էտի Տէտէյեան
Ալին Տէրտերեան, Գօգօ ճանսըգեան, Փարրիք
Պազարպաշեան, Զօհրապ Շահինեան, Մարինա
Սաղըրեան, Նարէ Մարկոսեան, Արի Թորոսեան
Շանթալ Թորոսեան, Սարին Պէզճեան, Սերոբ
Թաշճեան, Անուշ Ներսէսեան, Արեգ Ջամբարձումեան
Նելի Օհաննէսեան, Ժագ-Սիօն Գասպարեան, Քրիս
Չարըճեան, Ելի Գույումճեան, Ցովսէփ Կիւլեան,
Դուին Տօնապետեան, Դալար Գիւպթանճեան,
Արքահամ Թանուսեան, Ալիք Կարապետեան, Արօն
Պղտիկեան
Անսխալ պատասխանողներ

Արի Կարժապետեան, Գրիգոր Պալապանեան, Ռիթա
Գասպարեան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն**



Յիսուսի տաճար լնծայումը
**«Տեառնընդառաջ,
Փետրուար 14»**

**Ամբողջացո՞ւր ըստ
Ղուկաս 2.22- 32**

Տիրոջ, նուիրուի,
տատրակ, աղաւնիի,
Սիմոն, Սուրբ Հոգին,
Օծեալը, Յիսուսը,
գոհաբանեց

Յովսէփն ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին ----- լնծայելու համար որովհետեւ Տիրոջ Օրէնքին մէջ գրուած է. «Տիրոջ պէտք է ----- ամէն արու զաւակ, որ մօր առաջին զաւակն է». ինչպէս նաեւ Տիրոջ Օրէնքին համաձայն զոհ մատուցանելու գոյգ մը ----- կամ ----- երկու ձագ:

Այդ ժամանակ Երուսաղէմի մէջ ----- անունով մարդ մը կ'ապրէր: Սիմոն արդար եւ աստուածավախ մարդ մըն էր, ----- իրեն հետ էր եւ վստահեցուցած էր զինք՝ թէ Տիրոջ ----- չտեսած պիտի չմեռնէր: Արդ, Սուրբ Հոգին առաջնորդուած՝ անիկա տաճար գնաց: Երբ ծնողքը մանուկ ----- տաճար բերին, որպէսզի կատարեն այն ինչ որ Օրէնքը կը պահանջէր մանուկին համար, Սիմոն իր գիրկը առաւ փոքրիկը եւ ----- զԱստուած:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն**

Անուն: _____

1.- Յիսուսի ծնունդէն քանի՞ օր ետք զինք տաճար բերին Տիրոջ նուիրելու:

ա.- 8

բ.- 20

գ.- 40

դ.- 451

2.- Ո՞ր թուականին տեղի ունեցաւ Վարդանանց պատերազմը:

ա.- 484

բ.- 303

գ.- 301

դ.- 451

3.- Սուրբ Սարգիս ի՞նչ գործ կ'ըներ:

ա.- Զօրավար էր

բ.- Զկնորս էր

գ.- Հովհաննես էր

դ.- Բժիշկ էր

4.- Եջ 14-16 ի Յիսուսի ըրած հրաշքին մէջ Յիսուս որո՞ւն ըսաւ «Ե՛լ, առ մարիճդ եւ տունդ գնա՛»:

Ա. Կոյրին

Բ. Համրին

Գ. Խովհին

Դ. Անդամալոյծին

5.- Սուրբ Վարդանանց տօնին յաջորդող Կիրակին ի՞նչ կը կոչուի:

6. Վարդանանցէն երկու օր առաջ ի՞նչ կը տօնենք:

Ա. Սուրբ Սարգիս

Բ. Սուրբ Սահմակ Պարթեւ

Գ. Սուրբ Ղետնդեանց Քահանայից

Դ. Տեառնընդառաջ

7. Ի՞նչ կը նշանակէ Բարեկենդան:

ա.- Բարի լուր

բ.- Բարի կեանք

գ.- Վարդանանք

դ.- Halloween

8. Բուն Բարեկենդանին յաջորդ օրը ի՞նչ կը սկսի:

9. Գրէ՛ գրաբարով «Կը հաւատանք մէկ Աստուծոյ, ամենակալ Հօր»:

10. Յովնան մարգարէն ձուկին փորին մէջը քանի՞ օր մնաց:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն**

Անուն: _____

1.- Յիսուսի ծնունդէն քանի՞ օր ետք Յովսէփն ու Մարիամը զինք տաճար տարին Տիրոջ նուիրելու:

- ա.- 8
- բ.- 20
- գ.- 40
- դ.- 451

2.- ա. Յունուար 6ը հաշուելով որպէս առաջին օր, Փետրուարի ո՞ր օրը Յիսուս առաջին անգամ տաճար բերին:

- ա.- 12
- բ.- 13
- գ.- 14
- դ.- 15

բ. Հայաստանեաց Եկեղեցին ի՞նչ կը տօնէ ամէն տարուան Փետրուարի այդ օրը:

3.- Աստուած, ստեղծելով առաջին մարդը, Ադամը, եւ առաջին կինը, Եւան, եւ միացնելով ու օրինելով զանոնք ո՞ր Սուրբ Խորհուրդը հաստատեց:

4.- Սուրբ Վարդանանց տօնին նախորդող Ծաբաթ օրը ո՞ր սուրբին տօնը կը յիշատակենք:

5. Ո՞վ էր Ս. Վարդան Մամիկոնեանին մեծ հայրը «մօրը կողմէ»:

6. Ե՞րբ կը սկսի Մեծ Պահքը «երկու շիտակ պատասխան»:

- Ա. Վարդանանցի յաջորդող Երկուշաբթին
- Բ. Բուն բարեկենդանին յաջորդող Երկուշաբթին
- Գ. Վարդանանցի յաջորդող Չորեքշաբթին
- Դ. Բուն բարեկենդանին յաջորդող Չորեքշաբթին

7. Ո՞վ գրած է «Նորանրաշ պատերազմի մասին» երկը:

8. Ո՞վ գրած է «Վարդանի եւ Հայոց Պատերազմի մասին» երկը:

9. Ի՞նչ կը կոչուի Բուն Բարեկենդանին յաջորդող Կիրակին:

10. Ի՞նչ կը կոչուի Բուն Բարեկենդանէն ետք եկող Երկրորդ Կիրակին:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

Անուն: _____

1- Վարդանանց ճակատամարտի տարին տեղի ունեցաւ 4րդ տիեզերական ժողովը որ հետագային մերժուեցաւ Հայերուն կողմէ: Ո՞ւր տեղի ունեցաւ այդ ժողովը:

2- Վարդանանց Ճակատամարտէն 33 տարիներ ետք Վահան Մամիկոնեան Պարսիկներուն հետ ստորագրեց դաշնագիր մը որ Հայ ժողովուրդին տուաւ ինքնավարութիւն, Հայ Եկեղեցին տուաւ ազատ գործելու իրաւունք եւ քանդելու կառուցուած ատրուշանները: Ո՞ւր ստորագրուեցաւ այդ դաշնագիրը

3-Հայ Եկեղեցին Փետրուարի ո՞ր օրը կը տօնէ Յիսուսի Տաճար լնծայումը:

4-Սուրբ Սարգիսի նախորդող Երկուշաբթիէն Ուրբաթ օրերը պահք են: Ի՞նչ կը կոչուի այս 5 օրուան պահքը:

5-Տարուան ո՞ր 4 օրերը Շաշու գիրք չկարդացուիր:

6- Թիւ 5 հարցումին մէջ նշուած 4 օրերուն յաջորդող օրը Հին Կտակարանի ո՞ր մարգարէին գիրքն է Շաշու լնթերցումը:

7- Ե՞րբ տեղի ունեցաւ Տիեզերական այն ժողովը, որուն մասնակից 150 հայրապետներուն տօնը այս տարի կը տօննենք Փետրուար 17 ին:

8- Յիսուս քանի՞ օրուան մանուկ Էր Երբ Տաճար լնծայուեցաւ:

**9.- Ամբողջացուր
ՔԱՆԶԻ ՀԱՅՐ ՄԵՐ
ԶՍՈՒՐԲ**

**ԳԻՏԵՄՔ ԵՒ ՄԱՅՐ
ԶԱՌԱՔԵԼԱԿԱՆ**

ԿԱԹՈՂԻԿԵ

10.- Ո՞ր ականատես սուրբը գրեց Վարդանանց Պատերազմին Ակարագրականը:

Կարճ լուրեր Կիրակնօրեայէն

Փետրուար 18 Ին Կիրակնօրեայ Դպրոցը կը տօնէ Վարդանանք եւ Բուն Բարեկենդան, ուր աշակերտները կը ծպտուին Հայկական Տարազներով:

Այս տարուան պահքի առաջարկուած ծոմապահութիւնը հետեւեալն է:

Փետրուար 19- 25 Շամօն

Փետրուար 26 - Մարտ 4 Հեռատեսիլ, Համակարգիչ, այլ պաստառով Խաղեր

Մարտ 5 -11 Շաքար

Մարտ 12-18 կազախն խմիչքներ (pepsi, 7up, coke, crush եւայլն)

Մարտ 19 – 25 տուրմ chocolate

Մարտ 26 - Ապրիլ 1 chips

Ապրիլ 2 -7 Հալկիթ

Այս տարուան պահքի ընթացքին սորվելիքները հետեւեալներն են:

Մանկապարտէզի Ա. Բ. Եւ Գ. Եւ Նախակրթարանի Ա.

Անսխալ գոց սորվիլ Խաչակնքել, Տէրունական Աղօթքը եւ Հաւատով

Խոստովանիմէն համարներ :

Նախակրթարանի Բ., Գ., Դ., Եւ Զ.

Հաւատամքը

Երկրորդական

Նոր Կտակարանի Գիրքերու Շարքը

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

Ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ համացանցի վրայ:

Այցելեցէ՛ք www.sourphagop.org հասցէն եւ ընտրեցէ՛ք Պարբերաթերթ
բաժանումը:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

**Չորեքշաբթի, 14
Փետրուար 2007**

**Երեկոյեան
Ժամերգութիւն
Ժամը 7:30 ին**

Armenian Prelacy of Canada

Presents

**Pilgrimage among the
Armenians of the
Middle East**

by

V. Rev. Walter Raymond OGS

Dean & Rector

Anglican Cathedral of Holy Trinity,
Quebec City

Thursday, February 8, 2007 at 8PM
Sourp Hagop Armenian Apostolic Cathedral
www.epilgrim.org

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ



Մարտ 2007
ԺԴ տարի- թիւ 7

Զեռնադրութիւն կը կատարեն Եկեղեցւոյ Եպիսկոպոսները, որոնք իրենց կարգին ձեռնադրութեամբ ստացած են այդ իշխանութիւնը: Եկեղեցական խորհուրդին մասին կարդա' էջ 5-6

Խոր Վիրապ

Հայաստանեաց Եկեղեցին այս տարի Մարտ

24-ին կը լիշատակէ Սուրբ Գրիգոր

Հուսատորչի

Խոր Վիրապ մուտքը

Ենթադրենք որ ձեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննունինը արօտավայրին մէջ եւ չերթա՞ր կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: Ասէ Աստուած էջ 7

Մեծ պահքի կիրակիներ: Մեծ պահքի իրաքանչիւր կիրակիի մասին կարդա' էջ 10

Այսօր անմարմիններու դասերուն հետ կը պարեն անոնք որոնք Սեբաստիոյ մէջ ճգնութեամբ պատերազմելով թշնամիին յաղթեցին. Քառասուն մանուկներու վերաբերող շարականը կարդա' էջ 4

«Այս հիւանդութիւնը ո՛չ թէ մահուան, այլ Աստուծոյ փառքին պիտի ծառայէ եւ պատճառ պիտի ըլլայ որ Աստուծոյ Որդին փառաւորուի»: Ղազարոսի յարութեան մասին կարդա' էջ 8

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօրեայ Դպրոցի
ամսաթերթ

Խմբագիր՝
Ծաղիկ Թորիկեան - Պոյամեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ.ի ներկայ եւ
նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ։ Այցելեցէ՞ք
www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը


Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօրեայ Դպրոցի
կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝
Վերժին Գիւղթանձեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխանձեան
Յասմիկ Նաճարեան
Գարոլ Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխեն Իշխանձեան
Յասմիկ Գանաձեան

Հուսանկարիչ՝
Նիկոլ Դանիելեան

Տնօրէն՝
Թորոս Պապիկեան

Այս թիւով...



Ականջ տալ Աստուծոյ կանչին.....	Էջ 3
Կանոն քառասուն մանուկներու.....	Էջ 4
Եկեղեցական խորհուրդներէն՝ Զեննադրութիւն	Էջ 5-6
Ասէ Աստուած.....	Էջ 7-8
Ես եմ յարութիւնը եւ կեանքը.....	Էջ 9
Մեծ պահքի կիրակիներ.....	Էջ 10
Աստուածաշունը՝ մանուկներու համար.....	Էջ 11-12
Վարդանանց եւ Բարեկենդան Կիրակօրեայ Դպրոցէն ներս.....	Էջ 13
Եղակի գիրեր	Էջ 14
Ո՞րն է ճիշդ պատասխանը	Էջ 15-19
Կարճ լուրեր Կիրակօրեալէն.....	Էջ 20

Խմբագրական**Ականջ տալ Աստուծոյ կանչին**

Սուրբ գիրքի ծանօթ պատկերներէն մէկն է հովհիւ եւ հօտի պատկերը ուր հաւատացեալ ժողովուրդը կը նկատուի բանաւոր հօտ մը, իսկ Աստուած՝ անոր հոգեւոր հովհիւը։ Այս պատկերը խորհրդանշական է ու ներկայացուած զանազան ձեւերու տակ որոնցէ մէկն է «կորսուած ոչխարին» առակը, ուր, հովհիւ ձգելով իր իննասունինը ոչխարները կ'երթայ իր կորսուած հարիւրերորդ ոչխարը փնտուելու, մինչեւ որ գտնէ զայն։

Եթէ մենք, հաւատացեալներս, Աստուծոյ որդիներն ենք, պարտինք վստահիլ թէ երբ մենք մոլորինք ու կորսուինք, Ան, իբր ողորմած ու մեզ սիրող Հայր, անպատճառ կու գայ մեզ փնտուելու ու կը գտնէ, ճիշդ այնպէս ինչպէս հովհիւ իր կորսուած ոչխարը ետ չի ժողուր առանձին։ Մենք, իբր հաւատացեալներ, պարտինք մեր կարգին սորվիլ մեր մոլորածութեան վայրկեաններուն հաւատքով սպասել Աստուծոյ փրկարար գալուստին ու վստահիլ Անոր։

Մենք բոլորս ալ առօրեայի ընթացքին դէմ առ դէմ կը գտնուինք դժուարութիւններու եւ բազմատեսակ մտահոգութիւններու։ Այս նեղութիւնները կրնան վերաբերիլ մեր գործին, նիւթական կացութեան, ընտանեկան կամ ընկերային փոխ-յարաբերութիւններուն, առողջութեան կամ ընդհանրապէս կեանքի մէջ մեր նպատակին։

Այս դժուարութիւններուն առջեւ բնական է որ մարդ ընկնուի, մտահոգուի կամ տառապի որովհետեւ նեղութեան հակազդելու ամենէն բնագդային եւ մարդկային ձեւն է պայքարիլ, դժբախտ զգալ, բարկանալ։ Սակայն հոս է որ մեզի կը տրուի այլընտրանք

մը, մոլորած ոչխարին նման, հանդարտութեամբ սպասել որ մեր Տէրը գայ ու գտնէ մեզ, ուղղութիւն ցոյց տայ, եւ մեզի ընկերակցելով դուրս բերէ այդ տագնապահար վիճակէն։


Մենք բոլորս ալ հիմնականօրէն կը պատկանինք Աստուծոյ հօտին։ Սակայն կը պատահի որ մեզմէ շատեր որոշ պատճառներով մոլորին եւ յանձնուելով կեանքի նիւթեղէն ու շօշափելի դժուարութիւններուն, կրին անոնց ծանրութեան տակ։ Աստուծոյ մեզի շնորհած ընտրութիւնն է, մեր նեղութեան տակ ընկնուելու փոխարէն մեր հաւատքին վստահելով յաղթահարել դժուարութեան ու վերագտնել մեր հոգիին խաղաղութիւնը։ Աստուծոյ մեզի պարգեւած շնորհն է հաւատքով ականջ տալ իր կանչին ու սպասել որ ան գայ մեզի մօտ ու մեր մէջ ներկայութիւն դառնալով ձեռքազատէ մեզ մեր ամէն տեսակի նեղութիւններէն։

Աստուծոյ ներկայութեան բարիքն ու իմաստը մեր կեանքերէն ներս ճի՛շդ այս է. մեզի պարգեւած հաւատքին շնորհիւ ձեռքատել մեզ ամէն տեսակի դառնութիւններէ եւ ուղել դէպի հոգեկան խաղաղութիւն, հաշտութիւն եւ երջանկութիւն։ Մեր պարտականութիւնն է սորվիլ ականջ տալ Աստուծոյ կանչին ու զանազանել Անոր կանչը միւս բոլոր ձայններէն, իբրեւ անսահմանօրէն ու անխտիր սիրող Հօր մը կանչը։ Մեր պարտականութիւնն է հաւատալ թէ՝

Տէ՛րն է հովհիւս, ուստի ոեւէ բանի կարօտ պիտի շմնամ։

Մարտ ամսուան տօնացոյց

Մարտ 3: Սուրբ Կիւրեղ Երուսաղիմայ հայրապետ
Մարտ 4: Պահքի Գ. Կիրակի- Անառակի
Մարտ 10: Սուրբ Յովհաննէս Երուսաղիմայ Հայրապետ, Յովհաննէս Օծնեցի, Յովհաննէս Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի
Մարտ 11: Պահքի Դ. Կիրակի- Տնտեսի
Մարտ 14: Միջինք
Մարտ 17: Քառասուն մանկունք Սեբաստիոյ
Մարտ 18: Պահքի Ե. Կիրակի- Դատաւորի
Մարտ 24: Սուրբ Գրիգոր Լուսաւորչի մուտն ի Վիրապ
Մարտ 25: Պահքի Զ. Կիրակի- Գալստեան
Մարտ 31: Յիշատակ Ղազարոսի յարութեան



Կանոն Քառասուն Մանուկներու

Այսօր անմարմիններու դասերուն հետ կը պարեն անոնք որոնք Սեբաստիոյ մեջ ճգնութեամբ պատերազմելով թշնամիին յաղթեցին. անոնց բարեխօսութեամբ խնայէ մեզի, Քրիստոս:

Եւ անօրէն բռնաւորին մոլութիւնը աստուածային քաջութեամբ վանելով՝ ժուժկալութեամբ տոկացին տանջանքներուն. անոնց բարեխօսութեամբ խնայէ մեզի, Քրիստոս:

Անոնց պատուական մարմինները դժնդակ օդէն ճաթուտելով կը տագնապէին սառած լիճին մեջ անտանելի տանջանքներէն եւ իրենց աշքերը երկինք բարձրացնելով քեզմէ օգնութիւն կը խնդրէին. դուն որ սուրբերուդ յոյս ու ապաէնն ես, խնայէ մեզի, Քրիստոս:

Այսօր եկեղեցին կը տօնէ անյաղթելի մարտիրոսներու ճգնութեան յիշատակը, որոնք Սեբաստիոյ մեջ թշնամիին դէմ պատերազմելով քաջութեամբ յաղթեցին. անոնց աղաչանքերով խնայէ մեզի, Քրիստոս:

Այսօր անտանելի չարչարանքով սառած լիճին մեջ նահատակուեցան քառասուն երանելիները, որոնք բարձունքներէն անճառելի ճառագայթներու շողերով կը տաքնային. դուն որ քու սուրբերուդ մէջ իշար, խնայէ մեզի, Քրիստոս:

Այսօր աստուածային երգին լրանալու՝ ջուրէ կ'անցնէին ոսկիի պէս մաքրուած՝ հուրի մէջ փորձուելով եւ երկնային օրբերու քով համբանալով անմարմին զուարթուններու հետ կը դասուէին. դուն որ քու սուրբերուդ մէջ փառաբանուած ես, խնայէ մեզի, Քրիստոս:

Եկեղեցւոյ խորհուրդները Զեռնադրութիւն

Փետրուար ամսուան ընթացքին մենք ծանօթացանք Հայաստանեաց եկեղեցւոյ խորհուրդներէն Սուրբ Պատրի խորհուրդին: Մարտ ամսուան այս թիւով մենք կը ներկայացնենք մեր եկեղեցւոյ եօթ խորհուրդներէն Զեռնադրութեան խորհուրդը:

Ի՞նչ կը նշանակէ «Զեռնադրութիւն»

Զեռնադրութիւնը աստուածային պաշտօնի նուիրուելու, Աւետարան քարոզելու, եկեղեցւոյ խորհուրդները սպասաւորելու, Քրիստոսի փրկութիւնը շնորհելու, ժողովուրդին ապաշխարութեան հրափրելու, նաև շնորհ փոխանցելու խորհուրդն է:

Զեռնադրութիւն կը կատարեն եկեղեցւոյ եպիսկոպոսները, որոնք իրենց կարգին ձեռնադրութեամբ ստացած են այդ իշխանութիւնը:

Մեր եկեղեցւոյ խորհուրդներու նման, Զեռնադրութեան խորհուրդը ե'ս հաստատուած է Քրիստոսի կողմէ: Իրապէս ալ, Յիսուս ձեռնադրեց իր առաքեալները, այսպիսով անոնց շնորհելով քահանայական եւ եպիսկոպոսական ամէն իշխանութիւն:

Անկէ ետք, առաքեալները իրենց ստացած եկեղեցական իշխանութիւնը իրենց կարգին ժողովուրդին մէջէն ընտրուած մարդոց փոխանցեցին, զանոնք սարկաւագ ձեռնադրելով: Սարկաւագները կը զբաղէին ընդհանուր մատակարարութեամբ իսկ առաքեալները ամբողջութեամբ նուիրուած էին քարոզչութեան ու աղօթքի:

Այսպիսով է որ հաստատուեցաւ եկեղեցական նուիրապետութիւնը կամ նուիրապետական կառուցը, այսինքն եկեղեցւոյ ձեռնադրեալ պաշտօնէութեան աստիճանաւորումը:





Գիտէի՞ր թէ... .

Այն անձերը որոնք կը նուիրուին
Աստուծոյ ծառայութեան եւ
Եկեղեցւոյ սպասաւորութեան ու
այսպէսով թեկնածու կ'ըլլան
ձեռնադրութեամբ կրօնական
աստիճան ստանալու, կը
կոչուին «ընծայեալ»:

**Հայաստանեաց Եկեղեցին
ունի ինը աստիճաններ:**

Անոնք են.-

**Դոնապանութիւն
Ընթերցողութիւն
Երդըմնեցուցչութիւն
Զահըմկալութիւն
Կիսասարկաւագութիւն
Սարկաւագութիւն
Քահանայութիւն
Եպիսկոպոսութիւն
Կաթողիկոսութիւն**

Իւրաքանչիւր աստիճանի մասին
մանրամասնութիւններ... յաջորդ
թիւով:



**Ինչո՞ւ ձեռնադրութիւնը
խորհուրդներու կարգին կը դասուի**

**Ձեռնադրութիւնը Եկեղեցական
խորհուրդ մը կը նկատուի որովհետեւ
հաւատքով կ'ըմբռնենք թէ նուիրեալը
ձեռնադրութեամբ կ'ընդունի Աստուծոյ կողմէ
իրեն ընծայուած Եկեղեցական կարգ,
իշխանութիւն եւ երկնային իմաստութիւն:**

Ասէ Աստուած...

Յիսուս Քրիստոսի Աւետարանը Հստ Ղուկասի (15.1-32)

Մաքսաւորներ եւ մեղաւորներ Յիսուսի կու գային՝ զինք լսելու համար: Փարիսեցիներն ու օրէնքի ուսուցիչները սկսան տրտնջալ, ըսելով. «Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այս մարդը մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ կը ճաշէ»:

Յիսուս հետեւեալ առակները պատմեց անոնց.

- Ենթադրենք որ ձեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննաւունինը արօտավայրին մէջ եւ չ'երթա՞ր կորաւածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն: Եւ երբ գտնէ, ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ եւ տուն կը դառնայ, կը կանչէ իր բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՞ք ինծի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, երկինքի մէջ նոյնակս ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար, քան իննաւունինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին:

- Կամ ենթադրենք թէ կին մը տասը արծաթ դահեկան ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, ճրագը չի՞ վառեր եւ տունը ուշադրութեամբ չ'ալեր, մինչեւ որ դահեկանը գտնէ: Եւ երբ գտնէ, կը կանչէ իր բարեկամուհիներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՞ք ինծի հետ, որովհետեւ կորսնցուցած դահեկանս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեւով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ:

Ապա շարունակեց.

- Մարդ մը երկու զաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. «Հայր, քու ստացուածքն ինծի ինկող բաժինը հիմա՞ տուր ինծի»: Եւ հայրը իր զաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր զաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսինց հարստութիւնը եւ ապառեց իր ամբողջ ունեցածը:


Պատահեցաւ որ այդ երկիրն մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկիր քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անհկա իր ազարակը դրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. «Հօրս տան մէջ քանի՞ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.- Հայր, մեղանչեցի Աստուծ ոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու, զիս նկատ քու գործաւորներէն մէկը»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց:

Տակախն տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վազելով դիմաւորեց զայն, վզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Հայրը իր

Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը

ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէք լաւագոյն պատմուճանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս զաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախմանքի:

Մինչ այդ, երէց զաւակը ագարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ՝ երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՞նչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Եղբայրդ եկաւ. եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց»: Երէց զաւակը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ: Իսկ ան պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառապեմ. ոեւէ մէկ հրահանգդ շանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինձի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար»: Հայրը ըսաւ. «Տղա՛ս, դուն միշտ ինձի հետ ես եւ ամբողջ ունեցած քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:



Յիսուսի այս նշանաւոր խօսքը լաւապէս կը նկարագրէ Ղազարոսի յարութեան հրաշքը: Այն հրաշքը որմով Յիսուս, չորս օրերէ իվեր մահացած իր բարեկամին գերեզմանին առջեւ կանգնած հրամայեց անոր որ դուրս գայ: Իրապէս ալ, Ղազարոս դուրս գալով գերեզմանէն, մեռելներէն վեր բարձրացաւ ու Յարութեան շնորհքին արժանի եղաւ: Ղազարոսի յարութիւնը Յիսուսի կատարած յայտնի եւ հիանալի հրաշքներէն մէկն է:

Ղազարոս Քրիստոսի բարեկամ եւ աշակերտ էր, եղբայրը Մարթայի եւ Մարիամի: Յիսուս այս գերդաստանը շատ կը սիրէր եւ յաճախ այցելութիւն կու տար անոնց: Երբ Ղազարոս ծանր հիւանդ էր, անոր քոյրերը լուր դրկեցին Յիսուսի ըսելով. «Տէր, ահա անիկա զոր դուն կը սիրես հիւանդ է»: Գիտնալով հինդերձ որ իր սիրելի բարեկամը ծանր հիւանդ էր, Յիսուս երկու օր ետք միայն մեկնեցաւ դէպի Բեթանիա, ուր կ'ապրէր Ղազարոսի ընտանիքը: Ան արդարացուց իր այս որոշումը իր աշակերտներուն ըսելով. «Այս հիւանդութիւնը ո՛չ թէ մահուան, այլ Աստուծոյ փառքին պիտի ծառայէ եւ պատճառ պիտի ըլլայ որ Աստուծոյ Որդին փառաւորուի», ըսել ուզելով թէ Ղազարոսի մահին կենդանանալը առիթ պիտի ընծայէք մարդոց ականատես ըլլալու Աստուծոյ փառ քին ու Քրիստոսի Աստուծոյ կողմէ դրկուած ըլլալուն:

Յովհաննէս Օձնեցի

Մարտ ամսուան ընթացքին, Հայաստանեաց Եկեղեցին իր տօնացոյցին մէջ յատուկ տեղ տուած է երեք մեծ դէմքերու որոնք իրենց ամբողջ կեանքն ու գործունէութիւնը ի սպաս դրած են հայ ժողովուրդի հոգեւոր դաստիարակութեան ու բարօրութեան։ Այս դէմքերէն մէկն է Յովհաննէս Օձնեցի։

Հայաստանի մէջ արաբական տիրապետութեան շրջանի նշանաւոր հայրապետներէն մէկն է Յովհան Օձնեցի Կաթողիկոսը որ եղած է սրբակեաց, իմաստուն եւ քաղաքագէտ անձնաւորութիւն մը։ Իր իմաստափրական հանճարին շնորհիւ ան կոչուած է Յովհաննէս իմաստասէր։

Յովհաննէս Օձնեցիի ժամանակ, Հայաստանի մէջ բոյն դրած էին զանազան տեսակի աղանդներ, որոնք երկրին զանազան կողմերը տարածուելով կը մոլորեցնէին ժողովուրդէն բաժին մը ու զանոնք կը հեռացնէին իրենց մայրենի Եկեղեցիէն։ Այս աղանդաւորներուն մէջ Պատղիկեանները ու Երեւութականները թիւով ամենէն աւելի մեծերն էին ու կը յաջողէին շատերու համոզել ու առաքելական Եկեղեցիէն հեռացնել։ Յովհաննէս Հայրապետի առաջին գործը եղաւ պայքարիլ այս աղանդաւորներուն դէմ։ Այս նպատակով ան ժողով մը գումարեց Դուխին մէջ ուր կարեւոր որոշումներ առնուեցան Հայ Եկեղեցւոյ զօրացման ու բարգաւաճման առընչութեամբ։

Յովհաննէս Օձնեցի հայրեպետին բարի եւ իմաստուն համբաւը հասաւ Դամասկոս եւ արաբ ամիրապետը ուզեց անձամբ տեսնել Հայոց Կաթողիկոսը։ Ընդառաջ կելով ամիրապետի հրաւերին, Յովհան Օձնեցի գնաց Դամասկոս։ Ընդունելութեան ընթացքին, ամիրապետը շատ լաւ տպաւորուեցաւ Կաթողիկոսին իմաստուն խօսքերէն սակայն զարմանալով անոր շքեղ հանդերձներուն ու արդուզարդին առջեւ հարցուց։

- Զեր կրօնքը պարզութիւն եւ անձնուրացութիւն կը քարոզէ իսկ դուք շքեղութեամբ կը փայլիք։ Ի՞նչ է ասոր



**Զախին՝
Ս.Յովհաննէս Օձնեցի
Երեւան Զեռագիր
1502
Էջ 414բ,
Յայսմաւուրք,
1651թ., Կ. Պոլիս,
Ժաղկող՝ Մարկոս
Պատկերահան**

պատճառը։ Կաթողիկոսը կը պատասխանէ։

- Առաջին դարերու քրիստոնեաներուն կատարած սքանչելիքներն ու հրաշքները ներկայիս մենք չենք կրնար կատարել, ուրեմն շքեղ հանդերձներով կը զարդարուինք, որպէսզի կարենանք ժողովուրդին վրայ ազդել եւ բարիին առաջնորդել։

Այս արտասովոր պատասխանէն վերջ, ամիրապետը կաթողիկոսին խնդրանքին ընդառաջելով սրահէն դուրս հեռացուց բոլոր ներկաները։ Երբ երկուքը առանձին մնացին, Յովհաննէս Օձնեցի հանեց իր շքեց հանդերձները ու մնաց իր մորթին վրայ կրած կենդանիի մազէ հիւսուած ճգնաւորական հագուստով։ Ամիրապետը այս տեսնելով հասկցաւ թէ Կաթողիկոսը իր Երեւոյթին տակ կը պահէր անձնուրաց, համեստ ու պարզ կեանք մը։

Յովհաննէս Օձնեցի իր վերջին երկու տարիները անցուց ճգնաւորութեամբ եւ վախճանեցաւ 729 թուին, տասնըմէկ տարուան գահակալութենէ ետք։

Մեծ Պահքի կիրակիներ

Մեծ Պահքի շրջանին մէջ զուգադիպող իւրաքանչիւր Կիրակի օրուան Հայաստանեաց եկեղեցին տուած է անուն մը:

Մարտ ամսուան կիրակի օրերը յաջորդաբար կը ներկայացնեն Մեծ Պահքի երրորդ, չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ կիրակիները: Անոնք, ըստ նոյն շարքին, կը կոչուին «Անառակի», «Տնտեսի», «Դատաւորի» եւ «Գալստեան» կիրակի:

3

Անառակի կիրակի

Մեծ պահքի Գ. կիրակին այս անունը կը կրէ, որովհետեւ նոյն օրուան Աւետարանի ընթերցումի ընթացքին կը կարդացուի Ղուկասի 15-րդ գլուխը, ուր կը գտնուի հարիւր ոչխաներու եւ տասը դրամի եւ անառակ որդիին առակները: Ներսես Շնորհալին Անառակի կիրակիի իր շարականները այս առակներուն վրայ հիմնուելով գրած է:

Անառակի կիրակին այս տարի կը զուգադիպի Մարտ 4-ին:

4

Տնտեսի կիրակի

Այս անունը կը տրուի Մեծ Պահքի չորրորդ կիրակին որ այս տարի կը զուգադիպի Մարտ 11-ին:

Այս օրուան պատարագի ընթացքին կը կարդացուի Տնտեսի առակը որ կը գտնուի Ղուկասի աւետարանի 16-րդ գլխուն մէջ:

5

Դատաւորի կիրակի

Այսպէս կը կոչուի Մեծ Պահքի հինգերորդ կիրակին: Այդ օրուան ընթացքին կը կարդացուի Ղուկաս 18-ի այն մասը որ կը պարունակէ դատաւորին եւ մաքսաւորին առակները, որոնք կը յիշատակուին նաև օրուան պատշաճող շարականներուն մէջ եւս:

Դատաւորին կիրակին այս տարի կը զուգադիպի Մարտ 18-ին:

6

Գալստեան կիրակի

Մեծ Պահքի վեցերորդ կիրակին որ «Գալստեան» կը կոչուի կը վերաբերի Քրիստոսի աշխարհ գալուն խորհուրդին: Օրուան աւետարանին վերջին համարն ալ Քրիստոսի գալստեան կ'ակնարկէ:

«Բայց կ'ըսեմ նաեւ, ա՛ պիտի չտեսնէք զիս, մինչեւ որ ըսէք. «Օրինեալ ըլլայ ամ՝ որ կու գայ Տիրոջ անունով»: Մատթէոս 23.39

Աստուածաշունչը մանուկներու համար

Ժայռի վրայ շինուած տունը


**Աւելի զօրաւոր ե՞նք երբ Յիսուսի խօսքը մտիկ կ'ընենք:
Ահա թէ ինչ կը պատմէ Յիսուս՝**



**Երկու մարդիկ տուն կը շինեն: Առաջին մարդը հողը
խորունկ կը փորէ եւ իր տան հիմը ժայռի վրայ կը
հաստատէ, որպէսզի տունը տոկուն ըլլայ:**



**Երբ աճքեւներ կուգան եւ գետերը կը յորդին տունը չի
փլիր եւ չի խախտիր որովհետեւ տան հիմը ժայռի վրայ
հաստատուած է:**



Երկրորդ մարդը տունը շինելու համար հողը չի փորեր այլ տունը կը շինէ աւազի վրայ:



Օր մը անձրեւները կը տեղան եւ հովը կը փչէ: Փոթորիկը կը զարնէ տան պատերուն եւ տունը անմիջապէս կը քանդուի:

**Այս պատմութեամբ
Յիսուս մեզի կ'ըսէ՝
«Այն անձը որ Իմ
խօսքերս կը լսէ բայց
անոնք չի գործադրեր
կը նմանի այն
մարդուն որ տունը
աւազի վրայ կը շինէ:
Սակայն այն անձը որ**



Իմ խօսքերս կը լսէ եւ իր կեանքը անոնց վրայ կը հիմնէ, կը նմանի այն մարդուն որ իր տունը կը շինէ ժայռի վրայ:»

Վարդանանց եւ Բարեկենդան

Կիրակնօրեայ Դպրոցէն Օերս



Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

ա	բ	է	ե	գ	լ	զ	դ	թ
գ	դ	զ	ա	է	թ	լ	բ	ե
լ	ե	թ	դ	զ	բ	ա	գ	է
բ	գ	դ	թ	ա	է	ե	լ	զ
թ	լ	ե	զ	բ	գ	դ	է	ա
զ	է	ա	լ	ե	դ	գ	թ	բ
ե	թ	լ	բ	դ	ա	է	զ	գ
է	զ	բ	գ	լ	ե	թ	ա	դ
դ	ա	գ	է	թ	զ	բ	լ	լ

Նախորդ «Եզակի գիրեր» ուն
լուծումը

գ		դ	լ					
	ա							
թ	զ					ե	ա	դ
				է	զ		լ	բ
			բ		ա			
բ	է		գ	թ				
դ	լ	բ				թ	է	
						դ		
			է	լ			գ	

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, լ, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Ո՞ր է ճիշդ պատասխանը Փետրուար ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն

Տիրոջ. նուիրուի, տատրակ, աղաւնիի,
Սիմոն, Սուրբ Հոգին, Օծեալը, Յիսուսը,
գոհաբանեց

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. 40
2. դ. 451
3. ա. Զօրավար Էր
4. դ. անդամալոյծին
5. Բուն Բարեկենդան
6. գ. Սուրբ Ղետոնդեաց Քահանացից
7. բ. Բարի կեանը
8. Մեծ Պահիք
9. Հաւատամք ի մի Աստուած, ի հայրն
ամենակալ:
10. 3

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. գ. 40
2. ա. գ. 14 բ. Տեառնընդառաջ
3. Սուրբ Պատակ կամ ամուսնութիւն
4. Սուրբ Սահակ Պարթեւ

5. Ս. Սահակ Պարթեւ

6. ա. Վարդանանցի յաջորդող

Երկուշաբթին

բ. Բուն բարեկենդամին յաջորդող

Երկուշաբթին

7. Ս. Ներսէս Շնորհալի

8. Ս. Եղիշէ Պատմիչ

9. Արտաքսման

10. Անառակին

Երկրորդականի անկիւն

1. Քաղկեդոն

2. Նուարսակ

3. 14 Փետրուար

4. Առաջաւրաց

5. Առաջաւրացի առաջին 4 օրերը

6. Ցովնան Մարգարէին գիրը

7. 381

8. 40

9. Աւետարանն, Եկեղեցի

10. Ս. Եղիշէ Պատմիչ

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Փետրուար ամսուան մասնակցողները

Սուրբ Յակոբ Կիրակոսորեայ Դպրոց

Սուրբ Յակոբ Ազգային Վարժարան

Մանկապարտէզ

Հրակ Պանքեան, Սեւակ Թեհինեան, Տանիէլ Տօնապետեան, Լորա Տօնապետեան, Լիլի Չինչինեան, Քրիստինա Ակրեան, Ժիվի Քէօշկերեան, Սելենա Կարապետեան, Յակոբ Գիւթաննեան

Ծաղիկ Դասարան

Անսխալ պատասխանող
Արագ Աղպապեան

Վարդգէս Եւ Աստղիկ Սարաֆեան
Նախակրթարան

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Փաթիլ Կարապետեան, Քրիստոֆըր Արմութլու, Նշան Կիրակոսեան, Արա Միրզյեան, Սեւակ Դափթեան, Շօնաթան Չարֆանեան, Ալիք Գապաքեան, Դանիէլ Ակրեան, Միեր Պանքեան, Կլօրիա Կարապետեան, Խշխշեան Ռիթա, Շեսիքա Մաթոսեան, Կրէս Նարեկեան, Յարութ Նասոյեան, Կարինէ Կարապետեան, Արազ Քէպթաննեան, Ռիթա Մամիրյեան, Սերժ Դափթեան, Քարինա Քիւփելեան, Հրակ Քիւփելեան, Յակոբ Չինչինեան, Արազ Գիւթաննեան, Նանար Եագուպեան:
Անսխալ պատասխանողներ
Սեւակ Պապիկեան

Դ. դասարանի

Մասնակցողներ

Լորի Չուխանեան, Աւետիս Թիւֆէնքնեան, Ատրինա Մուրատեան, Թովմաս Զաքուր, Վանէսա Փիլիկեան, Արամ Անասալ, Սանտրա Թիւֆէնքնեան, Դինա Կարապետեան, Սառա Թէրզեան, Սիրվարդ Սապաղեան, Արփի Չերքէցեան, Գարին Տանաօղլեան, Ալեքսանտր Զաքեան, Միեր Շարաշեան, Մելիսա Պետրոս, Թամար Մերտիսանեան, Լինէթ Իսրայէլեան, Սեւան Մելեքեան, Ազնիւ Աղպապեան, Սանտրա Կիւլիմեան, Բիթըր Սարգիս, Սերենա Քիւլիլիքեան, Նաթալի Հայրապետեան, Շողիկ Թեհինեան, Մարիամ Մկրտիչեան, Ալինա Մարտիրոս, Ալեք Թոպի, Տանիէլ Չիւպուրովսի, Արթիր Պէքարեան, Դանիա Ժօննէթ, Սեւան Ցուսիկեան, Արա Սոպանեան, Լորի Շոպոյեան

Անսխալ պատասխանողներ

Շանթ Ղազելեան, Ռուբէն Չէրչեան, Ալեք Կարապետեան, Գրիստիան Տիւպէ, Ռուպինա Տէմիրնեան, Արամ Պարթեւեան,

Ե. դասարանի Մասնակցողներ

Ալին Տէրտինեան, Նայիրի Թաշճեան, Շանթալ Թորոսեան, Թալի Բակլայեան, Դաւիթ Աբովիկեան

Սերոբ Թաջնեան, Անուշ Ներսէսեան

Գարին Մարգարեան, Էլի Գույումնեան, Յովսէփ Կիւնեան, Դալար Գիւթաննեան

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Թաշճեան, Գրիգոր Պալապանեան, Տիրան Ամիկեան, Արի Կարժապետեան, Շործ Գալլողլեան Սարին Պէջնեան, Խաչիկ Պալեան, Դուին Տօնապետեան, Ալիք Կարապետեան, Լորին Մանուկեան, Անդրանիկ Պաղտասարեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գեղրգ Պուիքեան, Զոհրապ Կարապետեան, Ալեք Կարապետեան, Միեր Մաթոսեան, Թեհինեան Շողիկ, Նանոր Քիւփելեան, Ռոզալին Չինչինեան, Հրայր Մաթոսեան, Մարիա Դանիէլեան, Հրայր Մաթոսեան, Լորի Չինչինեան, Շալար Գիւթաննեան, Շէգ Չարֆաննեան
Անսխալ պատասխանողներ
Առէն Պապիկեան, Կասիա Արմութլու

Երկրորդականի անկիւն

Թամար Պուիքեան, Յովիկ Կարապետեան, Քրիստին Կարապետեան, Արի Միրզյեան, Լորա Սարիմանուկեան, Սեդրակ Մամիրյեան, Հրակ Նարեկեան, Լորա Սարիմանուկեան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն**



Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ

Այս տարի Ծաղկազարդը Ապրիլ --- ին է:

Ամբողջացո՞ւր ըստ Յովհաննէս 12.12- 15

**Երուսաղէմ, Յիսուս, արմաւենիի, Ովսաննա՝, Տիրոշ, Սուրբ,
Զատիկի, աւանակի**

Յաջորդ օրը, ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ -----
տօնին առիթով ----- եկած էր, երբ լսեց թէ ----- Երուսաղէմ
կու գայ, ----- ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ,
բարձրաձայն աղաղակելով.

«-----, օրինեա՛ ըլլայ ամ՝ որ կու գայ ----- անունով,
Խորայէլի թագաւորը»

Յիսուս էշ մը գտնելով՝ նստաւ անոր վրայ, ինչպէս որ ----- գիրքերուն
մէջ գրուած է.-.

«Մի՛ վախնար, ո՞վ Երուսաղէմ, Սիոնի՛ աղջիկ. ահա թագաւորդ
քեզի կու գայ իշու մը ----- վրայ նստած»:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն**

Անուն: _____

1.- Քառասուն Մանկունք Սեբաստիոյ Քանի՞ հոգի էին:

ա.- 1

բ.- 3

գ.- 8

դ.- 40

2.- Բուն բարեկենդանին յաջորդող Կիրակին կը կոչուի Արտաքսման Կիրակի: Ի՞նչ կը նշանակէ «արտաքսել»:

ա.- Դուրս հանել

բ.- Ներս ընդունիլ

գ.- Դաս սորվիլ

դ.- Խաղալ

3.- Արտաքսման Կիրակին յիշատակն է երկու հոգիի դրախտէն դուրս ելլելուն: Որո՞նք են անոնք:

ա.- Աղամը եւ Եւան

բ.- Կայէնը եւ Աբելը

գ.- Եսաւը եւ Յակոբը

դ.- Յովսէփը եւ իր եղբայրները

4.- Արտաքսման Կիրակին յաջորդող Կիրակին կը կոչուի Անառակի: Այս տարի ե՞րբ էր Անառակի Կիրակին:

ա. Մարտ 4

բ. Մարտ 11

գ. Փետրուար 25

դ. Փետրուար 18

5.- Անառակ որդիին պատմութիւնը հետեւեալներէն ո՞ր մէկն է:

ա.-Յիսուսի պատմած առակներէն

բ.- Հին Կտակարանի պատահարներէն
գ.-Նոր Կտակարանի պատահարներէն
դ.-Անանկ առակ կամ պատմութիւն չկալ:

6. Մեծ պահքի չորրորդ Կիրակին այս տարի Մարտ 11-ին է: Ի՞նչ կը կոչուի այդ Կիրակին:

ա.-Արտաքսման

բ.- Անառակին

գ.- Տնտեսին

դ.- Դատաւորին

7. Ի՞նչ կը կոչուի Մեծ Պահքի միջինը եղող Զորեքշաբթի օրը:

ա.-Կէս

բ.- Միջինք

գ.- աւագ Զորեքշաբթի

դ.- Ոտնլուայ

8. Այս տարի Միջինքը ո՞ր օրն է:

Մարտ ---

9. Գրէ՛ գրաբարով «Եւ մէկ Տիրոջ Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ Որդիին»:

10. Գրէ՛ գրաբարով «ծնած Հայր Աստուծմէ՝ միածին, այսինքն Հօրը Էութենէց»:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն**

Անուն: _____

1.- Ս. Քառասուն Մանուկները ո՞ր քաղաքէն էին:

աաեիբՍստ

2.- Գրէ՛ ճիշդ յաջորդականութեամբ Մեծ Պահքի 7 Կիրակիները:

ա.- Բուն Բարեկենդան

բ.- -----

զ.- -----

դ.- Տնտեսի

ե.- -----

զ.- -----

է.- Ծաղկազարդ

3.- Միջինքը ո՞ր օրը եւ ո՞ր երկու Կիրակիներուն միջեւ տեղի կ'ունենայ:

ա.- Հինգշաբթի՝ Արտաքսման եւ Անառակի

բ.- Չորեքշաբթի՝ Տնտեսի եւ Դատաւորի

զ.- Երեքշաբթի՝ Դատաւորի եւ Գալստեան

դ.- Չորեքշաբթի՝ Դատաւորի եւ Գալստեան

4.- Մեծ Պահքի 7 Կիրակիներէն ո՞ր երեքը Յիսուսի պատմած առակներով կ'անուանուին:

ա.- -----

բ.- -----

զ.- -----

5.- Գալստեան Կիրակին որո՞ւ խոստացած երկրորդ գալուստին կ'ակնարկէ:

6. - Ի՞նչ կը կոչուի Ղազարոսի Յարութեան յաջորդող օրը:

7. - Մենք այս տարի Մարտ 10 ին ո՞ր չորս սուրբերուն յիշատակը պիտի տօնենք:

ա.- Յովհաննէս -----

Հայրապետ

բ.- Յովհաննէս -----

գ.- Յովհաննէս -----

դ.- Գրիգոր -----

8. Հսկումի արարողութեան ընթացքին դպրաց դասը ո՞ր աղօթքը կը կարդայ:

ա.- Առաւօտ Լուսոյ

բ.- Հաւատամք

գ.- Հաւատով Խոստովանիմ

9. Ըսէ՛ մէկ բառով.

«Նուիրուած Աստուծոյ ծառայութեան եւ եկեղեցւոյ սպասաւորութեան. թեկնածու ծեռնադրութեամբ կրօնական աստիճան ստանալու»:

10. Այս տարի Ծաղկազարդը ո՞ր օրն է, եւ ո՞ր ժամուն է մանուկներու թափօրը:

Ապրիլ ---- ժամը ---.00 ին

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

ԱՇՈՒՅԹ:

1.- Որո՞նք են դպրութեան 4

աստիճանները:

ա.- -----

բ.- -----

գ.- -----

դ.- -----

2.- Գրե՛ ճիշդ յաջորդականութեամբ
Բուն Բարեկենդանին յաջորդող 7

Կիրակինները:

ա.- Բուն Բարեկենդան

բ.- -----

գ.- -----

դ.- -----

է.- -----

զ.- -----

է.- -----

ը.- -----

3.- Միջինքը այս տարի ո՞ր օրն է:

Մարտ -----

4.- Ի՞նչ կը նշանակէ ընծայեալ:

5.- Ո՞վ է այն սուրբ Կաթողիկոսը որ
վախճանեցաւ 728 թուին, գրեց հայոց
առաջին Կանոնագիրքը, ինչպէս նաև
ճառեր, շարականներ եւ որուն տօնը այս
տարի կը տօնենք Մարտ 10 ին:6.- Սուրբ Գրիգոր Տաթեւացիի
տօնին յաջորդող օրը ի՞նչ կը կոչուի:7.- Ո՞ր Աւետարանին մէջ կը
կարդանք Յիսուսի խօսքը ուր կ'ըսէ.
«Ե՞ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ
ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝
պիտի ապրի»:

ա.- Մատթէոս

բ.- Մարկոս

գ.- Ղուկաս

դ.- Յովհաննէս

8. Ո՞ր Աւետարանին մէջ կը կարդանք
Յիսուսի այն երեք առակները
որոնցմով կը նշուին Մեծ Պահքի 3րդ,
4րդ եւ 5րդ կիրակինները:

ա.- Մատթէոս

բ.- Մարկոս

գ.- Ղուկաս

դ.- Յովհաննէս

9. Այս տարի Ե՞րբ կը յիշատակենք Ս.
Գրիգոր Լուսատրչի մուտն ի Վկրապը:10. Այս տարի Երբ կը տօնենք այս 2
սուրբերուն տօնը: -----

**Կարճ լուրեր Կիրակնօրեայէն
Կիրակնօրեայ Դարոցը բաց է ամէն Կիրակի
ժամը 10:30 - 1:15**

Յաւելեալ տեղեկութիւններու համար կապ պահել, Տնօրէնին՝ Թորոս

Պապիկեանին հետ եմակ : director@sourphagop.org Հեռ: (514) 956-1277

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի Եերկայ եւ նախկին թիւերը կը
գտնուին նաեւ համացանցի վրայ: Այցելեցէ՞ք www.sourphagop.org
հասցէն եւ ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը:



Ս. Յակոբ
Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցւոյ

Տեղեկատու

Ա. Տարի Թիւ 1

Մարտ 2007

Ստանալու համար այցելել հետեւեալ
կայքէջը

[www.sourphagop.org/
newsletter/newsletter.htm](http://www.sourphagop.org/newsletter/newsletter.htm)

Sourp Hagop Armenian
Church

Newsletter


Volume 1 No 1
March 2007

View or download from
[www.sourphagop.org/
newsletter/newsletter.htm](http://www.sourphagop.org/newsletter/newsletter.htm)

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ



Ապրիլ 2007
ԺԴ տարի- թիւ 8

Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Օրինեալ է յարութիւնը Քրիստոսի:

Նոր Կիրակի Կը կոչուի Զատիկին յաջորդող
Կիրակին.....կարդա' Էջ 4

Աստուածաշունը մանուկներու համար
Յիսուս կը մեռի եւ Յարութիւն կ'առնէ:
Ինչո՞ւ Յուդան Յիսուսին կը համբուրէ:
Ինչո՞ւ Յիսուս չիշաւ Խաչէն:
Ինչո՞ւ կիները անուշահոտ կը բերեն:
կարդա' Էջ 11-13

Աւագ Շաբաթ: Աւագ շաբաթը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի չարչարանքներու, խաչելութեան, թաղման ինչպէս նաև դժոխքի աւերման, հոգիներու ազատման եւ Քրիստոսի հրաշափառ յարութեան շաբաթն է:
շաբթուան իւրաքանչիր օրուան մասին կարդա' Էջ 5-8

Սուրբ Յարութիւն: Քրիստոսի յարութեան բուն տօնը, Զատիկը, 35 օրերու շարժականութիւն ունի, ալսինքն ամեն տարի տարբեր թուականի կը գուգադիպի: Ան կրնայ հանդիպիլ Մարտ 22-էն մինչեւ Ապրիլ 25 երկարող ժամանակամիջոցին:

Այս տօնին մասին կարդա' Էջ 9

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեայց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի
ամսաթերթ

Խմբագիր՝
Շաղիկ Թորիկեան Պոյամեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ.ի ներկայ եւ
նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ։ Այցելեցէ՞ք
www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը

Հայաստանեայց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի
կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝
Վերժին Գիւղթանձեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխանձեան
Յասմիկ Նաճարեան
Գարոլ Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխեն Իշխանձեան
Յասմիկ Գանաձեան

Հուսանկարիչ՝
Նիկոլ Դանիելեան

Տնօրէց՝
Թորոս Պապիկեան

Այս թիւով . . .



Աստուծոյ կամքը միշտ Բարի է.....	Էջ 3
Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ.....	Էջ 4
Ծաղկազարդ, աւագ Երկուշաբթի.....	Էջ 5
Աւագ Երեքշաբթի.....	Էջ 6
Աւագ Զորեքշաբթի եւ Հինգշաբթի...	Էջ 7
Աւագ Ուրբաթ եւ Շաբաթ	Էջ 8
Սուրբ Յարութիւն	Էջ 9
Ուխտ առաջի նահատակաց ի Տէր Զօր.....	Էջ 10
Աստուածաշունչը մանուկներու համար ..	Էջ 11-13
Եզակի գիրեր	Էջ 14
Ո՞րն է ճիշդ պատասխանը	Էջ 15-19
Ապրիլ 24, 1915-2007.....	Էջ 20

Խմբագրական

Աստուծոյ կամքը միշտ Բարի է

Աճող մանուկներու ինչպէս նաեւ չափահաս մարդոց կրօնական դաստիարակութեան մէկ երեւոյթն է Աստուծոյ պատկերացումը իբր ամենակալ, հօգոր ու իշխող ոյժ։ Աստուծոյ այս գերադաս նկարագրականը ինքնաբերաբար, շատերու մօտ կը յառաջացնէ այն սկզբունքը ըստ որուն, Աստուած իբր վերին ոյժ ու կարողութիւն, ինքն իրեն կը վերապահէ նաեւ իր հետեւորդները պատժելու կամ փորձութիւններու ենթարկելու կարելիութիւնը։

Այս ուղղութեամբ, ոմանք պիտի մտածեն թէ իրենց կեանքերէն ներս պատահող դժբախտութիւն մը կամ փորձանք մը նշանն է Աստուծոյ բարկութեան կամ պատիժին։ Հիւանդութեան կամ այլ դժուարութեան մը առիթով նոյնպէս, ոմանք պիտի հետեւցնեն թէ Աստուած զիրենք փորձութեան կ'ենթարկէ իրենց կատարած այս կամ այն սխալին համար։

Աստուծոյ այս բարկացոտ կամ պատժական յատկութիւնը սակայն մեզ կը թուի ըլլալ անբնական ու սխալ։ Քրիստոնեութիւնը կը քարոզէ թէ ամէն ինչէ վեր Աստուած սէր է եւ ուրեմն անսպասելի է որ Ան որեւէ տեսակի շարիք հասցնել կամ պատիժ պարտադրել։ Աստուծոյ կամքը իր իսկ ստեղծած արարածներուն հանդէա միշտ սէրէն ծնունդ արած Բարին է։ Այս դաւանանք է, անխախտելի հաւատալիք, եւ իւրաքանչիւր հաւատացեալ իր հոգին մէջ կը գրկէ այս սկզբունքը ու կը կառչի անոր։

Սակայն տակաւին կը գտնուին մարդիկ որոնք հարցականի տակ կը դնեն այս հաստատումը ու կը շարունակեն մտածել թէ Աստուած կրնայ պատժել ու փորձութեան ենթարկել։ Այսպիսի տեսակէտ ունեցողներուն կարելի է հակազդել հետեւեալ ձեւով։ Աստուած, իբր բարիքի ու սիրոյ բարձրագոյն օրինակ անկարող է չարիքի։ Ան որեւէ ձեւով չի

պատժեր ոչ ալ կը փորձէ իրեն հաւատացողները։ Ընդհակառակը, երբ մեր կեանքերէն ներս դժբախտութեան կը հանդիպինք այդ նշանն է թէ մենք, հաւանաբար առանց անդրադառնալու հեռացեր ենք Աստուծմէ ու անգիտակցաբար տեղ տուը չարին։ Աստուած չէ որ կը պատժէ, ընդհակառակը Ան է որ մեզ կ'ընկերակցի մեր չարին մատնուածութեան ընթացքին ու մեր կողքին քալելով պաշտպան կը մնայ ու կը հետեւի, չի լքեր, միշեւ որ մեր հաւատքն ու Աստուծոյ հանդէա ամբողջական վստահութիւնը վերագտնենք ու չարը վերացնենք մեր կեանքեն։ Այս սկզբունքին լաւգոյն օրինակներէն մէկը պիտի ըլլար Հայ ժողովուրդի ցեղասպանութիւնը որուն համար զԱստուած պէտք չէ այսպանել այլ պէտք է հաւատալ թէ Ան մեր կողքին մնալով մեզի յարութիւն ու վերստին կեանք տուաւ։

Աստուծոյ կամքը մեզի համար՝ միշտ Բարի է։ Իսկ երբ հանդիպինք չարին, Աստուած կը շարունակէ պահպանել մեզ, քալելով մեր կողքին ու առաջնորդելով մեզի դէպի լոյս, դէպի յոյս։



Ապրիլ ամսուան տօնացոյց


- Ապրիլ 1: Ծաղկազարդ
 Ապրիլ 2: Յիշատակ արարչագործութեան
 Ապրիլ 3: Յիշատակ տասը կոյսերու
 Ապրիլ 4: Յիշատակ մատնութեան Տեառն
 Ապրիլ 5: Վերջին ընթրիք, Ոտնլուայ,
 խաւարում, Աւագ Հինգաբթի
 Ապրիլ 6: Աւագ Ուրբաթ Կարգ
 խաչելութեան եւ թադման
 Ապրիլ 7: Աւագ Շաբաթ, ճրագալոյց Սուրբ
 Զատկի
 Ապրիլ 8: Սուրբ Զատիկ, Յիշատակ
 Յարութեան Տեառն մերոյ
 Ապրիլ 9: Յիշատակ մեռելոց
 Ապրիլ 14: Յիշատակ գլխատման Սուրբ
 Յովհաննէս Մկրտչի
 Ապրիլ 15: Կրկնազատիկ, Նոր Կիրակի
 Ապրիլ 22: Աշխարհամատրան կամ Կանաչ
 Կիրակի
 Ապրիլ 24: 92-րդ տարեդարձ Հայոց
 ցեղասպանութեան
 Ապրիլ 29: Կարմիր Կիրակի

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ կամ Կրկնազատիկ


ՆՈՐ ԿԻՐԱԿԻ կը կոչուի Զատիկին յաջորդող
 Կիրակին, որովհետեւ մէկշաբթի օրը
 Քրիստոսի յարութեամբ նուիրագործուեցաւ եւ
 Կիրակի տէրունի օր եղաւ, եւ հետեւաբար
 առաջին անգամ անոր յաջորդող Մէկշաբթին
 կ'ըլլայ ՆՈՐ Կիրակի մը:

Նոր Կիրակին Զատիկուան նման օր մը ըլլալով՝
 Կրկնազատիկ ալ կոչուեցաւ: Անոր յիշատակը
 Քրիստոսի Յարութեան տօնէն զատ
 հեթանոսներուն կոչման եւ Քրիստոսի եկեղեցւոյ
 ընդարձակման եւ տարածման ալ յիշատակը
 կը պարունակէ, եւ այս տեսակէտով եկեղեցւոյ
 տօներուն շարքին կ'անցնի:

Կրկնազատիկ ժողովրդական անուն մըն է որ
 երբեմն կը տրուի Նոր Կիրակիին, սակայն
 բնաւ եկեղեցական նշանակութիւն չունի:



Յովհաննէսան



Միհաս 1450

Աւագ շաբաթ

Աւագ շաբաթը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի չաշարանքներու, խաչելութեան, թաղման ինչպէս նաև դժոխքի աւելման, հոգիներու ազատման եւ Քրիստոսի հրաշափառ յարութեան շաբաթն է:

Աւագ շաբթուան լնթացքին կատարուեցաւ այն ինչ որ անհրաժեշտ էր որպէսզի մեղաւոր մարդուն վերստին անմահութիւն պարգևելի եւ ան վերստին երկնքի արքայութեան արժանի դառնայ:

Աւագ շաբթուան առաջին օրն է Ծաղկազարդի Կիրակին:


Ծաղկազարդի օրը՝ հրէական Զատիկէն հինգ օր առաջ, Քրիստոս իր կամքով եկաւ Երուսաղէմ, յայտարարելու համար թէ ինք էր Աստուծոյ Գառը եւ թէ կը կամենար պատարագուիլ մարդոց փրկութեան համար: Երբ Քրիստոս Երուսաղէմ մտաւ, մարդիկ, արմաւենիի ճիշդեր վեր առնելով, եկան զինք դիմաւորելու: Ծաղկազարդը կը նկատուի յատկապէս մանուկներու տօնական օր որպինետեւ Տիրոջ տաճար մտնելու լնթացքին Երուսաղէմի մանուկները կ'աղաղակէին ըսելով.- «Օրինութիւն Դափիթի որդիին»:



Աւագ Երկուշաբթի օրը այն օրն է ուր Յիսուս անիծեց անպտուղ թզենին որ խկոյն չորցաւ: Անպտուղ թզենին օրինակն է ճշմարիտ հաւատք ու բարի գործեր չունեցող մեղաւորներուն, որոնք Աստուծոյ շնորհներուն արժանի պիտի չըլլացին:

Տասը կոյսերու առակը

Աւագ Երեքաբթին, Քրիստոս կը բարձրանայ ձիթենեաց լեռ եւ իր աշակերտներուն կը պատմէ իր գալիք չարչարանքներուն, խաչելութեան, ինչպէս նաև յարութեան մասին։ Այդ օր ան իր աշակերտներուն կը պատմէ տասը կոյսերու առակը։



- Այն ատեն երկինքի թագաւորութիւնը պիտի նմանի հետեւեալին.-

Տասը կոյսեր կային որոնք իրենց լապտերները առած՝ դիմաւորելու ելան փեսան։ Անոնցմէ հիգը յիմար էին իսկ միւս հինգը՝ իմաստուն։ Յիմարները առին իրենց լապտերները, բայց իրենց հետ պահեստի ձեթ չառին, մինչդեռ իմաստունները իրենց լապտերներուն հետ սրուակով ձեթ առին։ Երբ փեսան ուշացաւ գալու, բոլորն ալ թմրեցան ու քնացան։

Կէս գիշերին կանչ մը լսուեցաւ. « Ահա փեսան կու գայ, զայն դիմաւորելու ելէք»։ Կոյսերը արթնցան եւ սկսան իրենց լապտերները կարգի դնել։ Յիմար կոյսերը իմաստուններուն ըսին. «Զեր ձեթէն քիշ մը մեզի տուէք, որովհետեւ մեր լապտերները ահա կը մարին»։ Իմաստուն կոյսերը պատասխանեցին. «Ո՛, որովհետեւ կրնայ ըլլալ որ մեզի եւ ձեզի չբաւէ. աւելի լաւ կ'ըլլայ որ երթաք խանութպաններուն եւ ձեզի համար ձեթ գնէք»։

Երբ անոնք ձեթ գնելու գացին, փեսան եկաւ եւ պատրաստ եղողները փեսային հետ հարսանիքի մտան, եւ դուռը գոցուեցաւ։ Քիչ ետք եկան միւս կոյսերը եւ ըսին. «Տէ՛ր Տէ՛ր, դուռը բա՛ց մեզի»։ Փեսան պատասխանեց. «Խսկապէս որ չեմ ճաննար ձեզ»։

Ապա Յիսուս եզրակացուց.

- Ուրեմն՝ արթո՛ւն մնացէք, որովհետեւ չէք գիտեր Մարդու Որդիին գալու ո՛չ օրը եւ ո՛չ ալ ժամը։

Տասը կոյսերը կը խորհրդանշեն ամբողջ մարդկութիւնը, իսկ անոնց լապտերներու իւղը՝ ողորմութիւնն ու մարդասիրութիւնը։ Կոյսերու քունի անցնիլը կը խորհրդանշէ մարդոց գերեզմանի մէջ ննչելը, այսինքն մահը, իսկ փեսային առջեւ ելլելը՝ գերեզմանէն յարութիւն առնելը։ Իմաստուն կոյսերը անոնք են որոնք անձի սրբութեան կը խառնեն ողորմածութիւնը, եւ որոնք իրենց հաւատքին կ'աւելցնեն բարի գործերը։ Այլ խօսքով, անոնք են որոնք առարինի կեանք մը կը վարեն։ Իսկ յիմարները անոնք են որոնք իրենց կեանքն Աերս տեղ կու տան Շիրապաշտութեան ու զուրկ կը մնան ողորմութեան գործերէն։

Աւագ Զորեքշաբթին լիշատակն է Տիրոջ մատնութեան որ կատարուեցաւ Անոր աշակերտներէն Յուդային կողմէ, քահանայապետներէն ստացած երեսուն արծաթի փոխարէն։

Աւագ Հինգշաբթի Տէրը կու գայ վերնատուն, հոն կը լուայ իր աշակերտներուն ոտքերը։ Նոյն երեկոյ զանոնք հաղորդ կը դարձնէ իր արեան ու մարմնին հետ, այսպիսով հաստատելով Սուրբ Պատարագի խորհուրդը։

Աւագ հինգշաբթի օր եկեղեցիէն ներս կը կատարուի ոտնլուայի արարողութիւն, եւ երեկոյեան՝ Խաւարման արարողութիւն։ Խաւարումը կը վերաբերի Աւագ Ուրբաթի խորհուրդին, այսինքն Յիսուսի ձերբակալութեան, չարչարանքներուն, խաչելութեան ու մահուան։




Գիտեի՞ր թէ . . .

Հինգշաբթի գիշերուան եկեղեցական արարողութիւնը կը կոչուի խաւարում որովհետեւ Յիսուսի խաչելութեան ժամանակ արեւը կէսօրին խաւարեցաւ ու այդպէս մնաց մինչեւ Տիրոջ հոգին աւանդելը:



Գիտեի՞ր թէ . . .

Աւագ Հինգշաբթի օրը Տիրոջ աւանդատուն բարձրանալն ու աշակերտներուն հետ հոն հաւաքուիլը կը խորհրդանշէ Քրիստոսի փառքի աթոռին վրայ նստիլը իր տասներկու աշակերտներուն հետ:



Աւագ Ուրբաթ

Այս օրը Տիրոջ խաչելութեան օրն է, երբ ԱՅ Իր արեան հեղմամբ լուաց մարդկութեան մելքերը: Այս օրը կը կատարուի թաղման կարգը եկեղեցական արարողութեան ընթացքին:

Աւագ Շաբաթ

Այս երեկոյ կը կատարուի Սուրբ Զատիկի ճրագալոյցի արարողութիւնը, այսպիսով եզրափակելով Տիրոջ չարչարանքներու շաբաթը եւ աւետելով Անոր հրաշափառ յարութիւնը: Այս արարողութեան ընթացքին Սուրբ Հաղորդութիւն ստանալով՝ հաւատացեալ Երուս Մեծ Պահքը կ'աւարտի:

Սուրբ Յարութիւն



Քրիստոսի յարութիւնը Քրիստոնէական եկեղեցւոյ մեծագոյն ու ամենէն փառաւոր տօնն է: Անոր յիշատակը կապուած է հրեաներու Պատերին հետ, որ հայացուելով, վերածուած է «Զատիկ» բառին:

Քրիստոսի յարութեան բուն տօնը, Զատիկը, 35 օրերու շարժականութիւն ունի, այսինքն ամէն տարի տարբեր թուականի կը զուգադիպի: Ան կրնայ հանդիպիլ Մարտ 22-էն մինչեւ Ապրիլ 25 երկարող ժամանակամիջոցին: Զատկուան հետ միատեղ շարժական կ'ըլլան տօնը յաշորդող տաս շաբաթները ու զայն նախորդող 14 շաբաթները:

Քրիստոսի յարութեան տօնը կը սկսի Զատկի նախօրեակին Շրագալոյցի երեկոյէն եւ կը տեսէ 49 օրեր: Այս շրջանին վերջին օրն է Հոգեգալուստի օրը:

Համընդհանուր յարութիւն

Այս բառերով ծանօթ են Աստուծոյ մարգարէներու միջոցաւ մարդոց վերագրած ծրագիրը լստ որուն, աշխարհի վախճանին, բոլոր մահացածներու հոգիները պիտի միանան իրենց մարմիններուն, եւ հոգիի ու մարմնի միաւորմամբ մարդը վերստին պիտի ստանայ իր նախնական ամբողջութիւնը:

Գիտէի՞ր թէ... .

Տարուան 52 կիրակիներն ալ Յարութեան տօն են, եւ երբ ուրիշ տէրունի տօն մը եւս հանդիպի Կիրակի օրուան մը ընթացքին, Յարութեան տօնը չի ջնջուիր, այլ միևն տէրունի տօնին հետ կը խառնուի:

Ուխտ առաջի նահատակաց ի Տէր-Զօր Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց*

Կ'ուխտենք ձեր կենսաւորեալ նշխարներուն սուրբ հայելիին դիմաց, մաքրել, զտել եւ հարազատօրէն ինքնացնել եւ արժանաւորել մեր հայութիւնը ի սպաս Աստուծոյ եւ մարդկութեան համայն աշխարհի:

Կ'ուխտենք վառ պահել մեր քրիստոնէական սուրբ եւ սրբարար հաւատքը մեր պաշտելի հայց. Եկեղեցւոյ դարաւոր աւանդութեամբը հայորէն դրոշմուած եւ հայատիպօրէն մեզ կազմաւորող Քրիստոսի Աւետարանի գաղափարներուն, սկզբունքներուն եւ արժէքներուն ներգործութեան ոսկիացնող հուրովը:

Կ'ուխտենք կենդանի պահել մեր պապերուն ինքնութիւնը եւ անոր իւրայատուկ զօրութիւն, արտայայտչական շեշտ եւ գեղեցկութիւն ընծայած մեր ոսկեղնիկ լեզուն՝ Մեսրոպեան գիրի անմաշելի հանդերձանքովը շքեղափայլ եւ մեր դպրութեան արժէքներովը հազարագանձ, հայ դպրոցի պայծառակերպող քուրային մէջէն:

Կ'ուխտենք հարազատ պահել հայ ընտանիքը, մաքուր պահել ընտանեկան յարկերը մեր հայաշունչ, երդիքները մեր պապենական, ընտանիքի հայավայել սրբութեան եւ պատուախնդրութեան ու զաւակներու տոկուն եւ առողջ դաստիարակութեան առաքելութեան գիտակցութեամբն ու նախանձախնդրութեամբը:

Կ'ուխտենք ամրակուր կառչած մնալ եւ յարաճուն գնացքով առաջ տանիլ մեր ժողովուրդի արդար իրաւունքներու հետապնդման գործը, որովհետեւ ձեր նահատակութեան գերագոյն իմաստը ազատութեան եւ արդարութեան որպէս գին ձեր պատարագած կեանքն է, զոր այսօր մենք պիտի շարունակենք մատուցել մեր կեանքով վասն փրկութեան ազգիս հայոց:

Կ'ուխտենք Տէր-Զօրը միշտ կեանքով առլցուն պահել մեր ապրումներուն մէջ եւ որպէս վկայութիւն մեր այս ուխտին՝ ահա կը կանգնենք այս գեղակերտ Եկեղեցին Նահատակաց, որպէս համբոյր երկնի եւ երկրի, որպէս դաշինք անխախտ ընդմէջ Աստուծոյ եւ հայութեան, անբեկանելի ուխտ սիրոյ, հաւատարմութեան, եւ որպէս աչք մշտարթուն եւ պայծառատես՝ բացուած դէպի ապագայ:

**5 Մայիս 1991
Տէր-Զօր, Սուրիա**


* «Հասրընտիր կոմղակմեր եւ հայրապետական պատգամներ», Գարեգին Ա. Աստուածաբանական եւ հայագիտական մատենաշար թիւ 7

Աստուածաշունչը մանուկներու համար

Յիսուս կը մեռնի եւ յարութիւն կ'առնէ

Չատ մարդիկ կը սիրէին Յիսուսը, որովհետեւ ան հիւանդները կը բժշկէր, եւ իր խօսքերը բարի էին: Մարդիկ զինք կ'ընդունէին «Կեցցէ՛ Յիսուս» աղաղակելով: Բայց կրօնական պատասխանատուները ուրախ չէին եւ կ'ուզէին զինք մեռցնել ըսելով .- «Ո՞վ է այս մարդը որ ինքզինք Աստուած կը համարէ»:


Զատկուան շրջանին, Յիսուս իր ընկերներուն հետ կը հաւաքուի ճաշի սեղանի շուրջ եւ անոնց կ'ըսէ.- «Մօտ օրէն ձեր հետ պիտի չ'ըլլամ այլեւս»:



Յիսուս կ'առնէ հացը ու գինին եւ կ'օրինէ զանոնք:

Ապա կ'ըսէ.- «Այս հացը իմ մարմինս է: Այս գինին իմ արինս է: Ահա ձեզի կուտամ: Կերէք եւ խմեցէք:»


Ընթրիքէն վերջ, Յիսուս
պարտէզ կ'երթայ աղօթելու:
Ան շատ տխուր էր: Յանկարծ
Յուդան կուգայ. անոր կը
հետեւին մարդիկ որոնք կ'ուզեն
Յիսուսը բռնել: Յուդան կը
մօտենայ Յիսուսի եւ անոր
ալտէն կը համբուրէ:
Անմիջապէս զինուած մարդիկը
կը ձերբակալեն Յիսուսը եւ
զինք կը տանին դատելու:



Յաջորդ օրը,
Պիղատոս, երկրի
պատախանատուն,
Յիսուսը դատելու
համար կ'ըսէ.- «Քեզ
կը դատապարտենք
որովհետեւ կ'ուզես
հրեաներուն թագաւորը
ըլլալ: Ո՞վ ես դուն».

Յիսուս չի
պատախանէր:

Պիղատոս կ'ըսէ «Սպաննեցէք այս մարդը»:
Զինուորները Յիսուսը կը տանին բլուրի մը վրայ զինք սպաննելու համար
խաչելով: Մարդիկ կը խնդան ըսելով.- «Եթէ իրաւ Աստուծոյ որդին ես,
ինքզինքդ ազատէ»:



Յիսուս կը տառապի եւ կը պոռայ «Հայր զիս մի լքէր» եւ կը մեռնի:
Հոն գտնուող զինուոր մը կ'ըսէ «Իրապէս որ այս մարդը Աստուծոյ որդին էր:»
Յիսուսի բարեկամները իր մարմինը կը դնեն ժայռի մէջ փորուած գերեզմանի մը
մէջ, եւ մուտքը կը գոցեն հսկայ եւ շատ ծանր քարով մը:
Երեք օր վերջ կիներ որոնք կը սիրէին Յիսուսը, անուշահուտ կը բերեն
գերեզման:

Անոնցմէ մէկը կ'ըսէ «Ինչպէս պիտի վերցնենք գերեզմանի քարը»
Սակայն, շատ կը զարմանան երբ գերեզմանը բաց եւ պարապ կը գտնեն:



Ներսը հրեշտակ մը իրենց
կ'ըսէ.- «Յիսուս յարութիւն
առաւ: Ան ողջ է:

Մեռնելէ ետք նորէն կենդանանալը անհաւատալի է: Յիսուս
իրապէս մեռած էր բայց ան յարութիւն առաւ: Ան հիմա ողջ
է մեր հետ կը մնայ յափիտեան:

Յիսուս բարի էր. Ինչո՞ւ
կային մարդիկ որոնք զինք
չեն սիրեր:



Որովհետեւ Յիսուս կ'ըսէր
թէ Աստուած իր Հայրն է,
եւ այդ խօսքը ոմանց կը
ճեղացնէր:

Ինչո՞ւ Յուդան Յիսուսին
կը համբուրէ:



Նշան մըն էր այդ իր եւ
զինուորներուն միշեւ,
որպէսզի ճանճան Յիսուսը:

Ինչո՞ւ Յիսուս
չիշաւ խաչէն:



Որովհետեւ Աստուծոյ որդի Յիսուս
նաեւ մահկանացու մարդ է:

Ինչո՞ւ կիները անուշանոտ կը բերեն:



Ժամանակին բարեկամութեան
նշան էր այդ, ինչպէս որ
այսօր մարդիկ ծաղիկներ կը
դնեն գերեզմաններուն վրայ,
իբրեւ սիրոյ
արտայալտութիւն:

Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

գ	թ	դ	ը	ա	ե	զ	է	թ
է	ա	ե	թ	զ	դ	գ	թ	ը
թ	զ	ը	է	գ	թ	ե	ա	դ
ա	դ	գ	ե	է	զ	թ	ը	թ
ը	ե	թ	թ	դ	ա	է	գ	զ
թ	է	զ	գ	թ	ը	դ	ե	ա
դ	ը	թ	զ	ե	գ	ա	թ	է
զ	գ	է	ա	ը	թ	թ	դ	ե
ե	թ	ա	դ	թ	է	ը	զ	գ

Նախորդ «Եզակի գիրեր» ուն
լուծումը

դ	է				թ	ա		
		ե				է		
գ			թ	ը	լ		դ	ե
է	ը		դ				թ	թ
		գ		թ		զ		
թ	ա				ե		դ	է
զ	դ		գ	ա				ը
			ը			դ		
ը	զ					ե		թ

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, թ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Ո՞ր է ճիշդ պատասխանը

Մարտ ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն

Զատիկի, Երուսաղէմ, Յիսոս,

արմաւենիի, Ովսաննա՛, Տիրոշ, Սուլբ

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. դ. 40

2. ա. դուրս հանել

3. ա. Աղամը եւ Եւան

4. ա. Մարտ 4

5. ա. Յիսոսի պատմած առակներէն

6. գ. Տնտեսին

7. թ. Միջինք

8. 14

9. եւ ի մի Տէր Յիսոս Քրիստոս, յՈրդին

Աստուծոյ:

10. ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին,

այսինքն յԷռթենէ Հօր:

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. Սեբաստիա

2. թ. Արտաքաման, գ. Անառակի, ե.

Դատաւորի, զ. Գալստեան

3. թ. Չորեքշաբթի՝ Տնտեսի եւ Դատաւորի

4. Անառակի, Տնտեսի, Դատաւորի

5. Յիսոս Քրիստոսի

6. Ծաղկազարդ

7. ա. Երուսաղիմայ, թ. Օձնեցի, գ.

Որոտնեցի, դ. Տաթեւացի

8. գ. Հաւատով Խոստովանիմ

9. Ընծայեալ

10. 8, 11

Երկրորդականի անկիւն

1. ա. Դոնապանութիւն, թ.

Ընթերցողութիւն, գ. Երդըմնեցուցութիւն, դ. Զարննկալութիւն

2. թ. Արտաքաման, գ. Անառակի, դ.

Տնտեսի, ե. Դատաւորի, զ. Գալստեան,

է. Ծաղկազարդ, թ. Սուլբ Զատիկի

3. 14

4. Նուրբուած Աստուծոյ ծառայութեան

5. Յովհաննէս Օձնեցի

6. Տնտեսի

7. դ. Յովհաննէս

8. գ. Ղուկաս

9. Մարտ 24

10. Մարտ 10

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Մարտ ամսուան մասնակցողները

Սուրբ Յակոբ Կիրակոսորեայ Դպրոց

Սուրբ Յակոբ Ազգային Վարժարան

Մասնակապարտէզ

Հրակ Պանքեան, Սեւակ Թեհինեան, Տանիէլ Տօնապետեան, Լորա Տօնապետեան, Լիլի Չինչինեան, Քրիստինա Ակրեան, Ժիվի Քէօշկերեան, Յակոբ Գիւպթանճեան, Մելեքեան Ալիս, Մելեքեան Սահակ, Անթապի Ցոլեր, Նասոյեան Անդրանիկ

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Փաթիլ Կարապետեան, Քրիստոֆըր Արմութլու, Նշան Կիրակոսեան, Արա Միրզոյեան, Սեւակ Դալիթեան, Ալիք Գապաքեան, Դանիէլ Ակրեան, Միեր Պանքեան, Խշխշեան Ռիթա, Կրէս Նարեկեան, Կարինէ Կարապետեան, Սերժ Դալիթեան, Քարինա Քիւփելեան, Հրակ Քիւփելեան, Յակոբ Չինչինեան, Նանար Եագուպեան:

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արազ Գիւպթանճեան, Շեսիքա Մաթոսեան, Արին Անթապի

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գերգ Պուիքեան, Զոհրապ Կարապետեան, Ալեք Կարապետեան, Միեր Մաթոսեան, Նանոր Քիւփելեան, Ռոզալին Չինչինեան, Հրայր Մաթոսեան, Մարիա Դանիէլեան, Լորի Չինչինեան

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Կասիա Արմութլու, Դալար Գիւպթանճեան, Շողիկ Թեհինեան

Երկրորդականի անկիւն

Թամար Պուիքեան, Ցովիկ Կարապետեան, Քրիստին Կարապետեան, Արի Միրզայինան, Սեդրակ Մամիրոյեան, Հրակ Նարեկեան,

Ծաղիկ Դասարան

Անսխալ պատասխանող
Արազ Աղպապեան

Վարդգէս Եւ Աստղիկ Սարաֆեան
Նախակրթարան

Դ. դասարանի

Մասնակցողներ
Արփի Չերքէզեան, Միեր Շարաշեան,
Մելիսա Պետրոս, Վանէսա
Փիլիկեան, Գրիստիան Տիւպէ, Թովմաս
Զաքուր, Լորի Չուխանճեան, Ալեքսանտր
Զաքեան, Գարին Տանաօղլեան, Սառա
Թէրզեան, Դանիա Ժօննէթ, Արեգ
Գուշեան, Արա Սոպանեան, Լորի
Չոպոյեան, Սանտրա Թիւփէնքճեան, Սեւան
Յոսիկեան, Ալինա Մարտիրոս, Արթիր
Պէքարեան, Ալեք Թոոպի

Անսխալ պատասխանողներ

Շանթ Ղազելեան, Ռուբէն Չերշեան, Ալեք
Կարապետեան, Ռուպինա Տէմիրճեան, Արամ
Պարթևեան, Աւետիս Թիւփէնքճեան,
Աստրինա Մուրատեան, Արամ Անսալ,
Դինա Կարապետեան, Սիրվարդ
Սապաղեան, Թամար Մերտիսանեան,
Լինէթ Խորայէլեան, Սեւան Մելեքեան,
Ազնիւ Աղպապեան, Սանտրա Կիլիմեան,
Բիթըր Սարգիս, Սերենա Քիւլիլիքեան,
Նաթալի Հայրապետեան, Շողիկ
Թեհինեան, Մարիամ Մկրտիչեան,
Տանիէլ Չիէսլուքովսի

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն**



**«Հոս չէ ան, որովհետեւ յարութիւն առաւ» «Այս տարի
Յարութեան Տօնը Ապրիլ --- ին է:»**

Ամբողջացո՞ւր ըստ Մատթէոս 28.1- 7

առաջ, Մարիամ, մի՛ վախնաք, Մարիամը, երկրաշարժ, հրեշտակը, քարը,
նստաւ, սարսափեցան, խաչուած, յարութիւն, ըսէք, տեսնէք

Ծաբաթ երեկոյէն ետք, երբ Կիրակին կը բացուէր, -----
Մագդաղենացին եւ միւս ----- գերեզմանը տեսնելու եկան:
Յանկարծ զօրաւոր ----- մը եղաւ, եւ Աստուծոյ -----
----- երկինքէն իշնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած
----- եւ ----- անոր վրայ: Անոր տեսքը փայլակի կը
նմանէր, եւ հագուստները ձիւնի պէս ճերմակ էին: Պահապանները
երբ ասիկա տեսան, ----- եւ մեռելի պէս եղան:
Հրեշտակը կիներուն ըսաւ «Դուք ----- գիտեմ որ
----- Յիսուսը կը փնտուէք: Հոս չէ, որովհետեւ -----
առաւ ինչպէս ըսած էր: Եկէք եւ տեսէ՛ք այն տեղը ուր դրուած էր:
Անմիջապէս գացէք եւ ----- իր աշակերտներուն՝ թէ յարութիւն
առաւ: Անիկա ձեզմէ ----- Գալիլիա կը հասնի եւ հոն պիտի
----- զինք. ահա ըսի ձեզի:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1. Ցիսուս իր աշակերտներուն ոտքերը լուալով ինչի՞ դաս մը տուաւ անոնց:
 - ա. համբերութեան
 - բ. մաքրութեան
 - գ. խոնարհութեան
 - դ. ծովութեան
2. Վերջին ընթրիքին Ցիսուս ի՞նչ հաստատեց:
 - ա. Սուրբ հաղորդութիւնը
 - բ. Սուրբ Սահմակը
 - գ. Սուրբ կեանքը
 - դ. Սուրբ պսակը
3. Ո՞վ Ցիսուսը ուրացաւ 3 անգամ:
 - ա. Յակոբ
 - բ. Պետրոս
 - գ. Պողոս
 - դ. Յուդա
4. Ցիսուս իր ձերբակալութենէն ճիշդ առաջ ի՞նչ կ'ընէր
 - ա. կ' ուտէր
 - բ. կը խմէր
 - գ. կ'աղօթէր
 - դ. կ'աշխատէր
5. Ամբողջացո՞ւր

Ե՞ս եմ եւ
 կեանքը: Ան որ ինձի կը , թէպէտեւ
 մեռնի՝ պիտի :

Ցովհ. 11.25 :
6. Այս տարի Ապրիլ 29ը ի՞նչ կը կոչուի:
 - ա. Նոր Կիրակի
 - բ. Ծաղկազարդ
 - գ. Կանաչ Կիրակի
 - դ. Կարմիր Կիրակի
7. Որո՞նք էին իմաստուն կոյսերը:
 - ա. Անոնք որոնք լապտեր առին:
 - բ. Անոնք որոնք կանուխ գացին
 - գ. Անոնք որոնք լապտեր եւ պահեստի ձէթ առին
 - դ. Անոնք որոնք փեսան դիմաւորելու չգացին
8. Վերջին ընթրիքը շաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ:
 - ա. Աւագ Հինգշաբթի
 - բ. Աւագ Ուրբաթ
 - գ. Աւագ Շաբաթ
 - դ. Աւագ Կիրակի
9. Ունլուան շաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ:
 - ա. Աւագ Հինգշաբթի
 - բ. Աւագ Ուրբաթ
 - գ. Աւագ Շաբաթ
 - դ. Աւագ Կիրակի
10. Ո՞ր օրը եկեղեցւոյ արարողութեան ընթացքին Ցիսուսի գերեզմանին տակէն կ'անցնինք եւ մեխակ կու տան:
 - ա. Աւագ Հինգշաբթի
 - բ. Աւագ Ուրբաթ
 - գ. Աւագ Շաբաթ
 - դ. Աւագ Կիրակի

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն**

**1.- Ի՞նչ կը կոչուի Զատկուան յաջորդող
Կիրակին:**

**2.- ԳրԷ՛ Աւագ շաբթուան օրերուն
յիշատակը:**

ա.- Աւագ Չորեքշաբթի՝ Յիշատակ

բ.- Աւագ Հինգշաբթի՝ Յիշատակ

**3.- ԳրԷ՛ Աւագ շաբթուան օրերուն
յիշատակը:**

ա.- Աւագ Ուրբաթ՝ Յիշատակ

բ.- Աւագ Շաբաթ՝

----- Ս. Զատկի

**4.- ԳրԷ՛ Աւագ շաբթուան օրերուն
յիշատակը:**

ա.- Աւագ Երկուշաբթի՝ Յիշատակ

բ.- Աւագ Երեքշաբթի՝ Յիշատակ

5.- Քանի՞ հատ էին իմաստուն կոյսերը:

ա.- 5

բ.- 10

գ.- 7

դ.- 3

**6. Ամբողջացո՞ւր Քրիստոսի խօսքերը
ըստ Մատթեոս 26.26-27:**

ա. Յիսուս հաց առաւ, օրինեց,
կտրեց եւ բաժնեց աշակերտներուն,
ըսելով.

- Առէք, կերէք, ասիկա իմ
----- է:

բ. Ապա առաւ բաժակը, գոհութիւն
յայտնեց Աստուծոյ եւ տուաւ
աշակերտներուն, ըսելով.

- Բոլորդ խմեցէք ասկէ. ասիկա իմ
----- է:

**7. ա. Յիսուս իր յարութենէն քանի՞
օր տակալին երեւցաւ իր
աշակերտներուն մինչեւ իր Երկինք
համբառնալը:**

բ. Այս տարի Ե՞րբ է Համբարձումը
-----շաբթի, Մայիս ---:

**8. Հոգեգալուստը կը յաջորդէ
Համբարձումին:**

ա. Շաբթուան ո՞ր օրը Հոգեգալուստ
կըլլայ: -----

բ. Այս տարի Ե՞րբ է Հոգեգալուստը:
Մայիս ---:

**9. Այս տարի Հայոց
8եղասպանութեան քանի՞Երորդ
յիշատակն է:**

**10. Այս տարի ո՞ր Կիրակի օրը
Կարմիր Կիրակի կը կոչուի:
Ապրիլ -----**

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

- 1- Ի՞նչ կը կոչուի Ս. Զատկուան յաջորդող 3 կիրակիները:** ----- օրը:
 ա.- ----- Կիրակի
 բ.- ----- Կիրակի
 գ.- ----- Կիրակի
- 2- ըստ Գրիգոր Տաթեւացին հաւկիթը խորհրդանշէ աշխարհը՝ հետեւեալ ձեւով :**
 ա.Կեղեւը` -----
 բ. Մաշկը` -----
 զ. Շերմկուցը` -----
 դ. Դեղնուցը` -----
- 3-Կարմիր գոյնով ներկուած հաւկիթը կը նշանակէ թէ՝**

- 4-14 Հարցումներուն համար .**
Հետեւեալ դէպքերը Ծաղկազարդէն մինչեւ Սուրբ Զատիկ ընթացքին ո՞ր օրը տեղի ունեցան:
- 4-Յիսուս մաքրագործեց Տաճարը աւագ** ----- օրը:
- 5-Այրին որ տաճարին մէջ իր ունեցած երկու լուման տուաւ աւագ** ----- օրը:
- 6-Յիսուս լացաւ Երուսաղէմի վրայ** -----
- 7-Յիսուս պատմեց տասը կոյսերուն առակը աւագ** ----- օրը:
- 8-Յուդա յանձն առաւ Յիսուսը մատնել աւագ** ----- օրը:
- 9-Զատկական ընթրիքը տեղի ունեցաւ աւագ** ----- օրը:
- 10-Աշակերտներուն ոտքերու լուացումը տեղի ունեցաւ աւագ** ----- օրը:
- 11-Պետրոսի ուրացումը տեղի ունեցաւ աւագ** ----- օրը:
- 12-Յիսուս աղօթեց Գեթսեմանիի պարտէզին մէջ աւագ** ----- օրը:
- 13-Յիսուս խաչուեցաւ աւագ** ----- օրը:
- 14-Երկինքը խաւրեցաւ երեք ժամ աւագ** ----- օրը:
- 15-Կիրակի օրերը Քրիստոսի յարութենէն առաջ կը կոչուէին՝** ----- :

Ապրիլ 24, 1915 - 2007



Ոգեկոչենք Մեծ Եղեռնի նահատակներուն
անման յիշատակը նաեւ՝

- Ապրելով Հայադրոշմ կեանք մը,
- Վառ պահելով Հայաստանեաց եկեղեցւու
տօներն ու ազգային աւանդութիւնները,
- Լսելով, մտիկ ընելով ու երգելով մեր
Հայանուագ շարականներն ու երգերը,
- Ամուր կառչած մնալով մեր Հայավայել բարի
բարքերուն ու սովորութիւններուն,
- Կարդալով ու կեանքի վերածելով մեր
Հայագրեալ Աստուածաշունչը
- Եւ մանաւանդ՝ ՍԻՐԵԼՈՎ Հայը

Ամբողջ տարուան ընթացքին:

**«Պիտի հանեմ ձեզ ձեր գերեզմաններէն .
կենդանութեան շունչ պիտի տամ, իմ հոգիս պիտի
տամ ձեզի, եւ ձեզի ձեր երկիրը պիտի
վերադարձնեմ:» Եզեկիէլ 37.14**

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

Երկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ համացանցի վրայ:
Այցելեցէ՛ք www.sourphagop.org հասցէն եւ ընտրեցէ՛ք Պարբերաթերթ
բաժանումը:

**Կիրակնօրեայ Դարոցը բաց է ամէն Կիրակի
ժամը 10:30 - 1:15**

Յաւելեալ տեղեկութիւններու համար կապ պահել, Տնօրէնին՝ Թորոս
Պապիկեանին հետ


Եմակ : director@sourphagop.org
Հեռ : (514) 956-1277

Մաշտոնի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ

Մայիս 2007
ԺԴ տարի- թիւ 9



Ապա տարաւ զանոնք մինչեւ Բեթանիա եւ ձեռքերը վեր բարձրացնելով օրինեց զանոնք։ Եւ մինչ կ'օրինէր, բաժնուեցաւ անցմէ, դէպի երկինք բարձրանալով։ Յիսուսի համբարձման մասին կարդա՛ էջ 4

Նուիրապետութիւն կը նշանակէ Եկեղեցւոյ ձեռնադրեալ պաշտօնէութեան զանազան աստիճաններն ու այդ աստիճաններու կարգը։ Եկեղեցական զանազան կարգերուն մասին կարդա՛ էջ 6-7

Եղբայրներ, մի զարմանաք երբ աշխարհը ձեզ ատէ։ Մենք գիտենք թէ մահին կեանքի անցած ենք. ապացոյց որ մեր եղբայրները կը սիրենք։ Ասէ Աստուած էջ 9

Սուրբ Խաչի երեւման տօնը Հայաստանեաց Եկեղեցւոյ խաչին նուիրուած չորս տօներէն մէկն է։ Տօնին մասին կարդա՛ էջ 5

«Մաշտոցի Արձագանգ»

**Հայաստանեալց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակօրեայ Դպրոցի
ամսաթերթ**

**Խմբագիր՝
Ծաղիկ Թորիկեան Պոյամեան**

**ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ.ի ներկայ եւ
նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ։ Այցելեցէ՛ք
www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՛ք Պարբերաթերթ բաժանումը**

**Հայաստանեալց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակօրեայ Դպրոցի
կամաւոր խմբակը**

Ուսուցիչներ՝
Վերժին Գիւղթանճեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխանճեան
Յասմիկ Նաճարեան
Գարող Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխեն Իշխանճեան
Յասմիկ Գանաճեան

Հուսանկարիչ՝
Նիկոլ Դանիելեան

Տնօրէն՝
Թորոս Պապիկեան

Այս թիւով . . .



Մայրերու մասին	Էջ 3
Համբարձում	Էջ 4
Երեւումն Սուրբ Խաչի	Էջ 5
Զան Գիլում	Էջ 5
Եկեղեցւոյ խորհուրդները, երկրորդ բաժին	Էջ 6-7-8
Ասէ Աստուած	Էջ 9
Մօր ձեռքերը	Էջ 10
Աստուածաշունչը մանուկներու համար .. .	Էջ 11-13
Եզակի գիրեր	Էջ 14
Ո՞րն է ճիշդ պատասխանը	Էջ 15-19
Կարճ լուրեր կիրակօրեայէն	Էջ 20

Խմբագրական

Մայրերու Մասին

Մայիս ամիսը, ինչպէս տարուան միւս բոլոր ամիսները, ճնիս է եկեղեցական, կրօնական, ազգային եւ ընդհանուր այլ տօնելի առիթներով։ Այս առիթներէն մէկը, այնպիսին է որ կարծես յատուկ օրուան մը չի կարօտիր յիշատակուելու ու գովաբանուելու համար, որովհետեւ ան արժանի կը նկատուի առօրեայ եւ մշտական յիշատակման։ այդ է Մայրերու օրը։

Պատահական ընթերցանութեան մը ընթացքին, վերջերս հանդիպեցայ նախադասութեան մը ըստ որուն «Աստուած մայրը ստեղծեց որովհետեւ ամէն տեղ նոյն ատեն անկարող էր գտնուիլ»։ Այս խօսքին մեկնաբանութիւնը ինքնին ամբողջական պատկեր մը կու տայ թէ որքան յարգի, սիրելի բայց նոյն ատեն որքան ծանր պարտականութիւն է դրուած մայրերու ուսերուն։

Մայրը միշտ եղած է բազմատեսակ պատասխանատուութիւններու դիմաց գտնուող այն անձը որուն վստահուած է տան մը, ընտանիքի մը ամբողջական առողջութիւնն ու յաջողութիւնը։ Այս գաղափարը պէտք չէ մեկնաբանել այնպէս որ կարծուի թէ մայրը առանձին կը յաջողի ընտանիքը կանքուն պահել, այլ պարզապէս պէտք է զայն հասկնալ այն իմաստով թէ մայրը ընտանիքին հիմն է ու զայն ուղիղ պահող ողնայարը։

Մօր մը ընկերային, տնտեսական, դաստիարակչական այլ պարտաւորութիւններու շարքին կայ հատ մը, որ միւս բոլորէն տարբեր է եւ իւրայատուկ, որովհետեւ յատկապէս կարեւոր ու նոյն ատեն դժուար է։ այդ է երեխաններուն հոգեւոր եւ բարոյական դաստիարակչութեան պատասխանատուութիւնը։

Մանուկներուն հոգեւոր –եւ ոչ կրօնական– դաստիարակութեան առաջին կարգի միջնորդն է Մայրը։ Մայրը, իբր Աստուածոյ պատճէն Շիրեղէն այս աշխարհի վրայ, սէր է, համբերութիւն է, կամեցողութիւն է ու լայն սիրտ։ Այս բոլորը ցուցաբերելով իր զաւակներուն հանդէպ, մայրը կը հանդիսանայ ինքնաբերաբար իբր անոնց հոգեւոր ու բարոյական դաստիարակութեան միջոցը։ Նկատի առնելով որ այս դաստիարակութիւնը գիտութեամբ ու վարժութիւններով ձեռք չի ձգուիր, անոր տիրանալու միակ ձեւը կը մնայ ապրուած կեանքի օրինակը ու գործօն կերպով յալտնուող առօրեայ վարքը։ Այս ծանր ու դժուար աշխատանքը կը հենի մօր մը ուսերուն։ Մայրը իր սէրով ու գուրգուրանքով սիրել ու գուրգուրալ պիտի սորվեցնէ իր զաւակներուն։ Մայրը իր համբերութեամբ համբերել պիտի սորվեցնէ իր զաւակներուն։ Մայրը, իր առաքինի կենցաղով, այդ անուան արժանի «մարդ» պիտի կերտէ ու կազմարէ իր յարկէն ներս։

Մօր մը վերագրուած
պատասխանատուութիւնը ծանր է ու լուրջ։ Անոր աշխատանքը անվերջ ընթացք մըն է որ շատ թիշ դադար ունի կամ բնաւ։ Այս իսկ պատճառաւ անոր նուիրուած տօնը յարգի է եւ յատուկ ու անկասկած արժանի յիշատակման ու ցնծանքի։

Շնորհաւոր Մայրերու օր ձեզի, բոլոր մայրեր։

Մայիս ամսուան տօնացոյց

- Կիր. Մայիս 6: Երեւումն Սուրբ Խաչի
- Կիր. Մայիս 13: Մայրերու օր
- Եշ. Մայիս 17: Համբարձում
- Կիր. Մայիս 20: Երկրորդ ծաղկազարդ
- Կիր. Մայիս 27: Հոգեգալուստ
- Բշ. Մայիս 28: Հայաստանի Ա. հանրապետութեան տարեդարձ


Յիսուսի համբարձումը

Քրիստոս իր հրաշափառ յարութեաէն եւոք քառասուն օրեր շարունակ երեւաւ իր աշակերտներուն: Անոնց հետ խօսեցաւ Աստուծոյ արքայութեան մասին:

Քառասուներորդ օրը, վերջին անգամ այցելելով անոնց, անգամ մը եւս բացատրեց Աստուծոյ տնօրինութիւնները, այսինքն Աստուծոյ մարդոց համար վերապահած փրկարար ծրագիրը:

«Ապա տարաւ զանոնք մինչեւ Բեթանիա եւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ օրինեց զանոնք: Եւ մինչ կ'օրինէր, բաժնուեցաւ անոցմէ, դէպի երկինք բարձրանալով: Անոնք երկրագեցին Յիսուսի եւ մեծ ուրախութեամբ վերադարձան Երուսաղէմ: Ամէն օր տաճարին մէջ էին՝ գովելով ու օրինաբանելով զԱստուած:»

Ղուկաս 24. 50-53



«Տէր Յիսուս աշակերտներուն հետ խօսելէ եսոք երկինք համբարձաւ եւ Հօրը աջ կողմը նստաւ: Խակ անոնք աշխարհի բոյոր կողմերը երթալով՝ Տիրոջ գործակցութեամբ Աւետարանը կը բարոգէին եւ իրենց քարոզութիւնը կը հաստատուէր իրենց տրուած բոյոր նշաններով:»

Մարկոս 16.19-20

Սուրբ Հոգիին գալուստը

«Երբ Պեճտէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հովի մը սովորին աէս ծայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը, ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք տեսան հրեղէն լեզուներ, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:»

Առաքեալներու գործերը 2.1-4

Երեւումն Սուրբ Խաչի



Սուրբ Խաչի երեւման տօնը Հայաստանեաց եկեղեցւոյ խաչին նուիրուած չորս տօներէն մէկն է:

Ան պատահած է Երուսաղէմի մէջ, 351 թուին, հոգեգալստեան առաւօտ կանուխ:

Այդ թուականին, Կիւրեղ Եպիսկոպոս պատրիարք էր Երուսաղէմի: Մայիս ճի առաւօտեան, Լուսաւոր խաչ մը արեւի նման շողարձակ կը կանգնի երկնքին մէջ, ծիժենեաց լերան եւ Գողգոթային միջեւ: Այս երեւոյթը կը տեւէ բաւական երկար ժամանակ, ու տեսանելի կը դառնայ Երուսաղէմի ժողովուրդին կողմէ, որոնք հիացումով կը դիտեն Խաչը: Ահա այս դէպքն է որ յիշատակուրեան արժանի կը դառնայ ու այնպէս ինչպէս օրին Երուսաղէմի ժողովուրդը խաչի երեւման առիթով եկեղեցի փոթաց Աստուծոյ փառք յայտնելու, նոյնպէս ալ սովորութիւն եղաւ Խաչի երեւման առթիւ հաստատել եկեղեցական արարողութիւն:

Խաչի նուիրուած միւս երեք տօներն են Գիւտ խաչի, Վարագայ Սուրբ Խաչի եւ Խաչվերաց:

Զան Գիւլում

Մայիս ամսուան ընթացքին,
Հայաստանեաց եկեղեցին կը յիշատակէ Յիսուսի
Համբարձման տօնը:

Համբարձման օրը ժողովրդական լեզուին մէջ կը կոչուի նաեւ «Վիճակ»: Աւանդութիւն դարձած է հին ժամանակաշրջաններէն ի վեր որ նոյն օրը, աղջիկներ, գոյնօգոյն զգերտներ հագած, յատկապէս կարմիր ու կանաչ, բացօդեալ, դաշտերուն մէջ կը կազմակերպէին պտղու եւ վիճակախաղ: Հայաստանի որոշ գաւառներու մէջ Համբարձման օրը կը կոչուէր նաեւ «Զան Գիւլում»-ի օր, որովհետեւ վիճակի համար պատրաստուած տաղերը կը վերջանային «Զան Գիւլում»-ով:

Ժամանակին, մեծ տօնախմբութիւն էր Համբարձման «Զան Գիւլում»ը: Անոր նախընթաց օրը, աղջիկները դաշտերէն կը ժողվէին ծաղիկներ որոնցմով փունջեր կը կազմէին: Այդ փունջերէն ամենէն մեծը կը կոչուէր Ծաղկամէր: Ապա, ծաղկամանի մը մէջ շուր կը լեցնէին եւ իրաքնաշխիր աղջիկ անոր մէջ իր առարկաներէն մէկը կը նետէր, ինչպէս օղ մը, մատանի մը, կամ այց: Միւս օրը, Համբարձման օրը, կը նստէին բոլորակը ծաղկամանին շուրջ ու վիճակ կը քաշէին: Կը կարդացուէր մէկական տուն ժողովրդական երգերէ կամ խօսքերը, որոնք ընդհանրապէս «Զան գիւլում, Զան, Զան»-ով կ'աւարտէին: Ապա, տան ամեննէն փոքր աղջնակը, որուն երեսը քողով մը ծածկուած կ'ըլլար, ծաղկամանին մէջէն կը քաշէր առարկայ մը: Այդ առարկային տիրոջ կը վերագրուէր նախապէս կարդացուած կամ արտասանուած վիճակին բովանդակութիւնը: Այս արարողութիւնը կը կոչուէր «ծաղիկ գովել»:

*Պլառը ծառին վրայ
Իր եարը թառին վրայ
Անուշ անուշ երգեցին
Մինչեւ եարիս քունը գայ:*

*Պատուհանս կամար է,
Այս տղան ինձ յարմար է.
Եօթ աղրիրէ շուր բերի,
Մարէ՛, ոխտս կատարէ:*

Եկեղեցւոյ խորհուրդները Զեռնադրութիւն (2)

Մարտ ամսուան թիւով մենք ծանօթացանք Զեռնադրութեան խորհուրդին ու անոր ընդմէջն եկեղեցւոյ ծառայութեան նուիրուած զանազան կարգի պաշտօննեաներու անուններուն:
Մայիս ամսուան այս թիւով կը ծանօթանանք եկեղեցւոյ իրաքանչիր պաշտօննայի դերին ու անոնց յարակից տեղեկութիւններու: **Այլ խօսքով մենք կը ծանօթանանք եկեղեցւոյ նուիրապետութեան:**

Ի՞՞նչ կը նշանակէ Նուիրապետութիւն

Նուիրապետութիւն կը նշանակէ եկեղեցւոյ ձեռնադրեալ պաշտօննեութեան զանազան աստիճաններն ու այդ աստիճաններու կարգը:

Քրիստոսի եկեղեցին իր սկզբնական շրջաններուն կը հաշուէր նուիրապետական երեք աստիճաններ: Անոնք էին Սարկաւագութիւն, Երիցութիւն կամ քահանայութիւն եւ Եպիսկոպոսութիւն:

Սակայն դարերու ընթացքին եկեղեցիի եւ հաւատացեալներու թիւի ընդարձակման զուգահեռ կարիք ստեղծուեցաւ պաշտօններու յաւելեալ բաժանումը: Այսպիսով, եկեղեցւոյ հայրապետները հաստատեցին ինը նուիրապետական կարգեր.-.

Առաջին չորս աստիճաններն են Դոնապանութիւն, ընթերցողութիւն, երդմնեցուցչութիւն եւ շահմնկալութիւն: Այս չորս աստիճանները կը կոչուին դպրութեան աստիճաններ:

Դայիրներու գլխաւոր պաշտօնը կը մնայ երգել պատարագի ընթացքին: Դայիրներուն յատուկ զգեստը կը կոչուի Շապիկ:



Սարկաւագի պաշտօնն է սպասարկել Սուրբ սեղանին խնկարկելով, Աւետարան կարդալով եւ հաղորդութեան սկիհը վերաբերելով։ Սարկաւագները իրենց շապիկներուն վրայէն, իրենց ձախ ուսէն ուրար հագած կ'ըլլան։

Սարկաւագներու օգնականները կը կոչուին կիսասարկաւագներ։

Եկեղեցական ճուիրապետութեան եօթերորդ կարգն է Քահանայի աստիճանը։ Քահանային պարտականութիւնն է մատակարարել Եկեղեցւոյ բոլոր խորհուրդները ի բացառեալ ձեռնադրութենէն եւ միունօրինութենէն։ Պատարագիչ Քահանան հետեւեալ զգեստները կը հագնի-- Շապիկ, Փորուրար, Գօտի, Շուրջառ, Վակաս, Բազպան, Սաղաւարտ։

Շառայութեան որոշ շրջանէ մը ետք, Քահանան կրնայ ստանալ Աւագ Քահանայ աստիճանը։

Աբեղայ կը կոչուի կուսակրօն քահանան։ Աբեղաները կը կրեն վեղար ի նշան աշխարհուրացութեան եւ պարտին ապրիլ վանքերու մէջ։

Աստիճանի ստացումով Աբեղան կ'ըլլայ վարդապետ եւ ապա ծայրագոյն վարդապետ եւ ստանալով գաւազան կրելու իշխանութիւն, կը զատորոշուի աբեղայէն եւ քահանայէն։ Վանքէն դուրս կը կոչուի ժողովուրդի ծառայութեան քարոզական եւ առաջնորդական պաշտօններով։

Եպիսկոպոս կը նշանակէ տեսուչ։ Եպիսկոպոսն է որ կը կատարէ բոլոր ձեռնադրութիւնները եւ եպիսկոպոսներն են որ կը ձեռնադրեն Կաթողիկոս։ Եպիսկոպոս մը կրնայ ըլլալ Արքեպիսկոպոս որոշ ժամանակ մը ետք։

Կաթողիկոսը կ'ընտրուի հայաստանեաց Եկեղեցւոյ գաւակներու ներկայացուցչական ընդհանրական ձայնով։ Ունինք երկու

կաթողիկոսութիւններ։

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն կեդրոնատեղին է Անթիլիաս եւ Ամենայն Հայոց կաթողիկոսութիւն որուն կեդրոնատեղին է Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը։ Կաթողիկոսը կը կատարէ Եպիսկոպոսական ձեռնադրութիւնները եւ Սուրբ Միունի օրինութիւնը։

Ողջոյններ

Երբ հանդիպինք Աբեղային, պարտինք մօտենալ եւ աշը համբուրել ըսելով «Աստուած Օգնական Հայր Սուրբ» որուն կը պատասխանէ «Աստուած Պահապան»։


Երբ հանդիպինք քահանային պարտինք մօտենալ եւ աշը համբուրել ըսելով «Օրինեցեք Տէր Հայր» որուն կը պատասխանէ «Աստուած Օրինէ»։



**Քահանայական Սաղաւարտ 1765 թ.
Վաղարշապատ**



**17րդ դարու Եպիսկոպոսական Խոյր
Մ. Էջմիածնի գանձատուն**



Սուրբ Էջմիածնի Մայր
Աթոռը, Ամենայն Հայոց
կաթողիկոսութեան
կեդրոնատեղին



Մեծի Տաճա Կիլիկիոյ
Հայոց կաթողիկոսութեան
կեդրոնատեղին՝
Անթիլիսս, Լիբանան

Ասէ Աստուած . . .

Քրիստոնեային կոչումը

Քրիստոս իր աստուածային օրորոթեամբ մեզի պարգեւեց ամէն ինչ որ անհրաժեշտ է աստուածաշտ կեանքի մը համար, մեզի ճանշցնելով ան՝ որ իր փառքովն ու զօրութեամբը մեզ իրեն կանչեց։ Անիկա թանկագին ու մեծամեծ խոստումներ տուաւ մեզի, որպէսզի անոնցմով հաղորդակից ըլլանք աստուածային բնութեան, ձերբազատուելով աշխարհի մէջ տիրող կորստաբեր ցանկութիւններէն։ Ասոր համար ալ, ամէն ջանք ըրէք, որ ձեր հաւատքով առաքինութիւն ձեռք բերէք, առաքինութեամբ՝ գիտութիւն, գիտութեամբ՝ ժուժկալութիւն, ժուժկալութեամբ՝ աստուծպաշտութիւն, աստուածպաշտութեամբ՝ եղբայրսիրութիւն, եղբայրսիրութեամբ՝ սէր։ Եթէ այս առաքինութիւնները ունենաք, եւ ունենաք միշտ աւելիով, վստահ եղէք՝ որ մեր Տէր Յիսուսի գիտութեամբը կը լեցուիք եւ անգործ ու անպտուղ չէք մնար։ Իսկ ով որ այս առաքինութիւնները չունի՝ միտքով կոյր է ու կարճատես, որովհետեւ մոռցած է իր անցեալի մեղքերէն սրբուած ըլլալը։

Հետեւաբար, եղբայրներ, ջանացէք աւելիո՞վ կառչիլ այն կոչումին որուն ձեզ հրաիրեց Աստուած՝ ընտրելով ձեզ։ Եթէ այդպէս վարուիք՝ բնաւ մեղքի մէջ չէք իջնար, եւ այդպիսով ձեզի լայնօրէն իրաւասութիւն կը տրուի մտնելու մեր Տիրոջ եւ փրկչին՝ Յիսուս Քրիստոսի յափառեական արքայութիւնը։

Բ. Պետ. 1.3-11

Սիրենք իրար՝ գործով եւ ո՛չ խօսքով

Պատուիրանը, որ սկիզբէն իսկ լսեցիք, սա է՝ որ սիրենք իրար։ Հետեւաբար ըլլանք Կայէնին պէս, որ Զարին օրինակին հետեւելով՝ իր եղբայրը սպաննեց։ Եւ ինչո՞ւ սպաննեց. որովհետո իր գործերը չար էին, մինչ եղբօր գործերը՝ բարի։

Եղբայրնե՞ր, մի՛ զարմանաք երբ աշխարհը ձեզ ատէ։ Մենք գիտենք՝ թէ մասին կեանքի անցած ենք. ապացոյց՝ որ մեր եղբայրները կը սիրենք։ Ով որ իր եղբայրը չի սիրեր՝ մահուան ենթակայ կը մնայ։ Ով որ իր եղբայրը կ'ատէ, մարդասպան մըն է. եւ գիտէք թէ ոեւէ մարդասպան յափառեական կեանքը չունի իր մէջ։

Մենք սէրը ճանշցանք անով՝ որ Քրիստոս իր կեանքը զոհեց մեզի համար։ Հետեւաբար մե՛նք եւս մեր կեանքը պէտք է զոհենք մեր եղբայրներուն համար։ Այն մարդը որ Շիվական ամէն բարիք ունի, եւ տեսնելով հարդերձ թէ իր մէկ եղբայրը օգնութեան կարօտ է՝ իր գութը չի շարժիր, ի՞նչպէս կրնայ ըսել՝ թէ Աստուածոյ սէրը ունի իր մէջ։

Որդեակնե՞ր, մեր սէրը միայն խօսքով ու լեզուվ թող ըլլալի, այլ՝ գործով արտայալտուած ճշմարիտ սէր։ Ահա այսպէ՞ս կը գիտնանք՝ թէ ճշմարտութեան հետեւող կը մնանք։ Այսպէս նաեւ մեր սիրտերը վստահութիւն կ'ունենան Աստուածոյ առջեւ կանգնելու։ Նոյնիսկ եթէ մեր խիղճը ունի յանցանքով մեզ մեղադրէ, չմոռնանք՝ որ Աստուած մեր խիղճէն աւելի մեծ է եւ ամէն բան գիտէ։

Ա. Յովհ. 3.11-20

Մօր ձեռքերը

Այս ձեռքերը՝ մօր ձեռքերը,
Շինաւորց ու նոր ձեռքերը...
Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Պաակուելիս ո՞նց են պարել այս ձեռքերը՝
Ի՞նչ նազանքով,
Երազանքով:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Լոյսը մինչեւ լոյս չեն մարել այս ձեռքերը,
Առաջնեկն է երբ որ ծնուել,
Նրա արդար կաթով սնուել:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Զրկա՞նք կրել, հո՞գս են տարել այս ձեռքերը,
Ծով լուրթեա՞մբ,
Համբերութեամբ:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Երկինք պարզուած սիւն են դարձել այս ձեռքերը՝
Որ չփլուի իր տաճ սիւնը՝
Որդին կոռուից դառնայ տունը:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Մինչեւ տատի ձեռք են դարձել այս ձեռքերը,
Այս ձեռքերը՝ ուժը հատած,
Բայց թոռան հետ նոր ուժ գտած...
Քար են շրջել, սար են շարժել այս ձեռքերը...
Ինչե՞ր, ինչե՞ր, ինչե՞ր շարժեն այս ձեռքերը՝
Նուրբ ձեռքերը,
Սուրբ ձեռքերը:

Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար
Մեզ աշխարհում ծնած, սնած,
Մեզ աշխարհում շահած, պահած,
Մեզնից երբեք չկշտացած,
Փոշի սրբող, լուացք անող,
Անվերջ դատող, անվերջ բանող,
Այս ձեռքերը.
Թող որ ճաքած ու կոշտացած,
Բայց մեզ համար մետաքսի պէս
Խա՞ս ձեռքերը...

Պարոյր Սեւակ




Գիտէի՞ր թէ

- Հայաստանի Հանրապետութեան Զինանշանին կեդրոնը Արարատ լեռն է որուն վրայ կը հանգչի Նոյեան Տապանը :
- Հայերէնը Հայաստանի պաշտօնական լեզու հոչակուեցաւ Դեկտեմբեր 1919 ին:
- Անկախ Հայաստանի ընթացքին վերջին դաշնագիրը՝ Սեւի Դաշնագիրը, ստորագրուեցաւ 10 Օգոստոս 1920 ին:

Աստուածաշունչը մանուկներու համար


Կորսուած ոչխարը

Հովիւ մը 100 ոչխար ունէր։ Ամէն օր ան իր ոչխարները արածելու կը տանէր լեռներուն մէջ, իսկ ամէն իրիկուն զանոնք կը հաշուէր վստահ ըլլալու համար որ բոլորը վերադարձած են։



Իրիկուն մը ան կ'անդրադառնայ որ մէկ ոչխար կը պակսէր։

Ան կը մտածէ թէ ի՞նչ պէտք էր ընել, ինչպէս բոլոր մնացած ոչխարները առանձին ձգել։



**Սակայն կը որոշէ
մնացած 99
ոչխարները ձգել եւ
երթալ կորսուած
ոչխարը փնտռելու:**

**Հովհիւը կորսուած ոչխարը
կը փնտռէ մինչեւ որ
գտնէ զայն, ապա
ուրախութեամբ կը
վերադառնայ իր հօտին
մօտ:**



**Երբ տուն կը
հասնի, մեծ
հրաւեր կը սարքէ
եւ ընկերները
հրաւիրելով
կ'ըսէ.- «Ոչխարս
կորսուած էր եւ
գտնուեցաւ»:**

**Միւս բոլորը ձգելու
համար պէտք է
կորսուածը շատ
անուշիկ ոչխար մը
եղած ըլլայ:**

**Ոչ անպայման, այս
հովիւր իր բոլոր
ոչխարները կը սիրէ
նոյնիսկ
ամէնապզտիկը:**



**Յիսուս ինչո՞ւ կը
պատմէ կորսուած
ոչխարի մը մասին:**

**Աստուած մեզ կը սիրէ
ինչպէս հովիւր կը սիրէ
իր ոչխարը**



**Ի՞նչ ըսել ուզեց Յիսուս այս
պատմութեան աւարտին:**

**Հովիւր ուրախ է
որովհետեւ վերագտաւ
իր ոչխարը:
Նոյնակա ալ Աստուած
մեզ կը փնտոէ երբ իրմէ
հեռու ենք, եւ Ան ուրախ
է երբ մեզ կը վերագտնէ:**



Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

դ	ե	թ	գ	ե	թ	ա	լ	զ
ը	զ	ե	ա	դ	է	թ	թ	գ
գ	թ	ա	թ	լ	զ	է	դ	ե
է	լ	զ	դ	ա	զ	ե	թ	թ
թ	ե	գ	է	թ	լ	զ	ա	դ
թ	ա	դ	թ	զ	ե	լ	գ	է
զ	դ	թ	ե	գ	ա	թ	է	լ
ե	գ	է	լ	թ	թ	դ	զ	ա
ա	թ	լ	զ	է	դ	գ	ե	թ

Նախորդ «Եզակի գիրեր» ուն
լուծումը

թ		զ			բ		
	թ			լ	գ		դ
լ	գ				դ		
դ				թ	լ	թ	
	է					լ	
	թ	ա	զ				ե
ա		թ		է		զ	
	լ			թ		ա	

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, թ, զ, դ, ե, գ, է, լ, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Ո՞ր է ճիշդ պատասխանը

Ապրիլ ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն

Մարիամ, Մարիամը, երկրաշարժ,
հրեշտակը, քարը, նատաւ, սարսափեցան,
մի՛ վախնաք, խաչուած, յարութիւն, լսէք,
առաջ, տեսէք

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. խոնարհութեան
2. ա. Ս. հաղորդութիւնը
3. թ. Պետրոս
4. դ. կ'աղօթէք
5. յարութիւնը, հաւատայ, ապրի
6. դ. Կարմիր Կիրակի
7. Անոնք որոնք լապտեր եւ պահեստի ձէթ
առին
8. ա. Աւագ Հինգշաբթի
9. ա. Աւագ Հինգշաբթի
10. թ. Աւագ Ուրբաթ

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ
2. ա. Տիրոջ մատնութեան, թ. Վերշին
ընթրիք եւ ոտնլուայ
3. ա. Յիսուսի չարչարանքներուն,

խաչելութեան եւ թաղման: թ. Ճրագալոյց

4. ա. արաշագործութեան թ. 10 կուսանաց
5. ա. 5
6. մարմինս, արիւնս
7. ա. 40 օր թ. Հինգշաբթի, Մայիս 17
8. ա. Կիրակի, թ. Մայիս 27
9. 92
10. 29

Երկրորդականի անկիւն

1. ա. Նոր թ. Կանաչ, գ. Կարմիր
2. ա. Երկինքը թ.օդը, գ.ծովը դ.Ցամաքը
3. Յիսուս խաչուեցաւ ամբողջ աշխարհին
համար
4. Երկուշաբթի 5. Երեքշաբթի 6. Կիրակի
7. Երեքշաբթի 8. Չորեքշաբթի, 9.
Հինգշաբթի 10. Հինգշաբթի 11.Հինգշաբթի
12.Հինգշաբթի 13. Ուրբաթ, 14. Ուրբաթ, 15.

Մէկշաբթի

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Ապրիլ ամսուան մասնակցողները

Սուրբ Յակոբ Կիրակօրեալ Դպրոց

Մանկապարտէզ

Հրակ Պանքեան, Սեւակ Թեհինեան, Տանիէլ Տօնապետեան, Լորա Տօնապետեան, Լիլի Զինչինեան, Քրիստինա Ակրեան, Ժիվի Քէօշկերեան, Յակոբ Գիւպթաննեան, Մելեքեան Ալիս, Մելեքեան Սահակ, Անթապի Ցոլեր, Նասոյեան Անդրանիկ Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Փաթիլ Կարապետեան, Քրիաթոֆըր Արմութլու, Նշան Կիրակոսեան, Արա Միրզոյեան, Սեւակ Դափթեան, Ալիք Գապաքեան, Դանիէլ Ակրեան, Միեր Պանքեան, Խշխչեան Ռիթա, Կրէս Նարեկեան, Կարինէ Կարապետեան, Քարինա Քիւփելեան, Յակոբ Զինչինեան, Հրակ Քիւփելեան, :

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արազ Գիւպթաննեան, Շեսիքա Մաթոսեան, Արին Անթապի, Սերժ Դափթեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գէորգ Պոլիքեան, Զոհրապ Կարապետեան, Ալեք Կարապետեան, Միեր Մաթոսեան, Նանոր Քիւփելեան, Ռոզալին Զինչինեան, Հրայր Մաթոսեան, Մարիա Դանիէլեան, Լորի Զինչինեան

Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Կասիա Արմութլու, Դալար Գիւպթաննեան, Շողիկ Թեհինեան

Երկրորդականի անկիւն

Թամար Պոլիքեան, Քրիստինա Կարապետեան, Արի Միրզաքեան, Սեդրակ Մամիրոյեան, Հրակ Նարեկեան, Անի Մելեքեան, Լորա Սարիմանուկեան

Սուրբ Յակոբ Ազգային Վարժարան

Ծաղիկ Դասարան

Անսխալ պատասխանողներ

Արազ Աղպապեան

Վարդգէս Եւ Աստղիկ Սարաֆեան Նախակրթարան

Դ. դասարանի Մասնակցողներ

Արփի Շերքեցեան, Միեր Շարաշեան, Մելիսա Պետրոս, Վանէսա Փիլիկեան, Գրիստիան

Տիապէ, Թովմաս Զաքոր, Լորի Չուխամեան, Ալեքսանտր Զաքեան, Գարին Տանաօլլեան,

Սառա Թէրզեան, Դամիա Ժօննէթ, Արեգ Գուշեան, Արա Սոպանեան, Լորի Չուպոյեան,

Սանտրա Թիւֆէնքեան, Սեւան Յուսիկեան, Ալինա Մարտիրոս, Արթիւր Պէքարեան, Ալեք Թոպի, Շանթ Ղազեկեան, Ռուպինա

Տէմիքեան, Արամ Պարթեւեան, Աւետիս

Թիւֆէնքեան, Ատրինա Մուրատեան, Արամ

Անասալ, Դինա Կարապետեան, Սիրվարդ

Սապաղեան, Թամար Մերտիսանեան, Լինէթ Խորաչէլեան, Սեւան Մելեքեան, Սանտրա

Կիվլիմեան, Բիթըր Սարգիս, Սերենա

Քիվլիքեան, Նաթալի Հայրապետեան,

Մարիամ Մկրտիչեան, Տանիէլ Զիէլուրովսի

Անսխալ պատասխանողներ

Շողիկ Թեհինեան, Ռուբէն Շերեան, Ազնիւ

Աղպապեան, Ալեք Կարապետեան

Ե. Դասարանի Մասնակցողներ

Տիրան Ամիկեան, Ճորժ Գալլողլեան, Ալիք

Կարապետեան, Լորէն Մանուկեան,

Մարինա Սաղըրեան, Դաւիթ Աթոլիկեան,

Ժագ Զարֆանեան, Նարէ Մարկոսեան,

Ճէսիքը Եղինանեան, Ռիթա Գասպարեան,

Փաթոթ Պազարպաշեան, Նայիրի Թաշեան,

Էտի Տէտէեան, Սեւանա Օլիվիէ, Գարոլին

Գորգեճեան, Էրիք Ջասարեան, Քրիս

Զաքընեան, Յովսէկ Կիւեան, Աբրահամ

Թանուսեան, Արեգ Համբարձումեան, Ժագ-

Սիօն Գասպարեան, Էլի Գույումճեան, Արի

Թորոսեան, Սերոր Թաշեան, Դալար

Գիւպթաննեան, Անուշ Ներսէսեան

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Թաշեան, Գրիգոր Պալապանեան,

Զօհրապ Շահինեան, Արի Վարժապետեան,

Դուկն Տօնապետեան, Թալի Բակլայեան,

Շանթալ Թորոսեան, Սարին Պեզճեան, Նելլի

Օհաննեսեան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն**



Ամբողջացո՞ւր ըստ Ղուկաս 24: 50-53 ի
 օրհնեց, երկինք, երկրպագեցին, Երուսաղեմ,
 զԱստուած, Բեթանիա, բաժնուեցաւ
 Յիսուսի համբարձումը այս տարի Մայիս ----- ին է:

Ապա տարաւ զանոնք մինչեւ ----- եւ ձեռքերը
 վեր բարձրացնելով' ----- զանոնք: Եւ մինչ
 կ'օրհնէր, ----- անոնցմէ, դէպի
 ----- բարձրանալով:

Անոնք ----- Յիսուսի եւ մեծ ուրախութեամբ
 վերադարձան ----- : Ամէն օր տաճարին
 մէջ էին՝ գովելով ու օրհնաբանելով ----- :

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

- 1.- Ի՞նչ կը կոչուի Յիսուսի
համբարձումին յաջորդող Կիրակին: 1
ա.- Բ. Ծաղկազարդ
բ.- Ծաղկազարդ
գ.- Զատիկ
դ.- Կրկնազատիկ

- 2.- Յիսուս իր յարութենէն քանի՞օր
ետք համբարձաւ:

- ա.- 3
բ.- 7
գ.- 30
դ.- 40

- 3.- Յիսուսի Համբարձումը շաբթուան
ո՞ր օրը տեղի ունեցաւ:

- ա.- Հինգշաբթի
բ.- Երկուշաբթի
գ.- Երեքշաբթի
դ.- Չորեքշաբթի

- 4.- Այս տարի ե՞րբ է Համբարձումը
Մայիս ---:

- 5.- Հոգեգալուստը կը յաջորդէ
Համբարձումին:

- ա. Շաբթուան ո՞ր օրը Հոգեգալուստ
կ'ըլլայ: -----

- բ. Այս տարի ե՞րբ է Հոգեգալուստը:
Մայիս ---:

6. Այս տարի Մայիս 6 ին ի՞նչ
տօնեցինք:
ա.- Խաչվերաց
բ.- Երեւումն Սուրբ Խաչի
գ.- Գիւտ Խաչի
դ.- Վարագայ Խաչ:



7. Վերի նկարին մէջ գծիկով մը նշէ
Ակն Խաչին կամ Կեդրոնը

8. Վերի նկարին մէջ գծիկով մը նշէ
Խաչին Թագը

9. Վերի նկարին մէջ գծիկով մը նշէ
Խաչին Բունը

10. Վերի նկարին մէջ գծիկով մը նշէ
Խաչին Աշ եւ Զախ կողմերը

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն

1- Ս. Զատիկին օրը հաշուելով առաջին օր, Հոգեգալուստը՝ կամ Պենտեկոստէն Յիսուսի յարութենէնք քանի՞ օր ետք տեղի ունեցաւ:

- ա- 3
- բ- 40
- գ- 50
- դ- 8

2- Չորս Աւետարաններէն ո՞ր երկութին մէջ կը կարդանք Յիսուսի համբարձումին մասին:

Աւետարան ըստ -----

Աւետարան ըստ -----

3. Աստուածաշունչի ո՞ր գիրքին մէջ կը կարդանք Հոգեգալուստին մասին:

4. ա. Ինչպէ՞ս կ'ողջունենք Տէր Հայրը:

բ. Տէր Հայրը ինչպէ՞ս կը պատասխանէ:

5. ա. Ինչպէ՞ս կ'ողջունենք Սրբազնը:

բ. Սրբազնը ինչպէ՞ս կը պատասխանէ:

6. Ո՞վ կը կատարէ Սուլը Միւռոնի օրինութիւնը:

- ա- Եպիսկոպոսը
- բ- Արքեպիսկոպոսը
- գ- Կաթողիկոսը
- դ- Ծայրագոյն Վարդապետը

7. Հին կտակարանի ո՞ր դէպքը մաս կը կազմէ Հայաստանի Հանրապետութեան զինանշանին:

8. Ո՞վ գրած է Առաքեալներուն Գործերը գիրքը:

- ա- Ս. Մատթէոս աւետարանից
- բ- Ս. Մարկոս աւետարանից
- գ- Ս. Ղուկաս աւետարանից
- դ- Ս. Յովհաննէս աւետարանից

9. Այս տարի Ս. Խաչի ո՞ր տօնը տօնեցինք Մայիս 6 ին:

10. Երկրորդ Ծաղկազարդը Համբարձումին յաջորդող Կիրակին է: Այս տարի ե՞րբ է Երկրորդ Ծաղկազարդը:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն**

1- Պենտեկոստէ որ թիւին կը բ- Փորուրար

համապատասխանէ:

ա- 5

բ- 40

գ- 50

դ- 10

գ- Սաղաւարտ

դ- Խոյր

**6. Ե՞րբ ստորագրուեցաւ Սեւրի
Դաշնագիրը:**

**2- Հոգեգալուստի օրը Սուրբ Հոգին
ի՞նչ կերպարանքով հանգչեցաւ
Առաքեալներուն վրայ:**

**3. Հոգեգալուստի օրը Առաքեալները
Սուրբ Հոգիով լեցուելէ ետք ի՞նչ
սկսան ընել:**

ա- Աղօթել

բ- Սաղմոս ըսել

գ- Երգել

**դ- Հոն հաւաքուած տարբեր
երկիրներէ եկած ժողովուրդներու
լեզուներով խօսիլ:**

**4. ա. Ս. Միւռոնը իւրաքանչիւր
քանի՞ տարին անգամ մը կը
պատրաստուի եւ կ'օրինուի:**

**բ. Ե՞րբ է Կիլիկիոյ
կաթողիկոսութեան յաջորդ
Միւռոնօրինեքը:**

7. Ամբողջացո՞ւր ըստ Ա.

Յովհաննեսի 3.16 ի:

Մենք սէրը ճանչցանք անով՝ որ

մեզի համար:

**8. Ամբողջացո՞ւր պատարագիչ
քահանային զգեստները:**

Ը-----

Գ-----

Ծ-----

Վ-----

Բ-----

Ս-----

**9. Ո՞ր երկու Աւետարաններուն մէջ կը
կարդանք կորսուած ոչխարին առակը:**

ա. -----

բ. -----

**10. Ո՞ր Աւետարանին մէջ կը
կարդանք կորսուած ոչխարին առակը:**

5. Գտի՞ր անտեղի զգեստը:

ա- Գոսի

Կարճ լուրեր Կիրակնօրեայէն

Կիրակնօրեայ Դպրոցի Ամավերջի Հանդէս

Կիրակի **10** Յունիս կ. ե. ժամը **1:30** ին

Բաստրմաճեան Հանդիսարան

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

Աերկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ:

Այցելեցէ՞ք www.sourphagop.org հասցէն
եւ ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը:

2007ի առաջին 4 ամիսներուն

www.sourphagop.org ը

ընդունած է 22,776

այցելութիւններ

5,349 եզակի այցելուներէ

www.sourphagop.org ի հաշուեցոյց

2007 Յունուարէն Ապրիլ

Այցելութիւններ	22,776
Եզակի Այցելու	5,349
Այցի տեսողութիւն	1:49
Երկիրներ	86
Քաղաքներ	870
Բացուած Գրութիւններ (.pdf)	5,580

Մաշտոցի Արձագանգ

Զարկեր

Դիտուած էջեր

Ամբողջական Հաշուեցոյցը կը գտնուի www.sourphagop.org ի

վրայ:

Մաշտոցի Արձագանգ

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հաւատք | Կրօն | Եկեղեցի | Լեզու | Մշակոյթ



Տրդատ Գ., թագաւոր Հայոց, 301
թուականին Քրիստոնէութիւնը
հոչակեց իբրեւ պետական կրօն,
առիթ հանդիսացնելով որ Հայ
ժողովուրդը ըլլայ Քրիստոնէութիւնը
իբրեւ պետական կրօն ընդունած
առաջին ազգը: Հայաստանեաց
Եկեղեցին Տրդատ Թագաւորի անունը
այս տարի կը յիշատակէ Յունիս
30-ին

Քահանան Տէրունական աղօթքը արտասանելէ ետք
նախ կը կարդայ «Ողորմեա ինձ Աստուած» զղջումի
սաղմոսը ու կը խոստովանեցնէ հիւանդը: «Կարգ
Հիւանդաց» խորհուրդին մասին կարդա՛ էշ 4-5

Յունիս 2007
ԺԴ տարի- թիւ 10



12 առաքեալները Յիսուսի քարոզչութիւնն ու
Աստուծոյ փրկութեան պատգամը հասցուցին
համայն մարդկութեան: Հայաստանեաց Եկեղեցին
Քրիստոսի 12 առաքեալներուն եւ Պօղոս 13-րդ
առաքեալին տօնը կը յիշատակէ Յուլիս 7-ին:
Յունիս, Յուլիս եւ Օգոստոս ամիսներու տօնացոյցը տէ՛ս էշ 3

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի
ամսաթերթ

Խմբագիր՝
Շաղիկ Թորիկեան Պոյամեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ.ի ներկայ եւ
նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ։ Այցելեցէ՞ք
www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը

Հայաստանեալց Եկեղեցւու
Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի
կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝
Վերժին Գէպթանմեան
Վերա Թորոսեան
Թամար Գիզիրեան
Երան Լոշխանեան
Յասմիկ Նաճարեան
Գարոլ Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխեն Իշխանեան
Յասմիկ Գանաճեան

Հուսանկարիչ՝
Նիկոլ Դանիելեան

Տնօրէց՝
Թորոս Պապիկեան

Այս թիւով . . .



Յունիս, Յուլիս եւ Օգոստոս
ամիսներու տօնացոյց Էջ 3

Եկեղեցւոյ խորհուրդները՝
Կարգ հիւանդաց Էջ 4-5

Ասէ Աստուած Էջ 6

Աստուածաշունչը՝
մանուկներու համար Էջ 7-9

Եզակի գիրեր Էջ 10

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 11

Յունիս ամսուան տօնացոյց

- Յունիս 3: Յիշատակ Եղիա Մարգարէի
- Յունիս 4: Սուրբ Հոհիսիմեանց կոյսեր
- Յունիս 5: Սրբոց Գայանեաց կոյսեր
- Յունիս 9: Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ելն ի վիրապէն
- Յունիս 10: Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի
- Յունիս 16: Սուրբ Ներսէս Պարթևու Կաթողիկոս
- Յունիս 17: Հայրերու օր
- Յունիս 23: Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Յշխարներու գիւտը
- Յունիս 28: Սուրբ Սահակ եւ Մեսրոպ թարգմանիչներ
- Յունիս 30: Սուրբ Տրդատ թագաւոր եւ Աշխէն թագուհի



Յուլիս ամսուան տօնացոյց

- Յուլիս 7: Տասներկու առաքեալներ
Քրիստոսի եւ Պողոս տասներեքերորդ
առաքեալ
- Յուլիս 15: Տօն Պայծառակերպութեան
Տեառն մերոյ Յիշուսի Քրիստոսի-
Վարդավառ
- Յուլիս 21: Սուրբ Թադէոս առաքեալ եւ
Սուրբ Սանդուխտ կոյս

Օգոստոս ամսուան տօնացոյց

- Օգոստոս 4: Եփեսոսի սուրբ ժողովի 200
հայրապետացն
- Օգոստոս 11: Տօն Շողակաթի Սուրբ
Էջմիածնի
- Օգոստոս 12: Վերափոխումն Սուրբ
Աստուածածնի
- Օգոստոս 21: Սուրբ Յովակիմ եւ Աննա՝
ծնողք սուրբ Աստուածածնի

Եկեղեցւոյ խորհուրդները


Կարգ Հիւանդաց կամ Վերջին Օծում

Մայիս ամսուան թիւով մենք ծանօթացանք եկեղեցւոյ ձեռնադրեալ պաշտօնէութեան զանազան աստիճաններուն ու այդ աստիճաններու կարգին: Այլ խօսքով մենք ծանօթացանք եկեղեցւոյ նուիրապեսութեան: Յունիս ամսուան այս թիւով մենք կը ծանօթանանք Հայաստաննաց եկեղեցւոյ վերջին խորհուրդին՝ Կարգ հիւանդաններուն կամ Վերջին օծման:

« Զեզմէ մէկը նեղութեան մէջ՝ է՝ թող աղօթէ: Ուրախ տրամադրութեան մէջ՝ է՝ թող գոհաբանական երգ երգէ Աստուծոյ: Մէկը հիւանդացա՞ն՝ թող կանչէ եկեղեցւոյ երէցները, որպէսզի իր վրայ աղօթեն եւ իւղով օծեն զինք, Տիրոջ անունով: Եւ հաւատքով կատարուած աղօթքը պիտի բժշկէ հիւանդը: Տէրը զայն ոտքի պիտի հանէ եւ եթէ ոնէ մեղք գործած է՝ պիտի ներէ անոր:»

Այս խօսքերով կ'արտայայտուի Յակոբոս Առաքեալ իր ընդհանրական նամակին մէջ, ակնարկելով աղօթքի գօրութեան: Իսկապէս ալ, Յիսուս ի՞նք Խշխանութիւն տուաւ իր աշակերտներուն, հիւանդներուն վրայ ձեռք դնելու եւ Աստուծոյ անունով աղօթելու անոնց բժշկութեան համար:

Ահա այդպէս է որ Քրիստոս անձամբ հաստատեց մեր եկեղեցւոյ վերջին այս խորհուրդը՝ Կարգ հիւանդաց կամ վերջին օծումը:



«Կարգ հիւանդաց» կոչուած խորհուրդը արարողութիւն մըն է որ կը կատարուի հիւանդներուն վրայ ձեռք դնելով, աղօթելով անոնց համար եւ երբեմն ալ միւռնով օծելով : Այս արարողութեամբ հաւատացեալները կ'ըմբռնեն թէ Աստուած իր արդար ծառաներուն անկեղծ աղօթքները ընդունելով բժշկութիւն կը շնորհէ հաւատացեալ հիւանդին :



Ինչպէ՞ս կը կատարուի Կարգ հիւանդացի արարողութիւնը հայաստանեաց եկեղեցիէն ներս :

Քահանան Տէրունական աղօթքը արտասանելէ ետք նախ կը կարդայ «Ողորմեա ինձ Աստուած» զղջումի սաղմոսը ու կը խոստովանեցնէ հիւանդը :

Աւետարանէն կը կարդայ Յիսուսի կատարած բժշկութիւններէն հատուած մը ու ձեռքը հիւանդին վրայ դնելով կ'աղօթէ առ Աստուած որ բժշկութիւն շնորհէ եւ նոյն ատեն ներէ անոր մեղքերը : Ապա համբուրել կու տայ խաչն ու Աւետարանը : Արարողութեան լրումին, եթէ հիւանդը փափաք յայտնէ, կը հաղորդուի :

Գալով «Վերջին օծում» կոչուած խորհուրդին, ան ծանր ու մահամերձ հիւանդներուն միւռնով օծումն է : Այս խորհուրդին նշանակութիւնը հետեւեալն է .-

Սուրբ իսլով օծել կը նշանակէ Տիրոջ համար սրբել, մաքրել ու կճքել ալսպիսով հիւանդը արձակելով ու սրբելով իր մեղքերէն մահուան անկողնին վրայ :

Ասէ Աստուած...

Յանձնարարութիւն եկեղեցւոյ
երէցներուն

Երէցնե՛ր, որպէս երիցակից մը՝ որ
ձեզի պէս վկայ եմ Քրիստոսի
շարչարանքներուն եւ ձեզի հետ ալ
մասնակից պիտի ըլլամ գալիք փառքին որ
պիտի յայտնուի, կ'աղաչե՞մ, ձեզի
վստահուած Աստուածոյ հօտը արածեցէք ո՛չ
թէ իրբ պարտադրանք կատարելով
վերակացութեան ձեր պաշտօնը, այլ՝
կամարաբար, ինչպէս Աստուած կ'ուզէ:
Ո՛չ թէ դրամի սիրոյն, այլ՝ յօժարութեամբ:
Ո՛չ թէ ձեզի վստահուած մարդոց
պարտադրելով ձեր անձերը, այլ՝ օրինակ
ըլլալով ձեր հօտին, որպէսզի երբ
Հովուապետը յայտնուի՝ անթառամ փառքի
պսակը ընդունիք:

**Խոնարհութեան եւ արթնութեան
յորդոր**

Նոյնպէս ալ դուք, երիտասարդնե՛ր,
ինազանդ եղէք ծերերուն: Բոլորդ ալ
խոնարհաբար ծառացեցէք իրարու,
որովհետեւ՝ ինչպէս Սուրբ Գիրքը կ'ըսէ.-.

«Աստուած հակառակ է
ամբարտաւաններուն, մինչ խոնարհներուն
շնորհք կու տայ»:

Հետեւաբար Աստուածոյ հզօր ձեռքին
տակ խոնարհեցէք, որպէսզի երբ յարմար
ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ: Զեր
հոգերը Աստուածոյ ձգեցէք, որովհետեւ ինքը
կը հոգայ ձեր մասին:

Ա. Պետրոսի 5.1-7



Գոհութիւն երկնաւոր Հօր

Այն ատեն Յիսուս այսպէս աղօթեց.

– Հայր, երկինքի եւ երկրի Տէր,
շնորհակալ եմ քեզի որ իմաստուններէն եւ
գիտուններէն ծածկեցիր այն՝ ինչ որ
յայտնեցիր պարզ ու համեստ մարդոց: Այո՛,
Հայր, դուն այսպէս ուզեցիր:

Հայրս ամէն ինչ տուած է ինծի, եւ ոչ
ոք կը ճանչնայ Որդին՝ բացի Հօրմէն, եւ ոչ
ոք կը ճանչնայ Հայրը՝ բացի Որդիէն, կամ
բացի անկէ՝ որուն յայտնել ուզէ Որդին:

Ինծի՝ եկէք, դուք բոլորդ, յոգնածներ
եւ բենաւորուածներ, եւ ես հանգիստ պիտի
տամ ձեզի: Զեր վրայ առէք իմ լուծս եւ
ինձմէ սորվեցէք, որովհետեւ հեզ եմ եւ
սրտով խոնարհ, եւ դուք ձեր հոգեկան
հանգստութիւնը պիտի գտնէք: Քանի իմ
լուծս դիւրաւ տանելի է եւ բեռս՝ թեթեւ:

Մատթ. 11.25-30

Աստուածաշունչը մանուկներու համար

Կորսուած դրամը



Կին մը կար որ 10 արծաթ
դրամ ունէր:
10 դրամ շատ մեծ գումար
չէ, բայց կնկան միակ
հարստութիւնն է:

Առտու մը ան
կ'անդրադառնայ որ մէկ
դրամը կը պակսի:

Ինքզինքին կ'ըսէ «Նոյնիսկ եթէ շատ ժամանակ պիտի
առնէ, ես այս դրամը պիտի գտնեմ»:



Ուրեմն կը վարէ ճրագը որ աւելի լաւ տեսնէ:

Ամէն կողմ կ'ալէ, սենեակին բոլոր անկիւնները կը քննէ:
Տան մէջ կը փնտռէ, կը փնտռէ ու կը փնտռէ:

Այս բոլորը մէկ դրամի համա՞ր:

Այո: Ան անպայման կ'ուզէ գտնել իր դրամը:



Վերջապէս կորսուած դրամը կը գտնէ:

Գիտե՞ս թէ ի՞նչ մեծ ուրախութիւն կը զգայ կինը երբ իր
կորսուած դրամը կը գտնէ:



**Անպայման դրամը
գտնել ուզել կը
նշանակէ թէ կինը
դրա՞մը կը սիրէր:**

**Ոչ անպայման, այս
կինը պարզապէս
իրեն պատկանող
առարկան կ'ուզէ
անպայման
վերագտնել:**



**Յիսուս ինչո՞ւ կը
պատմէ կորսուած
դրամին մասին:**

**Հսելու համար թէ
Աստուած մեզի տէր է
այնպէս ինչպէս կինը
տէր է իր դրամին:**



**Ի՞նչ ըսել ուզեց Յիսուս այս
պատմութեան աւարտին:**

**Կինը ուրախ է որովհետեւ
վերագտաւ իր
դրամը:
Նոյնապէս ալ Աստուած
մեզ կը փնտուէ երբ իրմէ
հեռու ենք, եւ Ան ուրախ
է երբ մեզ կը վերագտնէ:**



Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

ե	թ	դ	զ	գ	ա	բ	է	ը
զ	թ	ա	ե	լ	է	գ	թ	դ
ը	գ	է	բ	թ	դ	զ	ե	ա
դ	ա	ե	է	թ	լ	թ	գ	զ
գ	է	զ	թ	դ	ե	ա	ը	թ
բ	լ	թ	ա	զ	գ	է	դ	ե
է	ե	գ	դ	ա	զ	լ	թ	թ
ա	դ	թ	ը	է	թ	ե	զ	գ
թ	զ	լ	գ	ե	թ	դ	ա	է

Նախորդ «Եզակի գիրեր» ուն
լուծումը

զ		թ	ա		է	դ		ը
	դ	թ		լ	գ	թ	է	
ը		է		դ			թ	ա
թ		դ	թ	զ		է		գ
	է	ա			ե	զ	դ	
թ		ե	է	գ			լ	
դ	թ		գ	ե		լ		է
	ա	լ		է	թ		թ	թ
է			դ		լ	թ		ե

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, թ, զ, դ, ե, գ, է, լ, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Ո՞ր է ճիշդ պատասխանը


Մայիս ամսուան պատասխանները

Մանկապարտէզի անկիւն

17. Բեթանիա, օրինեց, բաժնուեցաւ,
երկինք, երկրպագեցին, Երուսաղէմ,
զԱստուած

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. ա. Բ. Ծաղկազարդ
2. դ. 40
3. ա. Հինգշաբթի
4. 17
5. ա. Կիրակի, թ. 27
6. թ. Երեւումն Ս. Խաչի



Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. գ. 50
 2. Մարկոս եւ Ղուկաս
 3. Առաքեալներուն Գործերը
 4. ա. Օրինեցեք Տէր Հայր բ. Աստուած
 - Օրինէ
 5. ա. Աստուած Օգնական
բ. Աստուած պահապան
 6. գ. Կաթողիկոսը
 7. Նոյեան Տապանը
 8. գ. Ս. Ղուկաս Աւետարանիչ
 9. Երեւումն Ս. Խաչի
 10. Մայիս 20
- Երկրորդականի անկիւն
1. գ. 50
 2. Հրեղէն լեզուներու
 3. դ. Հոն հաւաքուած տարբեր երկիրներէ
եկած ժողովուրդներու լեզուներով խօսիլ:
 4. ա. 7 թ. 2008
 5. դ. Խոյր 6. Օգոստոս 10, 1920
 7. Քրիստոս իր կեանքը զոհեց 8. Շապիկ,
Գոսի, Շուրջառ, Վակաս, Բազպան,
Սաղաւարտ
 9. Մատթէոս, Ղուկաս 10. Պէտք է ըլլայ
Կորսուած դրամին առակը զոր կը կարդանք
Ղուկասի Աւետարանին մէջ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մայիս ամսուան մասնակցողները

**Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոց
Մանկապարտէզ**

Հրակ Պանքեան, Սեւակ Թեհինեան, Տանիէլ Տօնապետեան, Լորա Տօնապետեան, Լիլի Զինչինեան, Քրիստինա Ալքեան, Ժիվի Քէօշկերեան, Յակոբ Գիւթաննեան, Մելեքեան Ալիս, Մելեքեան Սահակ, Անթափի Ցոլեր

Նախակրթարան Ա.Բ. Գ. անկիւն

Փաթիլ Կարապետեան, Քրիստոֆըր Արմութլու, Նշան Կիրակոսեան, Արա Միրզյեան, Սեւակ Դաւիթեան, Ալիք Գապաքեան, Դանիէլ Ալքեան, Միեր Պանքեան, Խշխշեան Ռիթա, Կրէյս Նարեկեան, Կարինէ Կարապետեան, Քարինա Քիւփելեան, Յակոբ Զինչինեան, Հրակ Քիւփելեան, :

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Պապիկեան, Արագ Գիւթաննեան, Շեսիքա Մաթոսեան, Արին Անթափի, Սերժ Դաւիթեան

Նախակրթարան Դ.Ե.Զ. անկիւն

Գէորգ Պուիքեան, Զոհրապ Կարապետեան, Միեր Մաթոսեան, Նանոր Քիւփելեան, Ռոզալին Զինչինեան, Հրայր Մաթոսեան, Մարիա Դանիէլեան, Լորի Զինչինեան Անսխալ պատասխանողներ

Առէն Պապիկեան, Կասիա Արմութլու,

Դալար Գիւթաննեան, Շողիկ Թեհինեան,

Ալեք Կարապետեան

Երկրորդականի անկիւն

Թամար Պուիքեան, Քրիստինա Կարապետեան, Արի Միրզայեան, Սեդրակ Մամիրյեան, Հրակ Նարեկեան, Անի Մելեքեան, Լորա Սարիմանուկեան

Սուրբ Յակոբ Ազգային Վարժարան Ծաղիկ Դասարան

Անսխալ պատասխանողներ

Արագ Աղպապեան

Վարդգէս Եւ Աստղիկ Սարաֆեան Նախակրթարան

Դ. դասարանի Մասնակցողներ

Արփի Հերքեցեան, Միեր Շարաշեան, Մելիսա Պետրոս, Վանէսա

Փիլիկեան, Գրիստիան Տիւպէ, Թովմաս Զաքոր, Լորի Չոխամնեան, Ալեքսանտր Զաքեան, Գարին Տանաօղլեան, Սառա Թէրզեան, Դանիա Ժօննէթ, Արեգ Գուշեան, Արա Սոպանեան, Լորի

Չոպյեան, Սանտրա Թիւֆէնքնեան, Սեւան Յոսիկեան, Ալինա Մարտիրոս, Արթիւր

Պէքարեան, Ալեք Թուպի, Շանթ Ղազելեան, Ռուպինա Տէմիրնեան, Արամ Պարթեւեան,

Աւետիս Թիւֆէնքնեան, Աստինա Մուրատեան, Արամ Անասալ, Դինա Կարապետեան, Սիրվարդ Սապաղեան, Թամար

Մերտիսանեան, Լինէթ Խորակէեան, Սեւան Մելեքեան, Սանտրա Կիլիմնեան, Բիթըր

Սարգիս, Սերենա Քիվլիւքեան, Ռուբէն Զէրեան, Ազնիւ Աղպապեան, Մարիամ

Մկրտիչեան, Տանիէլ Զիւլուքովսկի Անսխալ պատասխանողներ

Շողիկ Թեհինեան, Նաթալի

Հայրապետեան, Ալեք Կարապեդեան

Ե. դասարանի Մասնակցողներ

Ճորժ Գալլողեան, Արի Վարժապետեան

Անսխալ պատասխանողներ

Սեւակ Թաշճեան, Գրիգոր Պալապանեան, Տիրան Ամլիկեան, Արեգ Յամբարձումեան

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ԺԴ. Տարի

ԽՄԲԱԳԻՐ՝ Շաղիկ Պոյաճեան

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

Աերկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցի վրայ:

Այցելեցէ՞ք www.sourphagop.org հասցեն եւ
ընտրեցէ՞ք Պարբերաթերթ բաժանումը:

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակոսորեայ
Դպրոցի կամաւոր խմբակը.-

Ուսուցիչներ՝

Լուսանկարիչ՝
Պարբերաթերթ՝
Տնօրէն՝

Թամար Գիզիրեան
Վերժին Գէպթանճեան
Վերա Կարապետեան
Երան Լոշխաճեան
Յասմիկ Նաճարեան
Գարոլ Մանուկեան
Փոլ Գիզիրեան
Աշխէն Իշխանեան
Շողիկ Նաճարեան
Յասմիկ Գանաճեան
Նիկոլ Դանիէլեան
Շաղիկ Պոյաճեան
Թորոս Պապիկեան